



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 2 1894

Փ Ե Տ Ր Ի Ա Ր

1894 № 2

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

երես


|                                  |     |                                |
|----------------------------------|-----|--------------------------------|
| 1 ՂԱԶԲԷԳ, ԱԼԵՔՍԱՆԴՐԷ՝ . . .      | 181 | Չորի նահապետ Գոչա:             |
| 2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . .       | 212 | Աւերակների վերաջ (բանաստեղծ.): |
| 3 ԲԱԼԱԳԱՆ, ՍԱՄՈՒԷԼ . . .         | 213 | Կենդանիների հասարակ. կեանքը:   |
| 4 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ . . .     | 222 | Փառքի տենչը (բանաստեղծ.):      |
| 5 ԶԱՔԱՐԵԱՆ, ԹԱԴԷՈՍ . . .         | 224 | Բժշկականութ. և հոգեբանութիւն:  |
| 6 ԱՐԴԱՀԱՏԵԱՆ, Ա. . . . .         | 231 | Հրէշը (պատմապո.)               |
| 7 ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ . . . . .      | 243 | Բանտրների ապահովաց. խնդիրը:    |
| 8 ՍԱՐԳՍԵԱՆՅ, ՍԱՐԳԻՍ . . . . .    | 255 | Լեզուն և ուղղագրութիւնը:       |
| 9 ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳԻՍ . . . . .    | 267 | Հող. և անձն. իրաւ. հին Հայաստ. |
| 10 Ա. Ա. . . . .                 | 281 | «Փատրոն» հանդէսը:              |
| 11 Ս. Բ. . . . .                 | 283 | «Ֆլամմարիոնի-ի» աստղաբաշխ.:    |
| 12 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՓ . . . . . | 285 | Բնորոշական գործերի վտանգումը:  |
| 13 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻ. . . . .      | 291 | Մի ընկեր. սկիզբն ու վախճանը    |
| 14 ՄԱՐԴԱՆԵԱՆ, ՖՐԻԴՈՆ . . . . .   | 308 | Նաւթարդիւնար. ներս. վիճակը:    |
| 15 ՏԷՐԵԱՆ, ՍՏ. . . . .           | 316 | Տպագրութիւններ Գանձակից:       |
| 16 ԲԱԼԱԳԱՆ, Ս. . . . .           | 324 | Բնագէտների ժողով Մոսկւայում:   |
| 17 ԽՄԲ. . . . .                  | 328 | Ջանադան լուրեր:                |

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Ի. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՍԻ

Типография М. Д. Ротшильда, Гол. пр., л. № 41.

1894



# Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 2 1894

Փ Ե Տ Ր Ի Ա Ր

1894 № 2

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1894

Дозволено цензурою. Тифлисъ, 21 Февраля, 1894 г.

VI ՏԱՐԻ

# „ՄՈՒՐՃ“

ՏԱՐԻ VI

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1894

ԹԻՎԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակւի 1894 թւականին նոյն ծրագրով, որպէս և նախկին հինգ տարիներու մէջ:

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակւի ամէն ամիս 8—10 թերթ մեծութեամբ:

«ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալում, այնպէս և ապագայում կը տայ

- 1) Յօդւածներ կեանքի հիմնական խնդիրների մասին (առաջնորդողներ),
- 2) Յօդւածներ մեր հասարակական կեանքի ընթացիկ խնդիրների և երևոյթների մասին (ծամանակակից տեսութիւն),
- 3) Հետազօտութիւններ տնտեսական և սոցիալական կեանքից,
- 4) Յօդւածներ քաղաքական անցքերի և ընդհանուր քաղաքական դրութեան մասին (Քաղաքական տեսութիւն),
- 5) Գրական ընդարձակ քննադատութիւններ,
- 6) Նոր լոյս տեսած գրքերի քննութիւններ,
- 7) Ընդհանուր կրթական յօդւածներ գիտութիւններից,
- 8) Գիտական քրոնիկ,
- 9) Ճա-

Նապարհորդական նկարագրութիւններ, 10) Թղթակցութիւններ գաւառներից, 11) Տեղեկութիւններ Ռուսաստանից, 12) Նամակներ Արեւմտեան Եւրոպայից, 13) Վէպեր, վէպիկներ ինքնուրոյն և թարգմանական, 14) Ոտանաւոր բանաստեղծութիւններ, 15) Երաժշտութիւն, 16) Կարեւորագոյն լուրեր, 17) Յայտարարութիւններ:

«ՄՈՒՐՃ»-ի ՎԻՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ 1894 թւականին կը բաղկանայ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական վիպական գրածներից:

«ՄՈՒՐՃ»-ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ է 10 ռուբլի: Ուսուցիչները և ուսանողները կարող են վճարել 8 ռուբլի:

ԲԱԺԱՆՈՐԴ գրեւոր Համար ղիմել կամ Խմբագրատունը (Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“) կամ մեր գործակալներին:

## ՁՈՐԻ ՆԱՀԱՊԵՏ

### ԳՈԶԱ

ԱԼԷՔՍԱՆԴՐԷ ՂԱԶԲԷԴԻ

ԹԱՐԳՄ. Մ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

#### XIV

Երրորդութեան տաճարը կանգնած է Ղիրւան գաղաթից զէպի վար գնացող սարահարթի ծայրի վրա, որտեղ մի բոլորակ բլուր շնորհալի կերպով գլուխ է բարձրացրել, այն ինչ Թերքի կողմը գահավէժ զաւիթափով մօտենում է Գերգիա գեղին: Սրբատաշ քարակերտ, բաւականաչափ մեծակառօյց տաճարը, որ ժողովարան և խորհրդարանն է, որին նախ ինքը բննութիւնն է ամուր պարիսպ բլորիւ շուրջը և քանի մի տեղեր ևս մարդկային ձեռներն են աւելի ամրացրել, մի հպարտ և դուրալի պատկեր է ներկայացնում:

Այստեղի մօտերքում տաշելու քար չէ գտնուում, որով տաճարն է կերտւած, ջուրն էլ բաւական հեռու գտնուող ձորովն է անցնում: Սրան մօտենալու համար միայն մի զալարուն զեծան կայ, որի վրա

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1894 թ. № 1:

նոյն իսկ հետիոտն դնացողը զժլարութեամբ է բարձրանում, այն-  
պէս որ առաջին անգամ տեսնողը խիստ զարմանում է և կամայ-  
ականաց ինքն իրան հարցնում թէ որտեղից են բերել այս հրա-  
շալի կերտածքի նիւթերը, կամ ինչով են կրել:

Բաւական է այս կերտածքը տեսնել, որ մարդ հասկանայ թէ  
ինչ կարող է անել մարդկանց հաւաքական ոյժը ու նրանց կրօնա-  
կան վեհ զղացմունքը: Տաճարի պատի մէջ սակայն հազցրած է մի  
տեղ մարմարեայ քար, որի վրայի արձանագրութիւնը դեռ ևս չէ  
ջնջւել քամուց և սնձրեից և գրագէտը կարող է դարձեալ կար-  
դալ ... «եղը հաստավիզ... հովիւ Թեոփրէ...» — այս երկու անուն-  
ներն են, որոնք անկասկած մեծ աշխատութիւն են դրել ձորի փա-  
ռաւոր անցեալի արձանը կանգնեցնելու համար: Առաջացող բազ-  
մութիւնը փուկեց սարի լանջի վրա և ուղիղ այն միջոցին, երբ  
ժողովուրդը խմբեց դաշտի վրա, տաճարի պարսպից երևեց առաջ  
դրօշակի խաչի ծայր, ապա նոյն իսկ դրօշակը ամբողջովին, որը  
բացւել և մեղմօրէն ծածանւում էր: Ռոյէապէս ամբօխը չոքեց և  
գետնատարած գետնի վրա երկրպագութիւն տւեց ժողովրդական  
սրբին:

«ատի վրա երևեց մի զլխաբայ մարդ, երկար, փուլած ու  
ճերմակ մազ միրութով: Հագին անարատ ճերմակ կտաւից շապիկ,  
որի վրայից մի չւանի կտոր գօտեպարած, որ մի ինչ որ զարմանալի  
երևոյթ էր տալիս ծերունուն: Լուսապայծառ, բաց հաստադակամ  
ծերունու գէմքը, հոգսերով և արտմութեամբ լիքը, ամենի սիրան  
էր շահում և ականաց գերում: Գեղական դրօշակները անշատեցին  
ամբօխից, որոնց ներս տարան տաճարի դաւիթը սպիտակ չուխի-  
քաւոր դրօշակակիրները, և քանի մի վայրկեանից յետոյ դրօ-  
շակների շուրջը կանգնեցին: Լուեցին բոլորը, հանդարտեցան  
ամենքը. օդն անգամ զգաց, որ պէտք է խաղաղէր, խոնարհէր  
բազմութեան ժողովի առաջ, որ այսօր պէտք է վճռէր ձորի բազդը:  
Մերունին թոթւեց դրօշակը և այս ընդհանուր լուութեան մէջ լրս-  
ւեց փոքրիկ բոժոժների ծընգծնգոցը, որը ցնցեց չոքած ամբօխին  
և ամբողջի մարմնով սարսուռ անցաւ:

— Հոգոց են ասում, հոգոց են ասում: Գոչան հոգոց է ասում,  
լսեց ժողովրդի մէջ և հովի պէս անցնելով ընդհատեց:

Գոչան նորից թոթուեց դրօշակը, կրկին գնդգնդացրեց բոժոժներն ու երեսը խաչ հանելով սկսեց մեղմ անուշ և հանդարտօրէն օրհնել բազմութիւնը: Ժողովրդին ընդհանրապէս օրհնելուց յետոյ, սկսեց յիշատակել այն մարդոց անունները, ով որ անուն էր հանել ժողովրդի մէջ և ոչ մի աշխատանք և նեղութիւն չէր մերժել ժողովրդեան բարեկեցութեան համար: Յիշատակեց նրանց, որոնք թըշնամուն հալածելու առաջինն էին դուրս գնացել, յիշատակեց այն տղամարդոցը, որոնք իրանց զէնքերը պատրաստի էին պահում, և վերջացրեց Աստուծուն խնդրելով, որ Նա բարձիթողի շանի ձորը և սրա պահապանը լինէր ամեն նեղ օրերում շատ և շատ տարիներ:

Յիշատակելու միջոցին, Գոչայի ամեն մի շունչ քաշելու վայրկեանին ժողովրդի բերանից դուրս էր թռչում փոթորկաձայն «ամէն»: Այս ձայնին արձագանք էին տալիս լեռներն ու հազար տեսակ հնչիւններով օդի մէջ ցրւում:

Երբ Գոչան վերջացրեց օրհնութիւնը՝ ժողովրդին յայտնեց Նուգզարի ցանկութիւնը:

Մինչև անգամ խաղաղութեան և հանդարտութեան մէջ գտնուող բազմութիւնը յանկարծ շարժեց, յանկարծ ամբոխեց և դժգոհութեան պատճառով բաւականի ժամանակ աղմկւում էր:

— Լռեցէք, քանի մի անգամ կրկնեց Գոչան բարձրաձայն և փոքր ինչ լռութիւնից յետոյ սկսեց.

— Աստուած մեծ է և դատաւոր... Իր ստեղծածին Ինքն էլ կը պահպանէ... մեզ ևս բարձիթողի չի անի... Ի՞նչ է ուզում մեզանից Նուգզարը, ի՞նչի համար է ներս ընկնում մեր ընտանիքներում... Մենք ճանաչում ենք Վրաստանի արքային, և թող օրը խաւարի այն մոխրեցուն (ձորեցի) և թող վերանայ աշխարհի երեսից այն վրացի մօր անունը, որը թագաւորի նեղն ընկած միջոցներում որդուն կը խնայի, ազգի համար տունն ու զաւակը չի զոհիլ... Մառայում ենք մեր եղբայրակիցներին և այսպէս էլ պէտք է լինի... Ուրեմն եղբայրն էլ ինչի համար է, երբ նեղ օրին չի հասնի... Այն ինչ Նուգզարը գլուխ է բարձրացնում և, այժմ ոյժ առած, անկշտում աչքերը մեր կողմն է յառել, ուզում է երկու դրացի եղբայրներին իրար հետ կռեցնել, մոխրեցիներին և մթիւններին իրարու կոտ-

րել տայ և ինքը տիրանայ նրանց վրա... Ի՞նչ կասէք, այ ջամահաթ... Նուգզարին զիմադրելը հեշտ բան է, մթիուներն էլ մոռացել են մեր եղբայրութիւնն՝ մեզ վրա յարձակելու են զիտաւորւել... հնազանդւե՞նք:

Խաղաղւած բազմութիւնը կրկին տատանւեց և աղմկեց. ժողովրդի փոթորկանման աղաղակը միախառնւել էր և օդի մէջ լսելի էր միմիայն կատաղի խօսքը.

—Ո՛հ, ո՛հ, լսեում էր անընդհատաբար ժողովրդի բերանից:

Յանկարծ դաշտի վրա խռնւած ժողովրդի առաջ դուրս եկաւ մի նորատի պատանի, որը ժողովրդին ձեռնաշարժով նշան արեց լռելու և սկսեց.

—Գոչա՛, ի՛նչի ես մեզ հարցնում աչդ... Զորեցիք եղբայրութիւն գիտեն և, Աստուծ է վկայ, բարեկամ հարեանների համար մեզանից իւրաքանչիւրը իր գլուխը յետ կը դնի... Թող մեռնի այն մարդը, որ եղբօրը չկարողանայ պաշտպանել, ամօթապարտ մնայ այն գտակաւորը, որը իր հարեանին կը դաւաճանի... Սակայն այն մոխեցին էլ գետինը մանի, որը ճորտ լինել ցանկանայ... Նուգզարն ուրիշ տեղում յաղթանակել է և կարծում է, որ մեզ ընկճելը հեշտ բան է: Մթիուներն ևս մոռացել են մեր հաւատարմութիւնն ու աղուհացը, մեզ վրա են զալիս... Մէկ անգամ ենք ծնւել, մէկ անգամ էլ պէտք է մեռնենք... Կոտորւենք, այ ժողովուրդ, բաց օտար ժողովուրդի գերի չդառնանք:

—Կոտորւենք, կոտորւենք,—եղաւ այս խօսքերի ընդհանուր պատասխանը:

Ճառախօսին մօտեցաւ մի ծերունի, յենւեց իր ձեռնափայտի վրա և դիմեց նրան.

—Մնիսէ, Աստուծ է վկայ, լաւ հօր զաւակ ես և ինքդ լաւ կտրիճ ես երեւում... հայ, հայ, որ աւելի լաւ է ամօթապարտ տղամարդը մեռնի քան թէ ապրի, ողջ ողջ գետինը մանի քան թէ անւանարկ կեանք վարի... Ինչ որ ասեցիր, վկայ է Ինքն Աստուծ, լաւ ասեցիր և այդպէս էլ պէտք է լինէր... սակայն մթիուները մեր եղբայրներն են, նրանց սխալեցրել է փորձիչ սատանայի պէս Նուգզարը, նախ և առաջ փորձենք նրանց հետ բանակցել, այն ինչ Օսերից վախելու բան չունինք:

Այս խօսքերի վրա ժողովուրդն երկու դասի բաժնուեց. մի մասը պահանջում էր ուղղակի կուեկ առանց զանազանելու, ով կուզէր թող լինէր թշնամին, այն ինչ միւս մասը սխալած եղբայրակիցների հետ առանց բանակցութեան փորձելու չէր ուզում պատե՛րազմ սկսել:

Բազմութիւնը բաւականին ժամանակ աղմկում էր, բայց ոչ մի վճռի չէր հանգում:

Լսեց զարձնալ բոժոժների ծնգծնգոցը, որը կրկին լուեցրեց բազմութեանը:

—Ժողովուրդ, սկսեց Գոչան,—հարկաւոր չէ ուշացնել, թշնամին մեր դուռն է կտրել, թող համայնքների գլխաւորները ասպարէզ գան... Թշնամուն, նոյնպէս և բարեկամին, դիմաւորել է հարկաւոր... համայնքի մարդիկ, —գոչեց նա:

Այս խօսքերի վրա՝ ժողովրդի միջից դուրս եկան խումբ-խումբ ընտրւածներն ու զիմեցին Սուրբ Երրորդութեան տաճարը, որտեղ ձորի նահապետ Գոչայի գահերեցութեան բաղտը պէտք է վճռէր:

## XV

Գլխաւորներին չհարկաւորեց երկարատե խօսակցութիւն, որովհետեւ ամենքն էլ առաջուց վճռել էին արդէն կամ մեռնել, կամ ազատ ապրել: Ընտրեցին զօրապետներ <sup>1)</sup> և միջնորդներ, որոնց պէտք է մթիուլների հետ հաշտութեան մասին խօսելու ղրկէին: Իսկ ընդհանուր հրամանապետի և կարգադրիչի պաշտօնն ինքը Գոչան ըստանձնեց իրաւապետութեան համեմատ:

Այս ընդհանուր խօսակցութեան և վճռից յետոյ, որի մէջ պատկերանում էր ժողովրդի ցանկութիւնն ու որոշումը, Գոչան ճանփեց միջնորդներին Մթիուլէթ և ժողովն արձակեց, որպէս զի երեք օրեայ ժամանակամիջոցում պատրաստէին, զինւէին և ամեն զէնք կրել կարողացողը Սիօնի դաշտը դուրս գար. որովհետեւ այստեղում էին կամենում թշնամու ճանփէն կտրել:

Բազմութիւնը ցրեց և զանազան կողմեր գնաց, բացի Գո-

<sup>1)</sup> Լաւ հրացանաձիգներ:

չաչից և գեղի դրօշակակիրներից, որոնք վերջին անգամ աղօթք պէտք է անէին և ձորի բարօրութիւնը խնդրէին Աստծուց:

Գնացող բաղմութեան մէջ, ի միջի այլոց, գտնուում էր նաև Օնիսէն, որը բոլորովին լուռ ու մունջ դիմում էր դէպի իրենց գեղը, որտեղ նրան սպասում էր շատ ժամանակ չտեսած Զիձիացի հետ տեսակցելու երանութիւնը:

Թայ. թուշերը, որոնք շրջապատել էին Օնիսէին, հանգիստ էին տալիս նրան Փշաւների և Թուշերի մասին հարցումներ անելով, այն ինչ Օնիսէն խորին կերպով զբաղւած էր միայն մի յիշողութեամբ և այս պատճառով էլ դժկամ և կարճ էր պատասխանում նրանց:

Նրանք վար իջան այնտեղ, ուր ձորի աղջիկներն ու հարսները Երրորդութեան սարի լանջի վրա էին տարածւել և մօրի, մոշ և վայրենի կեռաս էին քաղում:

—Մի նայիր է, Օնիսէ,—աղջիկները ոչխարների նման են փռւել այն դաշտի վրա.—ասաց Օնիսէին մի մոխլեցի ձեռքը դէպի աղջիկները մեկնելով:

Օնիսէն այն կողմը նայեց միմիայն այն պատճառով, որ կարողանար ռադ անել գլխից ձանձրացնող խօսակցին, որ խանգարում էր նրան զբաղւել իր խոհերով և ամբողջովին չանձնւել իր սրտի խորհուրդներին: Սակայն երբ որ այն կողմը նայեց, հէնց որ աչք ածեց այնտեղարկնքը, սիրտը մի տեսակ բաբախեց, քանի մի անգամ ձգտեց և դուգարեց: Օնիսէն կանգ առաւ, սփռթնեց և ճակատին ձեռք քսեց:

—Ի՞նչ պատահեց քեզ,—հարցրեց ընկերը, նկատելով նրա դէմքի փոփոխութիւնը:

—Ոչինչ, ամենեւին ոչինչ... շտապով պատասխանեց Օնիսէն և աւելցրեց.—խիճը տրեխս պատռեց և ոտս էլ վիրաւորեց:

Այս խօսքերն ասելուն պէս կաղալով մօտեցաւ քարին, նստեց վրան ու սկսեց ոտնամանը հանել:

—Թո՛ղ, ես հանեմ,—մօտեցաւ առաջին խօսակցողը:

—Հարկաւոր չէ, ցաւդ տանեմ, չէ... ինքս կը հանեմ,—պատասխանեց Օնիսէն, որ այլ ևս չգիտէր թէ ինչ միջոցի դիմէր, որպէս զի կարողանար մենակ մնալ:

—Վայ գլխիս,—ասեց նորից անձանթը.

—Ի՞նչ ես քաշուում ինձանից, երեխայ հօ չես... Թող, հանեմ, և մեկնեց ձեռքերը:

—Ձեմ ուզում, ինքս էլ կը հանեմ.—այլ ևս չկարողացաւ համբերել Սնիսէն և ջգրւեց. բայց շուտով զսպեց իրեն և հանգիստօրէն ասեց նրան.

—Այ տես, արեւը թեքւել է, այլ ևս ուշի մի' մնա... ես հոգնած եմ և փոքր ինչ կը հանգստանամ:

Մոխսեցին նայեց նրան երեսն ի վեր, այլ ևս բան չասեց, գլուխը մինչ աչքերը վար քաշեց և շարունակեց ճանփան:

Այն ինչ Սնիսէն անցաւ քարերով ծածկւած կողմը և այնպէս թաքնեց այնտեղ, որ անցւորականները չնկատէին իրեն, թէև ինքը նրանց էլ էր տեսնուում և պտուղ հաւաքող աղջկերանցն էլ, որոնց թուումն էր և Զիճիան, և նրան էր աչք ածում:

Երրորդութեան տաճարի գաւթում գտնուող ժողովուրդը շուտով վար իջաւ, որովհետև իւրաքանչիւրը շտապում էր դէպի տուն, որպէս զի նշանակւած ժամանակին կազմ և պատրաստ լինէր և զանգաղելու պատճառով ընկերների պարսաւանքի առարկայ չդառնար:

Սնիսէն նստած էր իր թագստատեղում և սրտի տրոփիւնով աչք էր ածում աղջիկներին, որտեղ նրանք միրգ էին քաղում և ազատ կերպով իրար հետ ոտանաւորներ ասում:

Միայն առանձնացել էր այս ընդհանուր ուրախութիւնից Զիճիան և մեկուսացած մի տեղ առանց գլուխը վեր հանելու, երեսի գոյնը նետած և տխրազդած պտուղներ էր քաղում:

Եթէ հեււից զիտելու լինէիք աղջկերանց, իսկոյն և եթէ կը հասկանայիք, որ Զիճիան նրանց խմբին չէր պատկանում, չո՞նէր ոչինչ նրանց հետ ընդհանուր և ոչ մէկ բանով նրանց հետ չէր շաղկապւած: Սնիսէն սիրտը պղտորւած, մտացրիւ նայում էր մոխսեցու աղջկան և զգում էր, որ նրա խոհերի առարկան ինքն էր. ուզում էր բարձրաձայն ասել նրան՝ «այստեղ եմ, արի այստեղ, ես եմ քեզ հասակակից, միմիայն ես կարող եմ քեզ ուրախացնել, սակայն բերանի խօսքը կտրուում էր, որովհետև չէր ուզում Զիճիայի ընկերուհիներին իմաց տալ ոչ իր մօտակայ եղածը և ոչ էլ

իր սրտի գաղտնիքները: Նա զգուշանում էր Զիձիայի անունը կոտրելուց, մարդկանց առաջ նրան խաչատառակելուց:

Աղջիկները հետզհետե մոտենում էին այն տեղին, որտեղ Օնիսէն էր թաղնւած և քանի նրանք մոտենում էին, այնքան աւելի սարսափ էր զգում մոխեցին: Նա զգում էր, որ Զիձիայի մոտենալովը իր ոյժը աւելանում էր, որը հետզհետե ուժգնապէս կաշկանդում և ճնշում էր մոխեցու սիրտը, հետզհետե զօրաւոր կերպով և կատաղաբար ձգտում էր դէպի նա:

Աղջիկները յանկարծ բոլորովին մի ուրիշ կողմը գնացին ու Օնիսէն քիչ մնաց ուրախութիւնից բարձրաձայն դռէր. որովհետեւ նկատեց, որ Զիձիան անշատեց մնացած ընկերուհիներին և շիփշիտակ մոխեցու կողմը դիմեց:

Օնիսէի շնչաւութիւնը այն աստիճան արագացաւ, որ սիրտն սկսեց ուժգնապէս բաբախել և շարունակաբար շնչարգելում էր:

Զիձիան եկաւ քարքարոտ տեղը, վար դրեց կողովը, նստեց այնտեղ և եթ խոխոջող աղբիւրի մօտ, որի վրա յառեց իր տրոմալից աչքերը և մոռածմունքի մէջ ընկաւ:

Օնիսէն ձգտում էր դէպի աղջիկը, սակայն մի զգացմունք ուժաթափ էր անում նրան և վեհերոտութեան մէջ զգում: Երբեմն այնպիսի կացութեան մէջ էր ընկնում, որ շրթունքները սեղմած էր համարձակւում շնչել, որպէս զի օդի թեթեւ շարժմունքը նոյն իսկ չխանգարէր նրա անդորրութիւնն և չխրտնեցնէր քնքոյշ արարածին:

Զիձիան հառաչեց յանկարծ, աչքերն արտասունքով լցեցին և մեղմօրէն մրմունջով սկսեց երգել: Յետոյ սև ու երկար թերթերունքից կախեց արտասունքը, սրան հետեւեց երկրորդն ու աղջիկը սկսեց կամացուկ արտասուել:

Օնիսէն այլ ևս չդիմացաւ տանջանքին և գողունի մօտեցաւ աղջկան:

—Աղջիկ, ինչի՞ ես լալիս.—դեփիւսի պէս ցած ձայնով ասեց նրան Օնիսէն. սակայն այս ձայնը այն աստիճանի զօրեղ թւաց Զիձիային, որ չկարողացաւ յետ նայել և մնաց փեռացած:

Զիձիան նստած էր քարացածի պէս, նայում էր երեսն ի վեր Օնիսէին և շրթունքների շարժումից էր նկատում, որ բան էր ուղում ասել, բայց անկարանում էր աջողեցնել:

— Աստ ինձ, ողջի, աստ... սկսեց դարձեալ Սնիսէն և Զիճիայի առաջ չօքեց. — ինչի՞ ես քաշուում ինձանից, միթէ խաշեղբայրդ չեմ...

Զիճիան շարժեց, թշերի վրա կեանքի նշոյլ երևեց, ալ վարդը փայլեց, աչքերն սկսեցին ցոլալ և բերկրած՝ շրթունքների վրա ժպիտը ծաղկեց:

Զիճիան բաւական երկար միջոց մնաց այս կացութեան մէջ, որը մարդուս միտքը թոյլ չէ տալիս իր զգացմունքը հասկանալ: Ղերջապէս պարզեց թևերը և հանդարտ, բայց պարզ ու որոշ, արտասանեց.

— Սնիսէ... ճրտեղից եկար:

Սնիսէն հեռզհեռէ մօտենում էր աղջկան, որովհետև կէս պարկած՝ բազուկների վրա էր յենւել, այն ինչ ձեռքերը զողոլողալով աղջկան էին մերձենում կամաց-կամաց: Մոխեցին նայում էր Զիճիային բորբոքուն աչքերով և պարզ երևում էր, որ երկարատև անջատւած լինելը նրա սրտի սիրոյ կրակը ոչ թէ չէր կարողացել մարել, հապա աւելի ևս բորբոքել և նրա սիրտը տարփալու հետ միանալու առաւել կատղեցրել: Զուր էր անցել նրա ջանքը, որովհետև Զիճիայի հետ մի անգամ հանդիպումը, մի անգամ աչք դիպցնելը բաւական էր, որ ամեն ինչ նորից մոռանար և զողոլոջուն ձայնով և թռթռուն պրոշներով այս աղջկայ անունը յիշէր, կարծես թէ նրա համար աշխարհիս երեսին մի այլ խօսք անկարելի լինէր գտնել...

— Զիճիանու, Զիճիանու... կրկնում էր նա հազարերորդ անգամ և ձայնն այնպիսի ելեէջներով գեղգեղում, այնպէս հնչում, որ ճշմարիտ ասած, իր զգացմունքներն արտասանելու համար մի այլ առաւել գերազանց բան չէր կարող գտնել:

Սնիսէի համար այս անունը շատ թանգագին էր, այնպէս որ սրան համահաւասար մի այլ խօսք չունէր կամ թէ կարողանար այնպէս եռանդով արտասանել: Ակներև էր, որ Զիճիան էլ էր զգում այս խօսքերի զօրութիւնը, որովհետև զարմանքը հեռանում էր նրանից հեռզհեռէ. նրա նազուք իրանը թեքւում էր Սնիսէի կողմը և շնորհալի դէմքը, հեռզհեռէ առաւել բորբոքւելով մօտենում էր մոխեցուն:

Անցաւ վայրկեանն ևս ու երկու սիրատուոր արարածները, նրանց միաւորող շնչառութիւնն էլ միախառնւած, մօտեցան և բորբոքւած նստում էին իրարու: Ուղիղ այս վայրկեանիս չարածձի և անդադրում հովը փչեց և Զիձիայի գլխաշուքը թռցրեց: Խիտ և դանդուր սև ծամերը վար կախւելով՝ սկսեցին Յնիսէի դէմքը շուտուտել: Այս էր պակաս, որ երկուսն ևս ուժասպառւէին և նրանց շրթունքները մի վայրկեանում իրարու հպւէին...

Ո՞վ կարող է ասել թէ որքան ժամանակ կը տւէր նրանց տըրփանքը, եթէ մօտեցող աղջիկների խօսակցութիւնը հանէր երկու սիրահարներին ինքնամոռացումից:

Զիձիան մտաբերեց իր պարտաւորութիւնը, որով հասարակութեան կարծիքով խաչեղբայրն էլ ազգական է դառնում, և այս միտքը կսկծեցրեց նրան: Ունքերը կիտեց, դէմքը ծամածուեց և անտանելի կսկիծից, որ նրա սիրտն ու թոքերն էր խոցոտում, գոյնը նեւեց: Աղջիկը բռնութեամբ հեռացրեց Յնիսէին իրենից և ոտի ելաւ, շրջեց և առանց յետ նայելու դիմեց դէպի ընկերուհիները:

Այն ինչ Յնիսէն մնաց միւսնոյն տեղը քարացած և տխրած, որովհետև տակաւին չէր հասկանում թէ ինչն էր Զիձիայի այսպէս հեռանալու պատճառը:

Յնիսէն նայում էր սրտամորմոք. նրա մոքում կամայ-սկամայ հարց էր ծնւում. «ինչի՞ աչսպէս թողեց, ի՞նչի ոչինչ չասեց, կամ կունենար առիթ երբ և իցէ նրան փայտաշէլու»:

Աղջիկներն անցան ու Յնիսէն էլ ոտի վրա ելաւ. նա ճմլկոտած, հպարտ նայեց այս ու այն կողմը և մի ինչ որ ոյժ զգաց որը մինչև օրս երբէք չէր նկատել իր մէջ: Սա սիրելի էր Զիձիային — աշխարհքն իրն էր կարծում:

## XVI

Այն կէտից, որտեղից ներկայումս Վրաստանից դէպի հիւսիս ճանփա է գնում Կոբ դեղի ստորոտով, հէնց որ Սամուերօ դաշտից հեռանում է, այն ճանփէն թեքւում է շրջանակաձև ու երեք կողմից սեպացած Սիոնի պատին շրջապատում գօտու նման: Ժայռի զագաթի վրա հպարտ կանգնած է մի բարձր կոշի, որը վեհ և թշնամու սիրտը ահաբեկելու համար պահանակում է այն

ձորավայրը: Այս տեղը իշխում է ելքերի վրա, իսկ ներս գալու անցք միայն Նարովան կոչւած բլրակի կողմիցն ունի: Չարդարւած փառահեղ արօտատեղերով, ջրերով և անտառով, բնականապէս ամրութիւն եղած, ձորի համար անցած դարերում միակ և ամենաապահով կէտ էր համարւում: Սիոն դագաթի վրա տարածւել էր մի փոքր դաշտ, որտեղ կռացել էին կարծրաքարից տներ, որոնք, բացի բնական ամրութիւնից, աւելի ևս ամրացնում էին այնտեղը:

Ահա այս վայրն էր, որտեղ ձորեցիք ժողովւում էին անցեալ դարերի դահճի չարանենդ դիտաւորութեանը դիմադրելու և նրա արիւնսարբու ցանկութիւնը չքացնելու համար:

Որովհետեւ ձորի պաշտպանութեան համար շատ մարդիկ էին հարկաւորւում Գոչային, այս պատճառով ձորի նահապետը կարգադրեց, ովքեր զէնք կրել կարող էին, բոլորն էլ պատերազմի դաշտը գալին, և որպէս զի կին մարդիկ պարապ չմնային այս ընդհանուր գործի մէջ, պարտաւոր էին սարերից, որտեղ ոչխարներ ունէին կթելու տարած, զօրքի համար պանիր, եղ և մածուն կրելու: Այն ինչ հացը իւրաքանչիւրի համար իրանց տանից պէտք է զրկէին:

Այս ձևով բերած պաշարը ամենքին էլ համահաւասար էր բաշխւում, թէև ստացողների թւում կային և այնպիսիները, որ սեփական ոչ մի ոչխար էլ չունէին:

Արճիճը բաւակոնին բերում էին «Խդիտ»-ից, բորակը հաւաքում էին նոյն իսկ Սիոն գեղի քարայրերում, որտեղ թափւած էր գետնի վրա սպիտակ աղի նման, այն ինչ քուքուրդը (ծծումբը) առաջուց ունէին արդէն պատրաստած. այնտեղ այրում էին թղտենի և այս կերպ վառօդ էին պատրաստում:

Մոխրեցիները ամրացնում էին նոյնպէս և Սիոնի առաջ գտնւող Սամուերօ անտառը և առհասարակ այնպիսի պատրաստութիւն էին սեսնում, որ եթէ բաղդը երեսը դարձնելու լինէր սրանցից, գոնէ թանգ նստեցնէին իրանց ձախորդութիւնը թշնամուն:

Մի խիստ մութ գիշեր, այնպէս մութը, որ եթէ մատդ մարդու աչքը կոխէիր, չէր տեսնի, Սամուերօի ծալքից մի քանի եկւորների ձայնածուփն լսեց: Նրանք մօտեցան այն տեղին, որտեղ գիծանը մուտք էր գործում անտառի մէջ. սակայն ստիպւելիցէն կանգ առնել, որովհետեւ քանի մի մարդոց ձայներ լսեցին:

—Ո՛վ է, թող կանգնի, եթէ իր գլուխը չի մեղքանում:  
Այս խօսքերի վրա եկւորներն զգացին, որ նրանց կրճքերին  
դէմ առին հրացանի փողերը:

Նրանք կանգ առան:

Ո՛վ եռ.—հարցրեց նորից միւսնոյն անձանցից, որ առաջին  
անգամ խօսեց:

—Մենք ենք. Ս. Երրորդութեան ճորտերը—եղաւ պատասխանը:

—Ո՛ւր էք գնում:

—Գոչալի մօտ:

—Ո՞րտեղից էք գալիս:

Եկւորներից մէկը աներկիւղ պատասխանեց և աւելցրեց.—Սնի-  
սէ, դու չե՞ս:

—Այո, ես եմ,—պատասխանեց Սնիսէն և շուտ մօտենալով  
սկսեց անձանցիցի դէմքը դիտել.—ահ, էլ չկարողացայ ճանաչել,  
Թուրիկա՞ն... դալուսող բարի:

—Բարի տալ Աստուած,—պատասխանեց նորեկը.—Ո՞րտեղ է  
Գոչան, անհրաժեշտ է նրան շուտով տեսնել:

—Քաջլեցէք.—պատասխան տւեց Սնիսէն և առաջ ընկաւ:

Թուրիկէն այն միջնորդների թւիցն էր, որոնք Մթիուլների մօտ  
էին զրկւած, ու իւրաքանչիւր մոխեցի սրտատրոփ սպասում էր  
նրանց վերադարձին:

Ի՛նչ ասել կուզէ, որ Սնիսէն էլ էր սրտով ցանկանում իմանալ,  
թէ ի՛նչ պատասխան են տւել մթիուլները, արդեօք պիտի պատե-  
րազմէին բարեկամ ժողովրդի հետ, թէ առանց արիւնհեղութեան  
կը հեռանային իրարից. բայց որպէս զի ընդհանրութեանը օգտակար  
զաղտնիքը աշկարաց չդառնար, չէր համարձակում հարցնել անգամ:

Նա չէր նկատել մինչև անգամ, որ այս հարցումի ցանկու-  
թիւն ունէր և այս առարկայի մասին իր լռապահութեամբ ապա-  
ցուցանում էր, թէ ո՞ր աստիճան յարգում էր ժողովուրդի բաղ-  
դաւորութիւնը և թէ ինչպէս հասկանում է լռութեան անհրաժեշ-  
տութիւնը:

Միջնորդներն քարացածի պէս լուած հետեւում էին Սնիսէին,  
և եթէ այն միջոցներում մաս-մաս կտրատէին, նրանց յանձնւած  
պատասխանի մասին մի խօսք անգամ չէին ասել տալ անտեղի:

Նրան լաւ էին հասկանում, որովհետեւ զարերից ի վեր ընտելացել էին, թէ երբեմն աւելորդ ասած խօսքը որքան չարիքներ կարող է ծնեցնել:

Նրանք մտան Գոչայի մօտ, որ եկեղներին տեսնելուն պէս շտապով ոտի վրա ելաւ, ներս տարաւ միջնորդներին ճննջարանը և նստեցրեց հասարակ տախտակեայ թախտի վրա, որը ձորի նահապետին պնկողնի տեղ էր ծառայում:

Օնիսէն, որ այնտեղ և եթ կանգնած էր մնացել, սպասում էր Գոչայի հրամանին, ու ծերունին էլ շատ չուշացրեց:

—Այ տղայ, սրանց հետ եկար.—հարցրեց նա Օնիսէին:

—Հայ, հայ.—եղաւ պատասխանը:

—Լաւ, գնա, ընկերներիդ նայիր: Աշխատեցէք զգոյշ լինել,—ասեց Գոչան և հրամայապէս աւելցրեց.—ոչ ոքին աչքաթող չանէք թէ չէ ձեր աչքերը կը փորեմ:

—Վայ գլխիս,—բացականչեց Օնիսէն և հպարտութեամբ աւելցրեց.—դեակ չո՛ւնենք գլխներիս. մնաք բարով.—կամացուկ գլուխ տւեց և դուրս եկաւ:

—Աստուծ աջողութիւն տայ,—օրհնեցին նորեկներն ու, թէև հայրը ձայն չհանեց, սակայն այնպիսի դորովալից աչքեր հետևեցրեց, այնչափ բերկրանք էր դրոշմել նրա դէմքի վրա որդու պատասխանելու վայրկեանին, որ ամեն մարդ պարզապէս տեսնում էր, որ Օնիսէն ծերունու համար և լուսին էր և արև:

## XVII

Մինչդեռ մոխեցիները պատրաստութիւն էին տեսնում և իրենց տեղերը ամրապնդում, նուզզար իշխանն էլ անգործ չէր ձեռքերը խաչմերած և ամեն կերպ աշխատում էր իր զօրքերի թիւը բազմացնել, որպէս զի անհամար բազմութեամբ ձորի վրա յարձակումն գործէր և յանկարծակի ուժգին հարւած տալով՝ կոտորէր մոխեցիների պերխ յամառութիւնը:

Սա չէր բաւականանում օսերի և մթիուների բազմութիւն զօրքերով, ուզում էր այս գործի մէջ խառնել Խանութ ձորեցիներին, ճարթիներին և զուգամաղարցիներին, որոնց մօտ մարդիկ էր զրկել և սրանցից պատասխանի էր սպասում օրէցօր: Բացի սրանցից նա

սպասում էր նաև լեզվիներին, որոնց խօստմունքի վրա յուսադրւել էր մեծապէս:

Նուգգարը իբր փորձած այս տեսակ գործերում, զիտէր որ գործը հեշտութեամբ կը վերջանար. նա կտրիճ էր և անողորմ, նրա համար արիւնհեղութիւնը վարձութիւն, խնձոյժ էր. սակայն վախենում էր Գոչայից, որի հնարագիտութիւնն և փորձառութիւնն էլ հռչակած էր բոլոր լեռներում:

Մի անգամ առաւօտեան արշալուսին մթիւլներէ բանակը մտաւ բարձրահասակ և բարեկազմ, մորուքաւոր մի մարդ: Շղթայագործ շապիկը, թանգագին ականքով և ոսկեբան ընդելուզած թուրը, ոսկեբան սաղաւարտը հաստատում էին, որ նա հասարակ մթիւլների չէր պատկանում, և որ և է յայտնի տոհմի ծագումից պէտք է լինէր: Նրա խոժոռ դէմքի արտայայտութիւնը, հաստ ու բաւականաչափ շուռ եկած պոռոչները, հաստ ու երկար քիթը լայն պինջերով և փոքրիկ կոպերով պշնած աչքերը, ապացուցանում էին նրա արիւնկզակ և անընկճելի, գործունեաց բնաւորութեան տէր լինելը: Խիտ և միացած ունքերը, խորշոմներով ծածկւած ճակատի հետ, միասին աւելի սաստիկ կարծրասրտութեան դրոշմն էին դնում նրա առանց այն էլ անհրապոյր դէմքի վրա, և քանի մի զծեր, որոնք աչքի կապերից զանազան կողմեր էին ցրւում շառաւիղների պէս, աշկարա հաստատում էին, որ նա իր կեանքում համբերութեան հետևող չպէտք է լինէր: Նրա մերձենալուն պէս մթիւլների բանակը շարժւեց և գլխաւորները ողջունելով դիմաւորեցին նրան:

Բազմութիւնը, մօտենալուն պէս, զգակները հանելով և խոնարհ գլուխ տալով ասում էր.

—«Անողութիւն իշխան Նուգգարին, իշխան Նուգգարի ծառայ եկք», և սա էլ հպարտաբար և վեհ գլխաշարժով հազիւ էր ողջունի արժանացնում նրանց:

Նուգգարը մօտեցաւ այն կէտին, որտեղ բանակի մէջ տեղում կրակի մօտ մի ետինջի էր փռած և վրան ծալսպատիկ նստեց: Մթիւլների զօրքերի գլխաւորները կանգնեցին նրա բոլորի շուրջը:

—Նստոտեցէք, խօսք ունեմ ասելու,—կարճ, բայց հրամայական եղանակով և բամբ ձայնով սկսեց Նուգգարը:

Մթիուները նստոտեցին ծալապատիկ, դալազարդ դաշտի վրա և համբերութեամբ սպասում էին, թէ ինչ կասէր այն միջոցներում Քարթլի (վրացի) ազգականների օժանդակութեամբ զօրեղացած իշխանը:

—Ժողովուրդ, — ձայնեց Նուզդարն և ձայնի մէջ կատաղութիւն նշմարեց. — Գուդամադարացիք, խանդոսձորեցիք և ճարթլեցիք մերժել են մեզ դործակցելու, և երդում եմ Անանուրի Ասուածաճնի անունով, որ անողորմաբար կը պատժեմ նրանց այս մերժումի պատճառով, կը թունաւորեմ նրանց կեանքը և արևը կը խաւրցնեմ... Վաշխատեմ, որ նրանց զեղում այնքան ծաղիկ չլինի կարմրած, օրքան նրանց արիւնով կը ներկեմ, այնչափ ազուաւ չգտնի, որչափ մարդոց ես սեւազգեստեմ... Սեփական ձեռքովս դուրս կը գջլեմ նրանց զխաւորների սրտերը, բերկրանքով կը քամեմ արիւնն, ու սիրտս կանդորբի այն ժամանակ, երբ աջս կը զգայ նրանց վերջին թրպրտոցը:

Այստեղ Նուզդարը կանգ առաւ քանի մի վայրկեան. նրա աչքերը դժոխային կրակով բորբոքեցին և արնակալեցին: Ասողների թւում զանուում էին շատ այնպիսիները, որոնք մահին հազար անգամ ժպտաղէմ կը զիմաւորէին և յարատե կռիւներում սրտները կարծրացրել էին, բայց սրանք էլ չկարողացան զսպել իրենց և Նուզդարի խօսքերից ինչ որ մի յուզմունք անախորժ սառսուրի պէս անցաւ նրանց մարմնով: Ժողովուրդին զերել էր կատարեալ լուութիւն, բոլորը շունչներն իրենց էին քաշել:

— Սակայն այս ապագայի դործ է... Մոխեցիներին պատժելու մենք էլ հերիք ենք... Ես երկար պատերազմել էի կամենում մտածում էի յանկարծ տրորել նրանց, սակայն վեհապետ... Թուրը մի անգամ վրա բերինք և դարձեալ միւսնոյնը կը լինի... Ել չունանք, զնանք այսօր և եթ:

Նուզդարը, որ համակրական զիժինայի (օւլասին) էր սպասում, յանկարծ կանգ առաւ. Ժողովրդի լուութիւնը չընդհատեց նոյն խկամենաթեթեւ ցնցումով: Նուզդարը նայեց նրանց և կատաղութեան բոցերով շառագունեց զէմքը:

— Այս ինչ է պատահել, Ժողովուրդ. — արտասանեց նա փքր ինչ զսպելով իրեն:

Սրա պատասխանն էլ կատարեալ լուծիւն եղաւ: Նուզզարն այլ ևս չհամբերեց և կատաղաբար գոչեց.

Այստեղ ևս դաւաճանութիւն է, թէ երկիւղ... լաչառ կին-մարդիկ... Ո՞վ կը համարձակւի ինձ մերժել... Ո՞վ չի հետևի ինձ:

Նուզզարը մի քիչ յետ կանգնեց ու սկսեց ժողովին աջնպէս նայել, կարծես ուզում էր աչքերով լափիլղել:

Մթիուկների գլխաւորներից մէկը դուրս եկաւ և ուզզակի Նուզզարի դէմ ու դէմը կանգնեց:

— Ես, ցաւդ տանեմ... չեմ հետևի քեզ:

Այս խօսքերի վրա Նուզզար վառօղի պէս բռնկեց, բռնեց թրի կոթից, սակայն զսպեց իրեն դարձեալ:

— Ի՞նչ... դժն էս ասում այդ... բայց դու ճշմարիտ ես... Ո՞վ է լսել տղամարդութիւնդ, կին-մարդոց մօտ մնալն է գործդ... Գնա տուն, նստիր կին-մարդոց մօտ, ինչ ունես դու պատերազմի դաշտի վրա... Զօրքդ քո փոխարէն մի ուրիշ ղեխաւոր կը ջոկի և, կասկած չկայ, նա քեզանից աւելի սրտալի կը լինի:

Մթիուկը, որ համբերութեամբ սպասում էր Նուզզարի խօսքի վերջաւորութեանը, յանկարծ մէջքում դրսուեց սակայն մեղմաբար դողդոջող ձայնով հասկացրեց, որ վիրաւորական խօսքերը խորապէս էին խոցոտել նրա սիրտը:

— Մեր գլուխը, Նուզզարաւու, թագաւորը քեզ պահ տուեց... Անունդ այսօրուայ օրս թագաւորի անուն է և գիտես, որ նրա անունն է քեզ պահպանում, Մթիուկը Վրաց թագաւորի դէմ գէնք չի շարժի. ինչի ես անպատուում ինձ... Մեզնից ոչ ոք չի դաշ, ոչ ոք էլ չի օգնի քեզ... ինչ ունենք մոխեցիների հետ բաժնելու... Այդպէս չէ, ժողովուրդ. դիմեց Մթիուկը միւսներին:

— Ճշմարիտ է, ճշմարիտ, Լոմիսը վկայ. — փոթորկի նման լսեց բազմութեան ձայնը: Այս տեսնելով՝ Նուզզարը փոքր ինչ վախեց ու շփոթեց, որովհետեւ չէր սպասում թէ գործը այսպիսի ելք կու-նենայ: Բայց և աջնպէս, իբրեւ փորձառու մարդ, զսպեց իրեն շուտով և աւաւել մեղմօրէն հարցրեց.

— Ուրեմն ինչի համար խօսք տուիք, ինչի էիք խոստանում:

— Դու մեզ ասիր, որ միւս կողմի Օսէթի վրա պէտք է յարձակենք. ասիր որ մեր թագաւորի դէմ ապստամբւում են, խա-

բեցիր թէ մոխեցիները Օսերի կողմն են բռնել և այս պատճառով հետեցէք ինձ ասիր...

—Ճշմարիտ է... մոխեցիները օսերի կողմն են անցել, պէտք է պատժենք:

—Սուտ է, սուտ.—միաձայն գոռաց ժողովուրդը:

Նուզգարն կատաղաբար պռոշներն էր կրծոտում և սրտանց էր ցանկանում իմանալ թէ ով յայտնեց մթիուլներին այս համբաւը:

—Ո՞վ ասեց ձեզ, թէ սուտ է.—յանկարծ գռչեց Նուզգարը յուսալով թէ կիմանայ դաւաճանողի անունը:

—Իրենք ասին, իրենք.—լսեց քանի մի մարդկանց ձայներ:

—Եւ դուք էլ հաւատացիք, հա, հա, հա, չարխնդաց քահանով ծիծաղեց Նուզգարը:

—Խնչի չէինք հաւատալու:

—Այն պատճառով, որ ձեզնից վախեցել են և ուզել են ձեզ զլխից հեռացնել:

—Սուտ է, սուտ.—կրկնեց ամբոխը միաձայն:

Նուզգարը բոլորովին կապտեց կատաղութիւնից, որովհետեւ նա սովոր չէր այսպիսի պատառախանների: Այն վայրկեանին եթէ կարողանալու լինէր բոլորին էլ այնտեղ և եթէ կոտորել, կը կոտորէր, գերմակ կը դարձնէր և ցրիւ կը տար աշխարհիս ամեն կողմերը. բայց այնպիսի դրութեան մէջ էր գտնուում, որ ստիպաւ՝ իրեն պէտք է զսպէր:

—Ուրեմն նրանց խօսքը հաւատում էք.—հարցրեց Նուզգարը:

—Հաւատում ենք, Լոմին է վկայ.—պատառխանեցին քանի մի մարդիկ.—հաւատում ենք այն պատճառով, որ մոխեցի մարդիկ էին, երգեցին ու նշան տւին... նշանը ինչպէս կարելի է դրժել. այնպէս չէ, այ ժողովուրդ:

—Ձի կարելի դրժել, չէ... գնանք, տուն վերադառնանք.—գոռում էին մթիուլները, որոնք տեղերից վերկացան, խառնեցին ու զիմեցին դէպի բինէն:

Բաւականին երկար միջոց էր տեւում շղաւոցն ու աղմուկը և դադարեց միմիայն այն ժամանակ երբ մթիուլները առաջին բլրակի յետեն անհետացան: Դատարկ գաշտի վրա մնաց մի մարդ միայն:

նակ. նա տխրամամ գէմքով խորասուզել էր մտածմունքների մէջ  
և ամբողջովին զուռնաւել էր:

Տեւեց բաւական երկար ժամանակ, թէև այն մարդը կանգնած  
էր այնպէս քարացած, կարծես շարժելու անընդունակ լինէր: Յե-  
տայ շարժեց դէպի վեր գլուխն յանկարծ, ատամները կրճտեց և  
բացագանչեց սպառնալով. — Դուք ինձ քացով տաք թէ որ այս օր-  
ւայ դէպքի պատճառով ես ձեզ չպատժեմ:

### XVIII

Թրուսօ ձորի անցքում, որտեղ նեղանցքից Թերքն է դուրս  
հոսում և փռւում է Վորի տափարակի վրա, օսերի վերջին Սքրո-  
ղանա գեղի մօտ բաւականին բազմաթիւ ժողովուրդ էր խմբւել  
և ուրախ երգեցողութեամբ ժամանակ էր անցկացնում: Թէև այս  
ուրախութիւնն ու անընդհատ զիծիւնան հաստատում էին, որ հա-  
ւաքւած բազմութիւնը մի տեսակ զւարճութեան մէջն էր գտնւում.  
սակայն աշկարա կերպով երևում էր, որ նրանք որ և է մօնի  
պատճառով չէին հաւաքւած, որովհետև այն շրջանում ոչ մի աղ-  
ջիկ չէր գտնւում, և ոչ էլ որ և է ժողովրդական հանդէս կատա-  
րելու էին խմբւած: Երբն էլ ոտից սկսած մինչև գլուխը սպա-  
ռազինւած էին և անթիւ ու անհամար բեռնած ձիաները խրին-  
ջալով գետին էին դոփում ամբալներով և անհամբեր զանազան  
կողմերն էին ձգւում:

Ամբոխը շարժումի մէջն էր և մի կերպ ալեկոծւում էր. երե-  
ւում էր, որ այս տեղարեւքում չէր ուզում բանակ գցել և շու-  
տով ճանփա պէտք է ընկնէր:

Սրանք զւարճանում էին այնպէս, երբ Թրուսօ ձորի գալարքի  
գեծանի վրա սաստիկ թող բարձրացաւ և իր վրա շարձրեց եր-  
գեցողների ուշադրութիւնը:

Ամենքը լռեցին, ցրեցան զանազան կողմեր և սկսեցին նայել  
դէպի այն կողմը, որտեղ թողն էր բարձրացել: Թողը կարծես թէ  
առաջ էր շարժւում, տեղափոխւում էր և հաւաքւած ժողովրդին  
էր մօտենում հետն ու հետը:

Պարզապէս երևում էր, որ քանի մի հեծւորներ չափ էին  
գցում իրենց ձիաները. բաց ձիերի բարձրացրած թողն ու ճան-

փի ափին թափւած քարերը արգելում էին նայողներին տեսնել եկւորներին: Անցաւ փոքր ինչ ժամանակամիջոց այս դրութեան մէջ և մի սեպացած ժայռի ափի վրա յանկարծ, կարծես թէ գետնի տակից բուսան, երևեցան քանի մի հեծւորներ: Այն տեղում գեծանը այն աստիճան նեղ էր, որ մարդս կը կարծէր, թէ եկւորները մտադրւելիս լինէին քարափից ձիերով դէպի վար ցատկել: Ժայռը այնչափ էր թեքւել պառկման, որ ձիաւորները երկնքի կամարի վրա նկարւած էին երևում և վեհատեսիլ և իրոտ յափշտակող պատկեր էին ձևակերպում: Մարդս չէր ուզում աչքը հեռացնել նրանցից. սակայն բուհապէս երեւածները բուհապէս էլ անհետացան բարձրաբերձ ծործորի ետևը այնպէս, կարծես թէ վայրկենաբար երեւածները վայրկենաբար էլ գետնի տակ կուլ զնացին:

Թէև այս պատկերի փոփոխութիւնը յանկարծաբար պատահեց, բայց հաւաքւած բազմութեան համար այս կարճատև միջոցն ևս բաւական էր ճանփորդներին ճանաչելու համար:

—Նուզզարան, Նուզզարան գալիս է.—բացականչեց բազմութիւնը ուրախութեամբ և նրանց դէմքերը փայլեցին բերկրանքի ժպիտներով:

Այո, սա Նուզզարան էր, որ իր ձիուն չափ էր գցում օսերի բանակի կողմը, որտեղ նրանք խոստմունքի համեմատ պէտք է ժողովէին, այստեղ պէտք է միանային մթիուլների հետ և ընդհանուր ուժով ասպատակէին ձորը:

Կասկած չկայ, որ սրանք սրտանց էին ցանկանում պատժել այն ժողովուրդին, որը նրանց և միւսների մէջ տեղում բհիրի պէս ցցւել էին և ամեն մի միջոցից զրկել էին հարևան փոքրիկ ազգութիւններին անպատիժ ասպատակումներ գործելուց Վրաստանի զանազան կողմերի վրա:

Օսերը ցանկանում էին սրի անցկացնել մոխլեցիներին, որոնք մէջտեղը գտնւելով և չորս կողմից թշնամի ազգերով պատած լինելով՝ առանց աչք խփելու պաշտպանում էին դէպի Վրաստան բացող մեծ դռուը և սայրասուր «գեօրգան» <sup>1)</sup> շարժում էին աջ ու ձախ հայրենիքի բարեբաղտութեան համար:

<sup>1)</sup> Թրի մի տեսակն է:

Մանօթ. Թարգմ.

Ել ի՞նչ ասել կուզի, որ Նուզգարի օժանդակութիւնը կատարելապէս համապատասխանում էր օսերի ցանկութիւններին, և այս պատերազմը վերջացնելուն պէս՝ սրանք յուսադրուում էին, որ իրենց կը մնայ լայնածաւալ ասպարէզ անարգել աւազակութիւններ գործելու համար:

Օսերը վերին աստիճանի ուրախացան Նուզգարին տեսնելովը. բայց նայողները շատ էին զարմանում նրա հետ եկած փոքրաթիւ բազմութեան պատճառով. որովհետեւ նրանք Նուզգարի հետ և մթիւնների գալուն էին սպասում: Օսերը բոլորովին անտեղեակ էին մթիւնների տուն վերադառնալու մասին. որովհետեւ այս վերջինները անցել էին ուղղակի Լոմիս սարի միւս կողմը և Սքրողանայում հաւաքւած օսերին այլ ևս չէին հանդիպելու:

—Ի՞նչու է մենակ գալիս. զարմանալի է Ասուած վկայ.— ասում էին օսերը, բայց դարձեալ հանդարտուում էի մի քանիսների պատասխաններով.

—Երևի զօրքը յետեւցն է գալիս. իսկ դա առաջ է եկել կարգադրութիւններ տալու համար:

Այս խօսքերից յետոյ օսերի բանակից անջատւեցին ընտրւած քանի մի զլխաւորներ, նստեցին ձիաների վրա և զլուխ շշմեցնող արագութեամբ վազեցին Նուզգարին դիմաւորելու:

Բոլորն էլ արշաւում էին երգելով, հրացան արձակելով և զիծինա տալով ու հետզհետէ մօտենում էին իշխանին, որը իր ընկերների հետ միասին սարի գեծաններից արդէն վար էր իջել և իր գերացած ձիուն, բոլորովին քրտնքի մէջ կորած, վազեցնում էր:

Օսերն ու Նուզգարը արշաւեցին միմեանց դէմ և ձիանրի սանձերը քաշեցին միայն այն միջոցում, երբ նրանց ճակատները համարեա թէ դիպչում էին իրարու: Երախները լայն բացած ձիերը յետ ընկրկեցին, յետևի ոտների վրա չաբամեցան (բուդուրմիշ) և քարացածի պէս կանգ առան:

—Դա փանդափ ուստ (եկած ճանփէդ բարի լինի). ողջունեց Նուզգարն ու պատասխան ստացաւ.

—Դա զուդա ուստ:

—Ուրիշ... ինչպէս էք, ի՞նչ էք անում:

—Լաւ ենք Աստու և քո ողորմութիւնով:

—Ձօրքերը հաւաքւեցին:

—Հաւաքւեցին. բոլորն էլ այնտեղ են,—պատասխանեց մէկը, որ եկած օսերի գլխաւորն էր:

—Ո՛ր դժ Դօ չէ՞ պակսել.—հարցնում էր հոգատարութեամբ Նուզդարն ու աշխատում էր ուրախադէմք երևալ, թէև ճակատը կնճռուտել էր և երեսի վրա դառն հոգսերը իրանց դրոշմն էին դրել:

—Եթէ դուն ձայն կը տաս, զի կը մերժի.—շողոքորթեց օսն ու աւելցրեց.—ամենքն այստեղ են, ցաւդ տանեմ. ամենքն էլ իրենց գլուխները յետ են դրել քեզ ծառայելու:

Յոյսի նշույլներ փայլեցին Նուզդարի դէմքի վրա, որի վրա ժպիտներ երևեցան. սակայն իսկոյն և եթ զոյնը նետեց և նոթերը կիտեց:

—Շնորհակալ եմ, շնորհակալ, իմ Նաւրուզ:

—Ի՞նչ, ես հրամայում, ցաւդ տանեմ, ծառայութեանդ արժանի չեմք, չէ արևս գիտենայ...

Այնպէս չէ, տղերք, դիմեց օսերին:

—Հայ, հայ, որ այդպէս է,—վկայեցին միւսները:

Նուզդարը լռեց, որովհետև նրա միտքը առաւել տանջող առարկայի վրա կենտրոնացաւ, դիւրատար չէր նրա կացութիւնը. որովհետև օսերի աներկիւղութիւնը հիմնւած էր միմիայն մթիւղ-ների ձեռնտութեան վրա և լաւ գիտէր, որ եթէ թրուսօցիները նրանց հեռանալու մասին մի բան իմանային, սրանց պահելն էլ դժար կը լինէր:

Ուրեմն ինչպէս վարւէր նա, որ օսերը ևս չցրւէին և սրանց վրա իր ազդեցութիւնը չկորցնէր, հէնց որ այս վերջինները բուն ճշմարտութիւնն իմանալու լինէին: Յայնտէր ուղղակի ամեն բան թէ ժամանակին սպասէր:

Ահա սրանք էին այն դառը հոգսերը, որոնց վճիռ տալու պատճառով մնացել էր ամբողջովին կաշկանդւած և այսօր բերանի խօսքը կտրուել էր այն մաքուր, որը միշտ հպարտաբար էր խօսում:

—Աճրթ, չարդ տանեմ, քիչ մնաց մոռանայի, սկսեց Նաւրուզը:

—Ի՞նչ է պատահել.—կարճօրէն հարցրեց Նուզդարը:

—Լէզգիների մօտ զրկւած մարդն էլ վերադարձաւ:

—Վերադարձան, որտեղ է, ցոյց տուր շուտով.—անհամբերսւթեամբ արտասանեց Նուզդարն ու աչքերը փայլեցին:

—Այնտեղ, բինումն է,

—Ի՞նչ համբաւ բերեց... ասա, ասա ինձ շուտով:

—Յայտնեց, լէզզիներն էլ այս գիշեր կիջնեն.—ասեց Օսն ու Նուզդարն ուրախութիւնից ցնծաց:

—Ճշմարիտն ես ասում, ճշմարիտը,—մոացրիւ վրա ընկաւ Օսին, բայց շուտով ինքն իրեն զսպեց, դրսուեց, ձիու վրա շտկւեց և ակռեքները կրճտելով բացազանչեց.—«Հիմի ես գիտեմ»:

Այս վայրկեանից յետոյ Նուզդարը դարձեալ փոխւեց և եթէ փոքր ինչ առաջ մի տեսակ կոտորած և խոնարհութիւն էր նշմարւում սրա իօսակցութեան մէջ, այժմ կատարեալ հրամայողի կերպարանք ստացաւ:

—Ուրեմն զիմենք զէպի բինէն և էգուց մոխեցիների արևը խաւրեցնենք: Այս ասեց, թափ տւեց ինքն իրեն, շտկւեց և ձին խաղացրեց մորակելով նրան: Մի ակնթարթում նրանք լոյս ընկան Օբրոդանայի բանակի մէջ և Նուզդարը հրամաններ էր տալիս իր ամբողջ վեհութեամբ:

## XIX

Նուզդարի կարգադրութիւնները զաղտնի չէին մնում մոխեցիների համար, որովհետեւ մի կողմից աչք էին ածում օսերին կըտրիճ մոխեցիները, որոնք աներկիւղաբար երբեմն որ կողմիցն էին դիտում թշնամու զօրքերին և երբեմն որ կողմից. իմանում էին մանրամասնօրէն նրանց դրութիւններն ու ամեն օր տեղեկացնում էին ձորի նահապետ Գոչային: Միւս կողմից բաց բերանութեան սովոր օսերը չէին կարողանում գաղտնիքը պահել և իւրաքանչիւր լուր մի կապ բուրդի համար յայտնում էին ուրախութեամբ: Մի երեկոյ, երբ տակաւին արևը մայր չէր մտել, Գոչան ժողովեց իր զօրքերը և օրհնելուց յետոյ արտասանեց.

—Այ ժողովուրդ, այ ջամահաթ. Մթիուլների Նուզդարին բացասելով՝ մեզանից պատերազմը դարձեալ չվերացաւ... նրանց փոխարէն Նուզդարին օգնութեան են հասել լեզզու զօրքերը... Ինչո՞ւ թագցնեմ ձեզանից, պատերազմը սաստիկ կը լինի: Նատերի մայ-

րերը կը սևազգեստուեն, շատ ծնողներ այլ ևս չեն զրկի իրենց զաւակներին... այն պատճառով, որ թշնամին զօրեղ է և Նուզգարն էլ արինով կշտացող չէ... Իմացէք, հանաք բան չէ, սակայն պատերազմը որքան էլ սաստկանայ, որչափ էլ գործը դժարանալու լինի, այնչափ էլ յաղթութիւնը մեծ արժէք կունենայ... Ի՞նչ անենք, թէ մեզանից իւրաքանչիւրի վրա տասը հոգի կը գան... Հարիւր հոգի էլ գալու լինեն, այնու ամենայնի յաղթութիւնը մեր կողմն է լինելու. նրա համար, որ մենք Աստու և մարդկանց առաջ արդար ենք... Ներս են խուժում մեր օջաղները, սպառնում են մեզ թալանել, մեր կին-մարդոց պղծել ու այս տեսակ գործին դիմադրելով մահանալը, Ասուած ինքն է վկայ, որ երանելի է... Որո՞նք են ձեր մէջ բաղդաւորները, որո՞նց սրտերն են բաբախում, այ գրակաւորներ, որո՞նց բազուկներն են ցնցւում... Ամենքը մէկի րամար և մէկը բոլորի համար:

Թող իր մօր էրիկը դառնայ այն մարդը, որ իր դուռը կտրող թշնամու առաջից փախչի, ով որ մահից երկնչի... Երրորդութիւնը թող խռով կենայ նրան:

— «Օ-ձմէն» եղաւ ընդհանուր փոթորկանման պատասխանը, որը մօտերքում գտնւող լեռները կրկնեցին արձագանք տալով: Բազմութիւնը ալեկոծւեց և խառնւեց. այն ինչ Գոշայի աչքերը արտասուէքով լցւեցան և նրա սիրտն այլ ևս չկարողացաւ համբերել և նախանձելով բացազանչեց:

— Երանի ձեզ, որ ջահիլներ էք, կեանքն ու ոչոքը եռւում է ձեզանում: Երանի է ձեզ, որ պէտք է մարտնչէք: Երանի նրան, որ այսպիսի դէպքերում կը մեռնի, երկնային արքայութեան դուռը բաց է նրա առաջ:

Այս խօսքերից յետոյ բոլորը խմբեցին եկեղեցու պարսպի մօտ, որտեղ մեծ-մեծ կաթսաներում մատաղ էր եփւում. որպէս զի ընդհանուր հացկերոյթի ժամանակ իրարու միաս բարով ասէին և իւրաքանչիւրը նշանակւած տեղերը գնալով սեւուհ պարտաւորութիւնը կատարէր. ով գիտէ, էգուց որի արևն է խաւրելու, որի մայրն էր ողբալու դառն արտասուէքով:

## XX

Մթնաժող էր, օրը կամաց-կամաց մթնում էր: Արևի ճողա-  
գայթերը տխրաբար անջատում էին սարերի զազաթներից: Մա-  
ռախուղը սիրտ առած աներկիւղ բարձրանում էր երկրի ծո-  
ցից և խիտ գոլորշու նման տարածւում էր դալարազարդ զաշտի  
երեսին: Սիօն գեղի զանգակատանից՝ գիշերային պահնակներին նշան  
տրւեց իւրաքանչիւրը իր տեղը գնալու: Զանգակի ձայնը խոնաւու-  
թիւնից ծանրացած օդի մէջ մի տեսակ տխրաբար էր ղողանջում:  
Մոխեցի գիշերապահների վրա մի առանձին անհանգստութիւն էր  
նկատւում: Բոլորի դէմքերի վրա հոգածութեան դրոշմ էր դրւել,  
խիստ զգուշութիւնից աչք ու ականջ էին դառել. ամենաթեթեւ  
շարժումն անգամ նրանց աչքերից էր վրիպի ու եթէ աչքով էլ  
չնշմարէին, գոնէ շարժումի ձայնը անպատճառ կը լսէին: Այսպէս է  
մարդուս կացութիւնը, երբ նա յուզմունքի մէջ է գտնւում, մի  
բանի է սպասում: Մոխեցիներին էլ յայտարարեցին, որ եկող գիշեր  
Նուզզարը յարձակումն է գործելու նրանց վրա և բոլորն էլ պատ-  
րաստւում էին անզգուշութեան պատճառով բան չտանուլ տալ. իսկ  
մնացած բաները յանձնել էին Ասածու կամքին և հանգամանքների  
բերմունքին:

Այս ընդհանուր պատրաստութեան միջոցում մի մարդ ներս  
բացեց Գոչայի ննջարանի դուռն ու այնտեղ և եթ զուան մէջ կանգ-  
նեց: Մերունին չոքած էր գլխաբաց փոքրիկ խաչելութեան առաջ  
և ջերմեռանդաբար ազօթում էր. նա բարձրացրել էր դլուխը դէպի  
վեր և երկնքին էր յառել աչքերը: Յուզւած սրտի ալիւնը արա-  
զաբար էր շրջան կատարում. միշտ կանոնաւոր սանրած մազերը  
նեարդերի ցնցումից զզզւել էին: Զիզ կերպով ձգւած վզի վրա  
արիւնով լցւած երակները, ծերութիւնից կնճուած մորթու տակից  
դուրս էին ցցոտւել: Նա լուռ էր, սակայն դէմքի շարժումներին  
աշկարա երևում էր, որ զգացմունքը բոցանման պատել էր նրան  
ամբողջովին, բոլորւել էր սրտի շուրջն ու արիւնը եռացնում:

Ներս եկողը չհամարձակեց խանգարել այս սուրբ անդորրու-  
թիւնն, սա ևս գերեց կամաց-կամաց այս պատկերի ոյժից. նախ  
դիմադրեց, վերջը հետզհետէ գլուխը կախեց, ծնկները թեքւեցան  
և մնաց չոքած: Նա զգաց, որ ծերունու աղօթքի մէջ իր անունն

էլ էր յիշուում ու մի րոպէ ևս և պարզ կերպով լսեց՝ «Տէր Աստուած, դուն պարզ երես պահես իմ Օնիսէին» և այս խօսքերի վրա դռան մէջ գտնուող ցնցւեց: Յնցւեց նաև ծերունին նրա շարժումից, յետ նայեց և տեղից վեր կացաւ ուժասպառ: Մօտեցաւ օրօրւելով իր զաւակին, ձեռքը դրեց նրա գլխին և սրտայոյզ՝ դողդոջուն ձայնով կրկնեց.

—Տէր Աստուած, զաւակիս պարգերես պահի... Վաղորոք կարձեցրու սրա կեանքը, եթէ արատաւորելու լինի, եթէ իր գդակը ցեխոտէ...

Այս խօսքերի վրա՝ ծերունու նիհար այտերի վրա գլորւեցին աղի արտասուներ, որոնք շուտով սրբեց ու զգուշութեամբ աջ և ձախ կողմերը նայեց, կարծես վախում էր, որ ոչ ոք չտեսնէր: Օնիսէի սիրտն այլ ևս չդիմացաւ ծերունու սիրտ մեղմացնող տեսքին, ինքն էլ մորմոքւեց և աչքերը փայլեցին ինչպէս արևը անձրևի միջոցին: Նա զգաց թէ որչափ սիրելի է իր հօրը, թէ ինչպէս պէտք է տրուի նրա սիրտը երբ որդին փորձանքի մէջ կը դառնէր և այս փորձանքն այնտեղ և եթ մօտիկ յետևն էր կանգնած: Քանի մի վայրկեանից յետոյ լուսնեակի շողերով կը փայլատակի անագորոջն գնդակն և օդի մէջ շաչելով ու սուլելով առաջ մղւած, ո՞վ գիտէ, որի դէմքի ժպիտն է հանգցնելու, որի կեանքի աղբիւրն էր սառցնելու ցրտաշունչ սառնամանիքի պէս:

—Մամայիսի «հայր», ի՞նչի ես լալիս:

—Ո՞վ գիտէ, քեզ ի՞նչ է հանդիպելու... —կամացուկ շշնաց ծերուկը:

—Ի՞նչ պէտք է պատահի, —սիրտ տւեց Օնիսէն. —Աստուած ողորմած է... Թշնամուն կը քշենք և ինքներս էլ ողջ ու առողջ կը մնանք:

—Աստուած անի. —արտասանեց ծերունին և ձեռները դողդոջեցին. —գնա, Օնիսէ, ժամանակ է... Թող Աստուած պահպանէ քեզ... Եթէ մահանա ս, այն էլ Տիրոջ կամքն է... մի անգամ ծընւածը միանգամ է մեռնում... սակայն տղամարդու պէս մեռիր... մեռիր այնպէս, որ ձորեցիք քեզ թաղելը անարգանք չհամարեն իրենց:

—Այդ աչքովդ կը տեսնես:

—Ձմռանաս, որ ինչ տեղ քո հայրն ու պապն են աշխարհք եկել ու թաղւել, որտեղ նրանց ոսկրոտիքն են հանգչում, այնտեղն են ուզում խլել ու չթոյլ տաս... Նրանք էլ պակաս նեղ օրեր չեն քաշել իրենց հողն ու ջուրը պաշտպանելու ժամանակ, զետիւնը նրանց արիւնով մինչև խորքերն է կշտացել... այժմ դուք գիտէք, թէ ինչ կանէք...

Ալեորը դադարեց, յառեց աչքերը որդու վրա, փորձեց քանի մի անգամ բան ասել, բայց բերանի խօսքը հատաւ ու մի փոքր ժամանակից յետոյ ձեռքը պարզեց և հազիւ կարողացաւ արտասանել.

—Գնա՛, բաւական է...

Օնիսէն շուտափոյթ դուրս եկաւ ու դիմեց ուղղակի նշանակած տեղը. այն ինչ ալեորը աչքերը հետեցրեց մինչև այն ժամանակ երբ որդին կանհետանար տների ետևը: Յետոյ կամացուկ հառաչեց, ձեռքով շփեց ճակատն ու արտասանեց.

—Այժմ գնամ, զօրքը տեսնեմ:

## XXI

Օնիսէն<sup>29</sup> դուրս գնալուն պէս դիմեց դէպի Նարովան լեռան կողմը, որտեղից պէտք է անցնէր լեռան գիծաններով և իր գնդի զլխաւորի հրամանատարութեամբ դիտէր թշնամուն և սրա մօտենալը շուտով յայտնէր:

Նա գնում էր սովորական զգուշութեամբ երբ նրա առաջ բաւականին հեռաւորութեան վրա մէկը ոտնազարկով քարը շարժեց: Օնիսէն վազրի նման ցառկեց ճանփի միւս կողմը, թագնեց քարի ետևն ու սկսեց զիշերացին լռութեան խանդարողին սպասել:

Անցաւ բաւական երկար միջոց, մինչև որ դալարուն զեծանի վրա մէկը կերեւար, սակայն ոտնաձայնը, որ հետզհետէ մօտենում էր, պարզ կերպով լսում էր: Անցաւ րոպէ ևս ու ճանփի վրա երեւեցին մի մարդ ու կնիկ, որոնք իրենց առաջից մի բեռնած էշ էին քշում: Աշխարհ երևում էր, որ սրանք հովիւներ պէտք է լինէին և սարից պանիր էին բերում զօրքի համար:

Օնիսէն համոզւեց սրանց մոխեցի լինելու վերաբերութեամբ և հէնց այն էր, ուզում էր իր թագստից դուրս գալ երբ չանկտրծ լսեց իր անունն ու տալ արեց:

Նկերները խօսում էին բարձրաձայն և կարծես միմեանցից դժգոհում էին:

Երկուսն էլ մօտեցան այն տեղին, ուր Օնիսէն էր թաղնաժ և մի քարի վրա նստոտեցին:

—Աղջի.—սկսեց մարդը.—Ասուած է վկայ, որ էլ չեմ կարող համբերել... հալւեցայ, մաշւեցայ քեզ սպասելով, բայց քո սիրտը չկակղեց:

—Ո՞նց անեմ, քանի որ քեզ չեմ սիրում:

—Համբերում էի ու տես... մինչև այժմ ծովը չի ցամաքէր այն կրակից, որ սրախ մէջն է վառում... դոնէ մեռնէի, քեզ ձանփա կը տրւէր:

—Ի՞նչի ձեռք չես վերցնում ինձանից... Ի՞նչ ես ուզում ինձանից... զօռով հօ չեմ սիրի քեզ:

—Ի՞նչպէս ձեռք վերցնեմ քեզանից. կինս ես, աշխարհում ես էլ գլակ ունիմ գլխիս:

—Ուրեմն ի՞նչ անեմ:

—Ի՞նչ պէտք է անես, կնութիւն արա ինձ:

—Դէհ, բաւական է, ի սէր Աստուծոյ, այ տղայ... ասի որ չեմ սիրում ու վերջացաւ:

Մարդը լռեց քանի մի րոպէ և մնաց զլուխը կախած. յետոյ կամացուկ վեր նայեց, նրա աչքերը փայլատալում էին:

—Լռի՛ր, աղջի... Մեղքացիր գոնէ քեզ, եթէ ինձ չես մեղքանում:

Աղջիկը նայեց նրան և ուսերը վեր բարձրացնելով պատասխանեց.

—Ի՞նչ ունիմ մեղքեղալու. կըսպանես, սիրտդ կը հանդստանայ...

—Ուրեմն այլ ևս լինելու բան չէ... իմն չեմ դառնայ, ինձ չեմ սիրի:

—Ձէ:

Մարդը բռնեց խանչալի կոթը, բայց դարձեալ ինքն իրեն զսպեց:

—Ուրեմն նրանը պէտք է դառնաս... կարծում ես թէ թոյլ կը տամ... քեզ կը յանձնեմ նրան... Ասուած է վկայ, քեզ էլ կըս-

պանեմ, նրան էլ, ինձ ևս՝ կըսպանեմ և քեզանով ուրիշին չեմ ուրախացնի:

—Ահա, սպանիր ինձ... Ի՞նչի ես ուրիշներին սպառում. ի՞նչ ես ուզում նրանից.—աղջիկը ցոյց տեց իր կուրծքն ու կատաղութիւնից յուզւած աչքերով սկսեց նայել նրան:

Մարդը վրդովեց և վրա չարձակեց.

—Ուրեմն մեռնել ես ցանկանում... լաւ. կըսպանեմ, սակայն այն ժամանակ կըսպանեմ, երբ քեզ համար Յնիսէի գլուխը բերեմ...

Այս խօսքերն ասելով՝ մարդը թռաւ ճանփի միւս կողմը և վազեց դէպի վար Յնիսէի բինի կողմը: Աղջիկը ծագ, վազեց դէպի այնտեղը, ուր մարդը բլրակի ետեւն անհետացաւ և դառնազին դուռեց:

—Գուզոււտու, Գուզոււտու... մի՛ կորցնիր ինձ, ի՞նչ ես անում... վնչ ինձ, քամբադդիւս.—բացազանչեց նա ու վազեց դէպի սեպացած բարձր ժայռը:

Այն էր, հէնց քարափին մօտեցաւ. ու կամենում էր զահալի-ժել այնտեղից, երբ մէկի ձեռքը բռնեց նրան և կրծքին սեղմեց:

Աղջիկը յետ նայեց և ուժասպառ հաղիւ կարողացաւ բացազանչել.

—Յնիսէ, ու մարդու բազուկի վրա կախեց:

## XXII

Գիշերւանից բաւականին ժամանակ էր անցել: Անտմայ, պարզ երկնակամարի վրա փայլելում էր լուսնեակը և մեղմ ճառագայթներով էր լուսաւորում այնտեղաբեկները:

Յնիսէն ու Զիճիան միեւնոյն տեղն էին մնացել նստոտած, որտեղ նրանց սիրոյ կրակը բորբոքեց ու գերեց. երկուսն էլ տակաւին մտացրիւ դրութեան և քնարբութեան քաղցր երանութեան մէջ էին խորասուզւած: Լուսնեակի ճառագայթները խաղս էին անում նազաբար Զիճիայի սիրայոյզ դէմքի հետ, որին Յնիսէն հանգիստ չէր տալիս և դէպի լուսինը դարձնելով մերթ նայում էր սիրաբորբոք և մերթ խելագարի պէս պաշպշում ու գրկախառնում էր:

Նրանց ամեն մի հպումից, իւրաքանչիւր շարժումից նրանք զողզողում էին ինչպէս ուռենու տերեւը չարամճի քամու ձեռից ու

վշտախառն բերկրութեամբ լեցուն սրտերը տրոփում էին: Երկուսն էլ մոռացել էին իրենց որտեղ եղածը, մոռացել էին իրենց զլուխն ու ճգնում էին միմիայն իրարու մէջ ի մի ձուլւէին:

Սրանք այս ինքնամոռաց կացութեան մէջ էին գտնւում երբ յանկարծ մի հրացան ճալթեց ու սիրահարները ոտի ելան շուտով:

Երջանկութեամբ ու ինքնամոռացութեամբ յափշտակւած Օնիսէն միմիայն հիմա մտաբերեց իր պարտաւորութիւնն և նրա սիրտը ճմլեց անագորոշն ճշմարտութեան ճիրանների մէջ: Նրա աչքերի առաջ ընկնող Գոչալի պատկերը, յիշեց նրա խօսքերն ու ինքնահառանութիւնից ստիպւած արտասուեց: Նրա աչքի առաջ նկարեց իր ընկերների վրդովեցուցիչ կոտորածքի պատկերը, որոնք Օնիսէի վրա յուսադրւելով անհոգաբար քուն էին մտել:

Ներքէն սկսեց արագարձակ հրացանների ճալթիւնը. հրացանները փայլատակում էին, բոցերը լեզւանման երկարանում էին և իրենց գոռոցով առիւծանման կտրիճները կեանքներն էին մարում:

Օնիսէն նայեց Զիձիալին, սիրտը մորմոքեց և մտքովն այս խօսքերն անցան—փորձիչի պէս զրաւեց և փորձիչի պէս կործանեց ինձ... մնաս բարով, իմ տղամարդութիւն:

Այս խօսքերի վրա նա սլացաւ՝ դէպի վար, որպէս զի իր ընկերների հետ մեռնէր և յետ գնէր ընդհանուր ինքնամոռացութեան կորուստը, բաց ուշ էր արդէն. թշնամին տիրել էր արդէն նրանց պատւարը, իսկ նրանց դրօշակը ծածանում էր Օնիսէի ընկերների դիակների վրա:

### XXIII

Օնիսէն վազում էր զլուխն առած դէպի վար և խելք ու միտքը կորցրած՝ այլ ևս չէր հասկանում թէ ինչ էր ուզում անել:

Թշնամին վերցրել էր մոխլեցիների առաջին ամբուլթիւնն և սրա պաշտպանողներին համարեա թէ բոլորին էլ սրի էր անցկացրել: Դժբաղան զգում էր թէ որչափ թանգ արժեց իր ինքնամոռացութիւնն, որի պատճառով այնքան կտրիճներ, առանց իրենց ճակատագիրը փորձելու, տղամարդութիւն ցոյց տալով կոտորւեցան. խղճահարութիւնը սկսեց նրան դառնապէս տանջել: Նրա

միտքը զբաղւած էր միմիայն խղճի խայթոցով և խոցոտւած սիրտը մի աներևոյթ ոյժից կտրատուում ու քրքրուում էր:

Նա վազում էր և դէմքը խելադարի կերպարանք էր ստացել, գդակը վար էր ընկել, մազերը գզգզել և շորերը իրար մէջ էր խառնել: Խառնւած աչքերը, թէև յուսահատ, սակայն տարօրինակ կերպով էր այս ու այն կողմ ոլորում: Այլ ևս մարդ չէր կարող ասել, թէ ինչ էր արտայայտում նրա դէմքը այն վայրկեաններում, որովհետև նրա մոգքի հոսանքը փայլակի պէս արագածագ էր և իւրաքանչիւր ակնթարթում հազար տեսակ էր փոփոխւում: Նա վազում էր յաղթանակող թշնամու բազմի դէմ, որովհետև նրա խելքը գերել էր գլխումը ծագած առաջին մոգքից ու միմիայն այս միտքն էր առաջ մղում սեփական որոշումից զրկւած մոխեցուն: Այս դիտաւորութիւնն էր՝ մեռնել և մեռնել անպատճառ այն ձեռքով, որով իր ընկերները անշնչացան, մահանալ այն սրով, որ իր դրացիների անմեղ արիւնով ներկեց:

Հէնց այն էր Յնիսէն ներս մտաւ այն ճախնուտը, որտեղ յաղթանակող օսերը ուրախ-ուրախ իրանց «վարիադաթին» երգելով՝ ոտի տակ հաւսրում էին հայրենիքի պաշտպան շքնաղ դիակներն ու պատրաստուում էին դէպի իրենց բանակը դիմել, երբ նրան յանկարծ դէմ ընկան քանի մի մոխեցիներ, որոնք թշնամու վերցրած առաջին ամբուլութիւնից զերծ էին մնացել:

—Ո՛վ ես.—յանկարծ ճանփէն կտրեցին մոխեցիները, նրա կրծքին հրացանների լուլաները դնելով:

—Ես եմ,—կատաղաբար, բայց համարեա թէ լալով բացականչեց Յնիսէն, —արձակեցէք հրացաններդ, սպանեցէք ինձ... վարձք կը լինի ձեր հողուն:

—Վաչ ինձ, Յնիսէ.—արտասանեց մէկը և միւսները, վար թողեցին հրացանները:

—Փնռք Աստծուն, ողջ ես մնացել,—աւելցրեց միւսը:

Յնիսէն տխրաբար նայեց նրանց. բայց նրա աչքերը իսկոյն և եթ փայլակնապէս ցոլացին. նա կարծեց թէ իր խօսակիցը տեղեակ է նրա վարմունքի մասին և ծաղրում է. բորբոքեց ամբողջապէս և աներևոյթ կրակով այրւում էր, որն աւելի անտանելի էր նամանաւանդ, որ այն կրակը տարածւել էր նրա ամբողջ մարմնի

մէջ, բորբոքուում ուժգնապէս և իր զօրութիւնը ղգացնել տալիս:

—Սպանեցէք, արժանի եմ, սպանեցէք ինձ... Միք խնայի ինձ այլ ևս. իսէր Աստծու, —պաղատում էր նա և աղեխարշ արտասուներով ողբում, —սպանեցէք ինձ, ասում եմ, վարձք է ձեզ համար... Չլինի՞ թէ կուրացել էք, չէք տեսնում, որ կինմարդու պէս եմ լալիս...

Մոխեցիները ապշած նայում էին Օնիսէին և չէին կարողանում նրան հասկանալ:

—Ուրեմն մեղքներդ չեմ գալիս, չէ... կամենում էք, որ այսպէս տանջեմ... սխալեցիք, Աստուած է վկայ. այդպէս չի լինի... Օնիսէն այլ ևս աշխարհիս երեսին չի ման գալ, թշնամուն չի խնդացնի իր վրա: Ուրախանում էք, հա՛, ուրախանում էք, հա՛, հա՛, հա՛, ու Օնիսէն նետուեց թշնամու բանակի կողմը:

Առաջին ապշումից յետոյ ներկայ դտնուող մոխեցիները ուշքի եկան, ընկան Օնիսէի ետևից և բռնեցին:

—Ո՛ւր ես վազում, ի՛նչ ես անում, այ տղայ... խելքիդ վրա եմ թէ ոչ... ասում էին Օնիսէին, որ սաստիկ դիմադրում էր և աշխատում էր նրանց ձեռքից դուրս պրծնել:

—Ի՛նչ էք ուզում, ինչի՞ էք բռնում ինձ... որտեղ ընկերներիս կոտորեցին, այնտեղ էլ ես պէտք է մեռնեմ... եթէ այդպէս է, ահա ինքս կը սպանեմ ինձ, —արտասանեց Օնիսէն չափմախը վեր քաշած դաբանչի լուլէն բերանի մէջ դնելով, սակայն նրանցից մէկը ձեռքից դուրս գջլեց ու մահից ազատեց նրան:

Այնտեղ ներկայ եղողները կարծում էին, թէ Օնիսէն զժւել էր իր ընկերների կոտորածովը և, որովհետև չկարողացաւ ուշքի բերել, խլեցին բոլոր զէնքերն ու կապելով տարան նրան իրանց հետ:

—Անաստաճներ, ի՛նչ էք ուզում ինձանից, —բացականչեց Օնիսէն սիրտ մորմոքող կերպով և զայրութից աղեխարշ արտասուքներ թափեց. —Ի՛նչ էիք ուզում, թողնէիք մեռնէի... ամօթահար լինելս ձեզ ի՛նչ կաւելացնի:

Շարունակում էր դարձեալ շատախօսել Օնիսէն, որ հետզհետէ ստանում էր և խաղաղում. սակայն սրան էլ ոչ ոք չէր լսում. որովհետև բոլորն էլ վտանգաւոր կացութեան մէջ էին գտնուում և շտապում էին դէպի այն կողմը, որտեղ Գոչան ֆնացած զօրքերի հետ ամրացել էր:

## ԱԻԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՅ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Օ անցած փառքի վերջին բեկորներ!  
Նորից արթնացնում էք զուք իմ հոգում  
Անդարձ օրերի անգին պատկերներ  
Եւ խորին ցաւով իմ սիրտը լրցնում:

Ամեն մի բուն հող և ամեն մի քար  
Վրկայ է այստեղ դարաւոր փառքին.  
Այստեղ բոլորը սուրբ է ինձ համար,  
Ինչ որ ընկած է աչքիս առաջին:

Եւ այս տաճարներն, բարեպաշտութեան  
Եւ ճոխ արւեստի անխօս վրկաներ,  
Եւ այս արքունիքն թագաւորական,  
Եւ այս կիսաւեր խարխուլ պարիսպներ:

Այն հռուն կեանքի ուրախ աղմուկից  
Այսօր մեզ համար էլ ոչինչ չը մնաց.  
Բըլուրների տակ ծածկւած աչքերից՝  
Ամեն բան թաղւած, ամեն բան լռւած:

Էջմիածին, 1893 թ., մայիսի 10.

# ԿԵՆՊԱՆԻՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ<sup>1</sup>)

Հիւսիսային ծովերում լողում է մի տեսակ կինդանի, որին ճանապարհորդները տւել են «հրէշ» մականունը: Եւ իրան ինչ կարող է լինել աւելի աշխտակ, աւելի հրէշաւոր, քան այդ կենդանին: Երեւակայեցէք ձեզ, ընթերցող, մի արարած, որի գլուխը մի փոքր նման է մարդու գլխին, քնթի ներքեւում կ'աւծ են ահագին կոշտ բեխերը, իսկ բերանից դուրս են ցլւած երկու ահագին ժանիքներ, դէմքի արտայայտութիւնը վերին աստիճան զաւանային է: Մարմնի միւս մասը աւելի նման է ձկան քան կաթնասունի, թէև զա մի իսկական կաթնասուն է:

Այդ արարածը ծովակոպն է (морж), որի կաթնասուն լինելն ոչ ոք չի կասկածում միայն շնորհիւ այն հանգամանքին, որ նա ապրում է ջրերում, նրա մարմինը փոփոխւել է ստանալով մասամբ նմանութիւն ձկան հետ:

Ծովակոպերն ապրում են հասարակութիւններով. նրանք կամ լողում են միասին ովկիանոսում կամ՝ բարձրանալով ծովերի մէջ գտնուող ահագին սառույցների վերայ՝ պառկում են 15—20 անհատներից բաղկացած հօտերով, մնալով երկար ժամանակ այդ դրութեան մէջ: Ծովակոպերի որսալը շահաւէտ գործ լինելով՝ հիւսիսում բազմաթիւ ձկնորսներ զբաղւած են լինում դրանով: Բայց որովհետև ծովակոպերը սաստիկ ուժեղ և կատաղի զաւաններ են, ուստի յաճախ նրանց որսալը այնքան էլ էժան չի նստում ձկնորսներին. քիչ չէ պատահում, որ ձկնորսները ծովակոպերին հանդի-

պելով անկարող են լինում յաղթել նրանց և իրանք են զոհ դառնում կռելով սարսափելի զազանների հետ:

Զարմանալի միաբանութիւն է նկատուում այդ տարօրինակ կենդանիների շրջանում ընդհանուր պաշտպանութեան ժամանակ: Հէնց որ նրանցից մէկը վիրաւորւում է, իսկոյն հաւաքւում են հասարակութեան բոլոր անդամները և յարձակւում թշնամու վերայ: Կոպեկանդի և Պայէրի պատմելով, երբ ծովակովերից զոնէ մէկը նկատուում է հեռւից մօտեցող որսկանի նաւակը, նա իսկոյն սկսում է հաչելով և գոռգոռալով լողալ դէպի նաւակը: Լսելով նրա ձայնը համայնքի միւս անդամները նոյնպէս արթնանում են և նոյնպէս արագ լողում դէպի նաւակը: Կարճ ժամանակից յետոյ նաւակը շրջապատւում է կատաղած զազաններով, որոնք աշխատում են նաւակը շուռ տալ և ոչնչացնել ա.Պեն բան:

Այս դէպքում որսկանները աշխատում են որքան կարելի է շուտ փախչել-հեռանալ զազաններից, սակայն վերջիններից շուտ հեռանալը այնքան հեշտ բան չէ, որովհետև նրանք, զարմանալի արագութեամբ լողալով, յետ չեն մնում նաւակից: Ահա վերոյիշեալ գիտնականների խօսքերը.

«Ահա լսեցին հրացանների առաջին պայթիւնները և այս հանգամանքը աւելի ևս զրգռում է նրանց կատաղութիւնը: Սկսւում է կատաղի կռիւ. մի քանիսները (որսկաններից) կացիներով խփում են այդ սարսափելի սֆինքսների առջևի թաթերին, որովհետև զազանները ճգնում են վերջիններով շուռ տալ և փշրել նաւակը, միւսները պաշտպանւում են նետերով կամ թիակների սուր ծայրով հարւածներ են տալիս նրանց հաստ և ահագին զանգերին, կամ թէ վերջապէս հրացաններից գնտակներ են արձակում հրէշների լայն բացած և մռնչող բերանների մէջ: Սղը լցւում է կատաղի գոռոցներով, երկու կողմերն էլ կռւում են հաւասար եռանդով, ջուրը ալեկոծւում է և սաստիկ փրփրում: ջրի տակից երևան են գալիս նոր հրէշներ, միւսները մահառիթ վիրաւորւած լինելով խեղտւում են, ներկելով ջուրը իրանց արիւնով: Նաւակը փրկելու համար՝ թէ շուռ տալու վտանգից և թէ ծովակովերի ժանիքներից սաստիկ վնասելուց՝ յաճախ բաւական է լինում մահաբեր վի-

րաւորել այդ համարձակ և դիմացկուն կենդանիների առաջնորդին»<sup>1)</sup>։

Ծովային կաթնասունների մէջ, բացի ծովակովերից, կան նաև մի քանի ուրիշ տեսակներ, որոնց կեանքը նոյնպէս սաստիկ հետաքրքրական է։ Իբրև օրինակ կարելի է բերել ծովային կատուներին։ Երբ սկսում է «սիրային շրջանը», ծովային կատուների որձերը սկսում են մօտենալ ափին՝ թողնելով ծովերի խորքերը և ընտրելով ափի շարմար տեղերը՝ դուրս են գալիս ջրից ցամաքի վերայ և ամբողջ ծովափը բաժանում են իրանց մէջ։ Յայտնի բան է, որ այդ բաժանումը առանց ընդհարման չի անցնում։ աւելի ուժեղ որձերին յաջողւում է ստանալ աւելի մեծ և աւելի շարմար տեղերը։ Այդ բաժանումը կատարելուց յետոյ ամեն մի որձ պառկում է ծովափի այն տեղում, որը իր սեպհականութիւնն է դարձրել և սպասում է էգերին։ Մի քանի ժամանակից յետոյ այդ վերջինները իրաւ գալիս են ծովի հեռաւոր տեղերից և լողալով մօտենում են ծովափին։

Այդ ընդհանր սկսում է էգերի որսալը։ Ամեն մի որձ աշխատում է որքան կարելի է աւելի շատ էգեր բռնել, որոնց և տանում է իր սեպհական մասը։ Աւելի ուժեղ որձերը միշտ ունենում են աւելի շատ կանայք, քան թոյլերը։

Այդպիսով ամեն մի որձ իր սեպհական մասում կազմում է մի իսկական հարեմ, որին պահպանում է ամենայն խստութեամբ։ Խստիւ պահպանելու պատճառն այն է, որ որձերի շրջանում գոյութիւն ունի սովորութիւն՝ գողանալ ուրիշների էգերին. ամեն մէկը շարմար ընտրել է սպասում, որպէս զի յափշտակի իր հարեանի կանանցից մէկին կամ մի քանիսին։ Այդ գողութեան սովորութիւնը յաճախ կռիւներ է պատճառում որձերի միջև։

Պատահում է, որ երկու հակառակորդներ՝ կռւելով մի էգի համար՝ այնքան են ձգձգում խեղճ էգին, որ նա աւանդում է իր հոգին։

<sup>1)</sup> Ա. Բրէմ. — Կենդանիների կեանքը (ռուսաց թանգման), հատոր II, էջ 342.

Այժմ՝ թողնելով այն կենդանիներին, որոնք հասարակական տեսակէտից այնքան էլ հետաքրքրական չեն՝ անցնենք կապիկներին: Այդ վերջինները պատկանում են այն կենդանիների թ. ին, որոնց հասարակական կեանքը բաւական զարգացած է:

Կապիկների համարեա բոլոր տեսակները ապրում են առանձին համայնքներով, որոնցից ամեն մէկը ունենում է իր առաջնորդին: Իբրև առաջնորդ կապիկների հօտերում ծառայում է մի որձ: Պէտք է աւելացնեմ, որ առաջնորդ դառնալն այնքան էլ հեշտ բան չէ: Առաջնորդ դառնալը հետևեալ կերպ է պատարւում. որովհետև ամեն մի հօտում լինում են մի քանի որձեր, որոնցից ամեն մէկը, յայտնի բան է, ցանկութիւն ունի զեկավար լինելու, ուստի բանը առանց կռիի չի անցնում: Կռիւը որձերի մէջ լինում է երկարատև և կատաղի, ով վերջ ի վերջոյ յաղթող է հանդիսանում նա ճանաչւում է իբրև իշխանաւոր ամբողջ հօտի համար: Առհասարակ կապիկները մեծ նշանակութիւն են տալիս Ֆիզիկական ուժին. այդ է պատճառը, որ հօտի բոլոր անդամները հեշտութեամբ և ինքնակամ հպատակւում են ամենազօրեղին: Խսկ նրանք, որոնք ինքնուկամ չեն ընդունում առաջնորդի հպատակութիւնը, այնքան ծեծ են ուտում վերջինի կողմից, որ ստիպւած են լինում հնազանդել:

Այդ կերպ կազմւած համայնքը յաճախ ձեռնարկւում է ճանապարհորդութիւնների, մանաւանդ սնունդ ձարելու նպատակով: Կապիկների այն հասարակութիւնները, որոնք ապրում են զիւղերի կամ քաղաքների մօտ, սնունդ ձարելու համար դիմում են շատ հեշտ միջոցի. այն է արշաւանքներ են անում մօտակայ այգիները, աղարակները, ուր ահագին փնտսներ են տալիս:

Մտնելով մի որ և է այգու մէջ՝ կապիկները չեն բաւականանում իրանց սովածութիւնը հագեցնելով, այլ աւերում են նրան հիմնաւորապէս, շատ պտուղներ իրանց հետ տանելով և շատ բան էլ ոչնչացնելով:

Այս երևոյթը այնքան սովորական բան է Ասիայում և Ամերիկայում, որ այդ երկիրներում յաճախ զիւղատնտեսները չեն իմանում ինչ անեն, որպէս զի կարողանան ազատել անտանելի այցելուներից: Մենք սերմում ենք, իսկ հունձը տանում են կապիկները—ասում են շատ անգամ արաբները: Այս դէպքում կապիկ-

ների հետ կուեկը աւելի ևս զժաւարանում է նրանով, որ դոքա վերին աստիճանի խելօք և խորամանկ կենդանիներ են. դոքա համար նշանակութիւն չունին և չեն կարող նրանց առաջն առնել ոչ կողպէքները, ոչ պարիսպները, ոչ էլ սողնակները (завижа): Շատ անգամ կապիկները ուղղակի պարսպի գլխով թռչում ընկնում են աջգու մէջ, կամ թէ բաց են անում աջգու դուռը յետ քաշելով սողնակը:

Աջգու մէջ մոնեկուց առաջ կապիկներից մի քանիսը նախ զգուշութեամբ դիտում են իրանց շուրջը, որպէս զի իմանան թէ արդեօք վտանգ չի կարող սպառնալ հօտին: Ըստ մեծի մասին կապիկները միայն այն ժամանակ են համարձակւում աջգու մէջ մոնել, երբ համոզւում են, որ այդեպանը բացակայ է: Այս դէպքում էլ (այսինքն երբ վճռում են մոնել աջգու մէջ) կապիկները չեն մոռանում զգուշութիւնը. այդ երեւում է նրանից, որ կողոպուտը սկսելուց առաջ, նրանք իրանցից մի քանիսներին պահապան են նշանակում, որոնք ամենևին չեն մասնակցում կողոպուտին, այլ, կանգնած աջգու զանազան մասերում, ուշադրութեամբ նայում են դէպի դանազան կողմերը, որպէս զի նախօրօք նկատեն մօտեցող աջգետէրերին ու իսկոյն յայտնեն համայնքին:

Երբ պահապանները նկատում են հեռւից այդեպանին, իսկոյն անհանդիստ ձայներ են արձակում, որից յետոյ ամբողջ հօտը անհետանում է աջգուց: Պատահում է, որ պահապաններից մէկը կամ մի քանիսը մոռանում են իրանց պաշտօնը և սաստիկ զրաււում են կողոպուտով. սակայն դրա պատճառով նրանք այնքան սաստիկ պատժւում են համայնքի կողմից, որ հազիւ թէ երկրորդ անգամ համարձակին կրկնել իրանց սխալը: Պատիժը կայանում է նրանում, որ համայնքի միւս անդամները բռնում են իւր պաշտօնը վատ կատարող պահապանին և այնքան են ծեծում, որ քիչ է մնում մեռնի:

Ենթահիւ այդ զգուշութեան սակաւ է պատահում, որ կապիկները կողոպուտի ժամանակ փորձանքի մէջ ընկնեն: Երբ այդեպանը վրայ է հասնում, նրանք անհետանում են աջգուց, բայց այդ դեռ չի նշանակում, թէ նրանք բոլորովին փախչում են: Ո՛չ, նրանք թագ են կենում մօտակայ անտառում միայն կարճ ժամանակով, մինչև որ այդեպանը կը հեռանայ աջգուց, ապա նորից վերադառնում են, որպէս զի շարունակեն իրանց գործը:

Ճանապարհորդները պատմում են, որ կապիկները՝ ներս թափելով մի որ և է ագարակի մէջ՝ չդնելով իրանց բոլոր յոյսը պահապանների վրա, կատարում են կողոպուտը սուս ու փուս, որպէս զի ոչ մի ձայն չհասնի այգետէրին: Սակայն այդ բանը յաճախ մոռանում են շատ ջանել կապիկները և ուրախութիւնից սկսում են թռչկոտել և ձայներ արձակել: Հէնց որ այդ պատահում է, աւելի հասակաւորները իսկոյն վրա են թափւում մեղաւորի վրայ և ապտակներ է որ ստանում է մեղաւորը իր յանցանքի համար:

Ճանապարհորդ Հէյզլինը՝ նկարագրելով կապիկների պաւիան կոչւող տեսակի հօտը՝ շարունակում է. ...«Ամբողջ համայնքը ուղեւորւում է սնունդ ձարելու համար: Նրանց սնունդը բաղկանում է կոկոններից, տերեւներից, պտուղներից ու հացահատիկներից: Ընդհանուր ոյժերով նրանք շուռ են տալիս մեծ քարերը, որովհետեւ զրանց տակին լինում են որդներ, չաղ թրթուռներ, բզէզներ և խիտունջներ (որոնց նոյնպէս ուտում են պաւիանները): Հէնց նոյն այդ ժամանակ ջանել որձերը ուրախ խաղեր են սկսում, ծիծաղելի կերպով վազվզում են, ծաղրում են իրար... Ահա նոցանից մէկ Ֆրանսո յանդուզն քաղաքավարութեամբ մօտենում է հետաքրքիր էգին. դա համեստ կերպով և միևնոյն ժամանակ մեծ արժանապատուութեամբ շուռ է տալիս իր երեսը նրանից (Ֆրանսո կապիկից): Ֆրանսոն աւելի ևս յանդուզն է դառնում: Սակայն էգի օրինաւոր ամուսինը նկատեց իրբի վարմունքը, սկսեց աղմուկ, կռիւ, և Ֆրանսոն ստիպեց ամօթով փախուստ տալ... 1):

Վերև մենք տեսանք, որ կապիկները համարձակ աւազակներ են և մեծամեծ վնասներ են հասցնում գիւղատնտեսութեանը: Հարկաւոր է աւելացնել, որ մի քանի երկիրներում նրանց յանդգնութիւնը աւելի ևս հեռու է գնում. կապիկները այդ տեղերում՝ չբաւականանալով քաքաքից հեռու գտնւող այգիները կողոպտելով՝ յաճախ մտնում են նոյն իսկ գիւղերի և քաղաքների մէջ սնունդ ձարելու համար: Սակայն այդքան լրբութեան առաջանալուն մասամբ նպաստել են իրանք մարդիկ:

1) Ա. Բրէմ—նոյն տեղը, հատոր I. էջ 196:

Բանը նրանումն է, որ մի քանի երկիրների բնակիչները համարում են կապիկներին սուրբ կենդանիներ և ոչ միայն չեն հալածում նրանց, այլ և շատ անգամ պահում մեծացնում են ծառեր, որոնց պտուղները նշանակում են կապիկների համար. երբ այդ ծառերի պտուղները հասնում են, իրանք բնակիչները պտուղներին ձեռք չեն տալիս, այլ թողնում են մօտակայ կապիկների համայնքների համար:

Ի՞նչ ասել կուզէ, որ այդ «սուրբ կենդանիները» հէնց այդպիսի մի բանի են սպասում. որոշ ժամանակ դուքա միասին գալիս են «սուրբ ծառերի» մօտ և ուտում են պտուղներ ինչքան որ կարող են: Մեծել կապիկներին համարւում է մեծ մեղք այդ մարդկանց կողմից նոյն իսկ այն զէպքում, երբ նրանք մեծ փնասներ են հասցնում:

Հասկանալի բան է, որ այդպիսի վերաբերմունքը աւելի ևս կը սաստկացնէր կապիկների բնական յանդգնութիւնը:

Առաւել որ Հնդկաստանում բնիկները ոչ միայն իրանք չեն զսպում կապիկներին, այլ և սաստիկ զայրանում են, երբ այդ երկրում բնակւող եւրոպացիք սկսում են հալածել ձանձրացուցիչ և փնասակար կենդանիներին:

Շնորհիւ այդ հանգամանքի կապիկները շատ տեղերում լրբաբար մտնում են ամեն տեղ, նոյն իսկ տների մէջ կերակուր ճարելու համար: Ալթիէդ Բրէմը հետեւեալ ծիծաղելի դէպքն է պատմում այդ մասին: Մի անգլուհի—Լէդի Բարկէր—որը ապրում էր Հնդկաստանում, ցանկացաւ իր տանը սարքել բուն եւրոպական ճաշկերոյթ, ուստի և հրաւիրեց բազմաթիւ հիւրեր: Ճաշկերոյթի օրը Լէդի Բարկէրը կարգի բերեց ճաշի սեղանը և նրա վրա դրսեց այն ամեն ուտելիքէնները, որոնք առ հասարակ դարսում են Եւրոպայում: Արդէն ամեն բան պատրաստ էր և հիւրերը շուտով պէտք է հաւաքւէին, ուստի տիկին Բարկէրը կարճ ժամանակով հեռալաւ ճաշարանից իր սենեակը, որպէս զի հագնւի. ծառաներն էլ մի ինչ որ է պատճառով դուրս գնացին: Վերջապէս տիկինը դուրս եկաւ իր սենեակից առօր-փառօք հիւրերին դիմաւորելու համար և ինչ տեսաւ! Ճաշարանում գտնւում էին բազմաթիւ հիւրեր, սակայն ոչ հրաւիրւածները, այլ նրանց փոխարէն շնորհ էին բերել...կա-

պիկները! Օգտւելով այն հաւգամանքից, որ ճաշարանի պատուհանները բաց էին, կապիկների ամբողջ մի հօտ ներս էր մտել ճաշարանի մէջ ուր նրանք անուշ էին անում սեղանի վրայ դարսած համեղ ուտելիքները»...

Մի ուրիշ անգամ նոյն կապիկները էլի մեծ ցաւ պատճառեցին տիկին Բարկէրին: Տիկինը ունէր մի փոքրիկ շուն Ֆիւրի անունով: Այդ Ֆիւրին ատելով ատում էր կապիկներին և միշտ աշխատում էր նրանց խռկել Բարկէրի տան պատշգամբից, երբ նրանք այցելութիւնով գալիս էին տիկնոջ տունը: Այս բանը բոլորովին դիւր չէր դալիս կապիկներին, որոնք վճռեցին հանել իրանց վրէժը ձանձրացուցիչ Ֆիւրից, որ և կատարեցին հետեւեալ կերպ: Մի անգամ երբ կապիկները էլի եկել էին այցելութիւնով տիկնոջ մօտ, նրանցից մէկը զարմանալի արագութեամբ բռնեց Ֆիւրիին, վազեց մօտակայ ծառի մօտ և թռաւ ծառի վրայ, տանելով իր հետ նոյնպէս և Ֆիւրիին. մի քանի ուրիշ կապիկներ էլ թռան ծառի վրայ, ուր սկսեցին ձգձգել, ճիւղել խեղճ Ֆիւրիին, ուշադրութիւն չդարձնելով նրա ողբազին զոհումներին: Վերջն էլ կապիկները վայր գցեցին ծառի բարձրութիւնից Ֆիւրիին, որ և իսկոյն սատկեց <sup>1)</sup>:

Մեզ արդէն յայտնի է, որ հասարակական կեանքի զարգացումը միշտ ազդում է մատաղ սերունդների զարգացման և աճման վրայ. կենդանիների այն տեսակը, որը ունի մի բաւական զարգացած հասարակական կեանք, միևնոյն ժամանակ աւելի շատ է հոգում նոր առաջացած սերունդների համար քան թէ ստոր հասարակական կեանք ունեցող կենդանիները:

Եթէ այդ տեսակէտից նայենք կապիկների վրայ, մենք կը համոզենք, որ այդ օրէնքը ճիշտ է նաև նրանց նկատմամբ: Կապիկները մեծ հոգսեր են տանում իրանց ձագուկների համար, որոնց ըստ մեծի մասին սաստիկ սիրում են: Արդէն բազմաթիւ ֆակտեր են յայտնի, որոնցից երևում է, որ կապիկները ընդունակ են նոյն իսկ իրանց անձը զոհել իրանց ձագուկներին չիրկելու համար: Բերեմ

<sup>1)</sup> Բրէմ—նոյն տեղը: հատ. I, էջ 162:

այդ Ֆակտերից միայն մէկը: Ահա տեսէք թէ ինչ է պատմում Շումբուրգը:

...«Ինձ վիճակեց տեսնել յիրաւի սրտաշարժ օրինակ ինքնազոհ մայրական սիրոյ: Ես արդէն ուզում էի վերադառնալ դէպի իմ նաւակը, յանկարծ զլխիս վերեւ գտնւող ծառերից մէկի վրայ հնչեցին վախեցած կապիկի ձայները, որից սլարդ երևաց, որ դա կապիկի ձագուկ էր: Նրան մայրը մոռացել թողել էր փախչելու ժամանակ: Այդ ժամանակ ինձ հետ գտնւող հնդկացիներից մէկը բարձրացաւ ծառի վրայ, իսկ ձագուկը, տեսնելով այդ օտարին, սկսեց բարձրաձայն արտայայտել իր վախը: Յանկարծ մօտակայ ծառից լսեց վերադարձած մօր պատասխանը... Սակայն այստեղ նրան (մօրը) խփեցին հրացանից. թէև նա սկզբում սկսեց փախչել, բայց լսելով իր սիրելի ձագուկի նոր ողբազին գոչումները... նա թէև զժւարութեամբ (որովհետև վիրաւորւած էր), բայց էլի ցատկեց այն ճիւղի վրայ, ուր գտնւում էր ձագուկը: Արագութեամբ դնելով նրան (ձագուկին) իր մէջքի վրայ, մայրը ուզում էր արդէն փախչել, յանկարծ՝ շնայած, որ ես սաստիկ արգելել էի, հրացանը թնդաց երրորդ անգամ (հրացանի գցողը հնդկացին էր) և մահացու վիրաւորեց մօրը: Նոյն իսկ այդ ժամանակ, կոււելով արդէն մահի հետ, նա էլի դեռ կրծքին սեղմում էր իր սիրելի ձագուկին և էլի փորձում էր փախչել (ձագուկի հետ), սակայն այդ փորձերը էլ չէին կարող յաջողւել. կապիկը ընկաւ գետնի վրայ մեռած <sup>1)</sup>»:

#### Վ Ե Ր Ձ

<sup>1)</sup> Բրէմ-հնոցն տեղը, հատ. I, էջ 241:

## ՓԱՌՔԻ ՏԵՆՁԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ

Երբ քո սիրով ու գգւանքով հմայւած,  
ես քո առջև լուռ ծունկ էի խոնարհած,  
եւ նայելով քո նազելի պատկերին՝  
խորհում էի, որ դու իմն ես, ո՞վ անգին.  
Դու լաւ գիտես, որ ինձ այդ քաղցր ժամերում  
Փառքի տենչը կարծես բընաւ չէր յուզում.  
Դու լաւ գիտես, որ ես ունայն աշխարհի  
Աղմկալի կեանքից իսպառ հեռացած,  
Պոէտ անունն ինձ թւում էր տաղտկալի.  
Որ կեանքի մէջ երկնային կուսից վատակած,  
ես խուլ էի ու անտարբեր բընաւին  
Մարդկանց անվերջ և՛ զովեստին, և՛ ծաղրին:  
Եւ մի՞թէ ինձ կարող էին, ո՞վ ընկեր,  
Հասարակաց ծաղր ու ծափը վրդովել,  
Երբ հայեացքդ սրտիս խորքը թափանցած,  
եւ այնպէս մեղմ ձեռքով գլխիս խոնարհած,  
Դու քաղցրաձայն շրշնջալով ականջիս՝  
Հարցնում էիր—«Ասա, ընկեր սիրելիս,  
Բախտաւոր ես, սիրում ես ինձ անսահման,  
Արդեօք երբէք էլ ուրիշին, ինձ նման,  
Դու չեմ սիրել. դու ինձ չեմ տալ մոռացման...»  
Իսկ ես... ես լուռ, ես հազիւ հազ ինձ զսպա՛հ,  
Երջանկութիւնն ողջ էութիւնս պաշարած,

Կարծում էի, թէ այդ քաղցր վիճակում  
 էլ չեմ տեսնիլ երբեք ես դառն անջատում:  
 Կարծում էի, կեանքն էլ չունի ապագայ,  
 Թէ անջատման դաժան օրը էլ չի գայ...  
 Բայց ի՞նչ եղաւ... ցաւ, արտասուք և տանջանք,  
 Ուխտի դրժումն, նենգ զգացում, սև լուտանք —  
 Այդ բոլորը յանկարծ, խարխուլ շէնքի պէս,  
 Փլէց գլխիս... Եւ էլ այժմ ի՞նչ եմ ես,  
 Եւ ի՞նչ տեղ եմ: Ահա մենակ ու լւիկ,  
 Որպէս ճամբորդ, որին դաժան փոթորիկ  
 Կաշկանդել է խուլ, ամաչի մի տեղում,  
 Ես կանգնած եմ, և ամեն ինչ իմ աչքում,  
 Իմ շորս բոլոր մոլթ-խաւար է երևում:  
 Եւ մի նոր իղձ, մի նոր տենչանք այս ժամին  
 Իորբոքում են ու աղմկում իմ հոգին.  
 Փառք եմ ուզում, որ անունըս փառաւոր  
 Քո լսելիքն ալեկոծի ամեն օր,  
 Որ ամեն տեղ, ամեն բոպէ ու վայրկեան  
 Քեզ պաշարեն փառք ու հռչակն իմ անւան.  
 Փառք եմ ուզում, փառք փափագում ես միայն,  
 Որ քո շուրջը իմ համբաւը բարձրաձայն  
 Օդ դղրդի: Եւ դու խաղաղ ժամերին  
 Լուռ ունկնդիր աննենգ, անկեղծ իմ ձայնին,  
 Յիշես, ինչպէս դառն հրաժեշտ քեզ տալով,  
 Եւ մեր տխուր անջատումը ողբալով,  
 Վերջին անգամ, խոր գիշերին ես այգում  
 Քեզնից յուսով ջերմ սէր էի աղերսում:

## ԲԺՇՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ԲԺՇ. Թ. ՁԱՔԱՐԵԱՆԻ

(Շարունակութիւն <sup>1</sup>)

Բ.

Անցնենք այժմ հոգեկան և ջղային հիւանդութիւնների ուսումնասիրութեան, որը անխցելի կերպով կապւած է հոգեբանութեան զարգացման հետ:

Եթէ այն ամենը, ինչ որ յիշեցինք Փիզիօլոգիական հոգեբանութեան արած գիւտերի մասին, հետեւանք էին մարդկային մտքի բարձր մշակման. եթէ նրանք արդիւնք էին ժամանակակից գիտութեան անխուսափելի պահանջներին, միւս կողմից հոգեկան և ջղային հիւանդութիւնների ուսումնասիրութիւնը մի այնպիսի կենսական պահանջ է, որը կեանքը ամեն քայլափոխում դնում է գիտութեան առաջ: Այն օրից երբոր գոյութիւն են ունեցել խելացնորութիւնը, ինքնասպանութիւնը և ոճրագործութիւնը, կեանքը ակամայ բացադրութիւն է պահանջել մարդկային խելքից հոգու այդ հրէշաւոր գործունէութիւնների պատճառները իմանալու համար: Այդ հարցերով կեանքը մէկ-մէկու ետեւից բաղխել է մարդկային այլ և այլ մասնագիտութիւնների դռները. նա զիմել է և՛ կրօնքին և՛ բարոյական փիլիսոփայութեան և՛ քաղաքական տնտեսութեան և՛ քաղաքային տնտեսութեան և՛ վիճակագրութեան և՛

<sup>1</sup>) Տես «Մուրճ» 1894 թ. № 1:

իրաւաբանական դիտութիւններին: Սակայն ոչ մէկը նրանցից չէ կարողացել լիովին բաւականութիւն տալ այդ անխուսափելի սահանջին: Աւելի խիստ և անողորմ է հանդիսացել այդ զէպքում կրօնը, որը իւր սկզբունքներով պէտք է հիմնւած լինէր միմիայն սիրոյ և արդարութեան վրայ: Մինչև այսօր էլ եկեղեցին իւր զոհները փակում է այն թոյլ և թշուառ ինքնասպանների դիակի առաջ, որոնք ամենից աւելի կարօտ են ողորմածութեան և կարեկցութեան: Իսկ նորա վերաբերութիւնը զէպի այն ողորմելի արարածները, որոնք անւանուում են խելացնորներ, եղել է վերին աստիճանի անգութ և տմարդի: Կրօնի անարժան և տգէտ ներկայացուցիչները համարել են այդ թշուառներին դիւահարներ, որոնց մէջ իբր թէ բուն են դնում սատանաները և չաչ ողիւները, և անկարող լինելով իրանց կեղծաւոր աղօթքներով և սնապաշտ արարողութիւններով հալածել գեւերին, մատնել են նրանց դահիճներին, խարոյկներին և տանջանքներին: Անթիւ են այն դատաստանները, որը կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչները վարել են միջին դարերում թշուառ խելացնորների զէմ. բայց աւելի ևս անթիւ են այն զոհերը, որոնք փոխանակ պաշտպանութիւն գտնելու եկեղեցու թոյլերի և հալածւածների այդ բնական ապաստարանի զրկում, անողորմաբար մատնել են կրակի և սրի: Իննովկենտիոս VIII պապի 1484 թւին արձակած կոնդակի հիման վերայ այժմեան Պրուսիայի մի փոքրիկ նահանգում մի քանի տարւայ մէջ 6500 հոգի մահւան դատապարտեցին մեղադրւելով դիւահարութեան, վհուկութեան և ուրիշ հոգեկան հիւանդութիւնների մէջ: Ոչ պակաս անողորմ է գտնւել զէպի թշուառ խելացնորները նաև միջնադարեան իրաւագիտութիւնը, որը մեծ մասամբ դրնւում էր խաւարս միտ կղերի ազդեցութեան տակ: Դեռ ևս 1573 թւին անգլիական պարլամէնտը մի առանձին օրէնսդրութեամբ ոչ միայն իրաւունք էր տալիս այլ և սլարտաւորեցնում էր իւր հպատակներին «որսալ և կոտորել խելացնորներին ինչպէս վայրենի դայլերին»: Նոյն դրուժիւնը աւելի կամ պակաս չափով տիրապետում էր նաև եւրոպակոյն միւս պետութիւնների մէջ և շարունակւում էր համարեա մինչև տասն և ութերորդ դարու վերջը:

Բժշկականութիւնը առաջինն է եղել, որ ձայն է բարձրացրել

այդ թշւառ հալածեալների պաշտպանութեան համար, ցոյց տալով որ նրանք զիւահարներ և յանցաւորներ չեն, այլ ողորմելի, կարեկցութեան կարօտ հիւանդներ: Բժշկականութեան շնորհիւ է, որ այսօր միլիօնաւոր այգիպիսի հիւանդներ պատսպարան են գտնուում աշխարհի ամեն կողմերում տարածւած յատուկ հիւանդանոցների մէջ, որոնք խնայողութեամբ են վերաբերւում դէպի այն փոքրիկ նշոյլը, որ ֆնացել է այդ թշւառների մէջ աստուածային պատկերից:

Այն հարցերը, որոնց լուծման համար մարդկութիւնը առաջ դիմում էր ուրիշ մասնագիտութիւններին, վերջին ժամանակներս նիւթ եղան բժշկական հետազոտութիւնների: Կեանքի այդ բարդ, այդ ծանր և դժուար հարցերը լուծելու համար անհրաժեշտ երեաց բժշկականութեան հեղինակաւոր ձայնը: Եւ բժշկականութիւնը, իբրեւ պատասխան այդ հարցերին, առաջ բերաւ և մշակեց երեք բիօլոգիական երևոյթ, որոնցով այսօր գիտնական բացադրութիւն են ստանում հասարակական չարիքներից շատերը:

Այդ երևոյթներն են խոնջութիւնը (переутомление, surménage), ջղասպառութիւնը (нервное истощение, nev-rasthénie) և սերհատութիւնը (вырождение, dégénérescence): Այդ երեքը իսկապէս կազմում են զանազան աստիճանները միևնույն կենսական չարիքի, որը մեր ջղային դարում հանդիսանում է կեանքի բարձր գործարանների ամենավտանգաւոր թըշնամին <sup>1)</sup>:

Բժշկականութիւնը ցոյց տւեց այն կապը, որ գտնւում է

<sup>1)</sup> Խոնջութիւն ասելով հասկացւում է ամեն մի աշխատութիւն, որը, վեր լինելով մարդու ֆիզիքական և մտաւոր ուժերից, ծանրաբեռնում և թուլացնում է մարդկային կազմաւածքը: — Ջղասպառութիւնը կամ ջղերի թուլութիւնը այն ընդհանուր հիւանդութիւնն է, որը լաւ պայտնի է ամենքին և կարօտ չէ բացադրութեան: — Սերհատութեան մասին մենք արդէն առիթ ենք ունեցել ընդարձակօրէն խօսել «Մուրճ»-ի անցած տարւալ համարներից մէկում (տես «Մուրճ» 1893 թ. № 7—8): Այս անգամ փշեցնենք միայն, որ սերհատութիւն ասելով պէտք է հասկանալ մարդկային կազմաւածքի աստիճանաբար նւազումը, որը անցնելով մէկ սերնդից միւսին, վերջանում է սերնդի սպառումով:

այդ երեք երևոյթների և ոճրագործութեան, ինքնասպանութեան, խեղացնորութեան և այլ հասարակական չարիքների մէջ։ Նա գիտնական փաստերով ապացուցեց, որ ոճրագործները մեծ մասամբ լինում են այնպիսի անհատներ, որոնք ենթակա են յիշեալ երեք երևոյթներից մէկնումէկին։ Դեռ ևս 1846 թւին անգլիացի գիտնականները—Վլապհամ և Վլարկ—խեղացնորների և շարագործների վերայ արած բազմաթիւ հետազոտութիւններով ցոյց տւին, որ մեծ նմանութիւն կայ այդ երկու տիպերի գտնվելի կազմակերպութեան մէջ։ Գերմանացի Վասպէրը, Ֆրանսիացի Բրոկան, անգլիացի Վինսլովը, Մաուդսլէյը և Թոմսոնը քննելով մարդասպաններին և ուրիշ ոճրագործներին նկատեցին, որ նրանցից շատերը ենթակա են հոգեկան խանգարումների, ապշութեան և ընկճաւորութեան (подугая болѣзнь, épilepsie)։ Ֆրանսիական շկոյացից Լովէլընը, Դէպինը և Մորէլը աշխատեցին գտնել և պարզել յանցաւորների և սերհատուղ տիպերի հոգեկան առանձնապատկութիւնները։ Բայց ամենից աւելի յայտնի է այդ ասպարէզում իտալական շկոյան, որի պարագլուխն է Տուրինի յայտնի պրոֆէսոր Զէզարէ Լոմբրոզոն։ Սա առաջինը եղաւ որ ընդհանուր սխտեմի տակ ձգեց իրենից առաջ եղած հետազոտութիւնները և նրանց վրայ աւելացնելով նաև իւր բազմաթիւ փորձերը ծանրակշիւ փաստերով ապացուցեց այն բիւրդգիտական կոպը, որը գտնւում է յանցանքագործութեան և հոգեկան զարտուղութիւնների (ненормальность) մէջ։ Լոմբրոզոի վարդապետութեան հիման վրայ բարձրացաւ մի նոր գիտութիւն—քրէական մարդաբանութիւնը (уголовная антропология), որը բոլորովին նոր լոյս է ձգում հասարակական չարիքների ծագման վրայ և որը սպառնում է խախտել իրաւաբանութեան շատ սկզբունքները, որոնք արդիւնք են հին, մետաֆիզիքական ուղղութեան։ Ներքեւում մենք փոքր ինչ աւելի կը խօսենք այդ նոր գիտութեան մասին. առաջժամ միայն նկատենք, որ քրէական մարդաբանութիւնը իւր բացաղրութիւնները մեծ մասամբ հիմնում է խոնհութեան, ջղասպառութեան և զլխաւորապէս սերհատութեան երևոյթների վրայ։ Սերհատութեան ուսումնասիրութեան առաջին սլատիւը պատկանում է Ֆրանսիացի նշանաւոր բժիշկ Մորէլին, որի կլասիքական աշխատութիւնը «Մարդկային

սեռի Ֆիդիքական, մտաւոր և բարոյական սերհատութեան մասին» մինչև այսօր էլ չէ կորցրել իւր հեղինակութիւնը: Այդ գրքի մէջ Մորէլը ցոյց է տալիս ջղաջին համակարգութեան ժառանգական սերհատութիւնը հասարակական այլ և այլ պայմանների և մի քանի տարածւած թոյների ազդեցութեան տակ: Այդ թոյներն են ոգելից ըմպելիքները և զրգռեցուցիչ ու թմրեցուցիչ նիւթերը (օպիում, մօրֆի, սուրճ և այլն):

Մորէլի շօշափած ֆակտերը այն աստիճան նշանաւոր և կենսական էին, որ չէին կարող չգրաւել հոգեբանների ուշադրութիւնը. նա պատճառ դարձաւ բազմաթիւ նորանոր հետազոտութիւնների: Հետևանքը եղաւ այն, որ գիտնական անհերքելի փաստերով հաստատեց հոգեկան և ջղաջին հիւանդութիւնների ժառանգականութիւնը, որոշեցին այդ հիւանդութիւնների նշանները և պարզեցին այն բազմակողմանի ու բարդ պայմանները, որոնք տեղիք են տալիս ջղաջին և ուղեղային սիստեմների խանգարման և սերհատութեան: Բացի սորանից մեծ խնամքով ուսումնասիրեց այն ճանապարհը, որով ընթանում է տոհմերի սերհատութիւնը և որի վերջնական կէտերն են — ապշութիւնը և ծննդաբերութեան սպառումը:

Երբ սերհատութիւնը մուտք է գործում որ և իցէ ցեղի կամ որ և իցէ ընտանիքի մէջ, բժիշկը հեշտութեամբ կարող է նկատել այդ կենսաբանական շարիքի այլ և այլ նշանները, որոնք փուլած են լինում կամ ընտանիքի զանազան անհատների մէջ և կամ անխնայ կենդրոնանում են միայն մի թշւառ անդամի վրայ: Էմիլ Զոլան, ժամանակակից գրականութեան այդ հսկայ քերթողը, շատ գեղեցիկ կերպով նկարագրել է սերհատութեան զանազան երևոյթները իւր մի շարք վէպերի մէջ, որոնք կրում են «Ռուգոն-Մակար» ընդհանուր վերնագիրը: Այդ վէպերի մէջ ընթերցողը հանդիպում է մի շարք հոգեկան և ջղաջին հիւանդների, խելացնորների, ինքնասպանների, անառակների և չարագործների, որոնք բոլորը պատկանում են միևնոյն Ռուգոն-Մակար ընտանիքին և որոնց բոլորի մեղքը ոչ այլ ինչ է եթէ ոչ հետևանք ընտանիքի ժառանգական սերհատութեան: Եւ խկապէս Զոլան իւր այդ սքանչելի վէպերի շարքով նպատակ է ունեցել ցոյց տալ մի ամբողջ տոհմի

(Ռուզոն-Մակարներին) աստիճանաբար սերհատուլթիւնը ոգելից ըմպելիքների (ալիոհոլիզմի) ազդեցութեան տակ <sup>1)</sup>։

Սերհատուլթեան նշանների մէջ առանձին ուշադրութեան արժանի են այն Ֆիզիքական փոփոխութիւնները, որոնք նկատուում են սերհատուղ անհատի զանգի կամ մարմնի միւս մասերի վրայ։ Այդ Ֆիզիքական փոփոխութիւնները ցոյց են տալիս թէ մինչև որ աստիճան խիստ է այն պայմանների ազդեցութիւնը, որոնք տեղիք են տալիս սերհատուլթեան. նրանք չեն բաւականանում միայն ջղերի և ուղեղի անշօշափելի գործունէութեամբ, այլ նաև կոպիտ, նիւթական խանգարման նն ենթարկում մարդու շօշափելի կազմըւածքը։

Ձղալին համակարգութիւնը իբրև կեանքի ամենանուրբ և ամենակատարեալ գործարան, միևնոյն ժամանակ ամենազգայուն կէտն է, որտեղից ամբողջ կազմւածքը կարող է կործանւել կամ մահացու կերպով վիրաւորւել։ Ձաւազանց զգայուն է նա մանաւանդ կեանքի ամենազգայուն շրջանում. այն շրջանում՝ երբ որ մարդը դեռ նոր է սկսում կազմակերպւել մօր արգանդի մէջ։ Այն բոլորից երբ տեղի է ունենում բեղմնաւորութիւնը՝ սաղմի և մինչև անգամ նորա ապագայ սերնդի առողջութիւնը միանգամայն կախւած է մօր սննդից, նորա Ֆիզիքական և բարոյական անդորրութիւնից։ Մօր ծանրաբեռնութիւնը, նորա հոգեկան խիստ վրդովմունքները, անբաւարար կամ վնասակար սննդաւութիւնը—այդ բոլորը օրհասական կերպով ազդում են նորա արգանդի պողի վրայ և շատ անգամ մոռցնում են սերհատուլթեան խմորը այդ հաղիւ կազմակերպւած էակի և նորա ապագայ սերնդի մէջ։ Պրոֆէսոր Սիկորսկին մասամբ այդ է համարում պատճառ, որ բոլոր ազգերի մէջ մարդիկ

<sup>1)</sup> Այս բանը ինքը Զոլան բացաւաթ կերպով խոստովանում է իւր վերջին (բժիշկ Պասկալ) վէպի մէջ, որի գլխաւոր հերոսի—բժիշկ Պասկալի տիպը, պատմում են, որ նա վերցրել է բժիշկ Մորէլից։ Այդ շատ հաւանական է եթէ աչքի առաջ ունենանք որ Պասկալի քարոզած հոգեբանական վարդապետութիւնները համարեա նոյնն են, ինչ որ չափնում է Մուլերը իւր աշխատութիւնների մէջ։

Զոլալի վէպերի մասին ընթերցողը թող գիմէ Ֆելիքսի ընդարձակ աշխատութեանը «Նատուրալիսմը և էմիլ Զոլան», «Մուր» 1892—94 թթ.

միշտ մի առանձին խնամքով են վերաբերել դէպի կանանց թոյլ ոյժերը, աշխատելով ըստ կարելւոյն հեռու պահել նրանց ծանր և տաժանակիր աշխատանքներից. մանաւանդ որ կանանց ջղերը իսկապէս աւելի զգայուն և աւելի թոյլ են քան թէ տղամարդոցը: Կան ճշմարտութիւններ, որոնց ազդերը միշտ հետեւել են անգիտակցաբար, հիմնւելով միմիայն մարդկային զարգացման դարաւոր փորձերի վրայ:

(Կը չարունակւի)

# Հ Ր Է Թ Ը

Ա. ԱՐԳԱՀԱՏԵԱՆ

## I

Երբ ես չիշողութեանս մէջ մէկը միւսի յետեւից կենդանացնում եմ տեսածս տարօրինակ մարդկանց պատկերները՝ իսկոյն աչքիս առաջին կանգնում է կակազը: Բացի այն, որ Աստուած պատժել էր նրան լեզւի այս անդիւր պակասութեամբ, այլ և նորան տւել էր այնպիսի կարճ ոտներ, որ երբ նա ման էր գալիս՝ թւում էր թէ նորա բունը դրւած էր ուղղակի ոտքի թաթերի վրայ: Մամա Մաթոսը—այս անունով յայտնի էր նա մեր քաղաքում—մարմնի այն երկրորդ պակասութիւնը ծածկելու համար հազնում էր երկար չուխաց, որի վեշերը յետեւից քսւում էին գետնին, իսկ չուխի տակից երկար արխալուղ, որ առաջի կողմից ձգւում էր մինչև նորա ոտնաթաթերը: Մամա Մաթոսի հասակը, սրունգների չափազանց կարճութեան պատճառով, հաւասար էր 9—10 տարեկան երեխայի հասակին՝ չնայելով որ նա 45—50 տարեկան տղամարդ էր: Մի փոքրիկ խորամանկութիւն էլ թաղնւած էր, կարծեմ, նորա մեծ փափախի երկացնութեան և սրութեան մէջ. երևի Մաթոսը կամենում էր այսպիսով երկարացնել արշին ու կիսանոց հասակը: Մաթոսի մարմնի վրայ այլ պակասութիւն չէր նկատուում: Գուցէ կարելի լինէր քթի մասին մի բան ասել... Բայց այդ ոչինչ—մեծ ու բերանը մոնող քթով շատ հայեր կարող են պարծիլ:

Թէ ինչու էին Մաթոսին Մամա անւանում՝ այդ ինձ բացատրեց նորա ծանօթներից մէկը: Երբ մի անձանօթ մարդ հարցնում

է նորա անունը՝ նա չի կարողանում միանգամից Մաթոս ասել, այլ անւան առաջին վանիւր, որ կախազների համար ամենից աւելի դժ-  
ւար հնչելին է, կրկնում է միքանի անգամ, ուստի և ստացւում է  
Մա-մա Մաթոս: Բայց այս էլ ասենք, որ մեր քաղաքացիք այնքան  
յարգում էին նորան, որ ոչ ոք չէր համարձակւում երեսին Մամա  
ասել. այլ ամենքն էլ վարպետ Մաթոս էին կոչում, որովհետեւ բա-  
ցի այն, որ նա լաւ կօշկակար էր, այլ և կօշկակարների ուսու-  
բաշի, ուրեմն այսպէս ասենք, նա վայելում էր մեր քաղաքում  
նոյն իսկ պաշտօնական յարգանք, որ յատուկ է արհեստագետի հաւ-  
ւարտ պաշտօնին: Պարզ, անխարդախ ժողովուրդը միշտ ակնածու-  
թեամբ է նայում մարդու մարմնական պակասութիւններին և շատ  
լաւ զանազանել դիտէ մարդու ներքինին արտաքինից — ահա թէ  
ինչու Մաթոսի մարմնական պակասութիւններն երբէք չէին դառնում  
ծաղրի առարկայ, եթէ հաշւենք Մամա մականունը, որ կայցրել  
էին նրան. սակայն չպէտք է մոռանանք, որ այդ կողմից ժողո-  
վուրդը ոչ ոքի խաթրը չէ կոտրում և ամենին էլ, մանաւանդ գիւ-  
ղերում և փոքրիկ քաղաքներում, հիւրասիրում է որեւէ մականու-  
նով: Մաթոսն իրաւունք ունէր դժգոհ լինելու փոշոցային մանուկ-  
ներից միայն, որոնք, նրան տեսնելիս, ոտները ծռմուկով և կարճա-  
նալով զանազան խեղկատակութիւններ էին անում նոյն իսկ նրա  
աչքի առաջ և կամ պատերի յետեւ թագ կացած ծաղրական  
անուններ էին տալիս նրան: Սակայն Մաթոսը, որպէս ծանրօթոն  
փիլիսոփայ, երբէք չէր բարկանում այդ չարածիմներին վրայ, այլ  
մեղմ ժպտալով շարունակում էր ճանապարհը:

Եւ Մամա Մաթոսի կօշկարակական արհեստը գնահատողներից  
էի, ուստի թէ կօշիկներ կարել տալու և թէ երբեմնայեւ զրոյց  
անելու համար այցելում էի նրա կրպակը: Նա հազիւ միայն իւր  
անունը գիտէր ստորագրել, բայց չափազանց սիրում էր լսել ուրի-  
շի կարդացածը, ուստի շատ անգամ, իմ այցելութիւնների ժամա-  
նակ, ես նրա համար կարդում էի լրագիր կամ ժողովրդական դիւր-  
ըմբռնելի գրւածներ: Մաթոսը խելացի մարդ էր. նրա հետ կարելի  
էր առանց ձանձրանալու ժամերով խօսակցիլ. թէև սկզբում, նոր  
էի ծանօթացել Մաթոսի հետ, ինձ համար անտանելի էր նրա կա-  
կազութիւնը, բայց յետոյ փոքր առ փոքր ընտելացայ նրա այդ

պակասութեանը: Կեանքի հաւասար փորձը, ճիշտ և սրամիտ դիտողութիւնները զանազան դասակարգի մարդկանց վերաբերմամբ իմ աչքում հետաքրքրելի էին դարձնում Մաթոսի անձնաւորութիւնը. բայց կային և այլ հանգամանքներ, որոնք թելադրում էին ինձ ոչ միայն հետաքրքրուել, այլ նաև յարգել ու սիրել այդ մարդուն: Ահա այդ հանգամանքներից մէկի մասին ես ուզում եմ այստեղ պատմել:

## II

Ծննդեան ճրագալուցի երեկոն էր: Քաղաքի Հայոց ծխական ուսումնարանի ուսուցիչների հետ մենք պատրաստուում էինք «աւետիս» ման գալ յօգուտ այդ ուսումնարանի չքաւոր աշակերտներին: Պատարագը վերջացել էր. մութն ընկնում էր արդէն: Այս ժամանակ, սովորական օրերին, լուռ և անկենդան քաղաքն այնպէս փոխւել, այնպէս կենդանացել էր, որ մեղք չէր համեմատել նորան նոյն իսկ մայրաքաղաքի հետ: Նկեղեցու դրանն ահագին բազմութիւն էր հաւաքւած. կանայք, սպիտակ ծածկոցների մէջ փաթաթւած, արագ-արագ տուն էին շտապում թաթախման սեղանը պատրաստելու. երեխաներին թիւ չկար. իւրաքանչիւրը նոցանից, վառ մեղրամոմը ձեռքին, դէպի մի կողմ էր վազում. փողոցում խուլ աղաղակ էր տիրում, որի միջից պարզ լսելի էին ձկնավաճառների և այլ մանրավաճառների խռպոտ ձայները, որոնք առանց հանգստանալու գնողներ էին հրաւիրում. «Ռէ, հացերի՛ն մատաղ, լաւ ձուկ առէք, լաւ ձուկ»: «Լաւ իւղ, լաւ պանիր», լսում էին զանազան կողմերից: Մի խումբ երեխաներ, ժամաշագիւկները կըռների տակին, զուրս եկան եկեղեցուց և ուրախ աղաղակներով ցըրւեցան փողոցում:

— Մեր մրցակիցներն են, պարոններ, ասաց մէկը մեզանից և ժպտալով մատնացոյց արաւ վազվզող երեխաներին. ժամանակ է հունձն սկսելու, նայեցէք արդէն տղամարդիկ էլ ցրւում են՝ կոշանակներ:

— Ժամանակ է, ժամանակ, համաձայնեցանք մենք և նախորոշած ծրագրի համաձայն՝ երեք խմբի բաժանւելով, ուղևորւեցանք ամենքս մի կողմ:

—Դէ, տղէք, երեսներդ պնդացրէք, ես «աւետիս» կ'ասեմ, իսկ դուք պոկեցէք, ասացի ես ճանապարհին մեր խմբակի երկու անդամներին, եթէ Հաջի Գրիգորից տասն մանէթ չէք պոկիլ՝ էլ ձեզ տղամարդ չեմ ասի:

—Բաժինդ քիչ կը լինի, ծիծաղեց ընկերներիցս մէկը. Հաջի Գրիգորը բաց աչքով տասն մանէթ տուող չէ. նա մի մանէթ որ տալիս է որ և է բարեգործական նպատակի համար՝ ձեռները դողդողում են. պէտք է նայել այդ ժամանակ նորա դէմքին, այնպէս տխուր և խղճալի է լինում նա, որ մարդ ինքն է ուզում փող տալ նրան և ոչ թէ նրանից վերցնել:

—Ձէ, եղբայր, դու, երևի, բարի ժամի ես հանդիպել նրան. այդ աղէսն երբեմն այնպէս կատաղել գիտէ, որ գլխարկդ ան ու փախիւր իսկոյն, թէ չէ մեռած հայրդ ու մայրդ վեր վեր կը թռչին գերեզմանում:

—Մի՞թէ, լաւ, մենք նրան Հաջի Գրիգոր կը շինենք, պարծեցայ ես:

—Դուք ձայն չհանէք, տղէք, ինձ թոյլ տւէք յայտնելու «աւետիսի» նպատակը. ես նրա հետ ծանօթ եմ, վրայ բերեց միւս ընկերս: Կարծում եմ, որ գոնէ մի հնգանոց կը ստանանք:

Ձգում էի, որ թէև պարծենում էինք, սակայն վճռական ընդհանրապէս փախուստ պիտի տայինք կռի դաշտից, որովհետև ոչ մէկս էլ պնդեցանք չէինք:

Վերջապէս հասանք քաղաքի այն թաղը, որ բաժին էր ընկել մեր խմբակին:

—Հակառակի պէս հէնց առաջին տունը Հաջի-Գրիգորինն է, բացազանչեցի ես նայելով ցուցակին, որ տեւ էին մեզ ուսուցիչներն և որով մենք պիտի առաջնորդէինք մեր կամուսնու մուրաց կանութեան ժամանակ:

Դռան զանգակը քաշեցինք: Հաջի Գրիգորը մեր քաղաքի ամենահարուստ աղաներից մէկն էր: Նորա բարձր երկյարկանի տունը նայում էր մեզ վերայ հպարտ, անհիւրընկալ ճակատով: Ո՛րքան խեղճեր լաց-աղերսանքով մոեւ են այս դռնից ներս, որքան տարաբաղվներ դուրս են եկել այստեղից ծայրայեղ յուսահատութեան մէջ, թալանւած ու մերկացած, որպէս կէս գիշերին՝ բաց ճանա-

պարհի վերայ: Եւ ինչո՞ւ բաղխում ենք մենք այս անիծեալ դուռը, մի րոպէ անցաւ իմ մտքից. բայց չէ, այսպէս դատելով մենք նպատակներիս չենք հասնիլ, հաճեցի ես և նորից ուժգին քաշեցի զանգակը՝ ներքին բարկութեան վրէժը, կարծես այդ անշունչ առարկայից լուծելով: Դուռն իսկոյն բացւեցաւ: Նախասենեակի հայելու նման փայլուն յատակը փոքր ինչ ցեխոտելուց յետոյ՝ մենք մտանք աւելի ևս փայլուն դահլիճը: Ոչ ոք չկար այնտեղ: Առաստաղից կախած ջահն առատ լոյս էր սփռում շքեղ կարասիների վերայ: Ի միջի այլ պատկերների, որպիսիք էին «Hava»-ի պրէմիաները ոսկեգօծ շրջանակներով, ես նկատեցի Ներսէս Վարժապետեանի, Խրիմեանի և Նազարեանի պատկերները: Ի՞նչպէս պէտք էր հասկանալ դոցա ներկայութիւնը Հաջի-Գրիգորի դահլիճում: Երևի հաջի աղէտն երբեմն էլ «ազգասէր» ձևանալ գիտէ:

Սջակողմեան դուռը բացւեց և այնտեղից երևաց Հաջի-Գրիգորի մեզ բոլորիս լաւ ծանօթ բարձր, փոքր ինչ կռացած, հասակը, նիհար, ածելած երեսով, մանր, շարժուն աչքերով և փայլուն կունտ դազաթով: Հանդիսաւոր տօնի պատճառով նա իւր սովորական կիսամաշ չուխայի փոխանակ հագել էր նոր երկայնաթև կապայ:

Մենք շնորհաւորեցինք նրան օրւայ տօնը, կարգով շարւեցանք, վառեցինք ձեռներիս մոմերն և ես բարձրաձայն սկսեցի «Այսօր տօնէ»-ն: Անսովոր դրութիւնն արդեօք ազդեց ինձ վերայ, թէ՞ ցուրտը, որ տիրում էր դահլիճում՝ չնայելով նրա շքեղութեան չգիտեմ, միայն ես զգում էի, որ ազատ չէի կարողանում երգել. իմ ձայնս դողում էր. դողում էր և ձեռքիս մոմը: Իմ ձայնիս վերայ՝ մէկը միւսի յետևից դահլիճ մտան կանայք և երեխաներ — Հաջի-Գրիգորի «երջանիկ» ընտանիքի անդամները: Մինչ նորա կինը թագուում էր մեզանից մարդու յետևը՝ ելկու նորատի աղջիկները՝ մեզ լսելի լինելու չափ բարձր ձայնով, սրախօսութիւններ էին անում ռուսերէն լեզուով՝ իրանց լաւ չթագեցրած ծիծաղի նիւթ ընտրելով իմ ձայնս, մեր դէմքերն ու մեր հանդերձները:

Քանի մի տուն «Այսօր տօնէ»-ից յետոյ՝ մենք միասին երգեցինք «Նորհուրդ մեծ»-ը: Երբ այս շարականի վերջին խօսքերն էինք երգում՝ ես քաշեցի ընկերոջս թևից, որ ստորագրութեան թերթն

առաջարկէ, սակայն այդ պարծենկոտ ընկերս անշարժ կանգնած էր. նա կամացուկ հանեց ծոցից թուղթն և փսփսաց ականջիս. «երեսս չէ բռնում, դո՛ւ առաջարկիր»: Մինչ մենք այսպէս տատանւում էինք՝ Հաջի-Գրիգորը մօտեցաւ մեզ և իմ բուռն զրեց մանր փող: Արագ նայւածքով ես տեսայ, որ դա 30 կոպէկ էր: Բոլոր մարմնովս ցնցւելով և քաշելով ընկերոջս ձեռքից ստորագրութեան թերթը՝ ես բռնեցի Հաջի-Գրիգորի առաջ:

—Հաջի-աղա, մենք «աւետիս» ենք ման դալիս հայոց ուսումնարանի աղքատ աշակերտների օգտին, մի՞թէ 30 կոպէկ էք տալիս:

Հաջի-Գրիգորը յօնքերը կախ գցեց մինչև քիթն և սուր, դիտողական հայեացքով ուղիղ երեսիս նայեց:

—Քանի տարեկան ես, աղաս, հարցրեց նա ինձ ամենայն սառնութեամբ:

Ես չէի կարող հասկանալ՝ թէ ինչու է առաջարկում նա այդ անտեղի հարցը:

—Խնդրեմ, շնորհ արա, պատասխան տուր ինձ և ամեն ինչ կ'իմանաս, ասաց նա տեսնելով իմ տատանմունքս:

—Քսան և ութ, պատասխանեցի ես մեքենայաբար:

—Իսկ սոքա, ցոյց տուց նա ընկերներին:

—Այդ հարցերն աւելորդ են, Հաջի-աղա, ինչ կապ ունին նոքա ստորագրութեան թերթի հետ, նկատեցի ես տաքացած:

—Ասեմք թէ սոքա էլ քսան ութ են, ընդհատեց նա իմ խօսքս: Ա՛յ, հիմա կասեմ, թէ ինչու եմ այդ հարցերն առաջարկում: Ես կեանքիս մէջ ամեն ինչ կարգով-կանոնով եմ անում. և եթէ այժմ մի քանի բուբուլ տէր եմ՝ այդ կանոններին եմ պարտական: Ով որ կեանքի ամենամանր հանգամանքներում անգամ առանց որոշ կարգ ու կանոնի է գործ բռնում՝ երբեք թող նա յոյս չունենայ աղքատութիւնից հարստութեան բարձրանալու:

—Գնանք, պարոններ, նա քարոզ է կարդում, բողոքեց ընկերներիցս մէկն և դուրս գնաց դահլիճից: Ես ուղեցի սպասել և տեսնել, թէ ինչ կը լինի այս կատակերգութեան վերջը: Հաջի-Գրիգորը դուրս գնացող ընկերիս վերայ ամենևին ուշք չդարձրեց. նա անվրդով շարունակեց.

—«Աւետիս» ման եկողների վերաբերութեամբ էլ ես որոշ կա-

նոններին եմ հետևում: Դուք գիտեք, որ այս երեկոյ «աւետիս» ասողներին թիւ չկայ. ամեն րոպէ մոնում ու դուրս են գալիս. չընդունելը մեզք է, ուստի ես որոշել եմ՝ այսպէս—փողը վճարել նայելով եկողի տարիքին. եթէ 10—12 տարեկան տղաներ են՝ նոցա տալիս եմ երեք-երեք կոպէկ. եթէ 15—16 տարեկան՝ մի-մի շահի և որովհետեւ այժմ դուք 28 տարեկան էք՝ ձեզ տալիս եմ կրկնապատիկը 10—10 կոպէկ, որովհետեւ ձեր տարիքն էլ նոցա կրկնապատիկն է:

—Դեռ մի բան էլ աւելի, ծիծաղեց ընկերս. սակայն իմ ծիծաղս չէր գալիս:

—Բայց, Հաջի Աղա, թէ որ ես ձեզ ասացի, որ մենք մեզ համար չենք ման գալիս, այլ ուսումնարանի աղքատ աշակերտների համար համարեա գողացի ես. նայեցէք այս թերթին

—Է՛, եղբայր, ես ձեզ տալիս եմ, դուք էլ ուզո՞ւմ էք աղքատ աշակերտներին տէք, ուզում էք ձեր գրպանը զրէք—այդ ինձ համար միևնոյն է: Ես էլ ջահէլ եմ եղել, աւելացրեց նա խորհրդաւոր ձայնով, և հիմա պէտք է խոստովանիմ, որ այդպիսի թերթերը բաւական շահաւէտ էին... առանց գումարի վաստակ է... Ժպտաց նա հեգնութեամբ և դալթեց ձախ աչքը:

Մինչ այդ ժամանակ զսպած բարկութիւնս, յանկարծ բռնկաց և ես 30 կոպէկը շարժելով նրա երեսին՝ ինքնամոռացութեան մէջ գողացի:

—Հաջի աւագզզանկ: Մենք իսկոյն դուրս եկանք դահլիճից, երկար դիւական ծիծաղ լսում էր այնտեղից որպէս պատասխան իմ վիրաւորանքի:

Դուրս եկանք փողոց: Պարզ և ցուրտ զիշեր էր. լուսինը պայծառ փայլում էր անամպ երկնքում: Ես սկսեցի անբողջ մարմնով դողդողալ և ատամ ատամի խփել:

—Տղէք երևի ես մրսեցի դահլիճում և դողս ներողեց. մի կերպ ինձ տուն հասցրէք, դիմեցի ես ընկերներին:

—Մի րոպէում ես կառք կը բերեմ, ասաց ընկերներիցս մէկն և հէնց այն է ուզում էր վազել, որ մեր առաջին կանգնեց Մամա Սաթուր:

—Շ-շ-շնորհաւոր ծնունդ և յայտնութիւն, կակազեց նա ձեռքս

բռնելով: Վա՛, ի՛նչ կայ, ի՛նչո՞ւ ես դողում: այս ժամանակ Հաջի-Գրիգորի դռան առաջ ի՛նչ էք շինում:

—«Աւետիս» էինք եկել, ժպտաց ընկերս, համա լաւ «աւետիս» շինեց մեզ Հաջի-Գրիգորը:

Կակաղը նայեց Հաջի-Գրիգորի դռան կողմն և կարծես դուշակեց եղելութիւնը. գոնէ այդ էր ասում ա՛յն գրիմասը, որ մի բոսկէ այլանդակեց Մաթոսի առանց ա՛յն էլ այլանդակ դէմքը:

—Խնդրեմ՝ շուտ կառքի գնա՛, դարձա՛յ կրկին՝ ես ընկերիս:

—Ի՛նչ կառք, բռնեց նա ընկերիս թւից. դու մինչև հասնես՝ կը սառչես. ա՛յ մեր տունն այստեղ է, գնանք. ես յետոյ մարդ կ'ուղարկեմ կառքի:

—Ձէ՛, վարպետ, աւելի լաւ է աուն գնամ:

—Ինչո՞ւ, արժան չե՞ս համարում մեր շէմքից անցնել:

—Այդ ի՛նչ խօսք է, ինչո՞ւ արժան չպիտի համարեմ, բայց բանն ա՛յն է, որ ես ուզում եմ աուն գնալ և իսկոյն պառկել:

—Լա՛ւ, լա՛ւ, գնանք, մի քիչ տաքացիր, յետոյ էլի կը գնաս: Եւ նա ուժով քաշ տւեց ինձ և ընկերներիս դէպի իրանց տուն, որ քանի մի քայլ հեռու էր Հաջի-Գրիգորի տանից:

### III

Մամա-Մաթոսի տունը մեր քաղաքի սովորական տներից մէկն էր՝ բաղկացած երեք բաժանմունքից—մի երկայն բակից, «տնից» և սենեակից: Առաջին երկուսի միջից անցնելով՝ մենք մտանք երրորդը, որ ասիական ճաշակով կահաւորւած ընդարձակ, մաքուր սենեակ էր: Թաթախման սեղանն արդէն պատրաստ էր. երեւի տա-նուտիրոջն էին սպասում սեղան նստելու:

Սենեակ մտնելուն պէս՝ Մաթոսն ինձ տարաւ և նստեցրեց նոր վառած երկաթեայ վառարանի մօտ. չնայելով սենեակի տաքութեանը՝ նա մի թեթեւ վերմակով փաթաթեց ինձ, իսկ որդուն հրամայեց կօշիկներս հանել և մի շոր տաքացնել ու ձգել ոտներիս:

—Է-հս սհաթիս ես քեզ լաւացնեմ, ասաց Մաթոսն ուրախ ուրախ ձեռները տրորելով և մի բաժակ լի օղի ածելով՝ տւեց ինձ: Խմի՛ր, եղբայր, դանակի պէս դողդ կը կտրէ:

Երբ ես օղին խմեցի՝ Մաթոսն ընթրիքի սեղանը բերել տւեց

ինձ մօտ և նստեցրեց ընկերներիս: Նստեցան նորա շուրջն և ինքը Մաթոսն և տանեցիք:

—Յուզուցոյս չունէի, որ Ասուած այս երեկոյ հիւր կը հասցնէ իմ սեղանին, ուրախութեան ժպիտով ասաց Մաթոսն և օղիով լի թասերն առաջարկեց ընկերներիս, իսկ իմ առաջս դրեց դեղարքունու մի մեծ կտոր:

—Շատ ուրախ եմք, վարպետ, քեզ մօտ հիւր լինելու համար, դարձաւ նրան ընկերս, բայց բանն այն է, որ մենք ուշանալ չենք կարող. մենք պէտք է «աւետիսը» շարունակենք. գուցէ վերջն այնպէս չլինի, ինչպէս սկիզբն էր: Խնդրեմ շուտ կառքի ուղարկիր, մեր ընկերոջը հասցնենք, յետոյ կսկսենք երկուսով ման գալ:

—Ախր մեր «աւետիս» ասողն հիւանդացան, առանց նրան մենք ինչպէս ման գանք, նկատեց երկրորդ ընկերս, չէ բաներս բուրդ է:

—Ոչինչ մի կերպով ես եօլայ կտանեմ, ասաց առաջինը:

Դողս արդէն անցնում էր. մի դիւրեկան ջերմութիւն կամաց կամաց տիրում էր ամբողջ մարմնիս:

—Տղէք, եթէ մի 10 րոպէ սպասէք, ես ձեզ հետ կգամ, ասացի ես վերմակը վրայիցս վաչր ձգելով. վարպետ Մաթոսի օղին ու վառարանը շատ բան շինեցին. ես կարծես լաւացայ:

Ընկերներս համայնձայնեցան: Կակազը սաստիկ ուրախացաւ. նա ամենայն սիրով և եռանդով հիւրասիրում էր մեզ. երեւի այդ սէրը այդ բաց ու անկեղծ սիրտն ազդում էր ինձ վրայ. թուում էր, թէ ես ոչ օտարի, այլ մեր տան սեղանի առաջ էի նստած: Մենք նրան պատմեցինք Հաջի-Գրիգորի մեզ ցոյց տւած ընդունելութիւնը: Մաթոսը ձայն չհանեց:

—Դէհ ժամանակ է, վեր կենանք, տղէք, եթէ ոչ կուշանանք, ասացի ես հանելով գրպանիցս ցուցակը. երեսուն տունն հազիւ չորս ժամում վերջացնենք:

Ընկերներս վեր կացան: Մաթոսը վեր առաւ իմ ձեռքից ցուցակը և սկսեց զննել:

—Ա-այնպէս էլ գրում են, որ սասանան անգամ չէ կարող այբը բենից ջոկել. կարգա՛, խնդրեմ, ո՛ւմ անուններն են գրւած այդ ցուցակում:

Ես արագութեամբ կարդացի սկզբի տասն-տասն և հինգ անունը:

Մաթոսը խլեց ինձանից ցուցակն և կարծես բարկացած, ի մեծ զարմանս մեր, պատառոտեց և ձգեց վառարանը:

—Այդ ի՞նչ արիր, վարպետ, այդ ցուցակը մեզ հարկաւոր էր, դժգոհութեամբ ասացի նրան:

—Ա-ա-այդ ցուցակը ձեզ հարկաւոր չէ. ես ձեզ ցուցակ. ես տուաջ կընկնեմ—դուք իմ յետևից եկէք, որի դուռը ծեծեմ, աջն տեղ էլ մտէք. ի՞նչ էք աղաների պոչից բռնել. ձեր ցուցակով ում տունն էլ երթաք՝ նոյն ընդունելութիւնը պիտի գտնիք, որպիսին քեզ ցոյց տւեց աղաներից մէկը և եթէ նրանցից մի քանիսն ամօթից քաղաքավարութեամբ էլ ընդունեն ձեզ՝ սրտերումն անշուշտ կը հացհոյնն: Իսկ այն տներում, ուր ես կը մտնեմ, համ գլխի վերայ կընդունեն ձեզ, համ էլ ձեր հարուստներից պակաս չեն ստորագրի: Միայն մի պայման... որ վերջացնելուց յետոյ կրկին գաք մեր տուն. էս հաց ուտել չէր, որ մենք կերանք:

—Ձէ, շնորհակալ եմք, վարպետ. մեր տներումն էլ մեզ են սպասում, ասացինք մենք:

Հաճի-Գրիգորի ընդունելութիւնն այն աստիճան վատ տպաւորութիւն էր թողել մեզ վերայ, որ մենք առանց դժւարութեան համաձայնեցանք Մաթոսի առաջարկութեանը — «աւետիս» ման գալ նրա առաջնորդութեամբ, իսկ դրած պայմանին չէինք համաձայնում:

—Վնաս չունի, էս մի անգամը, էս մի անգամը, խնդրում էր նա, ես իմաց կը տամ, որ ձեր տներում ձեզ չըսպասեն: Վարպետ Մաթոսն աջնպէս էր թախանձում, որ մենք չկարողացանք մերժել նրա խնդիրքը:

—Բա մեր տանն արժան չէք համարի «աւետիս» ասել, աղերսարկու հայեացքով դարձաւ դէպի մեզ Մաթոսը: Իմ ցուցակով սկսեցէք հէնց մեր տանից:

—Ինչու չէ, ինչու չէ, վարպետ, ասացինք մենք և մի կարգ շարւելով, որպէս Հաճի-Գրիգորի տանը, մոմերը վառեցինք և երգեցինք «աւետիս»-ը:

Մաթոսը վերցրեց ստորագրութեան թերթը և գրեց մեծ-մեծ հնաւանդ միագրիծ տառերով. «Մաթոս Բաշմախչեանց» — հինգ թուբլի:

Ահա թէ ու մինից մենք պիտի ստանայինք 5 թուբլին:

## IV

Ժամը 10-ն էր արդէն, երբ մենք, համարեա չորս ժամ շըրջագայելուց յետոյ, կրկին վերադարձանք Մաթոսենց տուն, ուր ընթրիքի սեղանը նորից պատրաստած մեզ էին սպասում: Մենք ամենքս էլ ուրախ էինք, որովհետեւ առատ հունձ էինք ունեցել, մեր թերթերն ամբողջապէս ծածկւած էին ստորագրութիւններով:

Մի կատարեալ կալիգրաֆիական ցուցահանդէս էր ներկայացնում այդ թերթը. նա առատ նիւթ կարող էր մատակարարել այն մարդուն, որ կը կամենար ուսումնասիրել հայերէն գրչութեան ձևերը, սկսած, զուցէ, միջին դարերից մինչև մեր օրերը: Մի ծերունի արհեստաւոր, որ մանկութեան ժամանակ ուսել էր մեր վանքերից մէկում, վաղուց մոռացւած նօտագրով գրել էր իւր անունն ու ազգանունը և նրա դիմաց չ մանէթ: Մի այլ արհեստաւոր, որ մեզ նաև բաւական զարճացրեց իւր սրախօսութիւններով, Աստուծոյ գիտէ, թէ որ ժամանակաւ գրերով տպել էր Մարգարենց Սարգիս—՝ մանէթ:

Սեղանի վերայ ուրախ-ուրախ խօսում ու ծիծաղում էինք. մենք համեմատում էիք իրար հետ Հաճի-Գրիգորի և արհեստաւորների մեզ ցոյց տւած ընդունելութիւնը. ամենքս էլ հիացած էինք վերջիններիս պարզ, սիրալիր գրկաբաց ընդունելութեամբ: Մաթոսը մեզանից աւելի ուրախ էր. նա անդադար գինի էր ածում մեր բաժակները և զանազան կենացներ առաջարկում. չէի կարծում թէ Մաթոսն իւր կակադ լեզուով Դեմոսթենէս էլ էր, նա խօսում էր բաւականաչափ կապով և իմաստալից: Վերջը նա բարձրացրեց բաժակը.

—Է-է-էս էլ խմենք այն աղքատ աշակերտների կենացը, որոնց համար հաւաքւեց այս երեկոյի փողը. թող աղքատ արհեստաւորի ընտանիքում ծնւած և մսուրքի մէջ փաթաթւած Յիսուսի օրհնութիւնը նրանց վրայ լինի: Ա՛խ, ով որք և անտէր է եղել՝ նա միայն կարող է հասկանալ նրանց դրութիւնը:

Մաթոսի ձայնը դողում էր այդ խօսքերն արտասանելիս, ջուխտակ արտասունք փայլում էին նրա ահագին քթի երկու կողմով:

—Արտասունքիս վերայ մի՛ զարմանաք, դարձաւ նա մեզ, ես յիշեցի անտիրական որբութեանս դառն օրերը. հիմա ուրախու-

Թիւնից եմ արտասուում, որ Ասուած արժանացրեց ինձ այն օրին, երբ ինքս հնար ունիմ գոնէ մի չնչին բանով ուրիշ որբերին օգնելու: Խմե՛նք աղքատ աշակերտների կենացը:

Մենք խորին զգացմամբ խմեցինք այդ բաժակն. և զարմանք էլ չէր—առաջարկութիւնն էլ խորին զգացմամբ էր եղել:

Կէս զիշերից անց էր արդէն, երբ մենք քաղցր տպաւորութեան տակ դուրս եկանք Մաթոսի տանից:

Անցնելով Հաճի-Գրիգորի տան առաջից՝ ես ինքս ինձ հարցնում էի—հրն է արդեօք իսկական հրէշը՝ Մաթոսը թէ Հաճի-Գրիգորը...

# ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Գ. ՂԱՐԱԶԵԱՆԻ

(Շարունակութիւն <sup>1</sup>)

## III

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔ ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆ ԴԷՄ

(1883 թ. 15 յունիսի)

Ապահովութեան այս օրէնքը ինկատի ունի ընդհանրապէս բանւորներին. բացի այդ՝ գործակատարները, պաշտօնեաները, ծառաները ևս հաւասարապէս իրաւունք ունեն ապահովագրւելու. այնպէս որ կլիէնտէլ գլխաւորապէս կազմում են բանւորները, որոնց համար իսկապէս ստեղծւած է օրէնքը, յետոյ գործակատարները, պաշտօնեաները, ծառաները—կին թէ տղամարդ հաւասարապէս:

Կանոնով պէտք է ապահովագրւել համայնքի ապահովագրական կասսայում, որը միւս մնացած կասսաների հիմքն է կազմում. բայց կարելի է ապահովագրւել նաև տեղական կոչւած արկղներում, գործարանների, ազատ օժանդակող ընկերութիւնների կասսաներում, որոնք համարեա նոյն առաւելութիւններն են ներկայացնում:

Ահա թէ ինչ տեսակ օգնութիւններ են մատակարարւում իւրաքանչիւր ապահովագրեալին հիւանդութեան ալ և ալ զէպքերում:

1. Հիւանդութեան ամբողջ ժամանակ բժշկական ձրի օգնութիւն, ձրի զեղեր, գործիքներ և այլն:

<sup>1</sup>) Տես «Մուրճ» 1894 թ. № 1:

2. Տրւում է հիւանդութիւնից կրած նիւթական վնասների համար իբրեւ վարձատրութիւն բանւորական վարձագնի մոտաւորապէս կէս մասը շարունակ 13 շաբաթ աշխատելու անկարողութեան ժամանակ:

3. Իբրեւ դրամական նպաստ տրւում է երեք շաբաթ շարունակ օրավարձ գումարի կէսը ապահովագրեալ ծննդական կանանց:

4. Քսան օրւայ վարձագնի հաւասար մի գումար տրւում է ապահովագրեալ մահւան դէպքում:

Ապահովագրեալ անդամների կողմից կարող են տեղի ունենալ զանցառութիւնների, օրէնքի իմաստն ի չար գործածելու դէպքեր կամ վերջապէս անվայել և նւաստացնող գործողութիւններ և այլն. ահա այդպիսի դէպքերի համար, որոնց առաջանալու պատճառը իրանք են եղել, օրէնքով առաջն առնելու միջոցներ են նախատեսուած, ընկերութեան գումարները կորուստի չմատնելու համար: Այն տեղերում, ուր քաղաքացին վարչութիւններ չկան և համայնքի ապահովող հաստատութիւններն են գործ տեսնում, համայնքներին իրաւունք է տրւած պակասացնել, մինչև անգամ ամբողջապէս մերժել, այն վարձատրութիւնը, որ տրւում էր հիւանդին իր վարձագնից, եթէ կը ստուգւի որ հիւանդութիւնը առաջ է եկել վերոյիշեալ պատճառներից: Բացի այդ՝ քաղաքացին վարչութիւններին աւելի լաշն ասպարէզ է տրւած ստուգելու նոյնանման դէպքերը. քաղաքացին վարչութիւնը բացի այն որ նպաստներից զրկում է վերոյիշեալ պատճառներով հիւանդացողներին, նա ծայրացեղ դէպքերում (ինչպէս խաբեբայութիւն) հրաժարեցնում է այդպիսիներին ընկերութեան անդամակցութիւնից: Երբ անդամը մի կամ մի քանի անգամ նոյն տարին նպաստ է ստացել 13 շաբաթ, քաղաքացին վարչութիւնը կարող է այդպիսիների համար կարգադրել դարձեալ օգնելու՝ նախասահմանուած նպաստի փոքրագոյնը տալով վերջին անգամի հիւանդութիւնից տասն երեք շաբաթ անցնելուց յետոյ միայն: Ընդհանրապէս օրէնքը թէ քաղաքացին վարչութիւններին և թէ համայնքներին դիւրութիւններ է տալիս նախազգուշական միջոցներ առնելու այն ամեն կորստաբեր դէպքերի դէմ, որ տեղի կարող էին ունենալ իրանց գործավարութեան շրջաններում:

Ապահովագրական անդամավճարները հատուցւում են կանխիկ, գործարանատիրոջ ձեռքով, ի հաշիւ բանւորների վարձագնի: Այդ վճարները կազմում են ապահովագրեալի վարձագնի  $1\frac{1}{2}\%$  maximum, բացառիկ դէպքերում  $2\%$ , որի  $\frac{2}{3}$  ինքը ապահովագրեալն է հատուցանում, այն ինչ  $\frac{1}{3}$  ընկնում է գործարանատիրոջ վրայ: Այն արհեստանոցները, ուր բանում են 2—3 բանւորներ և չունին շոգեմեքենայ, մնում են իրանց տիրոջ ձեռքով ապահովագրւելու մասնակցութիւնից դուրս, որովհետեւ աննշան կը լինէր այդպիսիների ապահովագրական գործավարութիւնը: Պարզ է, որ այդ տեսակ արհեստանոցների բանւորները ստիպւած կը լինեն ապահովագրւել աշխուր:

Առանց աշխատանքի մնացած բանւորները իրաւունք ունին երեք շաբաթ շարունակ օգնութեան փոքրագոյնը ստանալու:

Հարկաւոր է յիշատակել մի վերջին կարեւոր կէտ ևս:

Պատահում են արդիւնագործութեան մէջ այնպիսի վտանգաւոր ճիւղեր, որոնց մէջ աշխատող բանւորներին մասնաւոր ապահովագրական ընկերութիւնները դժարութեամբ կը համաձայնէին ապահովագրել, որովհետեւ հիւանդութեան և դժբաղտութեան դէպքեր սովորական<sup>4</sup> լինելով՝ մեծ ծախսերի և մեծ վնասների դուռը կը բացւէր ընկերութիւնների համար. նոյնը կարելի էր ասել և համայնական և քաղաքացին ապահովագրական կասսաների վերաբերութեամբ:

Հէնց այդ պատճառով այդ կատէգորիային պատկանող բանւորների ապահովագրութիւնը դուրս է մնացած ընդհանուր պետական սիստէմից: Արդիւնագործութեան այդպիսի շրջաններում գործատէրը հարկաւորւած է օրէնքով հիմնել մի մասնաւոր ապահովագրական կասսա իւր վարձկանների համար: Այդ տեսակ կասսաները նոյն պայմաններով և կանոններով են ղեկավարւում, նոյնաոճակ օգնութիւն մատակարարում անդամներին, նոյնքան է անդամավճարը, ինչ որ միւս տեղերում: Բայց ն[թ]է պատահի որ այս պայմաններում զրամը պակասի մեծածախս պէտքերի համար, այն ժամանակ գործատիրոջ վրայ է ընկնում պահանջած գումարը հոգալու: Ռիսկը և թէ վնասները նրան են պահանջում: Հասկանալի է, որ այդ ծանրութիւնից դուրս գալու համար գործատէրը կարող է

Թոյլ տալ իրան հարստահարութեան նորանոր միջոցներ ընտրել. բայց այդ դժուար է այժմ Գերմանիայում. թէ բանւորները հեշտութեամբ չեն Թոյլ տայ իրանց հարստահարելու և թէ կայ հսկողութիւն կառավարութեան կողմից: Հիւանդութեան դէմ ապահովութեան այս օրէնքը սկսեց գործադրել Գերմանիայում 1885 թ. յունւարի 1-ից:

Պէտք է ասել, որ համայնքների կասսաները այն դերը չեն խաղում ինչպէս միւսները: Ապահովագրողները աւելի լաւ են համարում ուրիշ տեղ անդամ գրել քան թէ համայնական կասսաներում: Եւս առաւել նրա համար, որ մի քանի ոչ-համայնական կասսաներ կապացնում են, շնորհիւ գերմանական պետութիւնների արած նպաստների, զանազան ներաբերութիւնների կամ թէ առաջուց խնայած գումարների, աւելի մեծ առաւելութիւններ քան թէ համայնական կասսաները: Այսպէս, օրինակ, ազատ օժանդակող ընկերութիւնների կասսաները մատակարարում են բժշկական օգնութիւն աւելի երկար ժամանակ քան 13 շաբաթ. էլ չենք խօսում միւս առաւելութիւնների մասին:

Այս տեսակ ընկերութիւններին գործատիրոջ դրամական անդամավճարով մասնակցելը, որը անդամավճարների գումարի  $\frac{1}{3}$  էր կազմում միւս կասսաների համար, այլ ևս չէ պահանջւում. ուստի նշանակւած է ապահովագրեալներից ստանալ աւելի քան 20% վարձադէնի: Այս տեսակ ապահովագրեալների թիւը բաւական մեծ է. ապահովագրեալների ընդհանուր թւի մօտաւորապէս  $\frac{1}{4}$ :

Օրէնքի գործադրութեան հէնց առաջին տարին 1885 թւին, ինչպէս այդ երևում է պաշտօնական տեղեկագրից, եղել է ամբողջ երկրում 17,384 կասսա, 4 միլիոն 809 անդամներով, որից համայնական կասսաների թիւը հասնում էր միայն 6,888-ի, 533,072 անդամներով: Այս արդէն ցոյց է տալի վերջին տեսակ կասսաների անժողովրդականութիւնը:

Մէկ տարւայ ընթացքում բոլոր ծախսերի գումարն եղել է 64 միլիոն Ֆր., այնպէս որ իւրաքանչիւր ապահովագրեալին այդ տարին գալիս է 16 Ֆրանկ: Մուտք եղել է 80 միլիոն, 16 միլիոն նով աւելի քան ծախսը—մօտաւորապէս ծախսի  $\frac{1}{4}$ :

## IV

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔ ԴԺԲԱՂԴ ԴԵՊՔԵՐԻ ԴԵՄ

(1884 թ. 6 յուլիսի)

Կեանքի մէջ պատահում են անթիւ անբաղդներ, որոնց կամ բնութիւնն է պատժած լինում և կամ թէ զանազան պատահարքներ և հանգամանքներ: Կոյրեր, կաղեր, հաշմանդամներ մարդկութեան թւի մի զգալի տոկոսն են կազմում: Այդ անբաղտ զրկածների մէջ, ինչպէս ասացի, կան այնպիսիները, որ ի բնէ այդպէս ծնւած են, կայ և միւս մասը, որ զանազան շարիքների և փորձանքների հանգիստելով՝ առաջիններին վիճակակից է եղել: Ում յայտնի չեն մարդկային աշխատանքի մէջ տեղի ունեցող յաճախակի սրտածմլիկ դէպքերը. այսօր կը լսէք այստեղ դորժարանում կաթսան պայթելով բաւականին մարդկային զոհեր է տարել, այնտեղ շինութիւնը կործանւելով փլատակների տակ է արել աշխատող բանւորներին, այլուր ստորերկրեայ հանքերում հանքագործների հետ որ և է անբաղդութիւն է պատահել: Այս և նման բազմատեսակ հազարաւոր լուրեր միշտ կը լսէք աշխատանքի և արդիւնագործութեան աշխարհից: Մի փոքրիկ անզգուշութիւն, մի զանցառութիւն կամ սխալմունք մարդու կողմից—և ահա լանմիջապէս հետեանք այդ բանի՝ մեծամեծ ֆեասներ և մարդկային զոհեր: Աշխատանքի աշխարհում կան այնպիսի պարապմունքներ, որ ինքնըստինքեան ֆեասակար և վտանգաւոր են. ֆեասակարութիւնը և վտանգաւորութիւնը որոշեալ աշխատանքների նոյն իսկ բնոյթն են կազմում: Ուստի աշխատանքի մէջ տեղի ունեցած պատահարքներից ֆեասած բանւորներին և նրանց ընտանիքներին անարդար և անզուլ կը լինէր թողնել անուշադիր, երեսի վրայ ընկած: Անշուշտ հարկաւոր է զգոյշ լինել, խիստ հսկել մարդկային զանցառութիւնների վրայ, որպէս զի թշառութեան յաճախակի պատահմունքներից զերծ պահենք մեզ. բայց երբ մի արդիւնաբերութեան կամ աշխատանքի բնութիւնը այնպէս է, որ բնականաբար տեղի են ունենում անխուսափելի կերպով տխուր դէպքեր, մի՞թէ արդար կը լինէր, կրկնում ենք, թողնել աշխատաւորներին և նրանց ընտանիքներին թշառութեան մէջ. և ինչո՞վ են նրանք մեղաւոր, որ այս կամ այն դժբաղդու-

թիւնը հէնց նրանց հետ է միշտ պատահում և ոչ «ազատ», «հեշտասէր» դասակարգի անդամների հետ:

Սակայն ով պէտք է օգնութեան դար այդպիսի ֆնասեալներին: Ահա այս հարցն էր որ շատ զբաղեցրեց Բէյխսագին Գերմանիայում: Միւսոյն օրինագիծը փոփոխւած երեք անգամ քննութեան ենթարկեց Բէյխստագում զանազան ժամանակներում—1881, 1883 և 1884 թւականներին:

1881 թւի օրինագծով Բէյխստագը, ազատ կացուցանելով պետութիւնը դրամական մասնակցութիւնից, ապահովագրական հաստատութեան բոլոր ծախսերը թողեց գործատէրերին և բանւորներին հոգալու: 1883 թւին օրինագիծը կրկին քննութեան առնելով՝ յարմար գտաւ բանւորներին ազատել դրամական մասնակցութիւնից. տէրութիւնը և գործատէրերը պիտի ծախսերը հոգային:

Վերջապէս հետեւեալ տարին, 1884 թ. յուլիսի 6-ին վերջնականապէս օրէնքն անցնելով Բէյխստագում՝ ապահովագրական ընկերութեան բոլոր ծախսերի հոգսը իրենց բացառապէս գործատէրերի վրայ:

Ահա այդ վերջին օրէնքն է, որի հետ մի քանի խօսքով պէտք է ծանօթացնենք ընթերցողին:

Բանւորական ապահովագրութեան այս երկրորդ ձիւղը մասնաւորապէս վերաբերում է արդիւնագործական այնպիսի ձեռնարկութիւններին, որոնք յայտնի են իբրեւ աւելի կամ պակաս վտանգաւոր. իսկ այնպիսիները, որոնք արդէն ճանաչւած են անվտանգ, ազատ են համարւում ապահովագրութեան մասնակցելու պարտաւորութիւնից: Ինչպէս տեսնեք, առաջին դէպքում հիւանդութեան դէմ ապահովագրութեան անգամ սովորաբար կարելի էր գրել ամեն կասսայում, որ կասսայումն որ ցանկութիւն կը յայտնւէր, եթէ ի հարկէ կասսան ներկայացնում է օրէնքի պահանջած ընդհանուր պայմանները. այն ինչ դժբախտ դէպքերի դէմ ապահովող հաստատութիւնը ներկայացնում է միայն մի տեսակ կազմակերպութիւն: Ինդուստրիայի աչքի ընկնող տարբեր ձիւղերը կամ թէ չէ միանման արւեստների խումբերը միանալով կազմում են պրոֆէսիոնական (professionnel) ընկերակցութիւններ կամ կորպորացիաներ,

որոնց գործունեութիւնը տարածւում է մի շրջանում կամ ամբողջ տէրութեան մէջ: Կորպորացիաների գործունեութեան համար հարկաւոր բոլոր գումարները հայթայթւում են միայն և եթ գործատէրերը: Հաստատութեան ղեկի անցած է մի վարչութիւն, որը ղեկավարում է կազմակերպութեան բոլոր գործերը. կան և վարչութեան ճիւղեր, որոնցից իւրաքանչիւրը կառավարում է իր շրջանի գործարաններում և արհեստանոցներում աշխատող բանւորների ապահովագրական կորպորացիաների գործերը: Գործատէրերը կարող են ժողովներ կազմել և խորհրդակցել միասին իրանց վրայ դրած պարտականութիւնները ճշտօրէն կատարելու մասին: Ար կորպորացիային էլ պատկանի իւրաքանչիւր բանւոր՝ նա ստանում է հետեւեալ օգնութիւնները.

Բժշկական օգնութիւն տասն և երեք շաբաթից յետոյ, իսկ մինչև այդ ժամանակ արդէն անհրաժեշտ օգնութիւն ստացած լինելով հիւանդութեան համար խնամող ընկերութիւնից. յետոյ—մինչև որ բանւորը կառողջանայ և կարող կը լինի նորից աշխատել, տրւում է բոլորովին աշխատելու անկարողութեան դէպքում սովորական վարձագինի  $\frac{2}{3}$ -ին հաւասար մի դրամական նպաստ, իսկ մասնաւոր կերպով աշխատելու հնարաւորութեան դէպքում՝ աւելի պակաս նպաստ, նայելով կրած վնասի ծանրութեան աստիճանին:

Մահւան դէպքում ընկերութեան կասսան հոգում է 1) թաղման ծախքը, տալով բանւորի քսան օրւայ վարձագինի չափ մի գումար. 2) տալիս է հանգուցեալի ռոճիկի  $20\%$ -ին հաւասար մի թոշակ հանգուցեալի աչրիին, որը եթէ կրկին պատկելի, այն ժամանակ միանալով տրւում է կասսայից նոյն թոշակից երեք անգամ աւելի մի գումար. 3) հանգուցեալ հօր վարձագինից  $15\%$  իւրեւ թոշակ  $15$  տարեկանից պակաս իւրաքանչիւր որբ մանկան. 4) նոյն վարձագինի  $20\%$  թոշակ մեռած բանւորի արեւական ազգակիցներին, բայց այն դէպքում միայն՝ երբ ապացուցւի, որ սրանք կարիքի մէջ են և թէ ապրում են գերմանական հողի վրայ: Եթէ այս բոլոր նպատակների համար տրեւի գումարը անցնի հանգուցեալի վարձագինի  $60\%$ , այն ժամանակ նպատակների քանակը իջեցնում են կարեւորութեան համեմատական չափով մինչև յիշւած  $60\%$ -ը:

Շատ պարզ է, որ այսպիսի ահագին ձեռնարկութիւնները կա-

րող են առաջ բերել անսպասելի ահազին ծախսեր, ուստի այս երկրորդ ճիւղի ապահովագրութեան համար աւելի քան առաջինի համար անհրաժեշտ է ունենալ որոշ կապիտալներ անյաշող զժբաղդ օրերի համար: Օրէնքը սահմանում է իւրաքանչիւր կորպորացիայի համար ստեղծել պահեստի գումար, որ պիտի կազմէի առանձին բաժանորդավճարներէից տասն և մէկ տարիների ընթացքում և որը պիտի հաւասարի ընկերութեան կարիքների վրայ արեւած տարեկան ընդհանուր ծախսերի միջին գումարից երկու անգամ աւելի մի գումարին:

Մի գժւար լուծելի խնդիր առաջ եկաւ, թէ ինչպէս պէտք է դասաւորել, ինչպիսի կարգերի պէտք էր բաժանել պարապմունքները ըստ իրանց վտանգաւորութեան աստիճանի, որպէս զի հնարաւոր լինէր ապահովագրական վճարների աստիճանաւորութիւնը որոշել: Իւրաքանչիւր կորպորացիա բաղկացած է աւելի կամ պակաս վտանգ ներկայացնող պարապմունքների տարբեր կատեգորիաներից և որոնցից իւրաքանչիւրին համապատասխանում է բաժանորդավճարի միստեասկ տարիջ: Բայց որովհետեւ անհնարին էր միանգամից սահմանել դրամական պատասխանատուութիւնը այնպէս, ինչպէս որ պէտք է լինէր, ուստի 1884 թւի օրէնքը պատւիրում է, որ անդամավճարների տարիջը օրէնքի գործադրելուց երկու տարի յետոյ մի անգամ պիտի վերաքննէի, իսկ այնուհետեւ հինգ տարին մի անգամ:

Որպէս զի կանոնաւոր ընթանաց գործը, անդամավճարների գումարները իր ժամանակին կանոնաւոր ստացւին—մի խօսքով օրէնքի պահանջած բոլոր կէտերը ճշտութեամբ կատարւին բաւականութիւն տալով իրական սահանջներին՝ անկասկած անհրաժեշտ էր լաւ կազմակերպւած մի կառավարչութիւն: Ինչպէս արդէն վերեւ յիշեց, կորպորացիաները ունին մի ընդհանուր վարչական մարմին, որը կազմում են հաւասար թւով բանւորներ և գործատէրեր:

Բացի սրանից այդ ընկերակցութիւններից իւրաքանչիւրը ունի մի հաշտարար ատեան, որին նախագահում է անկողմնապահ և չեղոք զիրք վայելող պետական մի պաշտօնեայ, ատեանը բաղկացած է նոյնպէս հաւասար թւով գործատէր և բանւոր օգնական անդամներից (ասսեսորներ): Այնուհետեւ կայ Բերլինում ապահովագրական ընկերութիւնների կաշսերական ասւած մի խորհուրդ, որը բարձրագոյն ատեանի պաշտօնն է վարում և բաղկացած է առնւազն երեք անփոփոխ մշտական

անդամներից և ութ ժամանակաւոր և փոխւող անդամներից: Հաշտարար ատեանների որոշումների մասին կարելի է բողոք ներկայացնել Բերլինի բարձրագոյն ատեանին, որը հէնց հիմնւած է տարաձայնութիւնները լսելու և նրանց վերջ տալու համար:

Երբ ապահովագրութեան օրէնքին ենթարկւող մի գործարանում կամ արհեստանոցում տեղի է ունենում մի զժբաղդութիւն, իսկոյն տեղական ոստիկանութիւնը, որը քառասուն և ութ ժամաւայ մէջ պէտք է անպատճառ վերահասու լինի զժբաղդ դէպքին, քըններով արձանագրութիւն է կազմում. այդտեղ նոյնաժամանակ ներկայ պէտք է լինին մի ներկայացուցիչ կորպորացիայից, մի ներկայացուցիչ ընկերութեան այն ճիւղից, որին անդամ է եղել զո՛րը և վերջապէս մի ներկայացուցիչ այն գործարանի կողմից, ուր տեղի է ունեցել զժբաղդ դէպքը:

Ընկերութեան տւած վարձատրութիւնները անձեռնմխելի են: Նպաստները պոստն է բաժանում, որը և ամեն տարի հաղորդում է իւր բաշխած գումարների ելքի հաշիւը զանազան կորպորացիաներին:

Իւրաքանչիւր արդիւնագործային ընկերութիւնից առնւում է տուրք բանող վարձկանների թւի համեմատ. իսկ անդամավճարների ժողովելը կատարւում է նոյն եղանակով, ինչ որ համայնական միւս տուրքերի համար:

Ապահովագրեալ հիմնարկութիւնները գտնւում են զանազան հաստատութիւնների տեսչութեան տակ. նրանք նոյն իսկ այն պրոֆէսսիոնական ընկերակցութիւնների հսկողութեան տակն են, որին պատկանում են, կամ ապահովագրական ընկերութիւնների Բերլինի կայսերական վարչութեան և կամ թէ վերջապէս ապահովագրական ազգային կոչւած վարչութիւնների հսկողութեան տակ. վերջիններս հիմնւած են զերմանական դաշնակցական զանազան պետութիւնների ձեռքով:

Բայց որովհետեւ կարող էր պատահել, որ այս վերահսկողութեան գործադրութիւնը վնասներ առաջ բերէր գործատերերին՝ գործարանատիրոջ արդիւնագործական գաղտնիքները յայտնւելով, այդ պատճառով օրէնքը որոշեալ դէպքերում իրաւունք է տալիս ձեռնարկութեան տիրոջը անձամբ նշանակել իւր տեսուչներին

(ինսպեկտորներին) և պատժում է զանազան միջոցներով շահագիտական անվայել գործողութիւնները: Այսպէս, խիստ պատիժ է նշանակում (մինչև 1875 Ֆրանկ տուղանք և երեք ամիս բանտարկութիւն) այն անձանց, որոնք իրանց պաշտօնը ի չար գործածելով կը տարածեն տեխնիկական այն ձեւերը, որոնք դեռ հասարակական սեփականութիւն չեն դարձել: Եթէ ապացուցւի, որ այդպիսիները գաղտնիքներ հաղորդելով դիտաւորութիւն են ունեցել շահագիտական արհեստ շինել իրանց համար, այն ժամանակ տուղանքը կարող է կրկնապատկել: Միւս կողմից այն գործատէրերը, որոնք ճիշտ տեղեկութիւններ չեն տալ բանւորների թէ թւի և թէ նրանց իսկական վարձագների մասին, ենթարկւում են նոյնպէս մինչև 375 Ֆրանկ տուղանքի<sup>1)</sup>:

Սրանք են ահա 1884 թւի օրէնքի գլխաւոր կէտերը: Օրէնքը գործադրութեան մէջ մտաւ ընդունւելուց 15 ամիս յետոյ: Հէնց սկզբում արդէն գտնում ենք յիսուն և եօթ կորպորացիաներ, սրանցից քսան և չորսը ընդգրկում են կայսրութեան ամբողջ տէրիւտորիան. վերջին կորպորացիաների շարքն են մտել բրուտութիւնը, տղիւսագործութիւնը, աղօրագործութիւնը (meunerie), հանքագործութիւնը: Այն ինչ միւս մնացած կորպորացիաները արդիւնագործութեան այնպիսի ճիւղերն են ընդգրկում, որոնք կամ շատ նշանաւոր են կամ ներկայացնում են այնպիսի բարդ բնաւորութիւն, որ կարելի չէ ամեն մէկից մի կորպորացիա կազմել. այսպէս օրինակ, փայտի ինդուստրիան կազմում է երեք ասարեք կորպորացիաներ, երկաթինը եօթ կորպորացիա, գործւածքեղէնը—ութ և այլն:

Վերջին վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ կորպորացիաների թիւը աւելացել է: 1886 թւին 31 ղեկումբերին այդ բոլոր բազմատեսակ կորպորացիաները ունէին միասին մօտ երեք միլիոն ապահովագրեալ բանւոր անդամներ, որոնք բանում էին 200,000 հիմնարկութիւններում. այդ երկու հարիւր հազար արդիւնագործական հիմնարկութիւնները վճարում էին երկու միլիարդ ու կէս (2,500,000,000) Ֆրանկ տարեկան թոշակ:

<sup>1)</sup> Մօտաւորապէս 150 բ., որը իսկ խոստովանած բաւական աննշան պատիժ է:

Յիշեալ կորպորացիաների հետ միացան նոյնպէս պետական ճանաչած հաստատութիւնների համար կազմակերպւած ապահովագրական ընկերութիւնները. դոցա մէջ են պետութեան երկաթուղիները իրանց 200,000 ծառայողներով, որոնցից 30,000 միայն պէտք է հաշուել իբր մասնաւոր երկաթուղիների ծառայողներ. յետոյ—փոստային հիմնարկութիւնների ծառայողները, որոնց թիւը նոյնպէս ահագին է: Արդիւնադործութեան զանազան ճիւղերը վտանգաւորութեան տարբեր աստիճան ներկայացնելով՝ զանազան կորպորացիաների բիւջէտներն էլ միմեանց նման չեն լինում, որովհետեւ, ինչպէս վերեւ ասեց, անդամարձարները որոշուած են պարապմունքի նշանակութեան և թէ ներկայացնող վտանգի աստիճանի համեմատ: Վերցնենք օրինակ հանքային արդիւնադործութեան կորպորացիայի գործունէութեան համառօտ հաշիւը 1886 թւականի ընթացքում. այդ կորպորացիան բաժանւած է ութ սեկցիաների և ունեցել է այդ տարին 349,000 ապահովագրեսւլ:

Տանը հիւանդների վրայ խնամատարութեան ծախք եղել է 25,000 ֆր., ֆլասւածներին թոշակ 286,000 ֆր., թաղման ծախք 12,000, թոշակ այրիներին 6,000 ֆր., թոշակ որբ մանուկներին 107,000 ֆր., թոշակ ազգականներին 4000 ֆր.: Հիւանդանոցում խնամատարութեան ծախք ֆլասւածների, նրանց կանանց, որբացած մանուկների կամ թէ ազգականների համար միասին եղել է 35,000 ֆր.:

Զուտ ծախք իւրաքանչիւր մարդու վրայ ընկնում է 2 ֆր. 20 սանտիմ, որից 1 ֆր. 47 ս. օգնութեան համար, իսկ 53 սանտ. վարչական ծախք: Վարչական ծախքը աչքի է ընկնում իր շատութեամբ, բայց այդ ահագին ձեռնարկութիւնը մեծամեծ ծախքեր է պահանջում և դեռ գործի սկզբում շատ դժւարութիւնների պէտք էր յաղթել:

Ուրեմն, ինչպէս տեսանք, վերոյիշեալ կորպորացիայում իւրաքանչիւր մարդ 1886 թւականին նստել է իւր հանքատիրոջ 2 ֆր. 20 ս. և ոչ աւելի. այնպէս որ մի գործատիրոջ վրայ, որը կ'ունենայ իւր ձեռքի տակ հարիւր մարդ բանող, կը նստի միայն 220 ֆր. տարեկան, որ մի մեծ բան չէ:

Մենք դժբաղդաբար ձեռքի տակ չունենք ստատիստիկական

ճիշտ տեղեկութիւններ ցոյց տալու համար թէ իւրաքանչիւր կորպորացիայում և յետոյ բոլոր կորպորացիաներում պատահարքներից որքան մահւան, որքան ծանր կամ թեթեւ հիւանդութեան դէպքեր են տեղի ունեցել, թւով որքան որբ մանուկներ, այրիներ են մնացել բանւորների աշխատանքին զոհ գնալուց յետոյ: Բայց վերև առաջ բերած միայն հանքային կորպորացիայի 1886 թւի հաշից կարելի է մօտաւոր եզրակացութիւններ հանել:

Այդ տարին հանքային կորպորացիան վնասուածներին թոշակ տւել է 286,000 Փր., հիւանդութեան ամբողջ ընթացքում վնասուած բանւորը, բացի բժշկական օգնութիւնը, ստանում էր իւր վարձագնի  $\frac{2}{3}$  մասը. դնենք թէ միջին օրավարձը 2 Փր. է, ամիսը 60 Փր. տարին 720 Փր., որի  $\frac{2}{3}$  մասը կը լինի 480 Փր., 286,000 թիւը բաժանելով 480-ի վրայ կը ստացւի աւելի քան 590 ծանր վնասուած մարդ. այս թիւը կարելի է համարձակ կրկնապատկել, որովհետև այդքան մարդ հէնց մի օր տարւայ սկզբից չեն պատուհասուել, այլ զանազան ժամանակներում. ուստի հիւանդութեան օրից հաշւելով, բաշխւած թոշակի քանակութիւնը իւրաքանչիւր մարդու վրայ աւելի պակաս կը գայ քան մեր հաշւած տարեկան 480 Փր., որը նշանակում է թէ 1886 թւի 286,000 Փր. թոշակով տւած նպաստը աւելի շատ թւով հիւանդներին կը հասնէր քան 590:

Տեսնենք մահւան քանի դէպքեր են տեղի ունեցել. թաղման ծախք եղել է նոյն տարում 12,000 Փրանկ. թաղման իբրև նպաստ ընկերութիւնը պարտաւորւում է տալ մեռնող բանւորին քսան օրավարձի չափ մի գումար: Միջին օրավարձ հաշւեցինք 2 Փր., կը նշանակէ թաղման ծախք կը տրւի իւրաքանչիւր մեռնողի համար 40 Փ., ուրեմն  $(12,000 : 40 = 300)$  մեռնողների թիւը եղել է 300: Եւ չենք շարունակում անտէր որբ երեխաների, այրիների թիւն հաշւելու նոյն եղանակով. դա մեզ հեռու կը տանէր: Բաւական է ասել, որ եթէ այդ փոքրագոյն հաշիւներով ղեկավարենք և ի նկատի չունենանք արդիւնագործութեան մէջ հանքագործութիւնից աւելի վտանգաւոր պարապմունքները, որոնց մէջ շատ աւելի կարող էին դժբաղդ դէպքեր տեղի ունենալ, 1886 թւին բոլոր 57 կորպորացիաներից մեռածների թիւը հաւասար կը լինի  $57 \times 300 = 17,000$ , ծանր վնասուածների թիւը  $57 \times 590 = 33,630$ :

Ուրեմն այս մօտաւոր նւազ հաշիւներով Գերմանիայում դժբաղդ դէպքերից 57 կորսորացիաներում մեռնողների և ծանր վնասւածների թիւը կըլինի 50,730: Մօտ երեք միլիոն ապահովագրեալի վրայ 50,000 ծանր հիւանդացածների և մեռածների թիւը նշանաւոր տոկոս է: Սա բնական մահ չէ, ընթերցող, բնական պատճառներից առաջ եկած ծանր հիւանդութեան դէպքեր չեն, այլ աշխատանքի աշխարհում պատահարքներից առաջ եկած, պատահարքներ, որոնք շատ անգամ անխուսափելի են մանաւանդ խոշոր արդիւնագործութեան մէջ: Ապահովագրութեան սիստէմը նպատակ ունի ի հարկէ նւազացնել դժբաղդ դէպքերը, բացց կարելի է ասել թէ երբ և իցէ պատահարք տեղի չի ունենալ այլ ևս... Դժւար թէ: Սակայն դժբաղդութեան աղբիւրը, այսքան թշւառութեան պատճառը ոչ այնքան աշխատանքի բնաւորութիւնն է, որքան աշխատանքի հարստահարութեան ձեւը, ստեղծւած ներկայ կապիտալիստական շրջանում, անհատական կապիտալի իշխանութիւնը հասարակական աշխատանքի վրայ:

(Կը շարունակւի)

ՍԵՐ ՊՍՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԵՒ ՂԱՍԱԳՔՐԵՐԻ ԼԵՋՈՒՆ ԵՒ  
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ <sup>1)</sup>

ՈՍՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

Մի թեթև հալեացք եթէ գցելու լինենք բաւական է որ տեսնենք թէ ինչ ծուռ ճանապարհով է գնում մեր արդի գրականական լեզվի մշակման դործը, ինչ է պատճառը այդ տխուր երևութիւն Այդ հարցին անմիջապէս պատասխանելուց առաջ մենք պիտի մի քիչ շեղվենք հետեւեալ հարցին պատասխանելու համար՝ թէ ով է լեզվի մշակողը՝ Մէկ անգամ արդէն ասել ենք թէ լեզվի ստեղծողը ազգն է, նորա պահողը՝ ժողովուրդը, նորա կրթողը, մշակողը՝ ուսեալ և կրթեալ հասարակութիւնը։ Բայց ունինք արդեօք ուսեալ կրթեալ հասարակութիւն. բաւի ընդհանուր մտքով—այս ի հարկէ, բայց մեզ հետաքրքրող առարկայի մտքով—ոչ, հազար անգամ ոչ։ Ամեն մի ազգ (խօսքս քաղաքակրթեալ ազգերի վերաջ է) ունի մի կենտրոնական ուժ, մի ինտելիգենտ հասարակութիւն, որի լեզուն, կրելով իւր վերաջ նոցն ազգի պատմութեան և քաղաքակրթութեան կնիքը, ներկայացնում է մի ուժ, որին հպատակում է ամեն մի անհատը այդ հասարակութեան. ամեն մէկը որ պատկանում է այդ հասարակութեան, մտածում է նորա լեզվով, գրում է նորա լեզվով, խօսում է նորա լեզուն. գրականութիւնը ցանկանալով իշխել այդ հասարակութեան վերաջ պիտի խօսէ նորա հետ նորա լեզվով. միևնույն ժամանակը այդ կենտրոնական հասարակութիւնը ինքն է իւր լեզվի

<sup>1)</sup> Հանդուցեալ լեզւագէտի նշանաւոր անտիպ աշխատասիրութեան՝ «Արդի գրականական լեզուն և նորա քերականութիւնը» մի գլուխն է այս։ Վերոյիշեալ աշխատութեան ծրագիրը տպագրուեց «Տարադ»-ում № 2, 1893 թ.։

Լ. ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

Հանդուցեալի այս աշխատութիւնը մենք տպագրում ենք անփոփոխ, իւր ուղղագրութեամբ։

ԾԱՆ. ԽՄԲ.

աւանդապահը նորան կերպարանք և հռչակ տվողը՝ եթէ հարկաւորութիւն կալ նորամուծութեան կամ առհասարակ մի որ և է արվեստականութեան— ալդ կատարվում է նոյն հասարակութեան թուլատվութեամբ, որի լեզուն զգում է ալդ կարօտութիւնը. եթէ ալդ նորամուծութիւնը դէմ է նորա ճաշակին, նորա լեզվի ոգուն կամ հեշտ խուսափելի է.—մերժվում է. եթէ ոչ հասարակութիւնը ընդունում է և իւր գործածութեամբ սրբագործում է և շատ ժամանակ տալիս է ալդ նորամուծ հիւրին իւր սեպհական կերպարանքը, ենթարկում է նորան իւր առանձնապատկութիւններին, իւր ոգուն. իբրև հաւատարիմ պահապան իւր լեզվի իստակութեանը, ոգուն և ճաշակին նա ոչ միայն անձաշակ, անպէտք և անօգուտ օտարականութիւններ իւր լեզվի մէջ մտնելու առաջն է խտտութեամբ առնում, ալ և նոյն խտտութեամբ հսկում է նա իւր լեզվի իստակութիւնը և ճաշակը ներքին թշնամիների չարձակումների դէմ. ալդ թշնամիներն են կամապակահոթութիւնը և գաւառականութիւնը: Ամեն մի նորահնար բառ, քերականական ձև կամ դարձված ենթարկվում է կրթեալ հասարակութեան կոնտրօլին և նորա դատավճռին և միմիայն անհրաժեշտութիւնից ստիպված ինտելլիգենտ հասարակութիւնը ընդունում է ալդ նորամուծութիւնները և ալդ ալն պաշտօնով, որ դա անհրաժեշտ լինելով ուրիշ տեսակ ասելը անկարելի է. և ալդ դէպքում պատահում են չաճախ օրինակներ, երբ սեպհական լեզվից կամ բարբառներից առած նորահնարը տեղի է տալիս աւելի չաջող, աւելի բովանդակութիւն, աւելի որոշ իմաստ արտապատող օտարականութեան. университетъ, факультетъ, математика և ուրիշ ալդպիսի բազմաթիւ օտար բառեր, եթէ լեզվի իստակութիւնը պաշտպանող ռուսը ուզենալ թարգմանել ռուսերէն խօսքերով, ոչ միայն նորան չէին հասկանալ ալ և կը լինի աչքան ծաղրելի ինչքան երբեմն галопш-ի փոխարէն мокростушы առաջարկողները: Նոյնը կարելի է ասել և գաւառականութեան վերաբերեալ. քանի որ լուսաւոր հասարակութեան լեզուն որոշ կերպարանք է ստացել, քանի որ նորա լսելիքը սովորել է ալդ լեզվին, սովորել է զգալ նորա ներդաշնակութիւնը և գեղեցկութիւնը (թող լինի պաշտօնաւոր կամ ճաշակի բան—ալնուամենայնիւ սովորական և հարազատ դարձած),—ալնուհետև ամեն մի գաւառականութիւն թվում է արդէն խորթ, ծիծաղելի և ծաղրելի, թէկուզ ալդ գաւառական ձևը, խօսքը կամ դարձվածը գործածում լինի աւելի բազմաթիւ մարդկանց չլշան քան թէ ինտելլիգենտ հասարակութեան չլշանն է: Նրկակալեցէք, օրինակի համար, կաֆեղրալի վերալ նստած մի ռուս պրօֆեսոր հետեւալ լեզվով դասախօսելիս. „Милостивые государи! надѣсь я вамъ говорилъ что нонѣшній день я вамъ буду читать объ эфтомъ предметѣ, но я вчерась еще передумалъ и рѣшилъ что эфотъ самый предметъ способнѣй было бы разсмотрѣть опосля, а таперича мы хотимъ потѣлко-

ВАТЬ СЪ ВАМИ О ДРУГОМЪ и ալն. և ոչ միայն կաֆեդրայից ալ և ընտիր հասարակութեան մէջ գործածված ալսպիսի մի լեզու կամ լուռ ժպիտով կամ գոռգոռալի ծիծաղով ու ծաղրով կը մերթէն լողէ: Երբ, չը նայելով որ ամեն մէկը նոցանից գիտէ որ НАДЫСЪ, НОВАШИНЪ, ЭТОМЪ, ВЧЕРАСЪ, СПОСОБНЪЯ (УДОБНЪЕ), ОПОСЛЯ, ТВАЕРИЧА ХОЧЕМЪ գոյութիւն ունին ընդհանուր լեզվի մէջ, աւելի ժողովրդական են, որովհետեւ ալդ և դոցա նման բաղմաթիւ բառեր աւելի շատ գործածողներ ունին քան թէ դոցա համապատասխան գրականական ձևերը. նոյնը կարելի է ասել քերականական ձևերի<sup>1)</sup> և դարձվածների վերաբերեալ: Ահա ալսպիսի կետրոնական ուժ, ալսպիսի կրթեալ հասարակութիւն է որ պակասում է մեղ. և արդարեւ ինտելլիգենտ հասարակութիւն մենք ունինք բաց որն է ալդ հասարակութեան մարենի լեզուն, որն է ալն լեզուն որը նա խօսում է, որով նա մտածում է. պատասխանը պատրաստ է՝ արեւմտեան (կենտրոնի) հայերի համար տաճկերէն-ֆրանսերէնը, իսկ մեզ՝ արեւելեան հայերիս համար ռուսերէնը: Այդ երևութի պատճառը հասկանալի է. ինքնուրոյն քաղաքական կեանքից և ուրեմն սեպհական միջոցներից զրկված լինելով հայերը գիտութիւն և լուսաւորութիւն ձեռք բերելու համար ստիպված են գիմնլու օտար ուսումնարանների և լեզուների միջնորդութեան: Սահմանաւորեմք մեր խօսքը արեւելեան հայերով: Մանկութիւնից մտնելով ռուսաց ուսումնարաններ թէ միջնակարգ թէ բարձրագոյն ուսում սաանալու նպատակով, մեր մշտական գործածական լեզուն դառնում է ռուսերէնը, որ և բնական է, քանի որ դասականգութեան դասագրքերի և գիտութիւնների լեզուն ռուսերէնն է. բացի դորանից մենք ստիպված պիտի լաւ սովորեմք և լուանաք ռուսերէնը որ մեզ աւանդածը կամ որոնած գիտութիւնները հասկանալի և մատչելի լինին մեզ: Ալդ ժամանակամիջոցում և ալսպիսի հանգամանքներում մենք ալն աստիճան ընտելանում ենք ռուսաց լեզվին, նորա ոգուն և դարձվածներին, որ նա դառնում է մեզ համար հարազատ լեզու, որով մենք խօսում ենք և մինչև անգամ մտածում: Առաջ նա անհրաժեշտ է լինում մեզ իբրեւ գիտութեան լեզու, ինտոյ նորա գործածութիւնը դառնում է մեզ համար սովորութիւն և շատ անգամ էլ մնում է անհրաժեշտ ալն պարզ պատճառով, որ սովոր չլինելով հայերէնին, շատ ժամանակ չ'իմանալով ամենապարզ անգամ խօսքեր կամ դարձվածները, չ'ենք կարողանում մեր միտքը լաւ և ամբողջապէս արտապատել և կրկին

<sup>1)</sup> Յայտնի է, օրինակի համար, որ ռուսաց հասարակ ժողովրդի լեզուն համարեա բարբոռլին չ'է գործածում *прѣчастіе* и *дѣепрѣчастіе* ձևերը, ուրեմն և շատ նախադասութիւններ որոնք կրճատվում են գրականականում, կրճատելը չը գիտէ հասարակ ժողովրդի լեզուն:

դիմում ենք մեր սովորական խօսակցական լեզվին - ուսերէնին, կամ թէ խօսելով հալերէն, խառնում ենք ուսերէն խօսքեր նորա համապատասխան հալերէնը չ'իմանալով կամ իսկոյն չը գտնելով կամ որ աւելի չաճախ է պատահում՝ մտածելով ուսերէն — թարգմանօրէն խօսում ենք հալերէն: Բայց մեզ կարող են ասել թէ աչդ խօ բոլորեցունց չ'է վերաբերում, թէ կան բացառութիւններ. բայց մեր խօսքը բացառութիւնների վերաջ չ'է, և նոյն իսկ բացառութիւնների վերայ մատնանիչ անելը ալսպիսի դէպքում ցոյց է տալիս գործի թույլ կողմը, աչդ ասել է թէ լեզվի ոգին, ճշգրտութիւնը և չափութիւնները հասկանում են միմիայն մի քանիսը, իսկ մենք խօսում ենք ընդհանրութեան վերայ, մենք խօսում ենք աչն ընդհանուր լեզվի մասին, որ կոչվում է գրականական լեզու, որը ներկայացնում է մի ընդհանուր կապ լուսաւոր դասի անդամների մէջ, որը նոյն մտածելու և միտքը չափնելու գործիք է ամենքի համար պարտաւորեալ և ամենքի համար հարազատ և նվիրական: Մենք աչդ պարտաւորեալ և նվիրական լեզվից բազմի բերումք, ինչպէս վերև ասացի, հեռանում ենք, կամաց-կամաց օտարանում ենք և ժամանակով կրկին վերադառնալով՝ ամեն մէկը մեզանից բերում է իւր հետ մի օտարացած լեզվի ճաշակ, օտարոտի պահանջներ իւր մալերնի գրականական լեզվի վերաբերեալ. ալս քերականական ձևը լաւ չ'է, ալս դարձւածը անլարմար է, ալս մէկը ուսական է, աչն մէկը ուսերէնից հեռու է, ալս բառը հին է, աչն մէկը ուսերէնից է թարգմանւած և ալն և ալն: Մեզ կ'ասեն թէ մեր կրթեալ հասարակութեան պատկանողները խօ բոլորն էլ ուսաց (կամ եւրոպական) միջնակարգ և բարձրագոյն ուսումնարաններում չ'են ուսել որ օտար (ըստ մեծի մասին—ուսերէն) լեզուների չափով չափեն հալերէնը՝ կան շատերը, որոնք հալոց ուսումնարաններում են ուսել հալ լեզվով և հալ դասագրքերով, դոքա խօ ընտելանում են հալոց լեզվին և նորա ոգուն: Աչդ, դասաւանդութեան և դասագրքերի լեզուն հալերէն է, բայց դասախօսողների և դասագրքերի լեզուն մէկը միւսին նման չ'է. ամեն մէկը նոցանից ունի իւր համոզմունքները լեզվի վերաբերեալ, ունի իւր գաղափարները գրականական լեզվի և նորա մշակման գործի վերաբերեալ. և աչդ հասկանալի է. թէ ուսուցիչները թէ դասագրքեր կազմողները ըստ մեծի մասին նոյն մեր վերև նկարագրած հասարակութեան են պատկանում, իսկ եթէ նոցա մէջ կան աչնպիսիք, որոնք աւելի հայկական ուժով են կրթւած, նոքա իրանց լեզվի հիմն են ընդունում հին հալերէնը՝ աչդ պատճառով և հալ ուսումնարաններից էլ գուրա են գալիս մարդիկ չ'ունենալով ընդհանուր ամենքի համար հարազատ և պարտաւորեալ գրականական լեզու, մտնում են նոյն ինտելլիգենտ հասարակութեան շրջանը, ամեն մէկը բերելով իւր հետ նոյն խորին համոզմունքը թէ իւր խօսած և ընդունած հալերէնը միակ ընդունելին է և կա-

Նոճաւորը, Հասկանալի է ուրեմն որ ալդ տեսական հասոյներից բաղկացած կրթեալ հասարակութիւնը չ'է կարող կատարել ահն դերը, որ կատարում է կրթեալ հասարակութիւնը ուրիշ քաղաքակիրթ ազգերի մէջ. ալդ դերն է, ինչպէս վերեւ ասացինք՝ հսկել նորա խտակութիւնը, կանոնաւորութիւնը ու ոգին, դորանով է կրթեալ հասարակութիւնը մասնակցում գրականական լեզվի շինութեան և մշակման գործին. նորան է պատկանում կամ ընդունելով սրբագործել կամ մերժելով խափանել ահն ինչ որ լեզվի վերաբերեալ աւաջարկում են նորան նորա գործները ու զրագէտները: Սորանից պարզ երևում է, որ խկապէս ահս վերջիններն են լեզուն մշակողները, անմիջապէս գործողները, իսկ հասարակութիւնը, որի համար նոքա գործում են, որի լեզուն կրթում մշակում են, կատարում է դատավճիռ դնողի դերը: Բաւց քանի որ մենք չունինք կենտրոնական հասարակութիւն, որը ինքը պատմական կեանքով և իւր սեպհական հողի վերաջապրած լինելով հետը բերած հասցրած լինէր մեզ մի աւանդական լեզու, մի ընդհանուր գրականական լեզու, որ հաստատ, որոշ կերպարանք ունենար, որի օրէնքները և չտակութիւնները ամեն մի խօսողի և գրողի համար նմիրական և պարտաւորեալ լինէին, ալդ իսկ պատճառով նոր գրականական լեզվի մշակման գործի բոլոր ծանրութիւնը և պատասխանատւութիւնը ընկնում է նոյն իսկ մշակողների՝ գրականական գործիչների վերաջ:

Թէ ինչ է ալդ գրականական լեզուն, ինչ պահանջ կար նորա չառաջ գալուն, ինչ տեղից նա չառաջ եկաւ ալդ մենք տեսանք վերեւ (անտիպ. Ծան. խմբ.). տեսանք նոյնպէս թէ ինչ ընթացք բռնեց ալդ գործը սկզբից, ինչ ճանապարհով գնաց, ինչ արգելքների պատահեց, տեսանք թէ ովքեր դուրս եկան և գործեցին ալդ մեծ ասպարէզում, ինչ մտքեր չալտեցին և ինչպէս գործը տարան: Արդեօք ալդ ջանքերը ունեցան բարի հետեանք, հասան իրանց նպատակին: Այո, ալդ նոր գրականական լեզուն համեմատաբար կարճ ժամանակամիջոցում արդարացրեց մի՝ հանգամանքներին նաչած՝ բաւականին հարուստ գրականութիւն. բաւց ալդ նոր գրականական լեզուն ինքը հասնւ ցանկալի միակերպութեան ու կանոնաւորութեան, ստացան իւր վերջնական հաստատ և որոշ կերպարանքը և կազմակերպութիւնը թէ ոչ. գործին ուշադրութեամբ նաչելով ալդ հարցին տտաւաղդաբար բացասական պատասխան պիտի ստանանք: Ճշմարիտ է նա բաւականին մշակվեցաւ և կրթվեցաւ ահն աստիճան, որ կարող է աչմ կրթութեան և գրականութեան չաջող և չարմար գործիք համարվել, բաւց ահնու ամենաւնիւ, նա իւր լիակատար զարգացման դեռ չէ հասել, նա մինչև աչմ չ'ստացաւ անգամ իւր հարադատ քերականութիւնը, իւր որոշ գոհնը և կերպարանքը. դորա պատճառը գրականական գործիչներն են, Թերթեցէք ուշադրութեամբ մեր ժամանակակից գրականութեան օրդանը

— Լրագիրները և ամսագիրները և դուք կը տեսնէք թէ ինչ խառնաշփոթ դրութեան մէջ է գտնվում լեզուն և նորա մշակման գործը և երբ ուշադրութեամբ դիտենք կը տեսնենք որ ալդ տխուր երևույթը՝ ալդ մեծ և կարեոր գործի անլաջողութիւնը հետեանք է գլխաւորապէս հետեւեալ պատճառների՝ անուշադրութեան, տգիտութեան և անդուստ կամալականութեան:

Առաջին պատճառը՝ անուշադրութիւնը՝ աչնքան էլ վնասակար հետեանքներ չ'ունի լեզվի համար. դա ինքն ըստ ինքեան բաւական մօտ է կարամզինի նշանաբանին՝ զրիւր ինչպէս խօսում ես. բալց ունի աչնու ամենապիւ աչն վատ հետեանքը որ հեղինակը ընկնում է իւր մալրեւի բարբառի ազդեցութեան տակ կամ մի ուրիշ բարբառի, որին նորա լսելիքը ընտելացած է, կամ ընդհանուր խօսակցական լեզվի, որը, ինչպէս վերեւ ասացինք, աւանդական և կենտրոնացած չլինելով դեռ ինքը չ'ունի որոշ կերպարանք և խօսողի բերանում ստանում է լաճախ տեղական-գաւառական գոչն: Գաւառականութիւններից զերծ չ'են, ինչպէս տեսանք, մեր գրողներից շատերը, որոնց թւում և նոցանից մեծագոյնը— Բաֆֆին: Գաւառականութիւնը գուցէ փոքրագոյնն է չարիքներից. անուշադրութիւնից, անփութութիւնից դէպի լեզուն լառաջ են գալիս զանազան հակասութիւններ լեզվի քերականութեան մէջ և ալդ պատահում ենք ոչ միայն զանազան հեղինակների լօղւածներից բաղկացած մի հրատարակութեան մէջ ալ և լաճախ միկնոյն գրվածքի մէջ: Ալդ հակասութիւնների անթիւ օրինակներից բերենք մի քանիսը <sup>1)</sup>. չէ հնչում, չէ հետևում, չէ կրճատւում («Մուրճ» 1889, № 1, երես 174) չէ լուում, չէ բարդում, չէ արդարացում (ibid-եր. 175), չէ ասում, (ibid եր. 176) չէ խաղում («Մուրճ» 1889 № 10, եր. 1497 և 1499). գործածած չէ («Մուրճ» 1890 № 1, եր. 6). բալց՝ չէ թողնում (№ 10, եր. 1507), չէ տալիս (1504), չէ կարող (1496), չէ տրւում, չէ բացասում, չէ դառած («Մուրճ» 1890 № 1, եր. 6—7): Ալդ՝ պ. Արախանեանցի իրա լօղվածներից <sup>2)</sup>. Նոյն հակասութիւն.

<sup>1)</sup> Բոլոր լառաջ բերած օրինակներում մենք պահում ենք բնագրի ուղղագրութիւնը: Ծանօթ. Հեղինակի:

<sup>2)</sup> Խմ գրելու կանոնը կամ լօղւածի հեղինակ հանգուցեալ Սարգիս Սարգսեանը չի հասկացել և կամ հինգ տարի առաջ ես գրում էի ոչ այնքան որոշ կանոններով ինչպէս ալժմ: Չեմ կարող ճիշտը որոշել թէ որ թականից սկսած, բալց և այնպէս նոր չէ որ հետևում եմ այս կանոնին՝ զրիւ չէ բալից առաջ, և զրեւ չէ՝ երբ ալդ մասնիկը խօսքի (բալի, ածականի, դուականի) վերջումն է: Ես գրում եմ՝ չէ ասում, չէ գալիս, չէ ներում, չէ կարող, չէ կարողանում, չէ սխալւիլ և ալլն. բալց գրում եմ՝ նա հիւանդ չէ, նա ճամարտախօս չէ, նա վիրաւորած չէ, նա դերասան չէ, ալդ նա չէ և ալլն. Համաձայն ալդ կոնսիսին, ես գրում՝ նա չէ ասողը և ալլն...

ները կը տեսնէ ընթերցողը և ուրիշ հեղինակները «Մուրճի» մէջ տպւած չղջածներում և մի առանձին անտարբերութեան հասած՝ Նամակներու «Նամակներում»։ օրինակ՝ չի լինում և կողքին՝ չի լինում («Մուրճ», 1890, № 1, եր. 18—19)։ չի անում և կողքին՝ չի անում (ibid), չի բերում, կողքին՝ չի հաւանում (ibid) եր. 19 չի կարող, եր. 28 չի կարող. բայց սա արդէն կատարեալ անտարբերութիւն է դէպի լեզվի միակերպութիւնը և ես համոզված եմ, որ Նամակները գործ է ածում երկու ձևն էլ որովհետև ժողովրդի լեզվում երկուսն էլ գործածական են—բայց զարմանում եմ որ այդ տեսակ մտածողներից ոչ մէկը չ'է փորձում փոխել նոյն էական (ոչ բացասական) ձևը է և դրել այնպէս ինչպէս գուցէ ինքը գրողը իրան համար աննկատելի կերպով խօսելիս գործ է ածում՝ «յ (արտաս. «) չի (փոխանակ չ'է)»։ և դորա համար խօսակցական լեզուն և բարբառները պատճառ բերողներից ոչ ոք չ'է գրում՝ ասումայ, զիտումայ, գնումայ, լսումայ և այլն, մինչդեռ թէ կրթեալ հասարակութեան թէ առ հասարակ ժողովրդի խօսակցական լեզվի մէջ՝ առաջնում չառ լաճախ, երկրորդում համարեա մշտապէս՝ գործածական է «յ և ոչ է, նոյն իսկ մեր արեւելեան չորս գլխաւոր բարբառներից երեքը՝ քերականութիւնը տալիս է «յ և ոչ է ձևը («յ—Նրիան, Ղարաբաղ և Ագուլիսի բարբառում, է—մի. միայն Տիֆլիսի բ.։)։ Լուրջ է դատում Ղ. Աղալեանցը, մի լեզվաբանական ճշմարտութիւն է լատնում նա ասելով թէ՝ «մի ազգի գրականութեանը կարող են բառեր տալ նոյն ազգի բոլոր բարբառները, և մինչև անգամ օտար լեզուներն ևս, բայց նրա քերականութիւնը—բոլոր բարբառներից միայն մէկը կարող է տալ վասն զի ամեն մի բարբառ ունի իր առանձին քերականութիւնը, և այն ճիշտ և կանոնաւոր։ Որպէս զի գրական լեզուն ևս որ և է բարբառի չափ ճիշտ լինի և կանոնաւոր, եղած բարբառներից նա պէտք է միայն մէկի քերականութեան հպատակի <sup>1)</sup>» այդ իրաւացի է, իրաւացի է և այն որ «մեր ներկա գրական լեզուի հարազատ

(և ոչ թէ՛ նա չի ասողը. չի մասնիկը այդտեղ վերաբերում է նա խօսքին և ոչ առաջ խօսքին), նա՛ չի գրում և այլն... (не онъ пишетъ, ce n'est pas lui qui écrit.) բայց онъ не пишетъ, il n'écrit pas ես հայերէն գրում եմ. այսպէս՝ նա չի գրում, онъ не поётъ, il ne chante pas—նա չի երգում եսայն, որովհետև մասնիկը բային է պատկանում և սկզբումն է։

Իմ կանոնը այս է՝ երբ չեշտը մասնիկի վրան է—պէտք է գրել նի, երբ չեշտը իրա վրայ չէ—պէտք է գրել չի։  
Ես այդ կանոնին իմ գրածներում ամենայն խստութեամբ հետևում եմ. եթէ գտնեն իմ գրածներում դորա հակառակ օրինակներ՝ այդ պէտք է վերագրել անուշադիր սրբագրութեանը։

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

<sup>1)</sup> «Աղբիւր» 1888 № 12, 2 րդ բաժ. եր. 109.

մալըը Արարատեան բարբառն է <sup>1)</sup>»։ Բաւց պէտք չ'է բանը չափազանցու-  
թեան հասցնել թէ՛ «եթէ մի անգամ ընդմիջտ Արարատեան բարբառն  
ընդունէինք մեզ համար իբրև քերականութեան հիմք, բաւերն ա՛նպէս  
խոնարհէինք, ինչպէս նոյն բարբառումն են խոնարհում, ալ ևս հարկ չէ-  
ինք ունենալ հետազօտելու, ալ ուղղակի կասէինք՝ պէտք է ա՛նպէս  
գրել, ինչպէս մեր երկոքին ոսկեղէնիկ և սրբազան մատենաներումը  
գրած է <sup>2)</sup>»։ Մենք համաձայն ենք որ Արարատեան բարբառը կազմում է  
հիմքը մեր արդի գրականական լեզվի քերականութեան. մենք համաձայն  
ենք որ ալք քերականութիւնը ձևված է ալք և ոչ ուրիշ բարբառի վե-  
րալ, բաւց ա՛նու ամենաճիւղ մեր գրականական լեզվի բաւերի խոնարհումը  
բաւականին տարբերութիւն ունի Արարատեան բարբառի բաւերի խոնար-  
հումից։ Աւաններ օրինակի համար երկու էական բաւերը լի՛նէ (կամ լինել)  
և է՛ճ. դոցանից առաջինը համարեա ամեն մի բարբառում մի առանձին  
կերպարանք է ստացել, բաւց ընդհանրապէս նա նոյնանման և նոյնահնչիւն  
է բարբառներում ինչպէս կը տեսնենք չետո՛ց բարբառների բաժնում՝ հա-  
մեմատական աղիւսակից. բաւց ոչ մէկը ալք բարբառներից, նոցա թվում  
և Արարատեանը, չ'է ներկայացնում մեզ ա՛ն ձևերը որ սովորական են դա-  
ռած թէ կրթեալ հասարակութեան թէ գրականական լեզվի մէջ։ Ահա  
Պետքեանցի «Սօս և Վարդիթեր»-ից մի կտոր որի մէջ հանդիսանում են  
ալք բաւի խոնարհման մի քանի ձևերը. «Տօ դու ես <sup>3)</sup> որդի. էս վախտ  
աջաբաջալ. էդ ի՛նչ խաբար ա, խէր ըլի էս բէվախտին։—Արի դուռը բաց  
արան, ասեց, խէր չէ՛նք օ հառ չպտի ըլի, շառը շառոտ մարդին կըդիպ-  
չի։ Գարեգինի մէրը դրան փակը մի քիչ լիկլիկացրուց՝ չէ՛նք. բա՛նիքը  
չի գտաւ, մատը կոխեց կոտիտները բարձրացրուց ու գուռը բաց արուց»։

Նոյնը կարելի է ասել և պակասաւոր էական է՛ճ բաւի վերաբերեալ.  
բաւց սա գրականական լեզվում ա՛նքան չ'է հեռացել Արարատեան բար-  
բառից ինչքան լի՛նէ բաւը. գրականականում նա նոյնպէս է խոնարհվում  
ինչպէս Արարատեան բարբառում, բացի ներկալ ժամ. 3-րդ դէմքից եղա-  
կի՝ ա, (Արատ. ա). ալս դէպքում ինչպէս վերև ասացինք արեւելեան չորս  
գլխաւոր բարբառներից երեքը մէկի (Տփխիսի բարբառ.) դէմ համաձայն  
ներկայացնում են ա, և ալք երեքի թվումն է և մեր մալը բարբառը <sup>4)</sup>։

<sup>1)</sup> Ibid, երես 99.

<sup>2)</sup> «Աղբիւր», 1888 № 12, եր. 106.

<sup>3)</sup> Այս կտորը բերում ենք «Վրոնիկ» ամսագրից (1860 1, եր. 45)  
պահելով ուղղագրութեան հետ միասին և անմեղ ու անպէտք չհշտագրու-  
թիւնը և մինչև անգամ սխալ հարցական նշանը՝ դու ես, ի տեղի՝ գո՛ւ ես.

<sup>4)</sup> Համեմատիր է՛ճ բաւի ներկան.

|           |       |            |
|-----------|-------|------------|
| Արարատեան | բարբ- | գրականական |
| եւմ       | ենք   | եւմ ենք    |

Արդ՝ եթէ չնաւած բարբառների ահագին մեծամասնութեանը մենք ընդունել ենք Արարատեան լինիլ (և ալդ աւելի չաճախ քան անալոգիաբար կազմված լինել) և ոչ բարբառալին ընդ, հոնդպէս է և ոչ այ, ինչ հիմն ունինք ուրեմն և ալն է՞ էական բալի բացասական ձևի եղակի 3-րդ դէմքը կազմելու համար զիմել բարբառներին թէկուզ նոյն Արարատեան բարբառին, որից չառանք ալդ երկու էական բալերի համար ոչ մի ուրիշ ձև ալ հաւանեցինք միմիայն ալդ չէ ձևին, որը, նկատենք, աւելի պակաս չարմարութիւն ունի գրականական լեզվի մէջ մտնելուն քան թէ ընի, էլաւ, ալ և ալն. ալս վերջին ձևերը գոնիա մենք չաճախ թէ գիտակցաբար թէ անգիտակցաբար գործ ենք ածուս մեր սովորական խօսակցական լեզվի մէջ և քերականական տարակուսութիւններ և խառնակութիւններ չ'են չառաջանում, ալսինքն՝ միևնոյն ձևերը չ'են կրկնվում զանազան ժամանակներում. մինչդեռ չէ ձևը, որը սկզբում են շատերը մտնել չէ՛ի փոխարէն ունի արդէն ալն անչարմարութիւնը որ կրկնվում է բացասական ապառնում. ներկալ՝ չէ ասում, ապառ. չէ ասիլ. իրար նման լինելով արտաքին կողմից ալդ երկու չէ նմանութիւն չ'ունին իրանց ներքին նշանակութեամբ և ծագումով. դոցանից առաջինը՝ ալսինքն ներկալ ժամանակի չէն ոչ ալ ինչ է եթէ ոչ կերպարանափոխւած չէն, որը չառաջ է գալիս հետեւալ կարգով չը եմ==չ'եմ, չը ես==չ'ես չը է==չ'է. ալս վերջին ձևը՝ բացի Տիխիսի՝ միւս բարբառներում, նոյն թվում և Արարատեան բարբառում, փոխվում է չէ. ալսինքն ալս գէպքում է եմթարկվում է նոյն վիճակին ինչ վիճակին որ նա եմթարկվում է և բալերի երրորդ դէմքում եղակի (ապառ. և ստորադ. ներկալ), գիտի, գրի, քաշի, տանի և ալն. ալս օրինակների մէջ ինչպէս տեսնում ենք է փոխված է էից (համեմատիւր կիւրակէ==կի(ւ)րակէ), ալդպէս ահա և չէ փոխվել է չ'ի Միւս չ'ի ալսինքն ալն որ կազմում է բացասական ապառնու եղ. 3-րդ դէմքը ուրիշ ծագում ունի. Մեր բացասական ապառնին, չընաւած իւր արտաքին պարզութեանը, շատ բարդ կերպով է կազմվել. նորա կազմողներն են՝ չը բացասական մասնիկը, էական է՞ բալի ներկան, է նախդիրը և խոնարհվող բալի աներևութ եղանակը. Ալդպէս է սեկնում և հ. Ալտընեանը <sup>1)</sup>. թէև նորա ասածը վերաբերում է (արեւմտեան բարբառների)

|    |    |    |     |
|----|----|----|-----|
| եւ | էք | ևս | էք  |
| այ | են | է  | են. |

<sup>1)</sup> Միջին դարերու աշխարհիկ լեզուին մէջ ալ մակբալը գրեթէ իսպառ վերցած է, մինչև ժԱ, ժԲ դարերու մէջ երևան կ'ելլէ նոր ձև բացասական մը՝ էական բալով և է նախդիրով. Զէ է հասանել (չէ է հասանել) չի հասներ. չէս է չ'եւ, չէինք լսեր, չէինք մտիկ ըներ. չէ՞ է հալ, չեմ ի գար. Գետու ժԳ դարու մէջ կը գտնենք հիմակուան բացասականը առանց նախդրի՝ Զէ՞ վախար. չէս նախնիք:

Ներկազ ժամանակին (բաղասական խոնարհման), բալց ով մեղանից չըզի-տէ որ արեւելեան հալեքէնի Ներկազ ժամանակը կազմուում է աշնպէս ինչպէս մեր ապառնին. նորա հաստատական Ներկան մեր հաստատական ապառնու պէս, միաշն ալս վերջին դէպքում արեւմտեան հալեքէնում աներեւոյթ եղա-նակի վերջնական չ փոխուում է ք, իսկ արեւելեան հալեքէնում մնում է չ, կրեւով աշնու ամենաշնիւ մի ուրիշ փոփոխութիւն, աշն է՝ աներեւոյթ եղա-նակի եւ վերջաւորութեան մէջ է փոխում է ք, Ուրեմն մեր բացասական ապառնին, առաջինք, ունի հետեւեալ կազմութիւնը՝

...չէ՛մ էակ, բայց **հերկահ:՝** ճախդէրը՝**՝**խոնարհվող բալի աներ-  
նոյ՞թ եղ.:

Վրնանք ալդ կազմող մասերից ամեն մէկը առանձին. դոցանից առաջինը չէ ալն բացատրական մասնիկն է, որ շատերը նշանակում են միմիայն և տառով, գլխին էլ մի ապաթարց դնելով (չ'), թէն նորան կցվող բառը բաղաձայնով սկսվում լինի. թէ ինչ են ուղում չալտնել ալդպիսի մի գտակ դնելով և ի գլխին չալտնի չէ. առանց և գրողները անշուշտ հիմնվում են հին ուղղագրութեան վերաջ, բայց դոքա մոռանում են որ ինչպէս որ ամեն մի բաղաձայն առանց ձաջնաւորի կամ կիսաձայնի անարտասանելի է, ալնպէս և չ հնչւնը առանց և չէ արտասանվում երբ որ հանդիպում է բաղաձայնով սկսվող բառի, օր. և գլտեմ, և խնդրեմ և ալն (==չը գլտեմ, չը խնդրեմ) և եթէ չ'են նշանակում եղած ալդ նոյն ալն դասաձառով ինչ պատճառով որ շատ ուրիշ դէպքերում, օր. մարդս, գլուխդ, թագաւորն և ալն. ալս օրինակներին մէջ և շատ պարզ լավում է, իբր ալ լանկի սղումը ալտինքն ալս==ըս, ալդ==ըդ, ալն==ըն. բայց ալնու ամենալնիւ ոչ ալս և ոչ ուրիշ նոյնպէս շատ լսելի դէպքերում հնումը չ'են գրում եղած, մի անգամից ընդ միշտ հասկանալի համարելով մի բառի մէջ կատարված բաղաձայնելի մէջ և-ի գոլութիւնը և աներևոյթ ներկայութիւնը: Բայց չը պիտի մոռանանք որ մեր ալդ չէն առանձին բառ է թէն նա իւր չատկութեամբ պատկանում է ալն բառերի թվին որոնք իբրև առանձին խօսքեր ինքնուրոյն գործածութիւն չ'ունենալով գործ են անվում միալն իրանց անմիջապէս հետևող բառերին չալտնի միալ, գոյն, նշանակութիւն տալու համար: Ալդ տեսակ բառերը, որոնք թեքվում են դէպի իրանցից անմիջապէս չետող կանգնած բառերը, կոչվում են procliticae. ալդ պրօկլիտիկանները թեքվելով դէպի իրանց հետևող խօսքերը նշանակութեամբ

Աղէ է նախդիրն հիմա՛յ միայն միա՛վանէ բալերու վրայ միադա՛ծ է.  
Ձե՛հ է դա՛ր, շե՛ս է գա՛ր.

Նույն է նախդիրն է դարձեալ սահմ. ներկ. եղ. 3-դ դէմքի զարտու-  
թեան պատճառը. կ'ըսենք՝ կրճատմամբ՝ ինք ՚ի լսեր, ՚ի մնար. իւր թէ  
ինք չէ է լսեր, չէ է մնար. կամ իւր թէ չ'ի չսեր, չ'ի մնար: (Ագտեան.  
Քննական քերական. 1866 § 239 եր. 87):

ալսինքն՝ հետեւեալ խօսքին իբր նոր միտք կամ նշանակութիւն տալու համար, կազմում են դորանով իբր թէ մի նոր բառ և այդ առաւել որ procliticaճերը ինքն իրանց անշեշտ լինելով (агора) կարօտութիւն են զգում ահա իրանց հետևող բառի շեշտին: Այդտեսակ ատոններ կամ պրօկլիտիկաներ են հետեւեալ բառերը (բաց ենք թողնում չունարէնը, ծանօթ. խմբ.) Փրանս. le, la և ալլն. ռուս. նախդ. СѢ, КѢ, ВѢ, և ալլն. հալ. 'ի, ց, զ, և ալլն և դոցա կարգին է պատկանում և լատին. non կամ ne, Փրանս. ne (ալլ է non=ոչ), ռուս. не (ալլ է нѣтъ=ոչ). ալլպէս է և մեր չք (ալլ է՝ ոչ): Համեմատութեան համար վերև բերած բոլոր օրինակները ինչպէս և միւսները՝ աչտեղ չը փշածները, միանալով իրանց արտասանութեամբը իրանց հետևող բառի հետ, ահուռ ամենաշնորհ առանձին են գրվում իբրև ինքնուրոյն բառեր և միևնույն ժամանակը՝ միասին արտասանվելու պատճառով՝ ենթարկում են իրանց վերջնական ձայնաւորները (եթէ ի հարկէ ձայնաւորով են վերջանում) դանազան էֆմօնիկական չարմարութիւնների, օր. ռուս. ВѢ КѢ և ալլն լայնացնում են իրանց սուղը մինչև նորա համապատասխան լիահնչիւն օ՝ օրինակ во время, ко дню և ալլն կամ հանդիպելով ձայնաւորի բաց են թողնում իրանց ձայնաւորը կամ կիսաձայնը, նշանակելով այդ կրճատումը ապաթարցով օր. Փր. la maison բալց l'arbre. je ne sai pas բալց je n'ai pas: Այդպէս է և մեր բացասական չք, որի առանձին գրելը և ալն քով և ձայնաւորի հանդիպելով այդ քի կրճատելը և այդ ապաթարցով նշանակելը ունի մեծ անալոգիա աղգակից լեզուների մէջ. և մեր արդի գրականութիւնը լեզվի ուղղագրութեան մէջ ամենապաշտօններից մէկը համարելու է:

(Վերջը չաջորդ համարում)

# ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱԴՈՒՆՔԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՅՐՁԱՆ ԱՌԱՋԻՆ)

(Շարունակութիւն 1)

## II

Հալկազանց շրջանից մեր առարկային վերաբերեալ մեզ հասած տեղեկութիւնների մասին:—Յեղական կազմակերպութեան գոյութիւնը Հալկազանց մէջ:—Նախագիտելիք:Ներուպական գիտնականների կարծիքը ցեղական կազմակերպութեան մասին առհասարակ:—Ընտանիք, ծնունդ կամ տուն և ցեղ:—Խնչպէս էին ընտանեկան հիմունքները, սեպհականութեան և ալ տեսակ իրաւունքները ցեղերի մէջ:—Բարեկամութեան տեսակները: Խնչպէս էր փոփոխուում ընտանեկան հիմքը:—Մայրական ընտանիք:—Կլան:—Ազնւականների առաջ գալը:—Նւաճած ցեղեր:

Հաղային և անձնական իրաւունքների մասին Հալկազանց ժամանակաշրջանից մեզ շատ քիչ տեղեկութիւններ են հասել, հասածների հաւաստիութեան մասին էլ կարծիքները շատ տարբեր են: Հաւանական է միայն, որ այդ տեսակ տեղեկութիւններից ճշմարտագոյնները նրանք են, որոնք վերաբերում են մեր առարկային, որովհետեւ ամենայն ժամանակ գիւղերի, շէնի, սեպհականութեան, դաստակերտների, դասակարգերի, ցեղերի և ազնւականների վերա-

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 1:

բերեալ իրաւունքների իրարանցումը չարուցանում էին անթիւ վէճեր, առաջ էին բերում զաշնադրութիւններ և այլն:

Հետեւապէս ապագայ սերունդների ձեռն էին անցնում վճիռներ, կալւածադրեր և այլ գրի առած յիշատակարաններ, նաև բերանացի աւանդութիւններ, որոնք ոչ միայն դիւանատները, այլ և անձնաւորութիւնները և ցեղերը պիտի ամենայն զգուշութեամբ պահէին իրանց իրաւունքները հաստատելու համար: Նոյն ինքը Խորենացին իր պատմութիւնը գրելու ժամանակ օգուտ է քաղել այդ տեսակ աղբիւրներից, ինչպէս ինքն է ասում: «Եւ գիր Պարսից և Յունաց որովք այժմս գիւղից և գաւառաց ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատենաք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութեան»: (Խորենացի, էջ 7):

Պատմաբաններին և քննադատութեանը կը վերաբերի պարզել այդ տեսակ տեղեկութիւնների որ աստիճան հաւաստի լինելը: Մենք մեր պարտքն ենք համարում լռել այդ մասին, միայն եթէ այդ տեղեկութիւնները մէկը միւսին հակասեն, մենք կը հիմնենք նրանց վերայ, որոնք մեր կարծիքով աւելի ճշմարտագոյն են: Գործին մենք այդ տեսակ ենք վերաբերում նախ, որ քննադատութիւնը մեզանում ղեւ զարգացած չէ, իսկ միւս կողմից մեր հին մատենագիրները նկարագրում են թէ իրանց ժամանակակից անցքերը, կազմակերպութիւնը և իրաւունքները, որոնց ճշմարտութեան մասին կասկածներ քիչ կան, և թէ իրանցից առաջ գոյութիւն ունեցած ժողովրդի կազմակերպութիւնը և իրաւունքները, որոնք ոչ մի-

2) Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւնը աշխարհաբար թարգմանել է չարգելի Խորէն ծաւրագոյն վարդապետ Ստեփանէն: Այս թարգմանութիւնից օգուտ քաղելով, մեր աշխատութեան մէջ էլ առաջ կը բերենք աշխարհաբար լեզուով Խորենացուց հանած ալն հատւածները, որոնց վերաջ ընթերցողի ուշադրութիւնը կը դարձնենք: Ահա և ալն հատւածի թարգմանութիւնը: «Կալին պարսկական և չունական տառեր և այլ տառերով գրած կան մեզանում բազմաթիւ գրքեր, որոնք պարունակում են զանազան գիւղերի, գաւառների և առանձին տների վէճեր և դաշինք և մանաւանդ ցեղական ազնւականութեան ժառանգութեան գործերը» (Խոր. ծ. վ. Ս. եր. 8):

այն դարեր, այլ շատ անգամ հազար տարիներ անսկիզբի և կաժ քիչ փոփոխութեամբ էին պահպանուած ժողովրդի մէջ, հասնելով մինչև պատմաբանների օրերը:

Օգուտ քաղելով մեզ հասած տեղեկութիւններից, տեսնում ենք աչքի ընկնող մի էական կէտ, որի վրայ հիմնուած էր հայկազանց կեանքը, և որի գոյութիւնը խոստովանում են մեր բոլոր յայտնի գրողները — դա ցեղական կազմակերպութիւնն էր:

Վասնորոյ մեր հետազոտութեան հէնց սառձի քայլափոխում ստիպուած ենք պարզաբանելու այդ հիմնարկութեան էութիւնը, օգուտ քաղելով Ն. րոպական գիտնականների հետազոտութիւններից. և այդ պատճառով թող ների մեզ ընթերցողը, որ շեղւելով մեր բուն առարկայից, առաջ ենք բերում այստեղ իբրև նախազիտելիք մի ընդհանուր տեսութիւն ցեղական կազմակերպութեան մասին:

Մէն գիտնականի ասելով, հնագոյն նահապետական ընտանիքների միաւորութիւնից ծագում էր ծնունդը (родъ) կամ տունը, ծնունդների միաւորութիւններից՝ ցեղը, ցեղերի միաւորութիւնից՝ ազգը: Գիտնականները հնագոյն մարդու ընտանիքի վրայ շատ կարծիքներ են յայտնում:

Ոմանք ասում են իշրև թէ դա հիմնուած է եղել համայնականութեան (коммунальный брак) սկզբունքի վրայ, ոմանք՝ հիտերականութեան վրայ (այսինքն երբ տղամարդը հեշտութեամբ կարող էր թողնել մի կին և վերցնել մի ուրիշը) և այլն:

Հաւանական կարծիքը այն է, որ կային այր և կնոջ մէջ լոկ բարեկամութեան կամ ընկերութեան բնաւորութիւն կրող սեռական կապեր, որոնք միմեանց յօժարութեամբ կամ այլ պատճառներով ինչպէս հեշտ կարող էին հաստատուել, այնպէս էլ և քանդուել: Այնու ամենայնիւ այդպիսի ընտանիքների մէջ տիրում էր միակնութեան սկզբունքը, թէև գիտնականները չեն հերքում, որ բազմակնութիւնն էլ կարող էր տեղի ունենալ: Այդ կարծիքը մասամբ հաստատուում է նորանով, որ կային մահմեդականութիւն ընդունելուց առաջ միակնութեամբ (մոնոգամիա) ապրող ազգեր, որոնց համար նոր կրօնքով թոյլատրուած բազմակնութիւնը խորթ էր միայն ամենաբարձր դասակարգի մէջ: Գիտնականները հնագոյն մարդի կեցութիւնը համեմատելով ներկայիս վայրերի ազգերի հետ,

եղրակացնում են, որ հնումը այժմեան հասկացողութեամբ ընտանիք գոյութիւն չունէր: Կայքը, կարողութիւնը, որդիքը և այլն ցեղին էին պատկանում: Անհատի վերաւորանքի փոխարէն ցեղն էր վրիժառու լինում, պատիւը ցեղին էր վերաբերում: Կային ցեղեր, որոնց մէջ որսը իրան սեպհականացնող անդամը զոգ էր համարւում, կամ պարտաւորը կարող էր ոչ միայն պարտապանից, այլ ցեղի իւրաքանչիւր անդամից իր պարտքը պահանջել: Սպանողից վրէժը ցեղն էր առնում, զորա տուգանքը ցեղին էր հասնում: Բարեկամութիւնը ևս դրանց մէջ ցեղովի էր՝ այսինքն սերնդաբար: Իւրաքանչիւր սերնդի անդամները միմեանց եղբայրներ և քոյրեր էին համարւում և այլն: Մորգէն գիտնականը ասում է, որ իր հետազոտած ներկայիս վայրերի ցեղերի մէջ տեղի էին ունենում բարեկամութեան հետեւեալ տեսակները՝ պապ, նան, եղբայր, քոյր, ծնողք, որդիք և թոռներ և զրանք չէին հասկանում բարեկամութեան այլ տեսակները, օրինակ հօրաքոյր, մօրաքոյր, քենի, քեռի և այլն: Դրանց մէջ իբրեւ թէ պապիս և նանիս եղբայրները և քոյրերը իմ վերաբերեալ պապեր և նաներ էին համարւում: Ծնողներիս եղբայրները և քոյրերը՝ իմ ծնողներս, այսինքն իմ հայրերս և մայրերս էին համարւում և այլն:

Անհատը իբրեւ հայր կամ մայր, այսինքն իբրեւ ծնող չէր որոշւում ուրիշներից: Շարունակելով իրանց հետազոտութիւնը, գիտնականները ասում են, որ սկզբում սեռական յարաբերութիւնները միևնոյն ցեղի անդամների միջումն էր միայն կապւում (էնդոգամիա): Հետզհետէ ցեղերը կաւելով գերիներ էին վերցնում մէկը միւսից: Գերի կինը ընդհանուր ցեղի սեպհականութիւնն էին դարձնում: Այդպիսով մօնում էր օրար ցեղերից կին ունենալու սովորութիւնը (էկզոգամիա): Ապագայում ցեղի մէջ ուժեղ անդամը այդ գերի բերած կանանցից իրան թւով աւելի էր յատկացնում և այդպիսով մօնում էր բազմակնութիւնը և միևնոյն ժամանակ կինը իրան յատկացնողի սեպհականութիւնն էր դառնում: Ահա բազմակնութեան (պոլիգամիա) և յափշտակութեան վերայ հիմնւած ընտանիքի սկզբունքը:

Միևնոյն ժամանակ կարող էր գոյութիւն ունենալ և նախնական, այսինքն հետերականութեան հիմունքով կին ունենալու սովոր-

րութիւնը, մանաւանդ իշխող ցեղերում, որովհետեւ դոքա միմեանցից կին առնելով թէ իշխանութիւնը և թէ հարստութիւնը իրանց մէջն էին պահում: Կինը սեպհականութիւն դառնալուց յետոյ սկսում է ծագել, մօտաւորապէս մեր հասկացողութեամբ, ընտանիքը, միայն ստիպման, մասամբ բազմակնութեան, և ոչ յօժարականութեան վրայ հաստատած (принудительный брак):

Այս դէպքում, եթէ կինը մարդուն չի դուր գալիս, նա մի նորն է բերում, իսկ նախկինը պահում է իբրեւ աղախին: Յափշտակութեան և ոյժի վերայ հիմնւած ընտանիքը ցեղի մէջ գոյութիւն ունենալուց յետոյ՝ ցեղի կազմակերպութիւնը կերպարանափոխւում է: Յեղերի մէջ մուտք են գործում զանազան ծագումն ունեցող կանայք, և որովհետեւ ցեղերում շատ անգամ որդոց հայրը յայտնի չէ լինում կամ դրանց դաստիարակը մայրն է լինում, որդիքը իրանց յատկութեամբ մայրական ցեղերին աւելի մօտ են լինում:

Այդտեղ սկզբում ընտանիքը աւելի մայրական կարելի է համարել, որովհետեւ օտարածին կանանցից ծագածները իրանց մօտ են համարում մօր քան թէ հօր ցեղին: Յեղի կանանցից առաջացածները, նոյն ցեղի կլանն են կազմում, իսկ օտարածին կանանցից եղածները կազմում են իրանց մօր ցեղի անւամբ կլանները: Սկզբում օտար կլանների թիւը քիչ էր՝ նոքա ստորադրեալ էին, բայց հետզհետէ դրանց թիւն և ոյժը աւելանալով, իրաւունքներն էլ են աւելանում: Կլաններում տղամարդկանց մէջ հաւասարութիւն էր տիրում: Դրանք կռիւ գնալու ժամանակ միաւորւում էին միմեանց հետ: Կլանն էր լուծում իր անհատին հացրած վիրաւորանքը, կամ նրա սպանւելու պատճառով նշանակած տուգանքը կլանին էր հասնում և կամ ամբողջ կլանն էր այդ սպանութեան վրէժը հանում: Երբ ցեղերի միջում գոյացած կլանների շահերը սկսում էին միմեանց հակասել, ցեղի միակերպութիւնը սկսում էր ոչնչանալ և կլանները միմեանցից ջոկւում էին: Բայց երկու տեսակ ցեղեր կային: Առաջիններում սովորութիւն էր կին առնել միայն օտար ցեղերից, իսկ երկրորդ տեսակ ցեղերում սովորութիւն էր կին առնել թէ իրանց միջից և թէ օտար ցեղերից: Վերջին դէպքում հարազատ կանանցից ծագածները աւելի էին արտօնութիւն

վայելում, քան օտարածին կանանցից ծագածները: Առաջիններիցն էին ցեղապետները և ծնունդների գլուխ կանգնածները: Սրանցից էին ազնւականները ծագում, միայն ցեղի թէ հարազատ և թէ օտարածին կանանցից ծագածները ցեղի ունեցածի վրայ համահաւասար իրաւունք էին վայելում: Այդ հաւասար իրաւունքից զուրկ էին միայն նւաճւած ցեղերը, որոնք ստրուկների և կամ կրէպոստնոյների շարքումն էին: Այս նախագիտելիքից յետոյ դառնանք Հայկազանց ցեղական կազմակերպութեանը:

### III

Հակադռնք իբրեւ ցեղ, որդի, որդոց որդի, ուստր, գուստր: Բարեկամութեան տեսակները: Ձեռքի տակ եղածները—ընդոծին, աղխ, ընտանեկան և ամուսնական չարաբերութիւնները—կինը, ընտանին: Աղխը Արշակունեաց ժամանակ: Ամփոփումն:

Մեր երկրում առաջին գաղթականութիւնը հաստատողների մասին Խորենացին գրում է՝ Տարբանը եկաւ Վերեսուն ուստրօք և հնգետասան դստրօք և նոցին արամբք... (Խ. եր. 24) <sup>1)</sup>, Հայկը մոսաւ Արարատեան երկիրը... «հանդերձ որդւովք իւրովք և դստրօք և որդոց որդւովք, արամբք զօրաւորօք՝ թւոյ իբրեւ երեքհարիւր, և այլովք ընդոծնօք, և եկոք յարեցելովք ի նա, և բոլոր աղխիւ (Խոր. էջ. 32, 33) <sup>2)</sup>:

Այստեղ Խորենացին գործ է ածում «որդի», «ուստր», «գուստր», «որդոց որդի», «ընդոծին» և «աղխ» խօսքերը, որոնցից մի քանիսը ներկայումս չեն գործածւում կամ գործածւում են այլ մտքով քան հնումը, և թէ նոյն աւարկաններն են բացատրում, բայց դրանց ուրիշ, հետզհետէ կազմակերպւած տեսակները: Առհասարակ ժամանակի ընթացքում հասարակական կազմակերպութիւնը, ժողովրդի կեցութիւնը և այլն անդադար են ժարկւում են փոխխտութեան և

<sup>1)</sup> «Երեսուն որդիներով և տասնհինգ դուստրներով և սոցա տղամարդիկներով (Խ. ծ. վ. Ստեփանէ, եր. 22):

<sup>2)</sup> Հայկը եկաւ «բոլոր իւր որդիներով, դուստրներով և որդիների որդիներով, որոնք զօրեղ մարդիկ էին մօտ երեք հարիւր մարդ, իւր սպասաւորներով և ուրիշ զանազան մարդիկներով, որոնք միացել էին նորահետ, նոյնպէս և բոլոր սուն ու տեղով» (Խ. ծ. վ. Ս. եր. 29):

մեզ՝ ներկայումս ապրողների համար անհասկանալի է դառնում հնութիւնը: Մեզ անբացատրելի էր թւում Խորենացու խօսքերը թէ Հայկի ընտանիքի մի մասը բաղկացած էր 300 հոգուց, կամ նորա բոլոր թոռները հասակ առած մարդիկ էին. մինչդեռ այժմեան ընտանիքները սակաւթիւ անդամներից են բաղկացած լինում, թոռները մեծահասակ չեն լինում և այլն: Ուսումնասիրութիւնը լուսաբանում է այդ խաւարը:

Խորենացու ասելով Հայկազանց մէջ կային «որդւոց որդիք», որոնք հասակ առածներ, այսինքն ողամարդիկ էին:

Նոյնպէս դուստր խօսքը վերաբերում էր թէ իրանցից ծագած աղջկանց և թէ իրանց կնիկ մարդկանց: Այս եզրակացութեանը մենք զալիս ենք նորա հետեւեալ հատուածներից՝ «և որդւոց որդովք, արամբք զօրաւորօք», որը թարգմանւում է «և որդիների որդիներով, որոնք զօրեղ մարդիկ էին»: Նմանապէս ասել, թէ Տարբանը եկաւ 15 դստերօք և նոցին արամբք» նշանակում է, որ այդ դուստրները այդ ողամարդկանց կանայքն էին: Այս հանգամանքը մեզ ցոյց է տալիս, որ նոքա իրանց միջից կին առնելու սովորութիւնն ունէին: Ուրեմն Հայկի ժամանակ տիրապետում էր էնդոգամիան. մանաւանդ Հայկի ցեղի մէջ մենք միւս ազգակցական անունների թւումը կին-անուն չենք տեսնում, որ փոխարինւած պէտք է համարել դուստր անունով. ուրեմն իրանք իրանց միջից կին առնելու սովորութիւնն ունէին և դուստրը ընտանին էր համարւում շնորհիւ այն յարաբերութեան, որի մասին չիշեցինք նախագիտելիքում:

Այսպիսի սովորութիւն ցեղական կազմակերպութեամբ ապրող ժողովրդներին էր յատուկ: Նմանապէս նոյն ցեղական կազմակերպութեան մէջ միայն կարող է լինել հասակն առած որդւոց որդիների սերունդը: Նրեխայոց կամ ողայոց վերաբերեալ Խորենացին «ուստր» խօսքն է գործ ածում: Հետեւապէս մենք չենք սխալւիլ, եթէ ասենք, որ Տարբանեանք և Հայկազունք սերունդների էին բաժանւում: Կային որդիկրանց, որդւոց որդիկրանց սերունդները: Կային ցեղից ծագումն ունեցող կանայք, որոնք դուստր անւամբ էին յայտնի: Վնենելով դրանց կազմակերպութիւնը, նսխ և առաջ կը տեսնենք, որ Տարբանի 15 դուստրները իրանց 15 ողամարդկանց

հետ միացած ընտանիքներ լինելով՝ մի տուն կամ ծնունդ և մինչև անգամ մի ցեղ էին և զրանց ընտանեկան հիմքը համայնականութեան և կամ հետերականութեան սկզբունքի վրայ էր հաստատված:

Հայկաջ որդոց, որդկերանց որդոց և դստերաց լիւր 300-ի հասնելով, հաւանական է, որ դոքա ցեղ և մինչև անգամ ցեղեր լինէին, որովհետեւ երբ սոքա տեղաւորւեցան երկրի զանազան կողմերում, ասում է Խորենացին... «Այս Հայկ... նախնի Հայաստանեայց և այս ազգք նորա և ծնունդը և աշխարհ բնակութեան» (Խոր. եր. 43) <sup>1)</sup>: Հայկազունք ծնունդների բաժանւելով, զրանց ներքին կապը, ինչպէս կը տեսնենք, չքանդւեց: Ընդհակառակը Հայկը և նրանից ուղիղ գծով յաջորդողները առաջնորդում էին բովանդակ ազգը: Բաժանւելուց յետոյ էլ սրանց մէջ բարեկամութիւնը ցեղերին յատուկ եղանակով էր լինում: Կազմուք թուներին կամ որդւոց որդկերանց սերնդին էր պատկանում: Արմենակը որդիներից էր և սրան սերնդակիցները իւր եղբայրներն էին: Այդպէս կարելի է կարծել Խորենացու այն հատւածից թէ ինչպէս Հայկը Բէջի հետ կռիւ սկսելուց առաջ՝ կարգադրում էր իւր զօրքը: «Կարգէ Արմենակ երկու եղբարբ ընդ աջմէ և զԿազմոս և զայլս երկուս լորդւոց իւրոց ի ձախմէ...» (Խոր. եր. 46) <sup>2)</sup>:

Սրանց մէջ կային և հայրեր, որովհետեւ Հայկը իւր երկրորդ իջևանած տեղը անւանեց «Հարք»: Այս խօսքը Խորենացին բացադրում է ասելով «այսինքն աստէն բնակեալքս ազգի տանն թորդումայ (Խ. 33): Խ. ծ. վ. Ստեփանէն այս տողերը թարգմանել է «Հարք», այսինքն այստեղ բնակւողները թորդումեան ազգի հայրերն են» (Խոր. ծ. վ. Ստ. եր. 30):

Սոյն «Հարքում», այսինքն հայրերի բնակութեան տեղում, Արմենակը, Հայկին յաջորդելուց և հայրերի շարքը ընկնելուց յետոյ, թողնում է բնակւելու իւր Խոռ և Մանավաղ եղբայրներին: Ու-

<sup>1)</sup> Այս է... Հայկը... Հայերի նախնին. ահա նրա ազգերը, ծնունդները և բնակութեան աշխարհը (Խ. ծ. վ. Ս. եր. 38):

<sup>2)</sup> Կանոնեցնում է աջ կողմում Արմենակին երկու եղբայրներով և ձախ կողմում Կազմոսին և իւր որդիներից երկուսին (Խ. ծ. վ. Ս. եր. 32):

րեմն հաւանական է, որ սրանք հայրեր էին և միմեանց եղբայրներ էին անւանում: Հետեւապէս հայրերի սերնդակիցները միմեանց եղբայրներ էին անւանում և թոռներ ունէին: Յայտնի բան է, որ հայրերը ունենալով թոռներ, նոցա պապերն էին: Որդիքը ծնողներն էին: Պապ լինելուց յետոյ, կը լինէր և նանը: Եղբայրը լինելուց յետոյ, կը լինէր և քոյրը: Այսպիսով մենք տեսնում ենք, որ Հայկազանց մէջ կային բարեկամութեան այն տեսակները, որոնք ցեղերին յատուկ են՝ պապ, նան, եղբայր, քոյր, ծնողք, որդի, որդւոց որդի: Յետին ժամանակներում ծաղումն աւնող անուններ չեն յիշում Խորենացու մէջ:

Գտնանք ընտանեկան և ամուսնական յարաբերութեանը:

Առաջին Հայկազունք՝ ի հարկէ, ինչպէս իրանց հարեանները, ցեղերին յատուկ դերի բերելու սովորութիւնից ազատ չէին, որովհետեւ Հայկը և Գեղամը զիւղ, դաստակերտ և ձեռակերտ շինեցին, ուր, ինչպէս կը տեսնենք, ըստ մեծի մասին պատկառելի մարդն էր նստում: Գերիներ բերելուց յետոյ Հայկազունք, ինչպէս տեսանք նախազիտելիքներից, ուրիշների պէս էլ չէին բաւականանալ իրանց դուստրներով, այլ զերի կանայք ամբողջ ցեղի սեփականութիւնը կը դարձնէին և իրանց ընտանեկան յարաբերութեանց մէջ ոչոն և յափշտակութիւնը հիմք կը դարձնէին:

Հէնց այդպէս էլ էր Հայկազանց մէջ. դորանցում կար ընդհանուր ցեղին պատկանող աղիսը և հարազատները առաւելութիւն էին վայելում խառն արիւն ունեցող ցեղակիցներին վերաբերալ: Եւ ուղիղ. մենք արդէն առաջ բերինք Խորենացու այն հաւուածը, ուր նա ասում էր, որ Հայկը եկաւ Արարատեան երկիրը «որդիներով, ուստրներով, որդիների որդիքներով» և բոլոր «աղիսիւ»: Եւ մենք այն եզրակացութեան եկանք, որ առաջինները հասակ առածներն էին, հետեւապէս աղիսը կը վերաբերէր մանր երեխաներին, զերի կանանց և ցեղի միւս պատկանելիքին:

Եւ ինչպէս տեսանք նախազիտելիքներից, զերի բերած կանանցից ծագածները՝ ցեղի մէջ «ձեռաց տակ» էին դնւում, կամ հարազատ արիւն ունեցողների առաջնորդութեան տակ էին. նոյնը մենք տեսնում ենք Հայկազանց մէջ:

Յեղի ոչոն, նոյն իսկ ցեղը կազմում էին պատերազմ դուրս

եկողները, այդ պատճառով ցեղ և գունդ խօսքերը կարծես Խորենացին մի նշանակութեամբ է գործածում: Նա ասում է, օրինակ... «զցեղս զայս մեծ և անւանի... զգունդս Սիսական» (Խ. 112) որ կրնանակէ — այս մեծ և անւանի ցեղը, այսինքն Սիսական գունդը: Հայկը Բէլի հետ կռիւ սկսելուց առաջ «հաւաքէ զորդիս իւր և և զթուռնս, արս քաջս և աղեղնաւորս, թւով յոյժ նւաղունս, և զայլ որ ընդ իւրով ձեռամբ... և կոչեցեալ զզօրս իւր ասէ ցնոսա... զի կամ մեռցուք և աղիս մեր ի ծառայութիւն Բէլայ կայցէ, կամ... մեք եղիցուք յաղթութեան ստացեալք (Խ. 35) <sup>1)</sup>:

Այս տողերը մեզ ցոյց են տալիս, որ նոյն իսկ պատերազմ դուրս եկողների մէջ կար որդիների և որդուց որդիների գունդը, կային և ձեռքի տակ եղածների գունդը, Ուրիշ խօսքով՝ ցեղի մէջ կային որդիք և որդուց որդիք, կային և ձեռքի տակ եղածները, որոնք անտարակոյս զերի կանանցից ծագածները պիտի լինէին:

Սոյն տեսակ մարդիկ էին ընդոճիները, որոնք ցեղիցն էին ծագում և ձեռքի տակ եղածների շարքումն էին: Գոնէ Հայկը, ինչպէս տեսնում ենք, Կապնոսին պարգևեց «յիւրոց ընդոճնաց արս անուանքս» (Խ. 38): Ուրեմն ընդոճիները և «ձեռքի տակ եղածները» պատերազմի էլ էին դուրս գալիս, անւանի մարդիկ էլ էին, ցեղից էլ ծագումն ունէին, բայց միայն հարազատ արիւն ունեցողների հաւասար իրաւունք չէին վայելում: Հետեւապէս պէտքէ ընդունել, որ Հայկազանց մէջ կար թէ իրանց միջից կին առնելու սովորութիւնը (էնդոգամիա) և թէ օտարներից գերի կանայք բերելու սովորութիւնը (էկզոգամիա), իրանց դուստրներից որդիները և որդիների որդիներն էին ծագում, որոնք առաւելութիւն էին վայելում. իսկ օտար կանանցից ընդոճիներն էին ծագում, որոնք, ինչպէս Խորենացին ասում է «ընդ ձեռամբ տակ էին»:

Հետզհետէ ուժեղները սիւրհականացնում են այդ ստրուկ կանանցից, որոնք զրանց կանայքն են անուանուում, մնացածները էլի

<sup>1)</sup> «Հաւաքում է իւր որդիներին և թուռներին, քաջ և աղեղնաւոր մարդիկներին, որ շատ փոքր էին թւով, և իւր ձեռքի տակ եղածներին և գիւմելով զօրքին ասում է. «կամ մեռնենք և մեր բոլոր զերդաստանը Բէլի ծառայութեան տակ մտնէ կամ չաղթութիւնը ստանանք (Խորէն ծ. վ. Ստ. եր. 31):

ընդհանուրին էին պատկանում և աղխ խօսքով էին բրոշուում: Առհասարակ ստրուկ կանայք աղխի մէջ էին և աղախին խօսքնէլ թերևս և աղջիկ խօսքը այստեղից են ծագում: Մեր մատենագիրները բաղմակնութեան շրջանին վերաբերեալ են դուրծ ածում կին և աղջիկ խօսքերը, որպէս այս երևում է Խորենացու հետեւեալ հատւածից... իսկ զԱնուշ զառաջին կինն Աժդահակայ և զբազումս ի սերմանէ Աժդահակայ աղջկունս հանդերձ պատանեկօք և այլ բազում գերիօք» (խ. 38)։ Սորանից առաջ կանայք դուստր և աղխ խօսքերով էին որոշւած:

Ուրեմն կինը վերաբերում էր պատկանելութիւն դարձրած աղջկան:

Բաղմակնութեան շրջանը մեր մէջ տեղական էր: Առհասարակ ոչ միայն Հայկազեանց, այլ և Արշակունեանց ժամանակ ցեղական սովորութիւնները ոչնչացած չէին: Այդ սովորութիւններից աչքի էին ընկնում՝ բաղմակնութիւնը և իրանց միրձաւորներից կին առնելու սովորութիւնը, որ իրանց իրաւունքները և ազատութիւնները իրանց ձեռքին մնան:

Արտաշէսը բաղմակութիւ կանայք ունէր. աչքի էր ընկնում դորա Մանգու անւանեալ հարճը իր զեղեցկութեամբ: Նախարարների մէջ բաղմակնութիւն կար: Արշակը ունէր երկու կին՝ Փառանձեմ և Ողւմբէ: Մուշեղ սպարապետը ձերբակալեց Աղձնեաց բղեշխին և նորա կանանց և որդւոց կոտորեց (Փաւ. եր. 178): Տիրան Թադաւորի կանայք զերի էին ընկած և սլարսից Թադաւորը զրանց միւս զերիների հետ զերադարձ արաւ (Փաւ. եր. 46): Սուրբ Սահայը խիստ օրէնքներ հաստատեց վերոյիշեալ ցեղական սովորութիւնների դէմ, թէև արմատախիլ անել չկարողացաւ: Սուրբ Ներսէսը հրամայումէ «զի լինիցին յամուսնութեան օրինաւորք, մի ստել և մի դաւ բերել իւրեանց ամուսնութիւն ընդալ կողմանց և փախչիլ աւելի՝ ի մերձաւոր և չազգին տոհմակից խառնակութեամբ ամուսնութենէն. և մանաւանդ ի մերձաւորական ինուոց և որ դամ մի այսմ նման լեալ էր ինչ (Փաւ. եր. 14):

Խորենացու բացատրութիւնից երևում է, որ տոհմակիցները հետեւում էին միմեանց հետ ամուսնական կապեր հաստատելու, որ իրանց ունեցածը և իշխանութիւնը իրանց ձեռքից չթողնեն: Ահա

և նորա բուն խօսքերը: «Նւ ղերկուս զայսոսիկ յազգաց նախարարաց բառնայ մի զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ազահելոց սեփական ազատութեանն առնէին (Խոր. եր. 306) <sup>1)</sup>: «Իսկ յետ մահւան նորա (Ներսէսի), ասում է Փաւստոսը (երես 93), այնուհետև ամենայն մարդ առին հրաման համարձակութեամբ ՚ի թագաւորէն, թողու զկանայս զամուսինս իւրեանց. էր զի մի այլ տասն կին փոխէր. և առհասարակ յանօրէնութիւն դարձան միանգամայն»:

Բերած հաստատութիւններն էլ կարծում ենք բաւականաչափ ապացուցանում են որ մեր մէջ կար բազմակնութեան սովորութիւնը, որը թէև հետերական սկզբունքը բոլորովին չօշինչացրեց, բայց հիմնովին փոխեց ընտանեկան կարգ կանոնները:

Պորանից առաջ դուստրը ինչպէս հեշտ կարող էր ընտանի դառնալ, այնպէս էլ հեշտ կարող էր բաժանել մարդուց: Ուրեմն կար ընտանի և ոչ ընտանիք, որը չկար և այն ժամանակ, երբ գերի կանայք բերելու սովորութիւնը մուտք գործեց: Ընտանիք խօսքը բազմակնութեան է վերաբերում: Յաւանական է, որ հէնց այդ շրջանին է վերաբերում Խորենացու ասածը որ Կամարը «ամենայն ընտանեօք իւրովք և աղխիւ գայ առ Տրդատ մեր թագաւոր (Խոր. եր. 258): Խ. Տ. վ. Ստէփանէն այս տողերը թարգմանել է «Կամարը բոլոր իւր ընտանիքովը և տնով մեր Տրդատ թագաւորի մօտ եկաւ (եր. 218): Բազմակնութեան շրջանումն է նմանապէս կին սեպհականացնելու սովորութիւնը առաջ գալիս, և այդ տեսակ կանանց՝ դուստր, ընտանի և կամ հետէրական կանանցից զանազանելու համար, մեր մատենագիրները կին և ընտանիք խօսքերն են սկսում գործ ածել: Այնուհետև, երբ միակնութեան զաղափարը պարտաւորեցուցիւ է դառնում քրիստոնէութիւնց յետոյ, հետէրական և ընտանեկան յարաբերութիւններից դուրս ծագում են ամուսնական յարաբերութիւնները: Կին ամուսին է առաջ գալիս: Քրիստոնէութիւնից յետոյ էլ այժմեան հասկացողութեամբ ընտա-

<sup>1)</sup> Նւ նախարարների ազգերից վերցնում է այս երկու բանը—մերձաւորների խնամութիւնը, որը հայրենական ազատութիւնը պահելու համար էին անում ազահելութեամբ (Խ. Տ. վ. Ստ., էջ 259):

նիքը միանգամից առաջ չ'եկաւ, որովհետեւ լինում էր որ կանանց հեշտութեամբ փոխում էր, ինչպէս Փաւստոսն է ասում—«էր զի մի այր տասն կին փոխէր: Ուրեմն մեր մէջ հետէրական սովորութիւնը փոխարինաբար տեղի էր տալիս ընտանեկան և ազատ ամուսնական սովորութեան: Հետերական կինը այն էր, որին այրը կարող էր հեշտութեամբ փոխել: Ընտանի կինը՝ սեպհականացրած կնոջն էր վերաբերում. իսկ կին ամուսինը՝ քրիստոնէական մոքով առած կինն էր: Եւ մինչև որ քրիստոնէական սովորութիւնը չ'ամրամացաւ, մարդիկ խառն սովորութեամբ էին կանայք ունենում՝ ունենում էին ընտանի կին, կին և ստրուկ կանայք կամ աղխ: Փաւստոսը, օրինակ, ասում է—«Եւ բազումք ի նախարարացն հայոց թողին զկանայս իւրեանց, զորդիս և զընտանիս և փախեան ընդ այս ընդ այն գնացին (Փ. եր. 149): Եւ ժողովէր (Արծրունեաց Աշոտ իշխանը) զաղխս տան իւրոյ յամրոցն Դարիւնից, և զտիկինն և զամենայն ընտանիս իւր. և թողոյր պահապան ի վերայ ամրոցին պահել (Ղևոնդ պատմ. 119):

Աղխ խօսքի նշանակութիւնն էլ ժամանակի ընթացքում փոփոխւեց. սկզբում նշանակում էր մանր երեխայք, ստրուկ կանայք և այլն: Երբեմն էլ ցեղի բոլոր պատերազմ դուրս չ'եկողներն էին այդ խօսքով անւանւում:

Ամբողջնք ցեղական կազմակերպութեան մասին ասածներս:

Հայկազունք սերունդների էին բաժանւում: Կային որդւոց, որդկերանց որդւոց սերունդներ: Կային և ցեղի դուստր-կանայք, որոնք ցեղին հարազատ ծագումն ունէին: Դրանց մէջ կային բարեկամութեան այն տեսակները, որոնք ցեղին են յատուկ. իսկ ցեղը գլխաւորապէս կազմում էին պատերազմ դուրս եկողները: Յեղի մէջ կային որդիք և որդւոց որդիք, կային ձեռքի տակ եղածներ և ընդոճկներ. վերջիներս պատերազմ էին դուրս գալիս, անւանի մարդիկ էին, ցեղից էլ ծագումն ունէին, միայն որդիներին և որդւոց որդիներին հաւասար իրաւունք չ'էին վայելում: Այս և ուրիշ այս տեսակ հանգամանքները մեզ թոյլ տւին ենթադրելու, որ Հայկազանց մէջ սեռական չարաբերութիւնները ոչ միայն իրանց ցեղի անդամների միջումն էին կապւում (էնդոգամիա), այլ նրանց մէջ սովորութիւն կար և գերի կանայք ունենալ (էկզոգամիա), որոնք ի հարկէ սկզբում ընդհանուր ցեղի սեպհականութիւնն էին: Մանկ-

տիբր, գերի կանայք և ցեղական պատկանելութիւնը ընդհանուր ցեղինն էին համարուում և աղիս անւամբ էին յայտնի: Դժւար է է մինչև անգամ մօտաւորապէս որոշել, թէ երբ Հայկազանց մէջ մուտք գործեց բազմակնութեան սովորութիւնը. բայց չրա գոյութիւնը ակնհերև է: Այդ սովորութիւնից առաջ կին կամ զուտոր անուն էր կրում, երբ զա ցեղից հարազատ ծագումն ունէր, և կամ իբրև վերի բերած, ընդանուրի սեպհականութիւնն էր և աղիսի հաշուումն էր: Բայց բազմակնութեան սովորութիւնը մուտք գործելուց յետոյ՝ յատկացրած կամ սեպհականացրած կանայք ընտանիք են համարուում: Քրիստոնէութիւնից յետոյ, երբ միակնութեան գաղափարն է առաջ գալիս, մենք տեսնում ենք, որ մերձաւորներից քրիստոնէութեան սկզբունքով առածն է կին ամուսին անւանում: Տղամարդը պահպանում է հետէրական յարաբերութիւնը միայն մերձաւոր կանանց հետ, որոնք նրա կինը կամ ընտանին են համարուում: Մի խօսքով հետէրական յարաբերութիւնները հետզհետէ տեղի էին տալիս ընտանեկան և ապա ամուսնական յարաբերութեան:

(Կը շաբունակի)

## Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ԹԱՏՐՈՆ, գրականական և թատերական հանդես, № 1: Թիֆլիս,  
1904. Մ. Մարտիրոսեանցի և ընկ. 1893 թ.: Հրատարակութիւն Ալեք-  
սան ր Թարխանեանի: Մեծ քառաձալ, 180 երկսիւնեակ էջ: Գինն  
է 2 ռուբլի:

Այս հրատարակութիւնը խոստա-  
նում է պարբերական դառնալ, լոյս  
տեսնելով տարին երկու անգամ:

Այդ պայմանով մենք կարծում  
ենք որ թատրոնին նւիրած մի հրա-  
տարակութիւն կարող է շարատեւել,  
որովհետեւ, որքան էլ աղքատ լինի  
մեր թատրոնական կեանքը, բայց  
տարին երկու տետր նրան նւիրելու  
համար նիւթ կարող է տալ նաեւ մեր  
աղքատիկ կեանքը:

Հաջ թատրոնը ունի արդէն մի  
չալտնի անցեալ, որը ապարդիւն չի  
անցել ներկայիս համար: Այս աւորը  
աչն է որ Թիֆլիսում, Աովկասի թատ-  
րոնական կեանքի աղքատ գլխաւոր  
կենտրոնում, հաւկական թատրոն  
ստեղծէր էր: Ճիշտ է, աղքատ քաղաքը  
ունի մեծ հաջ աղղարակութիւն,  
բայց թատրոնի մէջ գեղարւեստը  
աչնքան մեծ տեղ է բռնում, որ մի  
որոշ չափով գեղարւեստական ոյժ է

պահանջում նոյն իսկ հաջ հատարա-  
կութիւնը դէպի հաւկական բեմը:  
գրաւելու համար, մրցելով աչն գե-  
ղարւեստական հրապուրների հետ,  
որ ներկայացնում է ռուսական բեմը:  
Աղղային լեղւի կարօտն առնելու  
համար պէտք է գեղարւեստը օգնու-  
թեան գար, որպէս զի նոյն իսկ հաջ  
ախորժ զգար հաւերէն լսելու աչն,  
ինչ նա կարող էր լսել օտար լեղւով  
օտար բեմի վրայ: Արդ, աղքատ հրա-  
մեշտ պալմանը թէն ոչ լիապէս բաց  
մի գնահատելի չափով ձեռք է բեր-  
ւած ներկայումս, աչնպէս ոյ Թիֆ-  
լիսում մի կանոնաւոր խումբ և կա-  
նոնաւորապէս շարաթը երկու ան-  
գամ հալոց ներկայացումներ տա-  
լու համար անհրաժեշտ (18--20,000  
ռուբլու) խոշոր ծախքից չաճախող-  
ները ինքնաբերաբար աւալիս են  
ամենալատ դէպքում երկու երրորդը  
կամ նոյն իսկ երեք քառորդը և էլ:

աւելին, նալած հանգամանքներին՝  
Իսկ դա արդէն զնահատելի ար-  
դիւնք է:

Բացի ալդ՝ Արվկասի և Ռուսաս-  
տանի ալ հալաքնակ քաղաքներն և  
գիւղերից ոմանց համար տարին մի  
քանի անգամ տրուող հալկական ներ-  
կայացումները հասարակական կեան-  
քի անհրաժեշտութիւնն են դառած:

Այդպիսով հալ հասարակութեան  
մէջ սկսել է արտիստական ընդու-  
նակութիւններն զտման մի պրոցէս,  
որը պահանջում է մնունդ, խնամք  
և գրական ղեկավարութիւն:

Մի պարբերական թերթ՝ ալդ  
գործին նւիրած՝ մենք աւելորդ չենք  
համարում, և ինչպէս ասացինք՝ տա-  
րին երկու տետրի նիւթ առատորէն  
կարելի է գտնել:

Խնդիրը ուրեմն միայն նորա մէջ  
կարող է լինել թէ՛ ներկայ հրատա-  
րակութիւնը որքան երաշխաւորու-  
թիւններ է տալիս ալն դերը կատա-  
րելու համար, որ մեր կարծիքով նա  
պէտք է կատարէ իւր գոյութիւնը  
արդարացնելու և ապահովելու հա-  
մար:

Եւ ահա՝ մենք գտնում ենք մեր  
առաջը զրած հատորի մէջ պակա-  
տաւոր երաշխաւորութիւններ ալդ  
գործի համար:

Գիրքը սկսում է մի չառաջաբանով,  
ուր հեղինակը խօսում է թատրոնի և  
գեղարուեստի մասին ոչ հմտօրէն, ալ  
աւելի որպէս սիրող գործի, իբր  
գիւետանտ, բայց ոչ բարձր գրակա-  
նական և գեղարուեստական զարգա-  
ցումով: Եւ որովհետեւ ալդ չառաջա-  
բանի ոտորագրողը ինքը հրատարա-  
կիչն է, որը անշուշտ նաեւ խմբա-

գրում է իւր հանդէսը, — ալդ պատ-  
ճառով խմբագրական խիստ պակա-  
տութիւններով մի հանդէս է մեր ա-  
ռաջ գրածը. իսկ ալդ հանգամանքը  
չի կարող գործին չմասնել:

Անկարեւոր չէ նկատելը որ հրա-  
տարակիչը ընտրած էր անգամ  
թատրոնական կոմիտէտի 1891/92  
թւականի սեղոնի համար, երբ Թիֆ-  
լիսի թատերասէր հասարակութիւնը  
միացաւ ընդհանուր ուժերով թատ-  
րոնի գործը առաջ տանելու համար.  
բայց նա չետինք չէր ալն հերոսնե-  
րից, որոնք իրանց ընտրած ընդհա-  
նուր ժողովի հեղինակութիւնը չու-  
ղեցան ճանաչել և աշխատեցին հա-  
սարակական սկզբունքով սկսած  
գործը լատեղ՝ ինտրիգալի դիմե-  
լով: «Մուրճ»-ի ընթերցողներին ալդ  
նկատմամբ լղում ենք ալն ստղերին,  
որ տպեցին «Մուրճ»-ում 1892 թ.  
մարտի համարում (էջ 482—486) և  
մալխի համարում (էջ 777—778):  
Ահա գորա շնորհիւն է որ 1892/93  
թւականին նախկին ժողովի տեղը  
բռնեց իւր ներքին բնաւորութեամբ  
ալդ տեսակ ժողով, առաջնորդու-  
թեամբ իշխ. Ն. Ամատունու, մի ժո-  
ղով, որը ընտրեց նոյնպէս մի կոմի-  
տէս նախկին տարւալ օրինակով,  
բայց որը տարւալ կիսում լուծեց՝  
իբրն հեղինակութիւնից և ուժից  
զուրկ մի մարմին, առանց նոյն իսկ  
վստահութիւն ունենալու գործերի  
գրութիւնը ներկայացնել իրանց  
ընտրած ժողովին: Այս կերպ գոր-  
ծավարութիւնում է որ ալ ևս ան-  
հարին եղաւ 1893/94 թւականի  
համար հալոց թատրոնը տանել հա-  
սարակական սկզբունքով: Իսկ ալդ

հասցրեց հաշվական թատրոնը մի խումբ վերին աստիճանի անթատրոնական կապիտալիստների կառավարութեանը 1893/94 թվականին:

Մենք կարող ենք ուրեմն համարձակ ասել, որ «թատրոն»-ի հրատարակչը մեր բեմին բաական վնասել է նույն իսկ այդ բեմին ծառայելով: Մենք կ'ուզէինք ուրեմն որ թատրոնական գրականութեանը նա չ'վնասի՝ նույնիսկ նրան ծառայելով:

Ներկազ գրքում զետեղած են չորս թատերգութիւններ, որոնցից մէկը՝ Մոլիէրինն է (Սկապէնի արարքները), միւսը Ժորժ Օնէի (Գարբնապետը), երրորդը՝ Դ'Անկուրի (Միւս անգամ—մենախօսութիւն),—բոլորը թարգմանական, և մէկը՝ փառնակէսի «Բանաստեղծ» կատակվողը: Գոյանից առաջին երկուքը արժանի էին տպագրութեան, իսկ «Բանաստեղծը» և «Միւս անգամ» սիրեաները դատարկ բաներ են: Դ'Անկուրի «Միւս անգամը» նույն իսկ ձանձրալի գրածք է, եթէ միայն մի արտասովոր տաղանդ չլինի նորա արտասանողը:

Յօդածների մէջ մեծ տեղ են բռնում Պերճ Պռօշեանցի «Հալոց թատրոնի սկզբնաւորութիւնը Թիֆլիսում» և Ս. Հախումեանի «Թատրոն, բեմ և լեզու»: Պարոն Հախումեանի լօգածը զուրկ է հետաքրքրականութիւնից, բայց նա ուզենալով ինքն իրանից դերադանցել՝ մոլորութիւնների մէջ է ընկնում: Մասնաւորապէս ս. Աղապեանցին ներածտողերը մի ամօթանք կը մնան Հախումեանի համար, որը իւր լօգածով ապացուց է տալիս թէ որքան նա նաև կեղծել զիտէ, նալած թէ քամին որտեղից է վիչում:

Բացի չիւածներից՝ տպած է 70-ական թվականներին վախճանած դերասան Գէորգ Միրադեանի կենսագրութիւնը, Ֆրէյդից բեմական սլատկերներ, Գէօթէի «Կանոններ դերասանների համար» և թատրոնական քրոնիկներ արտասահմանից և Պետերբուրգից:

Բայց մի անհրաժեշտ բան -- աչն է տեսութիւն մեր հաշվական թատրոնի--բացակայում է բոլորովին:

Ա. Ա.

ՖԼԱՄԱՐԻՅՈՆ, Կամիլ. — «Հանրամատչելի նկարագրական աստղաբաշխութիւն» (Petite astronomie descriptive): Թարգմանեց Ֆրանսերէնից (4-րդ տպագրութիւնից) Տ. Յովհաննիսեան: Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի 1893 թ. Հրատարակութիւն Թ. Հ. Հրատարակչական ընկերութեան, ութածալ, 353 էջ, գինն է 1 ռուբլի:

Կամիլ Ֆլամմարիոնի անունը պատկանում է ամենափալուն ժողովրդա-

կանացեողների անունների թվին: Այդ գիտնականը մի առանձին տաղանդ

ունի զարմանալի կերպով ժողովըրդականացնել գիտութեան նույն խել բարդ փաստերը: Վերին աստիճան պարզ մատչելի լեզու և շքեղ՝ հետաքրքրութիւն չարժող՝ պատմելու ձև — ահա Ֆլամմարիոնի գրածքների լատկանիչը:

Նույն ալի առաւելութիւնները գոյութիւն ունեն նաև ալժմ մեզ հետաքրքրող գրածքի մէջ: Հալոց թարգմանութիւնը կատարած է իսկապէս Շ. Դէլոնի փոխադրութիւնից: Դէլոնը ուսումնարանների համար լարմարեցրել է Կ. Ֆլամմարիոնի աստղաբաշխութիւնը:

Հանրամատչելի նկարագրական աստղաբաշխութիւնը բազկացած է քսան դասերից, որոնք պարունակում են իրանց մէջ աստղաբաշխութեան ամենանշանաւոր իրողութիւնները: Ալի գրածքի մէջ խօսւում է երկրի ձևի և շարժման մասին, արեգակի դրութեան, կազմածքի և նշանակութեան մասին, մոլորակների և նրանց արբանեակների մասին, աստղերի և գիսաւոր աստղերի մասին և այլն:

Նիւթը աւելի ևս պարզ դարձնելու համար գրածքում ղետեղած են նկարներ (թւով հարիւր), ալի նկարները գրած են նաև հալոց թարգմանութեան մէջ, սակայն տարաբաղդարար շատերը նրանցից անաչող են:

Թարգմանութիւնը կատարել է պ. Տ. Գովհաննիսեան բարեխիղճ կերպով և ուղղակի ֆրանսերէնից: Ի դէպ է ալտոնդ ասել, որ մեղանում թարգմանութիւնները կատարւում են ըստ մեծի մասին ոչ թէ ուղղակի եւրոպական բնաղիրներից, ալլ ալի գրածքների ուսաց թարգմանութիւններից, ուստի և շատ անգամ ալի գրածքները աղաւաղւում են:

Ֆլամմարիոնի գրածքի թարգմանութիւնը պատկանում է հրատարակչական ընկերութեան «Հանրամատչելի գիտական ընթերցարանի» շարքին: Հանրամատչելի աստղաբաշխութիւնը անկասկած ալի ընկերութեան լաւագոյն հրատարակութիւններից մէկն է:

Ս. Բ.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՄՈՒԹԻՒՆ

ԸՆԴՐՐՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎՏԱՆԳՈՒՄԸ

Վերջին ժամանակներս ընտրողական գործը Պեզանում սկսել է մի առանձին կարեորութիւն սաանալ, շնորհիւ ժողովրդի աւելի բուռն մասնակցութեան ընտրողական գործերին. իսկ այդ աւելի բուռն մասնակցութիւնը բացատրւում է նրանով, որ հասարակութիւնը և առ հասարակ ժողովուրդը աւելի ուշադիր է դառել զէպի մամուլի մէջ արծարծւող խնդիրները և գոյութիւն ունեցող կուսակցական բանակներին չի ուղում զլանալ իւր վստահութիւնը կամ անվստահութիւնը հրապարակապէս յայտնել, և նա այդ անում է իրան մատչելի ձևով—ընտրողական քւէով:

Ընտրելու իրաւունքը հասարակական գործերի համար մի վերին աստիճանի օգտակար և նպատակադարմար հաստատութիւն է: Որքան էլ ուզենաք պակասութիւնների վրայ ծանրանալ, երբէք չի յաջողւիլ ձեզ հասարակական գործերի այլ կերպ կառավարելու դերադանցութիւնը ցոյց տալ: Կեանքի, պատմական կեանքի փորձը հաստատում է այդ:

Ընտրելու իրաւունքը ժողովրդի համար ոչ միայն մի արտօնութիւն է, այլ և կրթական միջոց է: Միանգամայն ճիշտ է որ ընտրութեան իրաւունքի հետ պէտք է զուգահեռաբար նսեւ մտաւոր կրթութիւնը առաջ գնաց, որպէս զի աւելի լուսաւոր ժողովուրդը կարողանայ նաև աւելի յաջող ընտրութիւններ կատարել: Քայց ընտրելու իրաւունք բանեցնելը ինքը մի միջոց է, հասարակական կրթութեան մի մեծ խթան է ժողովրդի լուսաւորութեան համար:

Ընտրողական գործումն է նաև որ արտայայտւում է հասարա-

կական խիղճը ընդհանուր խնդիրների վերաբերմամբ. իսկ դա այնպիսի բան է, որի տեղը չի կարող տալ մի քանի նոյն իսկ ըստ ամենայնի լաւ կրթածների զաղտնի խորհուրդը:

Ընտրողական սկզբունքով կազմւած մի խորհուրդ կամ մի մարմին ունենում է այն հեղինակութիւնը որ պահանջւում է հասարակական գործեր վարելու համար: Երբ ժողովուրդը մի գործ հաւատում է այս ու այն անձերին—նա դորանով նաեւ յայտնում է իւր կամքը՝ ընդունել նոցա օրինական որոշումները և հետեւել նոցա յորդորներին:

Հասարակական կեանքի այդ հիմնաքարը ճանաչւել է նաեւ Ռուսաստանում, ուր մի շարք հասարակական գործերի համար ընտրութիւնը հիմք է ընդունւած: Այսպէս՝ ներքին նահանգներում զոջութիւն ունեցող նահանգական և գաւառական զեմստօների (ինքնավարութիւնների) համար, գիւղական և քաղաքային ինքնավարութիւնների համար:

Մեր բուն հայկական կեանքում և գործերում—այդ սկզբունքը ճանաչւած է վաղուց: Ազգիս Հայրապետը ինքը ազգի ընտրւածն է: Այդ նոյն սկզբունքը ընդունւած է նաեւ եկեղեցական երեսփոխանների և ուսումնարանական հոգաբարձուների նկատմամբ: Եւ այդ հանգամանքից ոչ միայն զանգատող չի եղել, այլ նա պարծանքի տիտղոս է եղել հայերի համար:

Սակայն իրաւունքը թէ բանեցնել և թէ յարգել պէտք է զիտենալ: Մի իրաւունք ոչ թէ թշտի վրայ գրած լինելովն է միայն զօրութիւն ստանում, այլ նորա գործադրութիւնովն և յարգելովը: Բայց այս վերջին ժամանակներս մի քանի ընտրողական ղեպքեր մեզ հարկադրում են մեծ մոատանջութիւնների մէջ ընկնել: Եւ մենք մի փոքր էլ աւելի հեռուն կ'երթանք. մենք սկսում ենք մոածել որ եթէ այսպէս գնալու լինեն մեր ընտրողական գործերը—ընտրողական սկզբունքը մեզանում վտանգւած կը լինի: Եւ մեր խօսքը հէնց այդ վտանգի մասին է:

Այն, ինչ ներկայացնում են Ներսէսեան դպրանոցի հոգաբարձական խնդիրը և Մարիամեան—Յովնանեան դպրանոցի հոգաբարձական ընտրութիւնները—պէտքէ ամեն մարդու մոածելու նիւթ տալ:

Ներսէսեան զպրանոցի հոգաբարձութեան մասին իրողութիւնը աչն է որ իւր իրաւասութիւնը դեռ ևս 1890 թւականին լրացրած հոգաբարձութիւնը մինչ այժմ, աչն է մինչ 1894 թւական, դեռ ևս շարունակում է բանեցնել հոգաբարձական իրաւունքները: Զորս տարով ընտրւած մարմինը վարում է գործը ութը տարի: Եւ որպէս զի այդ հանգամանքի ծանրութիւնը լաւ զգացւի, կարևոր է զիտենալ որ այդ վերջին չորս տարիներից մօտ երկուսը կաթողիկոսական կառավարութեան ժամանակներ են եղած և երկուսից քիչ աւելին միայն տեղակալական տարիներ: Այդ անկարգ դրութիւնը ուրեմն համբերել է նաև սովորական տարիներում և ոչ միայն անցողական տարիներում: Աւելցրէ՛ք այդ ամենի վրայ նաև աչն, որ ներկայիս հոգաբարձութիւնը նորով փոխարինելու համար կատարւած են ծխական պատգամաւորների ընտրութիւններ երկու անգամ և հոգաբարձական ընտրութիւններ մի անգամ:

Բայց բեռը էլի իւր տեղումն է, նա շարժւած չէ իւր տեղից:

Այստեղ ցաւալին միայն իրողութիւնը չէ ինքն ըստ ինքեան, այլ աչն բացատրութիւնը որ պէտք է տալ նրան: Այո, պարտաճանաչ մամուլի իրաւունքն է, նորա գործն է ճշմարտութիւնը հրապարակ հանել և պարզապէս յայտնել որ այդ անկանոն դրութեան մեղսակից է ոչ միայն մի յայտնի կուսակցութիւն, այլ և ինքը հոգեւոր կառավարութիւնը:

Կարգադրել ընտրութիւններ կատարել—այդ պատկանում է տեղական հոգեւոր կառավարութեանը. հաստատել կամ ապօրինի ճանաչել կախատարւած ընտրութիւնները—նոյնպէս պատկանում է նոյն հոգեւոր կառավարութեանը. մասնակցել ընտրութիւններին, ուրեմն ընտրութիւնը կատարել—այդ ժողովրդի գործն է:

Սակայն ժողովուրդը ներկայումս աւելի քան երբ և իցէ տրամադրութիւն է ցոյց տալիս իւր իրաւունքը բանեցնել և միանգամայն նաև իւր պարտաւորութիւնը կատարել: Ինչու ուրեմն գործը զլուի չի գալիս:

Մեր պատասխանը սա է, որ գործը զլուի չի գալիս աչն պատճառով, որ տեղական հոգեւոր կառավարութիւնը սկսել է թոյլ դառնալ և իջնել կառավարութեան անաչառ և բարձր պիւրքից դէպի մի որոշ կուսակցութեան ստոր մակերեւոյթը:

Կուսակցական ոգին սկսել է մուտք գործել նաև հոգևոր կառավարութեան մարմնի մէջ ոչ թէ խնդիրների նկատմամբ, որ մենք հասկանալի կը գտնէինք, այլ և կանոնադրութիւններ և հրահանգներ գործադրելու մէջ:

Մինչդեռ հրահանգներ գործադրելում և կանոնադրութեան բուն ձևական խնդիրների մէջ ոչ մի զէպքում չի կարելի համբերել կուսակցական ոգին: Նոքա պէտք է գործադրեն ամենայն սրբութեամբ: Եւ ահա գործադրող մարմնի կուսակցական ոգով վարելը այն վտանգն է, որ սպառնում է խախտել մեր ընտրողական զործերի հիմունքը, կանոնադրութիւնների վրայից վերացնելով սրբութեան այն քողը որ յատուկ պէտք է լինի օրէնքներին: Եւ կաթողիկոսական կանոնադրութիւնները օրէնքներ են, որպէս պարտաւորիչ են նաև առաջնորդական հրահանգները:

Այժմ բանը այն տեղն է հասել որ ժողովուրդը ինքը սկսում է տարակուսել թէ արդեօք օրինաւոր կերպով կառարւած մի ընտրութիւն չի բեկանւելու արդեօք որ և է առաջնորդի ձեռքով, որպէս զի գորանով շահած լինի այն կուսակցութեան սիրտը, որին նա այս կամ այն պատճառով համակրում է:

Յաճախ կրկնող զանցառութեան օրինակները երբեմն իրաւունք են ստեղծում, մանաւանդ երբ այդ զանցառութիւնները արւած են ոչ թէ անմեղ ոգով, այլ կուսակցական ոգով, ուրեմն դիտաւորութեամբ:

Ներսիսեան դպրանոցի հոգաբարձական ընտրութիւնների խընդիրը ձգձգելու պատճառը անմեղներից չէ: Ոչ ոքի համար դադանիք չէ, որ այդ հոգաբարձութեան անդամների մեծամասնութիւնը բարեհաճ է եղել բարձր հոգևոր կառավարութեանը Մակար կաթողիկոսի ժամանակ, երբ թեմիս առաջնորդը հանգուցեալ Մամբրէ Կոնստանտին էր: Արդ, երբ 1890 թվականին այդ հոգաբարձութեան ժամանակամիջոցը լրացաւ—հանգուցեալ առաջնորդը չշտապեց կանոնադրութեան համաձայն վաւել և նոր ընտրութիւններ նշանակել: Եւ որպէս զի կանոնադրութեան խախտում չհամարւեր այդ բանը, նոր ընտրութիւններ նշանակելու համար պատճառ բերին թէ այդ հոգաբարձութիւնը պիտի մնայ մինչև ինչ որ 4000 սուբյուկ մի կորուստ կամ հաշի

մի սխալը չպարզւի: Եւ ընտրութիւններ խնդիրը միանգամայն մոռացութեան տուած էր կարծւում, երբ 1891 թ. № 1-ում մենք «Մուրճ»-ի մէջ դրեցինք այս հարցը, թէ «Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան նոր ընտրութիւնները երբ պիտի կատարեն արդեօք»: Այդ հարցը մենք դրեցինք միանգամայն անհեթեթութիւն համարելով այն թէ կարելի է դրամի կորուստով կամ հաշւի սխալով իրաւունք ձեռք բերել մի հասարակական սլաշտօն կանոնադրութեամբ որոշւած ժամանակամիջոցից աւելի երկար բանեցնելու: Մեր այդ հարցը դնելուց յետոյ միայն տեղական հոգեւոր կառավարութիւնը, մի քանի ամիս անցած՝ կարգադրեց այդ ընտրութիւնները կատարել տալ 1891 թ. ապրիլ ամսի սկզբներին: Միակն ընտրութիւնները կատարւելին, բայց Մակար կաթողիկոսի նոյն ամսի 16-ին վախճանւելով՝ հոգաբարձական ընտրութիւնները յետսձգեցին:

Սա ուրեմն մի իրողութիւն է, որ կաթողիկոսական կառավարութեան օրերով մի հոգաբարձութիւն վաջելեց մի տարի աւելի երկար իրաւունքներ, այն էլ մի այնպիսի պատրւակով, որը կատարեալ հեզնութիւն էր առողջ դատողութեան վրայ:

Ուրեմն միայն թէ իրանց հաճելի մարդիկ լինեն—մնաս չկայ թէ նոքա պաշտօնում մնան թէկուզ պատժի արժանի զանցառութեան պատրւակով...

Եւ այն մամուլը, որին անձնական տետակէտից ձեռնտու էր նոյն հոգաբարձութեան մնալը, շատ բնական համարեց հոգեւոր կառավարութեան այդպիսի վարմունքը: Նա հարց չբարձրացրեց, չանհանդատացաւ, նա չվրդովեց, նա չբողոքեց, այլ լռութեամբ տարաւ. իսկ լռութիւնը երբեմն ոչ միայն համաձայնութեան այլ և փաստաբանութեան մի ձև է հանդիսանում:

Այդ նոյն կուսակցութիւնը մօտ երկուս ու կէս տարւայ տեղակալութեան օրերով սկսեց այնպիսի իրաւաբանական թէօրիաներ պաշտպանել, որոնց համաձայն նա, այդ հոգաբարձութիւնը, պէտք է մնար անփոփոխ մինչև նոր կաթողիկոսի գալը:

Եւ կրկին մնաց:

Եկաւ նաև վաղուց սովասւած Հայրապետը, և ահա կրկին մի 6—7 ամիս է որ տեղական կառավարութեան կողմից խօսք չի լըս-

ւում խնդրի ինչ կերպ վերջ տալու մասին: Եւ այդ բոլորը՝ յօգուտ նոյն հոգաբարձութեան:

Եւ նա նորից մնաց:

Հարցնում ենք—ինչն է մի հասարակ խնդիր գործեան հանգոյց դարձնում: Մենք դրան պատասխանում ենք՝ տեղական թեմական կառավարութիւնը, որը իրան համերաշխ է ցոյց տալիս մի խումբ մարդկանց հետ, որոնք կարգ, կանոն չեն ճանաչում, այլ անձնական շահեր...

Եւ զատեցէք թէ մենք իրաւունք ունինք վտանգի մասին խօսելու թէ ոչ:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

## ՄԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ

Не все то золото, что блеститъ.

Ռուսական առած:

Նա որ երկուս ու կէս տարի առաջ ինձ մօտեցաւ իբրեւ բարեկամ—  
ալօժմ փողոցում և լրագրութեան մէջ միակ մի բանի վրայ է մտածում,  
թէ ինչպէս ինձ վնասի:

1891 թ. չուլիսին էր, իմ դրամական մեծ տաղնապի ժամանակը.  
«Մուրճ»-ի հրատարակութիւնը առաջին երեք տարիներում ինձ պարտ-  
քերի տակ էր գցել, որոնց դիմաց ես կոպէկ չուէի: Պէտք էր գիմել  
փոխառութեան—ուրիշ եւք չկար: Դիմեցի երկու դրամատէրերի—և վա-  
ջողութիւն չունեցայ:

Զգիտեմ որտեղից որտեղ, ամենևին չսպասւած տեղից, ստանում եմ  
մի նամակ. նամակը ստորագրողին ես ճանաչում էի իբր դրամատէր, որի  
հետ գրեթէ միայն բարեի ծանօթութիւն ունէի մինչ աչդ ժամանակ: Նա ինձ  
առաջարկում էր, որ «Մուրճ»-ը իրան չանձնեմ, նա լինի խմբագիր և  
հրատարակիչ, իսկ ես դառնամ նրա «գլխաւոր աշխատակից և խորհրդա-  
տուն», ապահով ռոճկով, անմաս վնասի մէջ, և մասնակցող օգուտին:

Ստորագրողը երևի գիտէր, որ «Մուրճ»-ը նիւթական նեղութիւնների  
մէջ էր, թերեւ նրան, ոյ որ վեց ամիս առաջ ես մի դէպքով խօսել էի հետը  
իմ մտադրութեան մասին կազմել «Մուրճ»-ի ապահովացման մի ֆոնդ:

Նամակը ստանալու օրը գնացի ինձ առաջարկութիւն անողի մօտ,  
չալտնեցի որ «Մուրճ»-ը ես չեմ ծախիլ և թէ իզուր տեղը մեր մէջ խօ-  
սակցութիւն չլինի խմբագրի կոչումի և թէ իրաւունքների մասին. բաւց  
որ եթէ նա «Մուրճ»-ին համակրող մէկն է՝ ես պատրաստ եմ համաձայն-  
ութիւն կապանել ամսագրի ելմտական կողմի համար, իրան տալով հրա-  
տարակչի անունը, և երկրորդ աչն պալմանով որ նա ինձ փոխարինաբար  
տալ իմ պարտքերս վճարելու գումարը: Ինձ ստիպողը ընկեր ընդունել—  
գլխաւորապէս պարտքերս էին, բարդւած «Մուրճ»-ի նախկին տարիների  
լասներկց:

Առանց այլ և այլի մեր կապացնելիք համաձայնութեան աչդ հիմքը սկզբունքով ընդունեց, և ահա սկսեց որոշումը համաձայնութեան կէտերի: Նախ պէտք էր ծանօթանալ դրութեան հետ:

Որքան բաժանորդ ունի «Մուրճ»-ը և ինչ է նստում տարեկան— զոքա առաջին հարցերն էին: Բաժանորդները թւի մասին ճշտագոյն տեղեկութիւն տալ կարող էր միայն բաժանորդագրական մատեանը. հրաւրեցի ուրեմն, որ գնանք խմբագրատուն և խմանք ճիշդ թիւը:

— Իսկ մօտաւորապէս:

Նւ ես ահա Վիշողութեամբ չաչտնում եմ և մատիտով մի թղթի կտորի վրայ գրում մի թիւ—եթէ չեմ սխալւում 287: Եթէ ուրեմն ապառիկներ չլինեն—«Մուրճ»-ը կ'ունենալ այս 1891 թւականին 280 վճարող բաժանորդ: (Այստեղ և եթ շտապում եմ ասել որ տուն վերադառնալիս՝ հաշեցի որ «Մուրճ»-ը ուղարկւում էր 307 հոգու, որոնցից 22 հոգու անվճար, իսկ մնացած 285 հոգու վճարով—կանխիկ և ապառիկ միասին: Մատեանը մինչ ալժամ էլ մօտս է):

— Իսկ որքան է տարեկան ծախքը?

— Ծախքը հաշւել հեշտ է, որովհետեւ ամեն բան իւր գինն ունի՝ թուղթը, տպարանը, պոստը: Նւ ես հաղորդում եմ թէ ինչ է թղթի, տպարանի, պոստի գները և այլ ծախսերը: Նւ ահա, հիմք ընդունելով ամսագրի մի որոշ մեծութիւն, սկսում ենք հաշւել, աւելացնելով Վիշողութեան վրա աշխատակիցների վարձատրութիւնը նախկին երկու տարիների փորձով, և մի քանի այլ ծախքեր, չհաշւելով խմբագրական սենեակի վարձը և սրբագրութեան ծախքերը:

Նւ դուրս եկաւ ինչ որ 3000 ռուբլի:

— Իսկ ձեր վարձատրութիւնը:

— Նս ինձ համար բաւական եմ համարում 2500 ռուբլի, ինձ վրայ վերցնելով նաև խմբագրութեան սենեակի և սրբագրութեան ծախքը. եթէ միջոցս չների՝ սրբագրութիւնը ինքս կը կատարեմ, օգնականութեամբ իմ կնոջ, ինչպէս եղել է այս վերջին տարին, սկսած 1890 թւականի ապրիլից:

— Ուրեմն հրատարակութեան ծախք «Մուրճ»-ը կ'ունենալ 5500 ռ.:

— Ինչպէս տեսնում էք—պատասխանում եմ ես:

— Իսկ որքան կարող է «Մուրճ»-ը բաժանորդ ունենալ 1892 թւականին:

— Իմ կարծիքով՝ չպէտք է չուսալ 300 վճարող բաժանորդից աւելի, և առհասարակ ամեն տարի խելացի է չուսալ միայն 50 աւելի բաժանորդ և ոչ առաւել:

— Այսպիսով ուրեմն «Մուրճ»-ը հաւանականօրէն կ'ունենալ 2500 ռ. ղեֆիցիտ 1892 թւականին, եթէ ամսագիրը հրատարակւի 160 երես

ամիսը, 2000 ռուբլի՝ 1893-ին, 1500 ռուբլի՝ 1894-ին և այլն:

—Այո, իմ չոյսերը աւելի հեռուն չեն գնում, և, իբրև մէկին, որը ուզում է «Մուրճ»-ի հետ կապւել և իմ ապագայ ընկերը դառնալ՝ խորհուրդ եմ տալիս որ այդ հանգամանքը լաւ կշռէք:

Խօսակիցս հաշւեց որ դեֆիցիտը հաւասար է 250 բաժանորդագնի, և զարմացաւ որ «Մուրճ»-ը առնւազն 800 բաժանորդ չունի, ինչպէս այդ շատերը կարծում են եղել, ինքն էլ հետը: Եւ, ըստ երևութիւն, ուրախ էր ինձնից խմանալով որ «Մուրճ»-ը այդքան քիչ բաժանորդ ունէր, քանի որ դեֆիցիտը կախած էր դորանից, և որովհետեւ «Մուրճ»-ը «պէտք է» 800 բաժանորդ ունենալ, հետեապէս իմ հաղորդած թւերը լաւատեսի աչքում ժամանակաւորապէս գին կարող էին ունենալ և ոչ մշտական: Խակ խօսակիցս ներկալի մասին չէր մտածում, այլ ապագայի, այն ապագայի, որի համար ես իրան ներկայացրել էի թւեր, հիմնւած իմ փորձի և մեր հասարակութեան մասին ունեցածս կարծիքի վրայ:

Ես աւելի իմ հրաժեշտը, հրաւիրելով խօսակցիս, որ լաւ կշռի հաղորդածս հանգամանքները և, ըստ հարկին՝ խորհրդակցի իւր մտերիմ բարեկամների հետ:

Յաջորդ օրը ես ստանում եմ մի նամակ՝ նորանից, թւագրած 14 չուլիսի 1891 թ.: Այդ նամակով նա հաստատում է ինձնից լսածը, այն է թէ իմ կարծիքով՝ որքան կարող է դեֆիցիտ լինել 1892-ին, 93-ին և այլն, մինչ վեց տարի, երբ, իմ կարծիքով, այլ ևս դեֆիցիտ չպէտք է լինի:

Միջանկեալ ես ուզում եմ նկատել թէ որքան և որքան կարևոր է, անգամ անհրաժեշտ է անձնական պատւի տեսակէտից, որ այս ձևի բանակցութիւնները գրաւոր հետքեր թողնեն, և ամեն ինչ միայն բերանացի չկատարւեն, որ ցետոյ վէճեր չծագեն նախնական խօսակցութիւնների մասին: Այդ կողմից, գոնէ ներկալ գէպքի համար, ես անչափ բաղղաւոր եմ, որ ասածներս կարող եմ հաստատել նամակներով և այլ գրաւոր դոկումէնտներով:

Եւ այսպէս նամակով նա հաստատում է իմ ասածը, թէ այն ծախքով և եկամտով որ ես նրան ներկայացրել էի, «Մուրճ»-ը հաւանականօրէն պէտք է ունենար դեֆիցիտ աչսպէս՝

1892 ին 2500 ռ., 93-ին 2000, 94-ին 1500, 95-ին 1000, 96-ին 500, 97-ին ոչինչ դեֆիցիտ:

Գտնելով այդ ծախքը ծանր, մանաւանդ որ ծախքի մէջ «ոչինչ չէ փատկացրած «Մուրճ»-ը ընդարձակելու, ճոխացնելու համար և այլն», իմ ապագայ ընկերը իւր կողմից ինձ անում է հետեւեալ առաջարկութիւնը.

1) Ես կը վճարեմ Ձեզ միանւագ 2000 ռ.,

2) Դուք կը ստանաք ամենայն տարի վարձատրութիւն խմբագրութեան և սրբագրութեան (ծախքի) համար 1500 ռ.

3) Հրատարակութեան մասինց մասնաւոր ռենտաւոր,

4) Օգուտից (կըստանաք) 50% (աւելնքն կէսը): Փակագծերում գրած խօսքերը իմն են:

Ստորագրողը վերջացնում է նամակը աւելի. «Սակարգութիւն սի-  
րել չհամարէք իմ ալս պատասխանը, հաւատացէք որ ես առաջարկում  
եմ ալս ինչ հարկաւոր եմ գտնում և կարողանում»:

Վերջին խօսքը ստորագծել է ինքը ստորագրողը:

Իսկ ստորագրել է և գրել նամակը Փիլիպպոս Վարդապետեանց, նա  
ինքը որ անպատասխան տեղից ինձ առաջին անգամ առաջարկութիւն էր  
արել և զրգել ինձ իրա հետ բանակցութիւններ անել, նա ինքը, որ ալ-  
սօր ալդ նոյն պալմանակէտերը, հրատարակելով «Մշակ» լրագրում (№ 18),  
ուզում է աշխարհք զարմացնել:

Ստանալով ալս նամակը, գրղւած տեսալ ինձ տեսակցութիւն ունե-  
նալ հետը: Նախ, ալդ ինչ 2000 ռուբլի է որ նա ուզում էր ինձ «միա-  
նազ» տալ: Բանից դուրս եկաւ, որ «հրատարակիչ» տիտղոս կրելու փառ-  
քի հատուցումն է ալդ: Նա նրան քալտնեցի որ տիտղոս զիջանելու համար  
ես զին չեմ պահանջում, հետևապէս ես չեմ ընդունում ալդ գումարը: Բայց  
որ ես պարտքեր ունեմ 4500 ռուբլու, և եթէ ձեր մտադրութիւնը ինձ  
օգնելն է, ալդ օգնութիւնը թող լինի ալդ գումարի ինձ պարտք տալը՝  
որոշ եղանակով ձեզ կրկին վերադարձնելու պալմանով:

Նա համաձայնեց, բայց ոչ 4500 ռուբլի ալ 3500 ռուբլի պարտք  
տալ: Մնացեալ կէտերը ես ընդունեցի:

Նա ուրախ էի որ կարող էի ալդպիսով գէթ անլետաձգելի պարտքերս  
վճարել: Պարտք ստանալը 3500 ռուբլու ինձ համար աւելի թանգ ար-  
ժէր, քան 2000 ռուբլու նւէրը կամ ինչպէս կամենաք անւանեցէք տիտ-  
ղոսի կամ «Մուրճ»-ի անունի հետ կապելու գինը:

Անցաւ ալդ բոպէից ութ օր մինչև որ մեր կալայրած համաձայնու-  
թիւնը նոտարական պալմանի վտխարկեց: Բաւականի օրեր—լաւ կշոն-  
ելու և խորհրդակցելու համար: Ինչ վերաբերում է ինձ՝ ես մի ամբողջ շա-  
բաթ իմ մտածութեան առարկալ շինեցի պալմանագրի նախագիծը, թէն  
նա ինքն ըստ ինքեան պարզ էր և ըստ երևութին չէր պարունակում  
մութ կէտեր: Բայց և ալնպէս հարկ զգացի որ և է մէկի հետ խորհրդակ-  
ցելու ալդ մասին, նախքան պալմանը կըստորագրէինք: Նա ալդ մտքով դի-  
մեցի մէկին:

Այսպիսով պալմանը կապելուց մի օր առաջ մի հատ աշխատակցի խոր-  
հրդի հրաւիրեցի, մի գուցէ պալմանագրի մէջ պակաս լինին ալնպիսի կէ-  
տեր, որոնց պատճառով «Մուրճ» ը վտանգի ենթարկելու ապագայում, քա-  
նի որ նորա հետ կապում է մի ալ անձ, որը սակայն «հրատարա-  
կիչ», անունն է կրելու, իսկ «հրատարակիչ» կառավարութեան աչքում

լիակատար սեպհականատէր է թերթի: Առանց նոտարական պալմանի, եթէ մէկը մի թերթի հրատարակիչ է կոչուում, թէկուզ միաջն կոչվի նա աղջկէս, առանց իսկական հրատարակիչ լինելու, նա կարող է հրատարակութիւնը դադարեցնել երբ կամենայ, խմբագիր առաջարկել՝ ում կամենայ, մի խօսքով լինել կատարեալ տէր: Իմ գլխաւոր հոգսը այն էր որ 1) «Մուրճ»-ը առհասարակ վտանգի չենթարկւի իմ դաշնակցի որ և է քմահաճութեան պատճառով, որի մասին ներելի էր մտածել, անգամ անհերելի կը լինէր չմտածել, չնայած որ, բացի լաւութիւն անելու դիտաւորութիւնից, ուրիշ բան չէի նկատում դաշնակցիս մէջ. և 2) որ «Մուրճ»-ի խմբագրական մասը լրագէս իմ ձեռքում լինելով, աջնպէս չպատահի որ դաշնակցիս օգտելով հրատարակիչ տխրոսից, կարողանայ լենել որ և է օրէնքի վրայ և միջամտել իմ խմբագրական գործերի մէջ, չնայած որ պալմանը կապելուց առաջ ես պարտք էի համարել շատ որոշ կերպով խօսել աղջ մասին, ապագայում որ և է թիւրիմացութեան տեղիք չտալու համար:

— Պալմանագրի նախագծում ոչինչ չէ ասւած թէ ով է վարձատրութիւն նշանակում աշխատակիցներին, ասաց խորհրդակիցս, որ ինքն էլ մի աշխատակից էր:

— Իհարկէ ես, որպէս խմբագիր, ասացի ես:

— Այո, բայց պէտք է պալմանում լիչել, թէ չէ վետոյ կարող է վէճ ծագել:

Եւ ես ահա շտապում եմ իմ ապագայ դաշնակցիս մօտ չաչտնելու մոռացւած կէտի մասին: Եւ աղջ կէտն ես մտցնում եմք, իբր պալմանի մոռացւած կէտ:

Մեր համաձայնութիւնը կատարեալ էր: Եւ ես մտածում էի՝—ինչն է դրդում այս պարոնին ինձ հետ աղջպիսի պալման կապել: Մէկ մտածում էի որ դորա շարժառիթը կարող էր լինել՝ ջերմ համակրութիւնը «Մուրճ»-ին և ցանկութիւնը ինձ նիւթականապէս պաշտպանել: Մեր ունեցած խօսակցութիւնները ուրիշ բան չէին երթադրել տալիս: Դորա հետ միասին, մտածում էի ես, թերեւ դեր է կատարում մի ալ հաշիւ, այն է որ նա հաստատ հաւատում է, հակառակ իմ ցոյց տւած թւերին, որ «Մուրճը» դեֆիցիտներ չի ունենալու կամ կունենայ ոչ այնքան մեծ դեֆիցիտ, որքան ես էի ցոյց տւել, և որ ուրեմն նա համոզւած է թէ չուտով նա կիսով չափ սեփականատէր կը դառնայ մի հալկական օրգանի, առանց զգալի վնաս կրելու, իսկ շարունակ օգուտներ ստանալու հեռանկարով:

Իմ ալ վերջին ենթադրութիւնը ինձ անհանգստացրեց. եթէ, մտածում էի ես, ինձ հետ դաշնակցել ցանկացողը աղջպիսի չլսեր է տածում, նա ապագայում կարող է հիասթափւել եւ, եթէ պալմանը առ միշտ կապւի, դորանով նորա ձեռքերը առ միշտ կապւած կը լինեն և վերջը կը ծաւենն մեծ դժգոհութիւններ:

Եւ ահա ես նորից գնում եմ մօտը և լալանում եմ մտատանջութիւնս, որին վերջ եմ տալիս առաջարկելով նրան չկապել ինձ հետ առ միշտ պարտաւորեցուցիչ կերպով: Թող, ասացի ես, պալմանը պարտադիր լինի միայն երեք տարի և ոչ աւելի. ես չեմ ուզիլ ունենալ մի դժգոհ ընկեր, նոյն իսկ ոչ լանուն «Մուրճ»-ի և իմ սեպհական ապահովութեան. երեք տարուց չետոյ կապւած մնալը թող կախւած լինի միմիայն ձեզնից, որ, եթէ ինքնեղ կը կամենաք՝ շարունակէք, իսկ եթէ չկամենաք—գոնէ կարողանաք հեռանալ առանց ապագայի վնասների համար պատասխանատու լինելու:

Այս իմ առաջարկութիւնը նա չէր կարող չընդունել, քանի որ նա դորանով երեք տարուց չետոյ ազատութեամբ էր կապանքից կորուստների դէպքում, իսկ օդտի դէպքում՝ նա առմիշտ մնում էր նորա վալելոզը— ինձ հետ հաւատար:

Որ ես ինքս եմ ալդ առաջարկութիւնը արել դաշնակցիս և չատկապէս ալդ մտքով, ալդ ես բերանացի պատմել եմ եօթը անգիր. ներկալութեամբ, և իմ նախկին նոտարական ընկերս խոստովանել է ասածիս ճշդութիւնը նոյն ալդ պարտնների մօտ և նոյն բոպէին, քանի որ երկուքս էլ ներկայ էինք:

Եւ ահա մեր բանակցութիւնները վերջացած էին. պիտք էր նոտարի մօտ դնալ և ստորագրել: Տարաւ ինձ իւր ծանօթ նոտար Պոլտարացկու սօտ, դաշնը գրեց գործավար պ. Անարոնեանց, նոյնպէս նրա ծանօթը, և որի հետ ես առաջին անգամն էի ծանօթանում:

Ստորագրեցինք օգոստի 24-ին 1891 թ.:

Ալդ պալմանով ես պարտաւորում էի պ. Վարդաղարեանցին ինձ ընկեր ընդունել և պարտաւորում էի խնդիրք տալ կառավարութեան պ. Փ. Վարդաղարեանցին «հրատարակիչ» հաստատելու համար: Բայց կոչէր նա հրատարակիչ թէ ոչ—պալմանը մնում էր նոյնը: Իսկ ալդ պալմանով, ամսագրի դրամական մասը ես զիջանում էի նրան, աչսինքն պ. Վարդաղարեանցը պէտք է ստանար «Մուրճ»-ի անունով ստացւած բոլոր դրամական ծրարները, բաժանորդագները և ալն: Դորա համապատասխան նա պէտք է մաքրէր «Մուրճ»-ի բոլոր հաշիւները, բացառութեամբ խմբագրական սենեակի ու սրբագրութեան ծախսերի: Վնասի դէպքում չանձն էր առնում ծածկել դեֆիցիտը իւր սեփական միջոցներից, իսկ օգուտից վերցնել կէսը: Ծախքի մէջն էր ինձ հասնելի տարեկան 1500 ռուբլու գումարը:

Ի բաց առած «Մուրճ»-ի հաշիւներ պահելը, գանձապահութիւնը և էքսպեդիցիան, մնացած բոլոր գործերը ես վերապահում էի ինձ—համաձայն պալմանի և, ուր վերջինս պակասաւոր էր կամ բաւականաչափ ճիշդ չէր թարգմանած մեր միտքը՝ համաձայն մեր բերանացի նախնական համաձայնութեան: Արդ (և ալդ մասին երբէք և ոչ մի անգամ կասկած չի

եղել մեր մէջ և ոչ մի հակաճառութիւն) ինձ էր վերաբերում «Մուրճ»-ի թէ արտաքինը և թէ ներքինը: Արտաքինը ասելով՝ ես հասկանում եմ զուտ հրատարակութիւնը, որ ինչ վերաբերում է թղթի ընտրութեան, տպարանի հետ չարաբերութեան, տառերի ընտրութեան, լօղածների դասաւորութեան, համարի մեծութեան և այլն: Աս հրատարակում էի ինչպէս ես էի կամենում—հաշիւներ մաքրելը պատկանում էր նոտարական ընկերջն:

Խմբագրական գործը իւր բոլոր ճիւղաւորութիւններով մնում էր ինձ-ինչպէս առաջ, առանց որ և է իրաւունքի «հրատարակչի» կողմից որ և է կերպ միջամտելու իմ գործի մէջ, եթէ չհաշենք աչն, որ նրան իրաւունք էր տրւում «Մուրճ»-ի բովանդակութեան հետ ծանօթանալ համարը լոյս տեսնելուց առաջ. և լատկապէս լիշւած էր որ տպարանի ղեկըրը նորա համար բաց պիտի լինին—լոկ հետաքրքրութեան բաւականութիւն:

Թերևս ինձ հարցնեն, թէ աղ ինչպիսի «ընկերութիւն» էր որ բոլոր էական իրաւունքները միաչն մէկին էին վերապահւած: Պատասխանս աչս է՝ ես չէի կարող իմ սիրելի «Մուրճ»-ը մի անժանօթ մարդու իրաւունքի ներքոյ դնել, թէկուզ միաչն արտաքինի կողմից. իսկ երկրորդ՝ իրաւունք-ների անհաւասարութիւնը բնականապէս բոլսում էր երկու դաշնակցող-ների անհաւասարութիւնից. մէկը՝ ես, մէջտեղ էի դնում ոչ միաչն մի թերթի եկամուտը, աչ և մի գաղափարական գործ, որի հետ անբաժան կապ-ւած է իմ և գործակիցներիս անունը, մինչդեռ դաշնակիցս ղալիս էր միաչն ամենավատ դէպքում՝ երեք տարի փողով ինձ օգնելու, իսկ չաջող դէպ-քում՝ ոչինչ չցանած՝ ինձ հետ նոչն իսկ արդիւնք բաժանելու առ միշտ...

Պայմանը պարտաւորիչ էր միաչն երեք տարի, աչն է մինչ 1894-ի վերջը, իսկ աչնուհետև նոչն պայմանով ընկերութիւն շարունակելը կախ-ւած էր միաչն նրանից և ոչ ինձնից:

Որոշւած էր տուգանք: Ինչու համար էր աղ. նրա համար որ երկու կողմերն էլ ստիպւած լինեն չարգել պայմանը: Առանց աղ տուգանքի—որ և է թշնամանքի պատճառով «հրատարակչը» առանց վնասի կա-րող էր նոչն իսկ ղաղաբեցնել հրատարակութիւնը կամ ընդհատել—ինչ-պէս քեֆը կը տար: Տուգանքը չիտակ մարդու համար միաչն միջոց է պայմանագիրը չարգել տալու: Իսկ մի հալկական մեծ օրգանի վտանգելու փորձի համար որ և է անձի կապրիզի պատճառով—ոչ թէ 20 հաղար, աչ տանապատիկ աւելի մեծ տուգանքը բաւականաչափ մխիթարութիւն չի կարող լինել:

Մի փոքր կանգ եմ առնում մեր պայմանի իսկական բնաւորութեան վրա:

Ինչ էր ներկայացնում ա. ֆ. Վարդաղաբեանց, համաձայն մեր աչն

պալմանի, որ ոչ ալ ինչ էր եթէ ոչ մեր նախօրօք կապարած բերանացի համաձայնութեան արձանագրութիւնը:

Նա «կոչում էր» հրատարակիչ, բայց չէր միակ հրատարակիչ թերթի, ալ միայն իմ ընկերը, կոմպանիոնը: Նա չէր կարող ծախել թերթը ուրիշին, նա իրաւունք չունէր իր կամքով խմբագիր առաջարկել: Լաւ նկատեցէք որ նոյն իսկ իմ մահանից ւետոյ, եթէ պ. Վարդազարեանցը շարունակէր «հրատարակիչ» մնալ, նա պարտաւոր էր կառավարութեանը խմբագիր առաջարկել միայն նոցա, ում ես կտակով իմ չաջորդը կը նշանակէի:

Ես չեմ հիմնել «Մուրճ»-ը նրա համար, որ նա ընկնի միայն փողի ապահովութիւն ունեցող մարդկանց ձեռքը: Այդպէս էի մտածում պալման գրելիս, և պալմանում ես ալն կէտը մտցնել տւի:

Բայց ոչ միայն սեփականութեան տեսակէտից էր նա իմ ընկեր, ալ և հրատարակութեան ծախքերի տեսակէտից: «Մշակի» № 18-ում նա իլուր ամենքին չալունեց է թէ նա էր միակ լանձն առել հոգալ թղթի, տպարանի, ռոճիկների և ալ ծախքերի մասին: Բայց դա ոչ ալ ինչ է եթէ ոչ աչքակապութիւն: Նա իրան չգիտենալ է ձեռացնում որ ես «Մուրճի»-ի ամբողջ եկամուտը չատկացրել եմ ալդ նոյն ծախքերին, ալն «Մուրճ»-ի, որը առանց Վարդազարեանցի էլ ունէր մի չալունի եկամուտ բաժանորդավճարներից գոյացնող և որը կարող էր աճել և բոլոր ծախքերը ծածկել: Եւ ինչ կ'ունենար հոգալու նա, եթէ «Մուրճ»-ը ինքն իրա ծախքը ծածկէր? Ես մէջտեղ եմ դրել «իմ «Մուրճ»-ի» եկամուտը, իսկ նա լանձն էր առնում պակասորդը լրացնել: հետեապէս եթէ գեֆիցիտ լինէր՝ ալդ չէր նշանակիլ թէ նա «բոլոր ծախքը» ինքն էր հոգում:

Պարզ է որ «հրատարակիչ» կոչւելը շլացրել էր իմ նախկին նոտարական ընկերոջ: Ար ես զիջանել էի նրան իմ իրաւունքը խմբագրութեան փողերը ստանալ և մսխել «Մուրճ»-ի վրա, նա կարծեւ էր թէ ալդ փողերը իւր վաստակն են, իւր սեփականութիւնը, թերեւս հօրից մնացած ժառանգութիւն... Ահա ինչ է նշանակում անընդունակ լինել մի խնդրի էութիւնն ըմբռնելու, եթէ միայն չուզենանք զիտաւորեալ խարդախութեան վերագրել:

Ջոկ բան է, երբ մէկը միտից գնում է հրատարակութեան իրաւունքը, ինչպէս օր. իշխ. Պումանովները գնեցին պ. Նիկողաձէից «Նուփոս Օրոգրներին» թերթը ոչ թէ ֆիկտիւ կերպով, ալ իրապէս: Բայց ես, փառք Աստուծոյ, մինչ օրս ոչ ոքին չեմ ծախել «Մուրճ»-ը և, օգնութեամբ Ամենակարողին, կը ցանկալի երբէք չընկնել ալն վիճակի մէջ, որ ձեռքիցս նրան բաց թողնեմ. իսկ դժբաղդ դէպքում— ես կիմանամ ընտրութիւն անել անձնական չահիս և հանրական չահի մէջ, և ես գիտեմ որ հասարակութիւնը իմ զգացմունքին և ձգտումին կանխաւ կը հաւատայ:

Եւ այսպէս՝ ինձ ընկերաճառու առաջարկութիւնն անողը եղել է պ. Վարդազարեանցը, նորան զգուշացնողը՝ եղել եմ ես. նոյն իսկ փող է առաջարկել 2000 ռուբլի—և չեմ ընդունել. դորա փոխարէն տւել է 3500 ռ. փոխարինարաւ, որոշ եղանակով չետ վճարելու պայմանով: Լաւ բաժանորդագրութեան ղէպքում—հա, գրեթէ առանց զոհաբերութիւնն արած լինելու—օգտուամ էր զուտ եկամտի կէսից: Ես ասում եմ «գրեթէ», որովհետեւ, չաջող բաժանորդագրութեան ղէպքում, նորա միակ զոհաբերութիւնը աչն կը լինէր, որ կը կորցնէր 3500 ռուբլու տոկոսները մինչև բաժանման տարին. այսպէս էր մեր պայմանը. անաջող ղէպքում՝ նա լրացնում էր սկսկասորդը: Պարտաւորիչ էր պայմանը միայն երեք տարի, որից չետոյ, եթէ հանգամանքը նպաստաւոր լինէր—առ միշտ կօղտէր զուտ արդիւնքներից, աննպաստ ղէպքում՝ միշտ ազատ էր չետ կանգնելու:

Ես ծանրանում եմ աչն հասգամանքի վրայ, որ պայմանի երեք տարի և ոչ առ միշտ պարտաւորիչ դարձնելը եղած է իմ խորհրդով, իմ առաջարկութեամբ, իմ չորհորներով—և որ այդ բանը ես արել եմ անկասկած ի վնաս ինձ և լօգուտ իմ ապագայ կոմպանիոնիս, մինչդեռ նորա զխտաւորութիւնն էր նոյն պայմանագրով ինձ հետ առ միշտ կապել:

Ասեմ նաև, որ թէ բերանացի խօսակցութիւններս և թէ դոցա համեմատ կապած պայմանս ինձ ենթադրել էին տալիս որ դործ ունիմ ինձ լոկ նիւթակահապէս օգնողի հետ, բաւց որը գուցէ վստահ է թէ իւր ընկերութեան չնորհիւ՝ «Մուրճ»-ը չուտով դեֆիցիտներից կազատուի:

Այսպիսով կապեց պայմանը, 1892-ից սկսեց նոտարական ընկերս կրել «Մուրճ» ի հրատարակիչ տիտղոսը:

Բաւց պայմանը կապելուց չետոյ և մանաւանդ «հրատարակիչ» կոչւելու օրից միաչն ես սկսեցի մօտիկուց ծանօթանալ իմ նոտարական ընկերոջն հետ: Բանից զուրս եկաւ որ իմ ընկերս գրող է եղել, և աւելի՛ նա գրեւապաւ է ունեցել վերին աստիճանի: Երևաց նաև, որ նոտարական ընկերս ինձ համար նաև խմբագրական «օգնական» է ուղղում լինել, իմ խորհրդատուն, օգնականս. բանից զուրս եկաւ որ նա մի անհրաժեշտ մարդ է կարծում իրան խմբագրատան մէջ: Բանից զուրս եկաւ, որ նա նոյն իսկ իմ գրասենեակում ինձնից չի ուղղում «պուկ գալ», անպատճառ ուղղում է ինձ հետ ընկերութիւնն անել նաև պայմանից զուրս բաներում: Եւ միշտ արդարանալով ինձ մօտ թէ իբր «Մուրճ»-ի օգտին է ծառայում, Խանգարել ինձ, անհանգստութիւններ պատճառել ինձ և արդարանալ թէ «գործին» եմ ծառայում? Լաւ ծառայութիւն էր, երբ ոչ «ք խնդրող չկար աչդպիսի ծառայութիւններ անելու, մանաւանդ որ ես կարօտ չէի աչդպիսի «ծառայութիւնների»...

Գաղափար տալու համար թէ որքան ի չար գործ դնել գիտէր ընկերս իմ համբերութիւնը, բաւական է ասել, որ, չնայած իմ քանի-քանի անգամ կրկնած զգուշացումներին, նա ամենալոյս չամառութեամբ և «տոկու-նութեամբ» ուզում էր սովորութիւն դարձնել ամեն օր առաւօտեան ժամ 10-ից մօտս գալ և մնալ իմ կշտին մինչ ժամ 2-ը կամ 3-ը, ուրեմն ամեն օր խլել ինձնից 4—5 թանկագին ժամեր:

Նա երևակայել էր որ, եթէ որ և է կերպ կապած է ինձ հետ, ուրեմն իրաւունք ունէր անել ինչ քէֆն է. նա երևակայել էր որ զեֆիցիտ ծածկելու պարտաւորութիւնը իրաւունք է տալիս նրան իմ պարագման ժամերի տէրը լինել, և իմ գրասենեակը իւր համար մի առևտրական կոնտոր դարձնել...

Աւելցրէք դորա վրայ նորա գրեւացաւը, որի զօրութեամբ նա ահա գին կոմպիլացիաներ պատրաստելու և ձեր առաջ դնելու ընդունակութիւնն ունէր—մեծագոյն մատամբ մերժած լինելու գրական արժողութեամբ: Բայց որքան էլ մերժէք, աչնու ամենալոյս իբր խմբագիր՝ կարդալ պէտք էր և զեռ դատողութիւնների մէջ մտնել հետը: Չէ որ նա, իւր կարծիքով, մի սովորական աշխատակից չէր, այլ զեֆիցիտ ծածկող աշխատակից...

Մի խօսքով, հէնց որ ընկերս ըստ պայմանի հրատարակական ընկեր դարձաւ, փոխանակ ըստ պայմանի իւր դրամական մասը կառավարելու—սկսեց մի աջնալիսի անսպասելի զեր չտակացնել իրան, որից ետ պէտք է արդէն պաշտպանւէի և շարունակ պաշտպանւէի: Նւ պաշտպանում էի, չթույլ տալով որ և է ոտն ձգութիւն ընկերոջս կողմից. բայց այդ պաշտպանելու ինձ ամեն օր ամբողջ ժամեր էին նւոտում և արիւնխառնութիւն...

Բայց նա երեւի մտադիր չէր ետ կանգնելու, որովհետեւ չէր երևում թէ խրատւում լինէր: Լաւագոյն ապացոյցը այդ բանի նա տւեց նրանով, որ հոկտեմբերի 14-ին, 1893 թ. նա ինձ նամակով առաջարկեց որ պայմանը քանդենք պայմանաժամից առաջ:

Դորանով սկսում է բաժանման պատմութիւնը, որ սակայն շատ շուտ վերջացրի, չորս-հինգ օրում, աչն է մինչ հոկտեմբերի 18-ը:

Նա անչարմար եմ գտնում այդ նամակը ամբողջապէս առաջ բերելը: Բայց միայն մի բան չի կարելի չըլիչել, այդ աչն է, որ նա, պայմանաժամից առաջ հեռանալու համար, ոչ միայն դիտաւորութիւն չի չափում ինձ որ և է բաւարարութիւն տալու, այլ զեռ միտք է չափում թէ գուցէ ետ իրա՝ Վարդազարեանցի՝ օգտին տուգանք տամ:

Ընթերցողը կը զարմանայ, բայց իմ նախկին կոմպանիոնի համար զարմանալու բան չկայ աշխարհումս: Ահա նորա տողերը:

«Ինչ ասել կ'ուզի որ 25000 ռուբլու տուգանքի մասին ինձանից չօգուտ Զեր խօսք անգամ չի կարող լինել, ալ զուցէ ընդհակառակը իմ օգտին լինի Զեզանից»:

Նկատեցէք, որ նորանից ես տուգանք պահանջելու մասին խօսք չեմ ունեցել և առհասարակ բաժանելու մասին երբէք խօսք չէր եղել մեր մէջ. և ալդ տողերը նա գրում է հէնց նոյն նամակում, ուր նա առաջին անգամ բաժանելու առաջարկն է անում ինձ:

Նորա ալդ զարմանալի տողերը ես տրամադիր էի ալսպէս թարգմանելու, թէ «որովհետեւ ես, Վարդազարեանցս, շարունակ ձեր զահէն կը տանեմ, ալդ պատճառով, իմ պէս անչարմար ընկերից ազատելու համար՝ տուգանք վճարեցէք որ ես ռադ լինեմ»:

Միք մոռանալ, որ ալդ մարդը, որ բաժանման առաջարկութիւնն անելիս ոչ միայն միտք չի ունեցել որ և է բաւարարութիւն տալու ինձ պալմանը պատուելու համար, ալ դեռ առաջարկութիւն էլ էր անում որ ես նրան՝ պալման քանդել առաջարկողին՝ բաւարարութիւն տամ, փող տամ, հասկանում էք—ալդ նոյն մարդն է, որ չեսու ալնքան աղմուկ պիտի հանէր «Մշակ»-ում թէ ինչու ես «Մուրճ»-ի № 1-ի առաջնորդող չօղւածումս, ալսպէս ասած՝ շնորհակալութիւնների չեմ չափնել նորա ինձ իբր թէ չեսու տւած բաւարարութիւնների համար...

Ես պատասխանեցի նրան որ թող նամակներով իրար հետ բանակցենք և բաժանենք՝ երբ համաձայնութիւն կը կաշանալ: Եւ ես իմ կողմից դնում էի իմ պալմանները: Բալց նա ուզեց ալսպէս՝ բաժանել վկաների առաջ: Եւ ես համաձայնեցի:

Եւ ահա մենք ունեցանք խօսակցութիւն վկաների առաջ հոկտ. 16-ին և 18-ին: Առաջնում նորա հարցմունքին թէ ինչ պալմանով ես կը համաձայնիմ որ ազատեմ նորան պալմանի պարտաւորութիւններից, ես պատասխանեցի առաջարկով որ «Մուրճ»-ի 1894 թւականի դեֆիցիտի համար երաշխատոր լինի (կամ կանխիկ դրամ տալ) բալց միայն մինչ 1500 ռուբլու, հետևապէս ետ տտանալ մնացորդը եթէ դեֆիցիտը պակաս լինի, իսկ աւելիին համար նա պատասխանատու չլինի:

Ներկալ եղողները նոքա, ում կարող էին թանգ լինել «Մուրճ»-ի չահերը, ինձ վկայեցին պահանջիս չափաւորութիւնը:

Վկաներն էլ ինքը պալման քանդել ուզողն էր հրաւիրել, ահա նոքա՝ պ. պ. Անադչեան 3., Բալադեան Սամուէլ, Բալինջադեան Վեորդ, Բարխուդարեան Յովհաննէս, Բարխուդարեան Արշակը, (որ մինչ վերջ չմնաց), Թառապեան Սեդրակ, Վարդանեան Գրիգոր—պ. Յ. Թ.-ցի տանը:

Պ. Վարդազարեանցը խոստացաւ պատասխանել հետևեալ անգամ: Եւ ալդ հետևեալ անգամալ ժողովում, ուր ներկալ էին վերոյիշեալները, բացի երկրորդից և վեցերորդից, նա չափնեց թէ չի ընդունում իր

առաջարկը: Այն ժամանակ ես չալտարարեցի ամենքի ներկայութեամբ, թէ, որ ալդպէս է, տէք ինձ «Մուրճ»-երը և ես ալ ևս ձեզնից ոչինչ չեմ պահանջում, ոչ տուգանք, ոչ որ և է ալ ապահովութիւն: Դորանով և վերջ էր տրւած մեր համաձայնութեանը:

Փառաւոր կերպով իմ ալդ չալտարարութիւնը անելուց լետով խնդրեցի թուղթ ու զրիչ՝ ալս մեր բաժանման արձանագրութիւնը կազմելու համար: Եւ անս իմ ալդ համարձակ չալտարարութիւնից տպւած վկաներից միան քաշելով՝ իմ նախկին նոտարական ընկերը մի փոքր խղճի խալթոց զգաց և երևի ինձնից լետ չմնալու համար՝ բարուք դատեց ասելու թէ զեղջում է իմ պարտքից (3500 ո.) 1500 ուրբլի, թողնելով 2000 ուրբլի վճարելի ըստ հին պայմանի՝ 1895-ին դեկտեմբերից մինչև 1899 թ. իւր տոկոսներով: Ես ընդունեցի ալդ, բայց ոչ իբր բաւարարութիւն, որովհետեւ ես վճուել էի ազատել նորանից նաև առանց կոպէկ պահանջելու, ինչպէս վերը բացատրեցի: Նա կարող էր իմ պարտքից նաև ոչինչ չզեղջել—և այնու ամենաճիւղ մեր բաժանումը կատարւած-պրծած էր: Իսկ որ նա ապագայ պարտքերիցս զեղջ է արել, նորան ալդ բանի համար ոչ միան հարկադրող ալ և խնդրող կամ առաջարկող չկար և ալ զեղջը բնաւ չի կարող բաւարարութիւն, այն էլ՝ լիովի բաւարարութիւն համարել իմ սկզբում նրան արած առաջարկին:

Որ անցքը ալդպէս է պատահել, դորան պատրաստ են վկայել վկաներից նոքա, որոնք հակաճառողիս պարծենկոտ նամակները «Մշակ»-ում կարդալով՝ ինձ մօտ եղել են—պ. պ. Գրիգոր Վարդանեան և Գէորգ Բաշինջաղեան:

Ես դիտաւորութիւն չեմ ունեցել ալս դործը հրապարակ հանելու, բայց նախկին ընկերս մամուլի մէջ լանդգնել է պնդել թէ իբր իմ «համաձայնութիւնը ձեռք բերելու համար նա ինձ լիովի բաւարարութիւն է տւել նաև 1894 թւականի համար»: Եւ որովհետեւ նրա ասելով («Մշակ» № 22) ալդ բաւարարութիւնը կապեցել է ի միջի ալդոց 1500 ուրբլի պարտքիցս զեղջելում, դուրս է գալիս որ իմ համաձայնութիւնը իբր թէ նա ձեռք է բերել զոհաբերութիւնների անելով: Արդ, ես ասում եմ որ ես իմ համաձայնութիւնը տւել եմ որ անչարմար ընկերս ինձնից հեռանալ առանց պահանջելու ոչ ապահովութիւն 1894 թւականի դեֆիցիտի համար, ոչ տուգանք և ոչ որ և է կոպէկ զեղջ իմ պարտքիցս: Ինձ համար միակ բաւարարութիւն կարող էր լինել՝ 1894 թւականի դեֆիցիտի դէմ «Մուրճ»-ը ապահովելը—մի բան, որին չը համաձայնեց իմ նախկին ընկերը, թէ և ինձնից էր կախւած հարկադրել նրան շարունակել պալմանով գործելը և դորանով տուժել տալ նրան ոչ միայն 1500 ո. կամ պակաս, ալ 2000, 3000: ուրբլի Բաց ես չպնդեցի իմ սկզբնական առաջարկիս վրալ միմիայն նրա համար որ ալ ևս ալդպիսի անչարմար

կոմպանիոն չունենամ: Ինձ համար ականերն էր որ նորա ընկերութիւնը թէկուզ միայն եւս մի տարու՜մ փնտրակար կը լինէր «Մուրճ»-ի համար, եւ աւելի լաւ համարեցի անապահով վիճակի ենթարկուել ինքս իմ «Մուրճ»-ով քան ալդպիտի հարեանութիւն հարունակել տանել:

Մի հարց եւս աւելորդ չէ. ալդ ինչպէս պատահեց որ պալման քանդել ուզողը նամակով ինձնից բաւարարութիւն էր պահանջում, իսկ լեւտոյ առանց իմ պահանջման, ինքն էր ինձ զիջանում պարտքիցս մի մաս զեղջերով: Շատ պարզ է լուծում ալս խնդիրը. երբ նա միայն իւր սեփական խղճով էր գործում—նա մտադիր էր ինձ սնանկացնել. իսկ երբ ալդ նոյն խիղճը հինգ հոգի վկաների առաջ պիտի արտապատէր—նա ալ երգ սկսկեց երգել—թէն ալդ երգն էլ իմ ուզածը չէր: Եւ դորա համար է, ալդ տեսակ խղճմտանք ունենալու համար է, որ նա ինձնից ալսօր պահանջ է անում որ խոստովանեմ նորա մեծահոգութիւնը...

Թէն ալս բոլոր իրողութիւնների հանրածանօթ դարձնելը միայն պատիւ կարող էր բերել ինձ, բայց ես աչնու ամենաչնիւ չուղեցի զբաղեցնել հասարակութիւնը մի ալսպիտի ներքին խնդրով: Ահա ինչու ես, «Մուրճ»-ի լուսնար ամսի տետրում, առանց մտնելու մեր նախկին ընկերութեան լուծուելու եւ բաժանման ակտի ընդհանուրին չվերաբերող մանրամասնութիւնների մէջ, հարկ դատեցի գիմել հասարակութեանը, չալտնելով միայն որ 1894 թւականի համար «Մուրճ»-ը ալս ապահովում ինչ չունի, քան ինչ կարող է տալ բաժանորդագրութիւնը: Հեռաւոր շրջաններում, իրօք կարող էին կարծել թէ «Մուրճ»-ը ապահովւած է նախկին նոտարական կոմպանիոնիս երաշխաւորութիւնով: Ես ուրեմն սլարտաւոր էի ասելու, որ երեք տարով կապած պալմանը ալս եւս գոյութիւն չունի 1894 թւականի համար. ես չալտնեցի թէ ալդ պալմանը, որ կապւած էր երեք տարով տեեց միայն երկու տարի, «ցանկութեամբ իմ նախկին ընկերով, որ կրում էր հրատարակիչ անունը, եւ իմ համաձայնութեամբ»: Բայց անհրաժեշտ էր աւելցնել որ ալդ համաձայնութիւնով «Մուրճ»-ը ապահովւած չէ 1894 թւականի դեֆիցիտից:

Ինձ եւ «Մուրճ»-ի ընթերցողների եւ համակրողների համար հասարակական կարեորութիւն ունեցողը միմիայն ալդ հանգամանքն էր եւ ոչ թէ աչն թէ «Մուրճ» ից դուրս մենք ինչ մասնաւոր հաշիւներ ունենք իրար հետ: Որ եւս Վարդաղարեանցին փող եմ պարտ 1896—99 թւականներին վճարելի—դա ում ինչ դործն է. ես փող պարտ եմ ոչ միայն Վարդաղարեանցին, ալս եւ ուրիշներին—նոյն իսկ միայն «Մուրճ»-ի շնորհիւ իսկ իմ նախկին նոտարական կոմպանիոնը ալսօր անպատճառ ուզում է իւր ամենքին չալտնել թէ ես նրան փող եմ պարտ, լուութեան տալով

ալն, որ հէնց գլխաւորապէս ալդ պարտքի շնորհիւն է, որ նա արժանացաւ ինձ ընկեր կոչուելու, և անպատճառ ուզում է չափոնել թէ նա իմ պարտքիցս մի մաս զեղջիլ է: Եւ բաւական չէ որ մի մասնաւոր դրամական խնդիր նա ալսօր հրապարակ է դուրս բերում, այլ և Վարդապետեանցը աշխատում է խաւրդախել գործի էութիւնը, հակառակ ճշմարտութեան պնդելով թէ նա ալդ զեղջիլ արեւ է իբր թէ նրա համար որ ես համաձայնութիւն տամ մեր միջի պայմանը քանդելուն: Թէն եթէ ես ալդպիսի մի զեղջիլ պահանջած էլ լինէի, դա կը լինէր մի շատ չափաւոր պահանջ, բայց ինչու դալ ու սուտ ասել: Ես արդէն պատմեցի թէ երբ նա իմ առաջարկս՝ «Մուրճը» 1894 թւականի զեֆիցիտից ապահովելու նկատմամբ՝ չընդունեց, ես չափոնեցի թէ ալլ ևս ոչինչ դրամական բաւարարութիւն չեմ ուզում նրանից և որ նա, ետ տալով ինձ միաւն «Մուրճ»-ի աւելորդ օրինակները, աչտուհետեւ ազատ է: Վարդապետեանցը կարող էր իմ պարտքիցս որ և է մաս զեղջիլ կամ չզեղջիլ—ալդ միեւնոյն էր մեր համաձայնութեան համար, որը արդէն կապարած էր առանց ալդ զեղջիլի, և առանց որ ես գիտեցած լինէի թէ նա մտադրութիւն ունէր ալդպիսի մի զեղջիլ անելու: Ես ձեր արած զեղջիլ մասին փշտատակութիւն չեմ արել «Մուրճ»-ի իմ առաջնորդը չօգտածի մէջ, գտնելով ալդպիսի փշտատակութիւն ոչ իւր տեղում և իմ շօշափած խնդրին չլերաբերող, իսկ դուք ինչով էք արդարանում որ իմ մասնաւոր դրամական գործերը հրապարակ էք հանում, աչն էլ խաւրդախելով պատմութիւնը. ինչու էք ստաբար պնդում իբր թէ ես ձեզնից պարտքի զեղջիլ պահանջած լինեմ և աչն էլ իբր գին իմ համաձայնութեան՝ պայմանը քանդելու համար:

Եթէ ալդքան մեծ փափազ ունէք մեր անցած գործերի մասին հրապարակով խօսելու, ինչու չէք խոստովանում որ, միաւն թէ ձեզ նման նոտարական ընկերից ազատեմ՝ վճռողական բոսլէին ես ձեզնից ոչ մի դրամական բաւարարութիւն չեմ պահանջել?

Վկաների առաջ դուք համարձակութիւն չունեցաք կրկնել աչն սպառնալիքը որ ինձ նամակով անում էիք: Եթէ դուք որ և է լաւ բան արել էք միմիաւն վկաների շնորհիւ—պատիւը ձեզ չի կարող հասնել, պարոն: Ալդպիսիները գոնէ պէտք է խելք բանեցնեն իրանց լեզուն կարճ պահելու. իսկ դուք ընդհակառակը երկարացնում էք:

Մի բնորոշ մանրամասնութիւն: Վկաների առաջ հոկտ. 16-ին 1893 ես առաջարկել էի հեռանալ ցանկացող նոտարական ընկերից մինչ 1500 ռուբլու երաշխատութիւն տալ 1894 թւականի համար: Իմ ալդ առաջարկը նա մերժեց 18-ին հոկտ. նոյնպէս վկաների առաջ: Պատճառը նա ալսպէս պարզեց, թէ իբր եթէ նա 1894 թւականի «Մուրճ»-ի զեֆիցիտը իւր վրալ առնելու լինի—էլ ինչու է ալժմ, 1893 թւականին, բաժանել

ուզում. իբր արդ զէպքում նա օգուտ չի ունենալ բաժանելով: Պարզ է՝ ուրեմն որ պայմանը նա քանդել էր ուզում շահելու համար, աչխնքն չկրելու համար աչն վնասը, որ կարող էր կրել եթէ ըստ պայմանի ընկեր մնար ինձ մի տարի ես? Այլ իրա համար նպաստաւոր կերպով բաժանելը աչսօր նա ուզում է հռչակել իբր «լիուլի բաւարարութիւն»:

Մի ինձ էլ հարցրէք...!

Մի հարցնող լինի թէ ինչն էր զրդում իմ նախկին նոտարական ընկերիս բանակուիւ սկսել ինձ հետ աչն ժամանակ, երբ նորա վրայ չարձակուող չկար: Ասել թէ մենք բաժանել ենք պայմանաժամից առաջ մէկի ցանկութեամբ և միւսի համաձայնութեամբ—չի նշանակում չարձակել, ասել թէ «Մուրճ»-ի ապահովութիւնը միմիայն իւր բաժանորդներին թւիցն է կախած—նույնպէս չէր նշանակում չարձակել նախկին ընկերիս վրայ: Իսկ դորանից դուրս բան ես չէի ասել «Մուրճ»-ում: Մի բան կար, ուրեմն, որ նորան դրդում էր ինձ հետ բանակուել, մէջ տեղ գցելով հաշիւներն ինչորոշներ—աչն էլ ծուռ լուսաբանւած, մանաւանդ որ դորանով նա չուս ունէր բանակուի բուն նպատակից դուրս՝ հասարակութեան առաջ կամաւոր զոհաբերողի անուն վաստակել:

Այո, արդ «մի բանը» կար—և խնդրի ամբողջ ծանրութիւնը հէնց դորա մէջն է: Այլ ոչ միայն խնդրի բուն էութիւնը, այլ և հետաքրքրական կողմը դորա մէջն է, որովհետև դորանում խառն է ոչ միայն պ. Վարդապետեանցը, այլ նորանից աւելի՝ արդ բանում դեր են կատարում ուրիշները, իմ անձնական չարեկամները, հակառակորդները, թշնամիները: Այլ որովհետև դոցա անունը լեգէոն է, կարող է շատ ուրեմն երևակայել թէ նոքա ինչ փոքեր են դրած եղել իրար վրայ: Խլել ինձնից «Մուրճ»-ը—մէկ կողմից, վնասել «Մուրճ»-ին—միւս կողմից, անձ թաքուն նպատակները արդ բոլոր խաղերի թէ ինչպէս են արդ երկու նոյն իսկ իրար հակառակ ցանկութիւնները միացել—դա ես կը պարզւի աչս րոպէին:

Այս արդէն մի անգամ չիշատակել եմ, որ պ. Վարդապետեանցը իւր առաջին զիմումով դէպի ինձ՝ գրաւոր առաջարկել էր որ ես ամբողջապէս իրան զիջեմ «Մուրճ»-ը, ես դառնալով «գլխաւոր աշխատակից և խորհրդատու», իսկ նա՝ «Խմբագիր-հրատարակիչ»: Առաջարկւած էր նաև առատ վարձատրութիւն: Այս վերագրել էի արդ առաջարկութիւնը նորա միամտութեանը—և իրօք նա առանց այլ և այլի արդ առաջարկից չեմ կ'սնդնեց, համաձայնելով ինձ հետ կապել միայն ելմտական մասի համար: Պարմանը կապելուց չեմտոյ ամբողջ ամիսներ չարունակ ես հէնց աչնպէս էլ համոզւած էի որ նոտարական ընկերս ինձ միայն դրամով օգնել է ուզում, և որ նա ուրիշ չաւանդութիւններ չունի: Յետոյ բանից դուրս եկաւ այլ ես սխալ-

ւած եւմ եղել, նա աշխատակցել էր ուզում: Աւելի լաւ, եթէ նորանից պիտանացու աշխատակից դուրս գալ գոնէ թեթեւ բաժինների համար—մտածում էր ես: Բայց նա աղաչէս չէ մոռա՞ծում եղել, նա ոչ միայն ուզում էր աշխատակցել, այլ և մի տեսակ ձախ ունենալ խմբագրութեանս մէջ, որի զօրութեամբ ես հարկադրւած լինեմ տպել «Մուրճ»-ում նաև աջնպիտի բաներ, որոնց դէմ եմ ես, որոնց ես անհամ եմ համարում կամ ուղղակի վատ ու վնասակար: Եւ ասա իմ նոտարական ընկերը, հազիւ մի երկու ամիս անցած աչն օրէց, երբ «հրատարակիչ» տիտղոս էր սկսել կրել, նորա մի ջօղւածի առիթով որ ես իբրև անպէտք բան իրան չեմ էի տւել, սկսում է մեր նոտարական պալմանի մէջ քրքրել տեսնելու համար, չկալ արդեօք որ և է կէտ, որից նա կարողանալ բռնել և ինձ աղապիտով ստիպել տպելու իւր ջօղւածը: Քրքրում է և, փոխանակ զարմանալու իւր ալարքի վրայ, փոխանակ խոտովանելու որ ոչ մի իրաւունք չունի իմ խմբագրական գործին միջամտելու, նամակով, մարտի 14-ին 1892 թ. լալսնում է թէ «Աս երէկ կարգացի մեր նոտարականը և, իսկն ասած, ճիշդ որոշւած չգտալ»:

Տեսնելով որ նոտարական պալմանով նա աղապիտ իրաւունք չունի, իմ նոտարական ընկերը սկսում է ուրիշ հնարքների դիմել, և նա, նոյնպէս նամակներով, սկսում է ինձ համոզցնել թէ իբր նոտարական պալմանից դուրս մեր մէջ պէտք է լինի նաև բարոյական պալման: Եւ ի հարկէ, աղ կեղծ-բարոյական պալմանի զօրութեամբն է, որ նա ուզում էր հիմնել մի դրական իրաւունք՝ «Մուրճ»-ում տպել ինչ իրա քէֆը կը տար: Եւ, սպասելով որ ժամանակով «խմբագիր» էլ կը դառնալ, առաջմ նա սկսում է պահանջել, որ ես նորան իմ «օգնական» ընդունեմ: «Միթէ Գուք» գրում էր նա, կարծում էք որ ես սրանով աղբսում եմ ինձ Զեր օգնականը դարձնել: Բնաւ.—եւ պահանջում եմ աղբ: (Նոյն նամակ առ 14 մարտի 1892 թ.):

Աղապիտի լանդգնութիւններին եւ կարող էի նրան պատասխանել իւր տեղը ցուց տալով: Ուրիշ կերպ գլուխ դնել հետը անկարելի էր:

Այլ դեռ բաւական չէ: Հրատարակիչ անունը նորան չլացրել էր աչն, քան որ նա սկսել էր արդէն կատարեալ սեփականատէր զգալ, աչնպէս որ ինչպէս եթէ պալմանական հրատարակիչ չլինէր՝ նա սկսել էր արդէն օգի ամրոցների կառուցանել և «հրատարակիչ» տիտղոսից եզրակացութիւններ դուրս բերել, փոխանակ նոտարական պալմանից եզրակացութիւններ դուրս բերելու: Եւ ասա նա սկսում է ցուել որ ինքը խմբագիր չէ, սկսում է ափսոսալ որ իբր թէ նա ինձ զիջել է խմբագրութիւնը, միւսչեռ նա ինձ ոչինչ չէր զիջել, այլ ընդհակառակը միայն ևս էի զիջել նրան որոշ իրաւունքներ (փողեր ստանալու)՝ կապած որոշ (նոյնպէս դրամական) պարտաւորութիւնների հետ: Կապիտալիստի

գոռողութիւնը տեսէք թէ որ աստիճանի կարող է հասնել, որ ձեզ զիջած է համարում նոյն իսկ աչն բանը ինչ որ երբէք ունեցած չէ: Թերթ չէր ունեցել և ոչ էլ գնել էր, խմբագիր էլ չէ եղել, անչափ տեղից եկել-կապուել էր ինձ հետ իմ սեփական գործի վնաս-օգուտի մասին որոշ պայմաններով—և ահա մի քանի ամիսներից չետոյ արդէն սկսում է երևակայել թէ նա ինձ զիջել է աչ ու աչն իրաւունքները!!! Մի խօսքով նոտարական ընկերս սկսում է իրան զառանցանքների տալ, մանաւանդ որ նա արդէն իւր գլխում նկարել էր մի աշխարհի պատկեր հալ ամապրի խմբագրի, որով, լսեցէք՝

«Խմբագիրը պարտաւոր չէ անպատճառ առաջնորդ ողն երգերը կարողանալ...»

Ergo—ուրեմն... ուրեմն... ընթարցողը ինքը կարող է հարկաւոր եզրակացութիւնն անել, թէ դորանով ինչ էր ուզում ասել իմ նոտարական ընկերս:

Այսպիսով նա դեռ ևս 1892 թւականի սկզբներին ինձ սպառնում էր երբ երեք տարւալ պայմանաժամը կը լրանալ—ինչ նոր պայման է առաջարկելու ինձ: Եւ այդ ահնարկի պարզութիւնը չառաջանում էր նրանից, որ նա համոզւած էր թէ ես, ի նկատի ունենալով «Մուրճի» դեֆիցիտները և իմ անձնական անապահովութիւնը՝ անպատճառ կ'ենթարկեմ կապիտալիստի պահանջներին:

Բայց աչն ինչ իմ նոտարական ընկերը մտադիր էր սկզբում միայն պայմանաժամը լրանալուց չետոյ անել, այդ նոյնը իմ անձնական հակառակորդները ցանկացան որ անւի պայմանաժամը լրանալուց մի տարի առաջ, որպէս զի ես, իբր անպատրաստ աշխարհի անակնկալ դէպքի—աւելի ևս հեշտութեամբ ենթարկեմ սպառնացող կապիտալիստի քէֆին:

Մեր բաժանման գործի հէնց սկզբին նոքա պէտք է սակաչն համոզելին որ ևս կարող եմ շատ բան ոտի տակ տալ բայց ոչ «Մուրճ» ի պատիւը. և աչքքան խորամանկութեամբ սկսած գործը պէտք է վերջանար առանց որ նոքա իրանց դիտաւորութեանը հասնէին...

Բայց իմ նախկին նոտարական ընկերը քաշտողներից չէր. մեր բաժանւելուց չետոյ նա դեռ երես ունեցաւ ինձ մօտ երկու հոգի (մէկը պ. Գ. Վ. ին) ուղարկելու, խոսնելու համար որ նա պատրաստ է նոր պայման կապելու:

Չէ որ ախար հէնց դորա համար էր աչք բոլոր խարդաւանքը սկսւել: Գորանով էլ շատ լաւ բացատրւում է թէ ինչու պայմանը խախտւելու համար իմ պահանջած երաշխաւորութիւնը 1894 թ.-ի դեֆիցիտի համար նա չուղեց տալ. չէ որ հակառակորդիս նպատակն է եղել զգալ տալ իմ անապահովութիւնը որ ստիպւած լինեմ համաձայնել նոր պայման կապելու!...

# ՆԱԽԹԱՐԴԻԻՆԱՐԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՆԵՐԿԱՑ ՎԻՃԱԿԸ

ՖԻԴԻՈՆ ՄԱՐԴԱՆԵԱՆԻ

## IV

Մեր անցեալ համակներից՝ ընթերցողը արդէն գիտէ, որ Բագրի կերտ-սինազործատէրերի միութեան պալմանագրերը պատրաստ էին: Թէև նրանք բաժանւած են երկու բանակի, բայց ալդ ոչնչով ընդհանուր միութեան գործին չէ մնասում, որովհետև ալդ երկու բանակներն են պիտի ունենան պալմանագիր, որով փոխադարձաբար պիտի պարտաւորւին երբէք իրար դէմ չմրցել, ալ ընդհակառակը միշտ ըստ կարելոյն չափ պիտի աշխա-տեն նպաստել ընդհանուր գործի լաջողութեան: Ալդ պալմանագիրը, ինչ-պէս լսում ենք, արդէն պատրաստ է և վերջնականապէս խմբագրելու համար ալ օրերս պիտի ուղարկւի Պետերբուրգ: Պալմանագիրը քննելու ժամանակ ներկայ լինելու կէրոսինազործատէրերի կողմից ընտրւած են պ. պ. Աղ. Մանթաշեան և Գ. Լիանոզով:

Ուրեմն միութեան հակառակ ոչինչ չկար և ըստ երևոյթին ամեն ինչ կարգին էր, մնում էր միմիայն պալմանագրերին գործնականութիւն տալ և միութիւնը իրագործւած համարել: Որքան չղտեր ունէին դրած ալդ միութեան վրայ և փալլուն ապագայ էին սպասում նրանից մեր վաճառականները: Աւագ... Անցեալ դեկտեմբերի 14-ին Նոբել Ֆիրմի գլխաւոր կառավարիչ՝ պ. Բելլիամինը Պետերբուրգից հետեւալ հեռագիրը ուղարկեց միութեան առաջին խումբի կարգադրիչ մասնաժողովի անդամներին. «Մի-նխտրութիւնը վճռական կերպով մերժեց Բագրից մինչև Բաթում նաւ-թալին արդիւնքների համար Ֆրախտի պակասադրութիւնը: Ներդրական վաճառանոցներում տիրող գնից ալսուրալ կուրսերով Բաթում իւրաքարչիւր փութի համար ստացւում է միմիայն 15 կոպ., այսինքն աւելի պակաս քան Ֆրախտը: Ալդ պատճառով Նոբել ընկերութիւնը ալ ևս արտասահ-մանում կերոսին վաճառելը իր համար ձեռնադր չէ գտնում: Հոկտեմբերի

26-ին կազմած պալմանագիրը անիրագործելի է դառնում և ընդհանուր ժողովին մնում է միմիայն նրան քանդելը»:

Յարգելի ընթերցող, ինչպէս էք կարծում, տարօրինակ քաղ չէ արդեօք այդ պ. Բելիամինի կողմից, աչն պարոնի, որը առաջինն է եղել միութեան գաղափարը և նորա կարեւորութիւնը մեր կերտսինագործատէրերին քարոզողներին, որը միութիւն ստեղծելու համար աշխատում էր աւելի քան տասը տարի և ոչ մի միջոց չէր խնայում: Ինչպէս տեսնում էք միութիւն ստեղծելու համար շատ մարդիկ են աշխատել և շատ պրոէկտներ առաջակել, սակաչն սրանցից ոչ մէկը չաջողութիւն չէ ունեցել: Վերջապէս հազիւ կառավարութեան աջակցութեամբ այդ փալիալած միտքը գործնականութիւն ստացաւ, աչսօր այդ նոցն իսկ պ. Բելիամինը, որը կերտսինագործատէրերի ազատելը ներկայ վիճակից միմիայն միութեան մէջ էր տեսնում, չանկարծակի մի ալիպիսի հեռագիր է ուղարկում կերտսինագործատէրերին:

Մեր գրիչը շատ թուլ է, նա չի կարող արտաւայտել աչն սարսափելի և ծանր տպաւորութիւնը, որ գործեց այդ հեռագիրը մեր կերտսինագործատէրերի վրայ: Նրանք կատարելապէս չմեկ, գլուխները կորցրել էին, չգիտէին ինչ անել: Նրանց թւաց թէ աչն լուսատու աստղը՝ կերտսինագործատէրերի միութեան ստեղծելը, որը երևացել էր Բագլաչ հորիզոնում, կարծես մօտ է խաւարելուն: Մութ և խաւար ամպը կարծես ուղում է ծածկել նորան, թողնել այդ խեղճերին դարձեալ մութ անապատում չուսահատ դրութեան մէջ և մատնելով նրանց ճակատագրի ծանր հարւածներին:

Արդեօք ինչ է նշանակում տասնեակ տարիներ մի սկզբունք պաշտել, փալիալել և չանկարծ մի բոպէի մէջ ամեն ինչ խորտակել՝ մոռանալով նոցն իսկ իր կրած նեղութիւնները: Այո, բոլորովին անսպասելի էր Պետերբուրգից մի ալիպիսի հեռագիր, մանաւանդ պ. Բելիամինի ստորագրութեամբ:

Այժմ փորձենք որոնել այդ հակասութեան պատճառները.

Ընթերցողին արդէն չալտնի է, որ միութեան պալմանագիրը մշակւած և խմբագրւած է այդ նոցն Բելիամինի անմիջական մասնակցութեամբ: Ահնաեղ մտքրած են աչնպիսի լօղւածներ, որոնք խօսում են միմիայն լօգուտ Նորելի և Բոդչիլդի և որոնց տեղ տալը ոչ մէկը միջակ կամ փոքր գործարանատէրերից ի սրտէ չէր ցանկանալ: Բալց և աչնպէս, նրանք տոխլւած էին ստորագրել մի ալիպիսի պալմանագիր, որովհետեւ առանց Նորելի և Բոդչիլդի համաձայնութեան միութիւնը իր նպատակին հասնել չէ կարող:

Մենք չենք կասկածում, որ Նորելի և Բոդչիլդի պահանջմամբ են պալմանագրի մէջ մտցրած աչն լօղւածները, որոնց հիման վրայ՝ նախ մեր



հարցն էլ անշահաւէտը շահաւէտ դարձնելու մէջն է կաշանում: Թէ ներկայումս արտասահմանեան առևտուրը բացի վնասից ոչինչ մեզ չէ տալիս, ալդ ամբողջ աշխարհին չափնի է, ուրեմն չիշեցնելու կարիք չկայ: Բայց չպէտք է մոռանալ ահա հին ճշմարտութիւնը, թէ ուր միութիւն, համերաշխութիւն կալ, լինի սա հասարակական դործ, առևտրական ձեռնարկութիւն և ալն, ահաեղ դործը միշտ արդիւնաւէտ կը լինի: Ուրեմն եթէ ներկայումս արտասահմանեան առևտուրը անշահաւէտ է, ապազաւցում, ահա էլ շատ մօտիկ ապագայում, եթէ միութիւնը օրինաւոր կերպարանք ստանալ և սկսի իր գործունէութիւնը, կարող է լինել վերին աստիճանի շահաւէտ:

Ապա ուրեմն ի նշարիս շահաւէտ կոմբինացիաներ նա ինկատի ունի: Անկեղծ խոստովանում ենք թէ և ալդ հարցը մեր մէջ ծագեց, սակայն պատասխանել դժարանում էինք: Ուստի մենք զիմեցինք գործին աւելի տեղեակ և հմուտ մարդկանց, որոնք ալդ քալլը ահա թէ ինչպէս են բացատրում:

Հարաւսելին Ռուսաստանում քարէ ածուխի սաստիկ պակասութիւն է զգացւում: Ալդ բանին օգնելու համար առաջարկած բազմաթիւ միջոցներից՝ կառավարութիւնը գլխաւորապէս կանգ է առել երկրին ալդ մասին նաւթամիացորդով մատակարարել ու առաջարկի վրա՝ պակասցնելով ալդ ապրանքի համար երկաթուղիների ֆրախտը: Ալդ անել ոչ մէկը մեր կերտինագործատէրերից, բացի Նոբելից, չէ կարող, որովհետեւ Անդրկովկասեան երկաթուղու, Սև ծովի հիւսիսային նաւահանգիստների բոլոր պահեստները և ահա միակ երեք շոգենաւերը, որոնք չատկացրած են միմիայն նաւթամիացորդ արտահանելու համար Բաթումից Սև ծովի հիւսիսային նաւահանգիստները կապալով են գտնւում Նոբելի ձեռքին: Ահա թէ ինչպիսի անվերջ օգուտների աշխարհ է բացւել Նոբելի առաջ: Ահա թէ ինչն է ստիպում Նոբելին մի ալդպիսի հեռագիր ուղարկել Պետերբուրգից:

Եւ միթէ հարկաւոր է միութիւնը քանդել լոկ նորա համար, որ ներկայ հանգամանքներում Նոբելին ձեռնտու չէ միութեան հետ դործել: Չէ որ ալդ բանը ներքին առևտրին է վերաբերում և ոչ արտասահմանեանին: Բայց և ահապէս միութեան պալմանագրի քանդելը ահաքան էլ հեշտ չէ, ինչպէս կարծում է Նոբել ֆիրման:

Ալդ բոլորը պարզելուց լետոյ կերտինագործատէրերի կատաղութեան շտի ու սահման չկար Նրանք հէնց հեռագիր ստանալու միւս օրը, դեկտեմբերի 15-ին մի ընդհանուր ժողով հրաւիրեցին: Ժողովում երկար խօսելուց և Նոբելի հասցէով անթիւ հաշուանքներ թափելուց լետոյ՝ որոշեցին հեռագիր ուղարկել ֆինանսների մինիստրին: Ալդ հեռագրի համառօտ բովանդակութիւնը աւելորդ չենք համարում առաջ բերել: Հեռագրի

մէջ նախ չալտնում են, թէ ինչ սարսափելի ներդործութիւն ունեցաւ Բելիամինի հեռագիրը և ինչից զրդած նրանք խնդրել են Փրախտի պակասացնելը, և ապա ասում են. «Նաւթարդիւնաբերութիւնը մինչև այժմ չդիմելով ոչ մի կողմնակի հովանաւորութեան և խնամատարութեան՝ ինքն իր մէջ էր գտնում ուժ՝ իր գոյութիւնը պահպանելու և իր զարգացման համար: Չծանրաբեռնելով պետական բիւջետը և չպահանջելով կառավարութիւնից առանձին հոգատարութիւն, նա միշտ տւել է պետական գանձարանին մեծամեծ օգուտներ, միևնույն ժամանակ ինքը գտնւել է մի շարք աշնպիսի ծանր հանգամանքների մէջ, որոնք արդելում ու նեղ դրութեան մէջ են դնում նրա զարգացումը: Ալգալիսի հանգամանքներն են՝ ակցիզ սահմանելը՝ սկզբում 40 կոպ., չետու 60 կոպ., կերասիւնագործատէրերին պատկանեալ վաղոճների ստիպողական կերպով առնելը՝ տալով նրանց բոլորովին ազատ գներ, և վերջապէս մի աշնպիսի տարիՓ նշա. նակելը, որը չորս անգամ աւել է իւրաքանչիւր փութի արտահանորթեան իսկական արժողութիւնից և նոյն իսկ ասլրանքի վաճառման գնից: Ալգալիսի անձեռնտու հանգամանքները մի կողմից և ամերիկացիների մրցումն միւս կողմից մեզ հասցրել են արդէն անդունդի ծալրին: Ահա ալգ պատճառով մենք ներկալ թւականի մարտ ամսին նաւթարդիւնաբերողների ժողովի խորհրդի միջոցով դիմել էինք Փրնանսների մինիստրութեան՝ Փրախտի պակսեցնելու համար: Մինիստրութիւնը ալգ պահանջը բոլորովին իրաւացի գտնելով՝ չալտնեց թէ Փրախտի պակսեցնելը ներկալ հանգամանքներում, երբ արդիւնաբերողները բաժան-բաժան են գործում, միտք չունի՝ ուստի ցանկալի է, որ նաւթարդիւնաբերողները միանալով՝ կազմակերպեն արտասահմանեան առևտուրը և ապա կր պակսեցնել Փրախտը, ապա թէ ոչ ալգ անելը կը նպաստի մեր կերոսինը աւելի էժան գներով վաճառելուն: Իսկ այժմ երբ ընկերութիւնը կազմւած է, մենք կրկին անգամ դիմում ենք ձերք բարձ գերազանցութեան՝ խնդրելով շարունակել ձեր բարձր հովանաւորութեան սակ սկած և իրազործած գործը՝ գոնէ ժամանակաւորապէս պակսանցելով Փրախտը: Հարկաւոր ենք համարում աւելացնել մինիստրութեան մէջ տեղի ունեցած ենթադրութիւնը՝ արհեստական կերպով պակսացնել արտահանելիք կերոսինի քանակութիւնը՝ չատկացնելով վաղոճների մի մասը նաւթամիացորդը արտահանելու դէպի Սև ծովի հիւսիսային նաւահանգիստը, մենք նախ հակառակ ենք գտնում միութեան նախագծած նպատակներին և երկրորդ՝ մի ալգալիսի ձեռնարկութիւն օգտաւէտ կը լինի ոչ թէ ամբողջ արդիւնաբերութեան, ալ միակ մի ֆիրմայի համար, որի ձեռքին է գտնւում փոխադրական միջոցները:

Ալգ միևնույն ժողովում միաձայն վճռեցին միութիւնը կաւացած և պարտաւորեցուցիչ համարել աշն բոլորի համար, որոնք արդէն ստորագրել են պայմանագիրը: Միութեան պայմանագրին գործնականութիւն սլիտի տրւի

Նաև աչն ղէպքում, եթէ մինխտրութիւնից ֆրախտի պակասցնելու մասին իսկապէս բացատրական պատասխան ստացւի: Սակաչն աչք մասին որոշ դեռ ոչինչ չալտնի չէ, լուսահատուելու կարիք չկայ, մանաւանդ որ Պետերբուրգից մասնաւոր կերպով ստացած տեղեկութիւնները բոլորովին հերքում են պ. Բելիամինի հաղորդած լուրը:

Մեր նտխորդ նամակում մենք մոռացել էինք հաղորդել, որ կերոսինադործատէրերի 1) խմբի կարգադրիչ մասնաժողովի անդամներից երեքը արդէն ընտրւած էին Պետերբուրգի ժողովներում: պ. պ. Շիբասեւ, Ղուկասեան և Յովնանեան, իսկ մնացեալ երկուսը ընտրւեցան ալտոնդ՝ Բագու՝ 18-ն ղեկտեմբերի ժողովին: Ընտրւեցան պ. պ. Գ. Մ. Արաֆեւեան և Մուսա Նապիււ: Ընտրութիւնը վերջացնելուց չետո՞յ ժողովի նախագահ պ. Ղուկասեանը ժողովին կարդաց պ. Բելիամինից ստացած հետեւեալ հեռագիրը. «Արտասահմանում ալտոհետե կերոսին վաճառելու կարելիութիւնը կախւած չէ Նոբել ընկերութիւնից, որը ոչ գներն է որոշում, ոչ կուրսը և ոչ էլ ֆրախտի չափը: Մինչև որ համաձայն դիպարտամենտի պահանջման երկու խմբերի փոխադարձ պալմանագրի ծրագիրը չի ներկայացնւիլ և ընդունւիլ, մինչև որ ֆրախտը աչն աստիճանի չի պակասացնւիլ, որպէս զի մեր կերոսինը առանց վեառի կարելի լինի արտասահմանում վաճառել, ընկերութիւնը միութեան կերոսինի ճառման համար ոչ մի միջոց չէ կարող ձեռնալ կել: Ուստի աշխատեցէք կարելո՞ցն չափ շուտով տեպարտամենտի պահանջած տեղեկութիւնները հասցնել»:

Թէև հեռագիրը կարդացւելու ժամանակ դեռ ղեպարտամենտից ոչինչ չէր ստացւած, բայց աչնու ամենաչնիւ ժողովը չանձնեց միութեան կարգադրիչ մասնաժողովի անդամներին պալմանագրել 1 և 2-րդ խմբի փոխադարձ շարաբերութիւնները և ներկայացնել հետեւեալ ժողովին ի քըննուութիւն: Ժողովում որոշւեցան Նաև մի քանի հերթական հարցեր, որոնց թւելը աւելորդ ենք համարում. կասենք միմիայն, որ վճռեցին փետրարի 1-ից անպատճառ սկսել միութեան կերոսինի վաճառումը արտասահմանում, ուստի մինչև աչք օրը պէտք է ամեն ինչ պատրաստել, աչնպէս որ ոչինչ արգելք չհանգրիսանայ գործի սկսելուն:

Աչն հեռագիրը, որի մասին պ. Բելիամինը ակնարկում է իւր վերջին հեռագրում, ստացւեց Բագու, մէկը պ. Կաւալեւսիու ստորագրութեամբ, իսկ միւսը երկաթուղային գործերի ղեպարտամենտի ղիրեկտոր պ. Մակսիմովի: Առաջինի մէջ առաջարկւում է շուտով ներկայացնել երկու խմբերի փոխադարձ շարաբերութիւնների ծրագիրը: Դժբաղդաբար Նոբել ընկերութիւնը աչս անգամ ևս գործին դանդաղութիւն պատճառեց: Նա իւրԲագուէ կառավարիչ պ. Խաղելինին արգելեց ժողովներին մասնակցել և պատուիրեց շուտով ուղևորւել ղէպի Պետերբուրգ: Այսօր թէև պալմանագիրը պատրաստ է, սակաչն ստորագրող 1-ին խումբի կողմից չկայ

որովհետև 26-ին հոկտեմբերի կազմած պալմանագրին համաձայն ալդպիտի պալմանագրեր պիտի տոորագրին միմիայն առևտրական գործակալները: Նրկորդ հեռագրի մէջ պ. Մակիմովը մեր կերոսինագործատէրերին հարց է առաջարկում՝ «ինչպէս էք ցանկանում ֆրսիտի պակասեցնելը, որպէս արտօնութիւն միմիայն միութեան, թէ որպէս մի ընդհանուր միջոց լսլոր արտահանողների համար, մինչև անգամ և Նորբելի համար աջն դէպքում, եթէ նա միութիւնից հեռանալ», և ապա աւելացնում, «թէ առաջին ձևը անկարելի է, որպէս հակառակ Ռուսաստանի երկաթուղիների օրէնքներին մի բան»: Այդ հեռագրին մեր կերոսինագործատէրերը աջպէս պատասխանեցին. «Յանկալի է, որ ալդ արտօնութիւնը լինէր միմիայն միութեան, իսկ եթէ ալդ չի կարելի, գոնէ որպէս ընդհանուր միջոց»: Ապա վիշեցնում են ալ: անագին տուգանքների մասին, որ պարտաւոր է վճարել Նորբել ֆիրման համաձայն 26-ն հոկտեմբերի կազմած պալմանագրին, եթէ նա հեռանալ ալժմ միութիւնից:

Մի քանի օրից չետոյ պ. Կաւալեւսկին հեռագրով լալտնեց, թէ կերոսինագործատէրերի վերջին խնդիրքը ընդունեց, և արդէն լանձնաժողով է կազմել փոփոխական (доёводѣ) տարիք սահմանելու հարցը քննելու համար: Պետերբուրգից տաացած ժաճաւոր տեղեկութիւններից երևում է որ մասնաժողովը սկզբունքով որոշել է ալնպիտի փոփոխական տարիք սահմանել, որով լամենալն դէպս Բագու իւրաքանչիւր փութ կերոսինի համար տաացելի գոնէ իւր արժողութիւնը: Անհամաձայնութիւնը միմիայն նորա մէջ է արդեօք ինչպէս որոշել կերոսինի իսկական արժողութիւնը: Մի քանիսը առաջարկում են 8,5 կոպ., իսկ միւսները 5 կոպ.: Ալդ հարցը ալնքան էլ զժաւոր չէ որոշելը, հարկաւոր է միմիայն վերցնել միջին տարեկան գինը նաւթամնացորդի, իսկոյն և եթ կը պարզել իւրաքանչիւր փութ կերոսինի գինը: Ալդպէս զիցուք տարեկան միջին գինը նաւթի է 2,75 կ. իսկ նաւթամնացորդինը 3 <sup>1</sup>/<sub>2</sub>): Իւրաքանչիւր 3 <sup>1</sup>/<sub>2</sub> փութից ստացւում է 1 փութ կերոսին և 1 <sup>1</sup>/<sub>2</sub> փ. նաւթամնացորդ: Ուրեմն իւրաքանչիւր փութ կերոսինը կարժենալ, աւելացնելով զրանց վրալ և տեղական և մաքրելու ծախսերը, որը լամենալն դէպս 4 <sup>1</sup>/<sub>2</sub> կոպէկից պակաս չէ, (2,75 × 3,25) + 4,5) — (3 × 1,5) = 8,95 կ. <sup>2</sup>) ուրեմն կերոսինի գինը նշանակել 5 կոպ. բոլորովին հիմք չունի: շէնց ալդ պատճառով մեր կերոսինագործատէրերը արդէն հեռագրել են, եթէ կերոսինի արժողութիւնը կորոշել 5 կոպ. ալն ժա-

<sup>1</sup>) Մենք ալդ զծերը առաջ բերելով ի նկատի ունինք 1894 թ. համար եղած զաճառքները:

<sup>2</sup>) Հաշւապահական տեսակէտով կերոսինի գինը ալդպէս չէ որոշւում, մենք ալդ մասին ունինք առաջարկած ձև «Счетоводство» ամսագրի 1892 թ. № 11:

մանակ փոփոխական տարիք մեզ հարկաւոր չէ, աւելի լաւ է 7 կողմ. տարիքից պակսացնել, ինչպէս խոստացել էին: Փոփոխական տարիքի միտքը պարզելու համար մենք աւելորդ չենք համարում օրինակով խօսել: Իւրաքանչիւր ամիս հրատարակելու է տարիքի չափը չարմարելով արտասահմանում տիրող միջին գների հետ: Բաւց չամենապէս դէպս արտահանողը ապրանք ուղարկելուց պիտի վճարի 19 կողմ. իւրաքանչիւր փութի համար, իսկ եթէ կերոսինի արժողութիւնը և նրան կցւած ծախքերը դուրս գալով՝ ֆրախտի համար 19 կողմ. չմաքուեց, ալն ժամանակ երկաթուղու վարչութիւնը պարտաւոր է վերադարձնել արտահանողին զանազանութիւնը: Այդպէս եթէ դիցուք Բաթում իւրաքանչիւր փութի համար ստացւում է 20 կողմ., ուրեմն կերոսինի արժողութիւնը 8,5 կողմ. դորանից դուրս գալով մնում է 11,5 կողմ. ուրեմն երկաթուղու վարչութիւնը պարտաւոր է վերադարձնել արտահանողին իւրաքանչիւր փութի համար 7,5 կողմէ: Այդպէս, ուրեմն փոփոխական ֆրախտի չափը maximum որոշւած է 19 կողմ., իսկ minimum — անորոշ:

Այս երկու օրերս Բագու պ. Կաւալեակուց ստացւած հեռագրից երեւում է, որ ֆինանսների միւնիստրը սկզբունքով ընդունել է փոփոխական (ծօթօճ) տարիք ճշանակելը Անգրկովկասեան երկաթուղու վրա նաւթ արդիւնքների համար:

Մեր չափորդ նամակը կը նւիրենք կերոսինի արտասահմանեան առևտրի ընդհանուր տեսութեան և Standard oil Company գործունէութեանը սկսեալ 1888 թւականից:

## ԱՆՅՈՐԴԻ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔԻՑ

ՍՏ. ՏԵՐԵԱՆԻ

Նրկաթուղով Բագուից Թիֆլիս անցնելիս, հետաքրքրւեցի տեսնելու ճանապարհի վրայ ընկած՝ Կովկասի չալտնի քաղաքներից մէկը, իւր գինով և մասնաւորապէս դպրոցական կռիւներով չալտնի Վանձակը։ Գնացքից իջալ և կառք նստելով մեծ հետաքրքրութեամբ դիմեցի քաղաքը։ Նահանգական քաղաք էի մտնում, սպասում էի ընական և արհեստական, հարուստ և գեղեցիկ տպաւորութիւնների։ Բայց կարծես վիճակւած էր հէնց սկզբից հիասթափւել։ Շրջապատող տեսարանների մէջ գեղեցիկ էին միայն ալգիները և Վանձակի չալտնի չինարիները։ Նստալ մի շարք գիւղական տների մօտով և դեռ հետաքրքրութեամբ սպասում էի, թէ երբ պիտի հասնենք քաղաքի կենդրոնը, որ քաղաքի չնորհք ունենալ։ Կանկարծ կառապանս կանգ առաւ խանութներով շրջապատւած մի հրապարակում և հարցրեց «Դու կը հրամայէք»։ ձախ, ատացի, և շարունակեցի դիտել ու հիասթափւել. ամբողջ շրջապատս ինձ ասում էր, որ ես գտնւում եմ մի կատարեալ ասիական քաղաքում։

Ինձ հարկաւոր էր հաջոց ծխական տղաւոց դպրոցը գտնել։ Բայց ես չէի ճանաչում. կառապանս էլ դժւարացել էր, ինչպէս երևում էր, մի քանի տարի միայն կառապանութիւն անելով ալլպլոսի մի հիմնարկութիւն ճանաչել փոքրիկ քաղաքում։ Գորան թիւ ասել, երբ շատ հալեր իմ հարցին, թէ ուր է հաջոց ուսումնարանը, «չըզլտենք» էին պատասխանում։ Վերջապէս գտալ ընկերոջս և տեղաւորեցի։

Քաղաքին ծանօթանալու համար ի հարկէ բաւական չէին արտաքին տպաւորութիւնները, որ գիւղի էին վալել։ Հարկաւոր էր տեսնել և դպրոց, եկեղեցի, ընթերցարան-դրադարան, թատրոն և ալլն, որոնցով կարելի լինէր փոքր ի շատէ դադափար կազմել, թէ որչափով ալլ հասարակութիւնը ապրում է հասարակական խնդիրներով և թէ օգտաւէտ հիմնարկութիւնների գիտակցութիւնը որչափ զարգացած է ալլ հասարակութեան մէջ։

Ես սկսեցի դպրոցից, Գանձակում կալ հալոց ծխական չորս դպրոց, միդասեան երկսեռ ու երկդասեան երկսեռ և ալդ բոլորում մօտ 500 սան և սանուհի և 17 ուսուցիչ, վարժուհի, Յաւօք սրտի տխուր բառերով պիտի նկարագրեմ ալդ դպրոցի դրութիւնը. միտիթարական բառ չի կարող տեղ բռնել նկարագրութեանս մէջ. Ով ուղում է ժողովրդի անտարբերութեան և «եօլա տանելու» սովորութեան մասին գաղափար կազմել, թող մօտի ալդ դպրոցները և դիտի: Գնանք միդասեան դպրոցները, որոնց չինութիւնը դեռ համեմատաբար լաւ է երկդասեաններից: Փողոցից բացում ենք դուռը և մտնում մի փոքրիկ, նեղ անցք, որը նախատեսեալ է համարում. դա թէ նախատեսեալ է վերարկուների, կրկնակօշիկների, ձեռնափաշտերի, հովանոցների համար և թէ ուսուցչանոց է դասատուների համար, սրտեղ եթէ 3—4 աթոռ դնեն, մարդիկ պարտաւոր պիտի լինեն նստելու, ապա թէ ոչ՝ տեղ չի լինիլ թէ իրանց, թէ աթոռներին: Ուսումնարանի բակը մի նեղ, փոքրիկ տեղ է, անկիւններն էլ բռնած աղբով և զանազան տակառներով և ալդտեղ պիտի խաղան դասերից չողնած մանուկները: Գասառները աշակերտների թւի համեմատ շատ փոքր են, Գա օրիորդաց դպրոցն էր: Տղալոց միդասեանը համեմատաբար աւելի քիչ անլարմարութիւններ ունի. միայն սաստիկ զգալի է լուսոյ պակասութիւնը:

Իջնենք ներքև, տեսնենք երկդասեանները: Անշուշտ կը տրամադրուէիք աւելի լաւ չարմարութիւններ տեսնել, ընթերցող, բալց գուր: Մտնենք օրիորդաց դպրոցը: Գա երկլարկանի չինութիւն է. դպրոցը տեղաւորած է վերի չարկում, բացի ա. բաժանմունքից. անցնելիս հետաքրքրութեամբ նաչեցի մի սենեակի ներսը. սենեակի տեսքը ինձ կարծել տուց, թէ ալդտեղ հիւան է բանում և կամ ծառայի բնակալան է. բալց ինձ ասացին, որ ուսուցչանոցն է: Շարունակեցինք դասասնիւրը ման գալ. մի ընդհանուր, աչքի ընկնող պակասութիւն, որ զարմացնում էր մարդու, ալդ լուսոյ սարսափելի քչութիւնը, նստարանների անլարմարութիւնը և տեղի նեղածքութիւնն էր: Ալդտեղից պ. աւագ ուսուցիչը ինձ առաջնորդեց գէպի ներքևի չարկը, մի փոս և մութ նախատեսեալ մտանք. ես կարծում էի, թէ գնում ենք ցախատունը կամ ջրատունը նաչելու, բալց որքան եղաւ իմ զարմանքը, երբ ինձ ասաց, թէ ա. բաժանմունքը տեսնենք. և ալդ տեսելով բաց արեց դիմացի դուռը. ես ապշած մնացի, ալդպիսի մի խաղաղակ սենեակում նստարաններ շարած տեսնելով տեսնողի առաջին խօսքը կը լինի, թէ դա լաւ զինետուն կը լինի: Գասառանը ծալի, ի ծալը շարած էին երկու կարդ նստարաններ, որոնց միջով մի մարդ հազիւ հազ կարող է անցնել: Ուսուցչական սեղանը մի կերպ տեղաւորեցրել էին մի անկիւնում, իսկ միւս անկիւնը, համարեա թէ մինչև պատը սեղանների միւս շարքի շարունակութիւնն էր բռնած. և ի՞նչ էր ալդ սենեակի

բարձրութիւնը. մէկ ու կէս սափէն չէր լինիլ. իսկ աշակերտների թիւը 60 է. դեռ առաջ եղել է աւելի շատ. կարելի է ուրեմն երեակալել թէ որքան տարածութիւն կրնկնէր ամեն մի աշակերտի և որքան էլ ապականաժ կը լինի ալդ օդը: Ալդ բոլոր պալմաններում դեռ ևս լուսամուտներն էլ փոքրիկ են և ցանցապատ: Ահա թէ բնութեան գրկից խլած կաշտառ մանուկը ինչպիսի անդուրեկան և անգրաւիչ պալմանում պիտի ուսման հետ կապւի, իսկ ով կարող է ուրանալ ալդ տեսակ վատ կամ լաւ պալմանների աղդեցութիւնը մանաւանդ նորեկ մանկան համար, թէկուզ ուսուցիչը լինի շատ էլ լաւ մանկավարժ: Զարմացմամբ իմացալ, որ ալդ շինութեանը տալիս են 800 ու. վարձ և մի մասը ուրիշին են վարձով տւել 150 ու.: Իսկ աղպիսի մի շինութիւն, թերեւ աւելի չարմարը, Գանձակի նման տեղում կարելի է առանց խաթրապահութեան առ առաւելն 500 ով վարձել: Այո, ընդհանրապէս զարմանալի է մեր հոգաբարձուների տնտեսավարութիւնը. երբ խնդիրը ուսուցիչների ռոճիկներին է դալիս՝ գիտեն սակարկութիւն անել ուսումնարանի շահի անուճով, իսկ երբ բանն ընկնում է աջն մարդոց հետ, որոնք կախումն չունին և շատ անգամ իրանք սպասելիք ունեն, աջն ժամանակ երկու խաթրներ և երկու շահեր մրցման են հանդիպում և ի հարկէ զժբաղտաբար ուսումնարանինն է պարտողը լինում ըստ մեծի մասին:

Բաց դեռ ալդ էլ թողնենք և դնանք մի աւելի խալտառակ շինութիւն: Դա ս. Զովհաննու եկեղեցւոյ տղալոց երկդասեան դպրոցն է. դըպրոցը պիտի գնալ թէք մակերևութով: Բոլոր տխուր տպաւորութիւնները ալստեղ վերջնական, փառաւոր կնիքն են ստանում: Դեռ հէնց արտաքուստ իսկույն աչքի են ընկնում կիսաքանդ լուսամուտները, որոնք դրսի կողմից մի թիզ հազիւ բարձր լինեն գետնից և տեղացող անձրևը միշտ կարող է իւր գործը կատարել: Ներս իջնենք: Մարդու թւում է թէ բանտ է մտնում. նախ մտնում ենք մի խոնաւ, երկար ու նեղ միջանց, որտեղ իսկույն աչքի է ընկնում քաղաքակրթութեան մի նշանը՝ ասիականացրած եւրոպականութիւնը, աջն է պատին մի նեղ փալտի վրայ ամրացրած չորս-հինգ վերշոկանոց մեխերը վերարկուներ կախելու համար, (այլ, որտեղ պէտք է խնայել, փող տնտեսել): Շարունակենք. ոչ մի սենեակ չեմ կարող տանել քեզ ընթերցող, որ մխիթարական տպաւորութիւն ստանաս: Բոլոր սենեակները մի երկարութեամբ են ձգւած՝ արեւելքից արեւմուտ. բոլոր դասարանների բոլոր լուսամուտները հիւսիսալին պատի վրայ են և երեակալեցէք ալդ պատին զուգահեռական հազիւ  $1\frac{1}{2}$  արշին հեռաւորութեամբ ձգւում է պարտիզի պատը, որը իւր բարձրութեամբ բռնում է լուսամուտների առաջը կէսից աւելի. իսկ ալդ լուսարգելի շարունակութիւնը կաղմում են զւարթ և տերեախիտ ընկուզենինները և չինարիները: Ալդ անչաբմարութիւնների վրայ աւելացրէք և

լուսամուտների անլարմարութիւնը իրանց նեղ ցանցերով և արևի հակառակ կողմով անցնելը, և երեսակալեցէք, թէ որքան խղճալի լուսաւորութիւն կը լինի ալդտեղ: Մարդ չի կարողանում հասկանալ, թէ ինչքան են կարողանում կարդալ ալդ մթութեան մէջ: Ալդ լոպէին, երբ ամառալին պալճառ արևն էր փալում, դժար էր կարդալը, ինչպէս են անում ձմեռաւ մառախլապատ օրերին. դալլի կամ կատուի աչքեր են հարկաւոր, որ մթնում լոյս տան: Իսկ սենեակների պատերը, չատակը, սեղանները, գրատակտակը. Աստուած հեռու տանի, ալդ սեղաններից մի մասի վրալ երևի Նոյի ուղիքն էլ նստած սովորած կը լինեն: Հետաքրքիր է ինչպէս են գրում ուսուցիչները ցածիկ գրատախտակների վրալ, նստած, թէ չորքած: Պատերի համար բաւական է աչի ֆակտը, որ մի դասի ժամանակ չանկարծ փլում է մեծ սենեակի պատի մի մասը, սարսափ աղղելով ի հարկէ խեղճ մանուկների վրալ, որոնք դաս, բան թողնելով՝ դունատած դուրս են թռչում:

Կասարաններից անցանք ուսուցչանոց, որտեղ դրած էր և գրադարան-պահարանը: Գրքերի համարները և կանոնաւոր դասաւորութիւնը ցոյց էին տալիս, որ անհոգութեան չէ մատնւած. իսկ գործադրութեան մասին ոչինչ չեմ կարող ասել. իմացալ միայն, որ աշակերտներին գրքեր տրւում են եղել. Չմոռանամ լիչել, որ ալդտեղ միայն տեսալ գրադարան: Բալց մի մեծ թերութիւն, որ աչքի էր ընկնում ալդտեղ, աչն էր, որ գրքերի մանկական բաժինը շատ աղքատ էր. ալդ բաժինը չէր կազմում առանց աչն էլ խեղճուկ գրադարանի նոյն իսկ 1/4 մասը, աչն ինչ մեր ծխ. դպրոցներում, որտեղ հարուստ գրադարան չենք կարող ունենալ առաջին և գլխաւոր հոգսը պիտի լինի մանկական բաժինը:

Ուսուցչանոցում աչքիս ընկաւ պատին կպցրած մի ցուցակ. դա դպրոցում ստացւող պարբերական հրատարակութիւնների ցանկն էր: Ստացւում են թէ Կովկասի բոլոր հալ հրատարակութիւնները և թէ Կովկասի ու մալրաքաղաքների ուսա հրատարակութիւնների մի մասը, ինչպէս օրինակ՝ Русская Мысль, Русскій Вѣстникъ, Русская школа, Русскія Вѣдомости, Московскія Вѣдомости, Кавказъ և ալլն: Ես բոլորովին զարմացած մնացի, ալ կողմումս տեսնելով մի ողորմելի մանկական գրադարան, ձախումս պարբերական հրատարակութիւնների մի հարուստ ցուցակ: Այս ինչ է, զարմացմամբ հարցրի ես. լաւ չէր լինիլ, որ աչնքան պարբերական հրատարակութիւններից մի մասի տեղ կարեւոր գրքեր առնէին և գրադարանը հարստացնէին. և մթթէ չէին կարող մի մասն էլ իրանքստանալ, կամ կարդալ ցացկացողները չէն կարող օգտել հասարակաց գրադարան-ընթերցարանից: Ինձ պատասխանեցին, որ գրադարան-ընթերցարան չկալ, իսկ ալդ հրատարակութիւնները բերել են տրւել չատուկ ալդ նպատակով տրւած ներկալացման արդիւնքով: Այս բացաղրու-

թիւնը և համակրանք և կարեկցութիւն զարթեցրեց իմ մէջ. ինքձ գաւառական ուսուցիչներ. դեռ ես դոքա նահանգական քաղաք են ընկել և դարձեալ ինչ կերպով են միայն կարողանում չափեցնել իրանց հետաքրքրութիւնը և չկտրել արտաքին աշխարհից: Միթէ դա ամօթ և նախատինք չէ Գանձակին. նահանգական քաղաք է և դեռ մինչև այսօր չունի իւր հասարակաց գրադարան-ընթերցարանը: Բայց թողնենք այդ հարցի մասին քննող խօսելու. վերջացնենք մեր խօսքը դպրոցի մասին: Յամենայն դէպս մենք կարծում ենք, այդքան թերթերից 2—3 խօս կարելի էր գոհել լոգուտ գրքերի:

Իմ բոլոր հարցերին, թէ հապա ի՞նչ է անում հոգաբարձութիւնը, ինչո՞ւ չէ մտածում դպրոցի բարւոքման մասին կամ ինչո՞ւ ծնողները հարց չեն բարձրացնում, միշտ լինում էր պատասխան՝ «էհ հոգաբարձուները կամ ծնողները սկի ուսումնարանի չէմքը ճանաչում են. նոցա թողնէք զբաղէին իրանց կուսակցական կռիւներով»: Պատիւ դանձակեցիւներին. բանտերը աւելի չարմարութիւններ ունին չանցապարտ հասակաւորների համար, քան թէ այդ դպրոցը ունի անմեղ մանուկների համար: Այդտեղ ինձ թւում էր, թէ գիւղական մի դպրոցումս եմ գտնում, բայց երբ միայն դուրս եկաւ և փողոցում տեսաւ կառքերը սլանալիս ու միակ աչքի ընկնող բարձր շինութեան ճակատին էլ կարդացի «Губернское управление», ստիպեցաւ լիչելու, որ ոչ, ես գտնում եմ իրօք մի նահանգական քաղաքում:

Տղայոց երկդասիան դպրոցում աչքիս ընկաւ և մի մեծ անլարմարութիւն. մի սենեակում տեղաւորած տեսաւ 7—8 նստարան երկու շարքով. ինձ ասացին աջ թիւը չորրորդ բաժանմունք է, ձախ թիւը հինգերորդ: Եւ բոլորովին զարմացաւ IV և V բաժանմունքները միացեալ տեսնելով. մեղ մօտ կան I և II, II և III միացեալներ, բայց IV և V միացեալների մենք գոնէ չգիտենք թէ ուրիշ որտեղ կա: Եւ շատ հետաքրքրական է այդ դասարանների չառաջադիմութիւնը: Եթէ մենք անում ենք այդ փոքր բաժանմունքների հետ, այդ միայն ակամայ և անճարացած, որովհետեւ դորանով չառաջադիմութիւնը ուղղակի կիսւում է. և բացի դորանից ստոր բաժանմունքներում փոքր է շատէ հնարաւորութիւն կալ այդ անելու, որովհետեւ այնտեղ դեռ եւս գրաւոր պարապմունքների կարիք շատ կալ և կարելի է լինում ժամերի պարապմունքը կիսել բանաւորի և գրաւորի. բայց բարձր բաժանմունքներում, որտեղ աւելի շատ գիտութիւն կալ և ըստ մեծի մասին բանաւոր են անցնում, մենք չենք հասկանում ինչպէս են սպառուում կէս կէս ժամերը: Պր. աւագ-ուսուցչի բացատրութիւնից երևաց, որ այդ միայն այս տարի է աղպէս արւած՝ առաջին անգամ V բաժ. բաց անելը չաջողեցնելու համար և պէտք է աշխատեն դալ տարի այդ անչարմարութիւնը վերացնել: Արդեօք այդ անլարմարութիւնը կը վերանայ: Այդ

կախած կը լինի նորընտիր հոգաբարձութիւնից, որն իսկապէս շատ բան ունի անելու, եթէ չի ուզենալ ներկայի անտարբերութեան և անփութութեան շարունակութիւնը կազմել <sup>1)</sup>։

Հարց ու փորձից իմացալ, որ ս. Յովհաննու եկեղեցին (որի գաւթումն է տղ. երկդասեան դպրոցը) մօտ 27,000 ու. փող ունի, Խնչի համար է պահում եկեղեցին աչդ փողը և տարէցտարի շատացնում, քանի որ դպրոցի շինութիւնը աչդպէս խալտառակ է և նոյն իսկ ինքը եկեղեցին անշուք։ Բայց ուսումնարանի ընդարձակ բազում կարելի է 10—15 հազար ուսւրով մի շատ ցարմար և մեծ շինութիւն շինել երկու բաժինով, թէ օրիորդաց և թէ տղաւոց. և աչն ժամանակ օրիորդաց դպրոցի տարեկան ծախքից էլ կը պակասի 800 ու. շուալ վարձը։ Իսկ 10—15 հազար ուսւրի դժուար չէ գոյացնել եկեղեցուց և ժողովրդից հանգանակութիւնով։ Հարկատու է միաչն գործի գլուխ անցնող և հետաքրքրուող։ Չենք հասկանում ի՞նչ է անում հոգաբարձութիւնը <sup>1)</sup> և ինչ հաշեացք ունի իւր պաշտօնի վրայ. դա մի պատուաւոր տիտղոս է համարում, որի կրելը պարծանք է, թէ մի որոշ պարտաւորութիւն, որը պահանջում է եռանդ և հետաքրքրութիւն։ Յաւելով պէտք է ասենք, որ Պանծակում ամեն բան փչացնում են կուսակցական կռիւները և լարած ցարաբերութիւնները, որոնցից, ինչպէս երևում է, դանձակեցիք ոչ մի կերպ մտադիր չեն ձեռք վերցնել։ Բաւական է, որ մի գործ, լինի դա օգտաւէտ, ձեռնարկած լինի մի որ և է կուսակցութիւն, հակառակ կուսակցութիւնը ոչ միաչն անմասն կը մնայ, ալ կաշխատի վեասել։

Յաւելով պէտք է ասենք, որ կուսակցութիւնը արմատացած է ոչ թէ միաչն ժողովրդի և հոգաբարձութեան, ալ և ուսուցիչների մէջ և աւելի խիստ կերպով, քան որ և է ուրիշ տեղ, և սուելի ցաւալին և տղեղն աչն է, որ աչդ պատճառ է դառնել երբեմն ուսուցիչների կողմից հակամանկավարժական քաջերի և կուսակցական ոգին արտացոլել է նաև աշակերտների և մանաւանդ աշակերտուհիների մէջ։ Աշակերտուհիները որոշ կերպով բաժանւած են ալս ինչ ուսուցչական և աչն ինչ ուսուցչական, և մինչև անգամ աչդ հակառակ կուսակցութիւնները դասատանը կուռում են, երբ մէկը կամ միւսը թուլ է տալիս իրանց հակառակ կուսակցութեան ուսուցչի հասցէին մի բան. և մինչև անգամ աշակերտները կամ աշակերտուհիները թուլ են տալիս կոպիտ պատասխան «ոչ իրանց ուսուցչին», և աչդ ներում է։ Մենք երկու ընտանիքում պատահեցինք և տեսանք, թէ ինչպէս ծնողները կամ մեծ եղբայրը, քոյրերը աշակերտի կամ աշակերտուհու ներկայութեամբ խօսում են զանազան բաներ ալս կամ աչն ու-

<sup>1)</sup> Թղթակցութիւնս զբւած է հոգաբարձական նոր ընտրութիւնից աւաջ։

սուցչի հասցէին և հիացմամբ պատմում են ա. բաժանմունքի աշակերտի սրախօսութիւնը նոյն հասցէին: Այդ ոչ մի մանկավարժութեան մէջ ընդունած չէ, պարոններ, ուսուցչի զաստատանք քարոզում է ծնողասիրութիւն, չարգանք դէպի ընտանիքի անդամները, իսկ դուք տանը նոյն ազդ ուսուցչիչները վարկն էք ձգում երեսպալի աչքում: Ընչ ազդեցութիւն կարող է ունենալ այլ ևս այդ ուսուցչի աշակերտի վրայ, երբ նա շատ անգամ ծաղրել է նոյն աշակերտի ներկայութեամբ: մօտեցէք, պարոններ, դպրոցի շէմքին, ասելիք ունէք, խորհրդակցեցէք ուսուցչիչներին հետ, կարգացէք և տեսէք թէ ինչ է մանկավարժութեան պահանջը և կը համոզէք, որ ձեր արածը սխալ է. ընտանիքի ծնողը և դպրոցի ուսուցչիչը պէտք է համեմատուի իր լինելուն, եթէ նոքա ցանկանում են դատարարականութեան գործը առաջ տանել. նոքա պէտք է դատարարականութեան գործում ձեռք ձեռքի տաւած առաջ գնան, միշտ խորհրդակցեն միմեանց հետ, մէկի գիտողութիւնից միւսը օգտւի, մէկի փորձը միւսի համար խրատ և հիմք լինի. այլ կերպ մէկի շինածը միւսը կը քանդի և ուրիշ ոչինչ: Մենք միտք չունենք անպայման կերպով արդարացնելու ուսուցչիչներին. մենք համաձայն ենք, որ ուսուցչիչները կողմից էլ կարող են լինել շատ սխալ և նոյն իսկ աններելի քաղեր և մենք խնայանք մի քանի իրողութիւններ, որոնք արդարացի տեղիք կը տալին ազգային խօսակցութիւններին և ոչ էլ պահանջում ենք, թէ դպրոցում կատարածները չհետաքրքրեն կամ չզրադեցնեն ծնողներին. ոչ, մենք չենք պահանջում անտարբերութիւն դէպի դպրոցը և ուսուցչիչները: Ընդհակառակը կարելի է և հարկաւոր է խօսել, բայց ոչ երեսպալի ներկայութեամբ: Անմեղ երեսպան պէտք է ճանաչի ծնողին և ուսուցչին և նոցա հեղինակութիւնը, սէրը և չարգանքը և պէտք է գիտենալ սովորելու և կրթւելու կարևորութիւնը, ուրիշ ոչինչ. իսկ դուք ծնողներդ, եթէ հետաքրքրւում էք (և պէտք է հետաքրքրւէք), աւելի մօտիկ ծանօթացէք ուսումնարանի ամբողջ գրութեան հետ: ձեզ համար լուրջ հոգս ու զբաղմունք չինեցէք, հետաքրքրւեցէք ինչպէս հարկն է, ցաւին ճար անելու համար և ոչ թէ լոկ խօսակցութեան նիւթ քաղելու համար: Արէք այդ, և կը տեսնէք, որ շատ գործ կալ առաջներիդ, եթէ դուք բարեխիղճ ծնողներ էք:

Վանձակում չկալ և գրադարան ընթերցարան: Այդ միթէ վաղել է Վանձակին: Ախալքալաքի նման փոքրիկ քաղաքը, Ագուլիսի նման աւանը գրադարան ունենալուց չետոյ <sup>1)</sup> ամօթ չէ Վանձակին չունենալ:

<sup>1)</sup> Ագուլիսինը, որ քառորդ դար գոյութիւն ունէր, որպէս ստույգ տեղեկացած ենք, անցեալ 1893 թականին փակեց, ոչ հասարակութեան ցանկութեամբ այլ նահանգական իշխանութեան կարգադրութեամբ:

Նոյն իսկ ալդ նահանգի փոքրիկ գիւղը Մեղրին ունի, իսկ ինքը Գանձակը չունի. շատ տխուր և աննախանձելի դրութիւն է: Եւ միթէ կարծում էք, թէ զժւար է ունենալը, ոչ ամենին, միայն անտարբերութիւնն է, որ թմրեցրել և ըստ երևութին զժւարացրել է ամեն բան: Եթէ ուսուցիչները ներկայացում են տալիս և դպրոցի անունով բերել տալիս ամբողջ 10—12 թերթ, միթէ նոյն ուսուցիչները ուրախութեամբ ներկայացում չէին տալ չօգուտ հասարակաց դրադարան-ընթերցարանի. կամ նոյն իսկ ալդ թերթերի մի մասը չէին չատկացնիլ ընթերցարանին չօգուտ ընդհանուրի: Միթէ Գանձակում անհնար է մի փոքրիկ դամար ժողովել գործ սկսելու համար. մենք կարծում ենք որ անհնար չէ. կարելի է ալդ և ուրիշ շատ բաներ. միայն նախաձեռնող է հարկաւոր. հարկաւոր է մի կողմ դնել անտարբերութիւնը և թմրութիւնից զարթնել:

Գանձակին աւելի ևս հարկաւոր է գրադարան-ընթերցարանը ոչ միայն ընթերցանութեան ալ և մարդկանց հետ չփեւելու տեսակէտից: Այդտեղ տները միմեանցից բաւական հեռու հեռու են ընկած. դրա համար մարդկանց հաղորդակցութիւնը, հետևաբար և շփումը շատ քիչ է. չկալ մի կենտրոնատեղի կամ ժողովատեղի, որտեղ կարելի լինի մարդկանց պատահել, չփել: Եւ մի փոքր մասով էլ մենք դորան ենք վերադրում Գանձակում հասարակական ինդիւրների կազմը: Գուցէ մեզ աւարկողներ լինեն, թէ կալ կլուբ, որտեղ հաւաքում են մարդիկ և կարող են տեսնել միմեանց հետ. բայց խոստովանեցէք, որ մեզ մօտ առհասարակ կլուբների հասարակութիւնները մի որոշ տեսակի են և կլուբներում էլ թղթախաղը աւելի է հետաքրքրում մարդկանց, քան որ և է ուրիշ բան. բացի դրանից կլուբները ամեն մահկանացի էլ մատչելի չեն: Գրադարանը մասամբ կըստեղծի ալդ չարմարութիւնները, որ շատ ցանկալի և անհրաժեշտ են:

Առիթ ունեցանք խօսելու մի քանի ուսանողների հետ, որոնք զգալով ալդ թերութիւնը ցանկութիւն էին չափում դրադարանի գործը սկսել: Ի սրտէ ցանկանում ենք չափողութիւն և ժողովրդի կողմից աջակցութիւն: Թող սկսել գործը, թէկուզ շատ փոքր կերպարանքով, մնաս չունի, ժամանակի ընթացքում կը մեծանալ և կը կանոնաւորուի:

## ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

### ԻՆԱԳԷՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՄՈՍԿԻԱՅՈՒՄ

Ինչպէս չափոնի է Ռուսաստանում պարբերաբար լինում են բնագէտների համագումարներ: Այդ համագումարները չեն լինում միշտ միևնույն քաղաքում. նրանց տեղը միշտ փոխւում է համաձայն համագումարի անդամների ցանկութեան:

Մինչև ներկա՝ 1894 թիւը եղել են արդէն 8 համագումարներ, ինչներորդը նշակած էր անցած չուսար ամսի սկզբում, որը և բացւեց Մոսկվայում հազարից աւելի մասնակցողների ներկայութեամբ:

Ի՞նչ է այդ համագումարների նպատակը: Եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ Ռուսաստանի համեմատաբար փոքրաթիւ բնագէտները խմբւած լինելով գլխաւորապէս միմեանց հեռու դռնուղ համալսարաններում, ապրում և աշխատում են իրարից հեռու, անջատւած, մեղ համար հասկանալի կը լինի համագումարների անհրաժեշտութիւնը. խմբւելով մի տեղ՝ բնագէտները շփւում են իրար հետ, նրանց մէջ կատարւում է մտքերի փոխանակութիւն, որը շատ օգտաւէտ է լինում մասնակցողների համար և նոր ոգի ու եռանդ է տալիս նրանց գիտնական աշխատանքները շարունակելու համար:

Ներկայ IX երորդ համագումարը բացւեց Մոսկւայում պրոֆեսոր Տիմիրեազեւի շնորհաւորական ճառով: Որովհետև այդ ճառի գէթ մի մասը ունի ընդհանուր նշանակութիւն և կարող է հետաքրքրական լինել նաև հալ ընթերցողի համար, ուստի աւելորդ չի լինիլ այստեղ քաղածօրէն առաջ բերել ճառի մի քանի կտորները: Ընթերցողը անշուշտ շատ անգամ լսած կը լինի հետևեալ խօսքերը՝ «Տասնինն երորդ դարը բնագիտութեան դար է»: Հէնց նոյն այդ մտքի վրայ կէնտրոնացնում է իր խօսքերը հուշակաւոր պրոֆեսորը <sup>1)</sup>. Նա ընդունում է այդ միտքը, բաց

<sup>1)</sup> Պրոֆեսոր Տիմիրեազեւը չափոնի է դառել ոչ միայն Ռուսաստանում, այլ և ամբողջ Նւրոպայում շնորհիւ իր բուսաբանական հետազոտութիւններին:

միևնույն ժամանակ ցույց է տալիս, որ հասարակութիւնը սխալ է հասկանում նրան: Նատերը՝ ըստ Տիմիրեազեւի, ընդունելով որ ոչ մի գիտութիւն մեր դարում չի արել աշխարհի հսկայական առաջադիմութիւն, ինչպէս բնագիտութիւնն է արել կարծում են թէ առաջադիմութիւնը կապւում է աշխարհագրութիւն գիտերում, որոնք տեւ են բազմաթիւ շարմարութիւններ մարդկային կեանքին: Դրանց կարծիքով, շոգենաւն, երկաթուղին, հեռախօսը, հեռագրական գործիքը կամ էլեքտրական լույսն են կազմում բնագիտութեան առաջադիմութիւնը: Տիմիրեազեւը սառտիկ ընդէմ է ալդ տեսակ կարծիքի: Նա ցույց է տալիս, որ բնագիտութեան առաջադիմութիւնը ամենին չի կապւում ալդ փալլուն և կեանքին շարմարութիւններ տալ գիտերում, ալ աշխարհ մեծ օրէնքներում, որոնցով հարստացել է մեր դարում բնագիտութիւնը և որոնցով հիմնովին վերափոխել են մարդկանց աշխարհայեցողութիւնը:

«Այո, շարունակում է պրոֆ. Տիմիրեազեւը, բոլոր ալդ փալլուն նիւթական շարմարացումները (ալսինքն՝ երկաթուղին, շոգենաւը, տելեֆոնը...) միմիայն արտաքին չափանիշ են կազմում աշխարհի խոր գաղափարական շարժման, որը նշանաւոր դարձրեց XIX դարը»:

Ձը հերքելով, որ ալդ շարմարացումները մեծ նշանակութիւն ունին մարդկանց համար, Տիմիրեազեւը միևնույն ժամանակ աշխատում է համոզել, որ դժբա չեն կազմում գիտութեան փառքը: Ալդ շարմարացումները ըստ Տիմիրեազեւի, ուրիշ ոչինչ են, եթէ ոչ փշրանքներ, որոնք թափւում են գիտութեան սեղանից»: Ունկնդիրներին աւելի ևս համոզելու համար, Տիմիրեազեւը առաջ է բերում չափանիշ ֆիզիկոս Բոլցմանի աշխատքերը, որոնցով ալդ վերջինը չափւում է որ եթէ իրան հարցնէին, թէ ինչպէս նա կանանէր տասնութիններորդ դարը—արդեօք երկաթի, շոգիի կամ էլեկտրականութեան դար—նա կը պատասխանի. «ոչ, ես նրան (XIX դարը) կանանեմ բնութեան մեքենայական բացատրութեան և Դարւինի դար»:

Պրոֆեսոր Տիմիրեազեւի ճառի միայն մի մասն է բաղկացած ալդ դատողութիւններից, միւս մասում ճշնում է ապացուցանել, որ իբր թէ ռուս աղղը գլխաւորապէս դէպի բնական գիտութիւնները ձգտում ունի: Յարգելի պրոֆեսորի ասելով՝ բնագիտութիւնն է, որ ամենից մօտիկ է ռուս աղղի ոգուն: Իբրեւ ապացուց ալդ մտքի՝ նա առաջ է բերում մի քանի չափանիշ ռուս բնագիտների անունները: Ահահասարակ ճառի ալս երկրորդ մասը ալնքան լիով է, որ չարժէ նույն իսկ աշխատել հերքել նրան: Չարմանալի է նույն իսկ, որ մի ալդպիսի երեւի գիտնական, որպիսին է Տիմիրեազեւը, չի նկատում իր խօսքերի ակներեւ թուլութիւնը: Տարաբաղատաբար մեր ժամանակներում քիչ չեն աշխարհի գիտնականներ, որոնք հիւսնալի են երբ խօսում են իրանց մասնագիտութիւնից վերցրած հար-

ցերի մասին, բայց հէնց որ դուրս են գալիս մասնագիտութեան սահմանից, զարմացնում են բոլորին իրանց թույլ դատողութիւններով:

Հետաքրքրական զեկուցումների շարքին պատկանում էր Նաև պրոֆեսոր Չուպրովի զեկուցումը, որի վերնագիրն էր. «Վիճակագրութիւնը իբրև կապող օղակ բնագիտութեան և հասարակագիտութեան մէջ» (Статистика, какъ связующее звено между естествознаниемъ и обществовѣдениемъ) Արոֆ. Չուպրովը իր աղ զեկուցման մէջ ցուց տաւ, որ հասարակական գիտութիւնները անջատւած չեն բնագիտութիւնից, ալ կապւած են վերջինի հետ շնորհիւ վիճակագրութեան, որը ալժամ սաստիկ կարևոր է թէ բնագէտների համար և թէ իրաւաբանների համար, օրինակ մի քանի բնական գիտութիւններ (որպիսիք են մարդաբանութիւն, և մետեորոլոգիան) ալժամ առանց վիճակագրութեան անկարող են առաջադիմել: Հասկանալի բան է, որ աւելի ևս անհրաժեշտ է վիճակագրութիւնը հասարակագիտութեան համար:

Ոչ սակաւ գրաւեց ունկնդիրների ուշադրութիւնը պրոֆ. Վոլեկովի ճառը վերաբերեալ մետեորոլոգիական հետազոտութիւններին: Իր զեկուցման մէջ պրոֆ. Վոլեկովը նախ ծանօթացրեց ունկնդիրներին մետեորոլոգիայի ծագման և զարգացման պատմութեան հետ Ռուսաստանում: Ըստ պրոֆ. Վոլեկովի՝ մետեորոլոգիան աչն ժամանակ կը կարողանաւ զարգանալ և մեծ օգուտներ տալ, երբ Ռուսաստանի զանազան անկիւններում կը հիմնուէն բազմաթիւ օդերևութաբանական կայարաններ:

Տարօրինակ ճառ ասեց պրոֆ. Կոլլին վերաբերեալ միկրոբներին: Ինչպէս չալտնի է՝ ալժամ ապացուցւած մի իրողութիւն է համարոււմ, որ բակտերիաները կենդանի էակներ են և պատկանում են բուսական աշխարհին: Նոյնպէս չալտնի է, որ բակտերիաները, ինչպէս բոլոր բոյսերը, ընդունակ են զարգանալ և բազմանալ՝ արտադրելով բազմաթիւ սերունդներ:

Չնայած դրան՝ Մոսկւայի բնագէտների համագումարում պրոֆ. Կոլլին չալտարեց ՚ի գիտութիւն բոլոր բնագէտների, որ ինքը չի ընդունում աղ հաւացքը վերաբերեալ միկրոբներին: Ըստ պրոֆ. Կոլլիի՝ միկրոբները կենդանի էակներ չեն և ոչնչով նման չեն ոչ կենդանիներին ոչ էլ բոյսերին: Միկրոբները՝ պրոֆ. Կոլլիի ասելով՝ մեռած նիւթ է, որը ընդունակ է ենթարկւել զանազան քիմիական փոփոխութիւնների:

Ահա աղ քիմիական փոփոխութիւններն են, որ ընդունում են իբրև միկրոբների աճումն:

Մի խօսքով պրոֆ. Կոլլին չընդունելով ապացուցւած ֆակտերը ճգնում է չարուցանել աչն հաւացքը միկրոբների վրայ, որը գոլութիւն ունէր մի քանի տասնեակ տարիներ մեզնից առաջ և որը վաղուց արդէն

խորտակած է շնորհիւ Պատեօրի և միւս գիտնականների ջանքերին, բայց վերև թւածներէն՝ կարգացեցան բաղմաթիւ զեկուցումներ վերաբերեալ կենդանաբանութեան, երկրաբանութեան, ֆիզիկային, բուսականութեանը, ֆիզիոլոգիային, գիւղատնտեսութեանը, վիճակագրութեանը և քննագիտութեան միւս ճիւղերին: Սակայն այդ զեկուցումները կրում են չափազանց մասնագիտական բնաւորութիւն, ուստի նրանց վրայ կանգ առնելը աւելորդ կը լինէր:

Կարգացեցան նաև մի քանի ճառեր վերաբերեալ հոգեբանութեանը: Օրինակ այդ նիւթին էին նւիրւած երկու չալտնի ֆիզիոլոգների — Սէչենովի և պրոֆ. Դանիլեւսկու զեկուցումները:

Արժանի է ուշադրութեան, որ այժմ հոգեբանութիւնը փոքր առ փոքր մտնում է բնական գիտութիւնների շարքը: Առաջ հոգեբանութիւնը համարւում էր մետաֆիզիքական գիտութիւն, այդ պատճառով էլ նրանով ղեաղւում էին գլխաւորապէս փիլիսոփաները և ոչ քննագետները:

Հիմա քանի փոխել է. այժմ աւելի ու աւելի է տարածւում այն հաշեացքը թէ հոգեբանութիւնը նոյնպէս պէտք է հետազօտւի դրական մեթոդներով ինչպէս և բնական գիտութիւններ <sup>1)</sup>:

IX-դ համագումարը Մոսկայում կալացրեց մի քանի որոշումներ, որոնք ունեն մեծ նշանակութիւն:

Նախ որոշեց համագումարի կողմից հետեւեալը. խնդրամատուց լինել՝ ուր հարկն է՝ որպէս զի ինչքան կարելի է աւելի շուտ բացւեն բարձրագոյն իգական բժշկական կուրսերը:

Երկրորդ որոշումն էր. խնդրամատուց լինել, որպէս զր տեխնիկական բարձրագոյն ուսումնարաններում մտցնելի առողջապահութեան դասատւութիւնը: Այս որոշումը պատճառաբանւում է նրանով, որ տեխնիկներին վիճակւում է կեանքում գործ ունենալ մեծ թւով բանւորների հետ, ուստի նրանց համար օգտաւէտ կը լինէր իմանալ առողջապահութիւնը:

Նոյնպէս այդ համագումարի կողմից ընդունւած է իբրև սաստիկ ցանկալի այն միտքը, որ զաւառներում հիմնւեն տեղական ընկերութիւններ բնութեան և ազգաբնակչութեան ուսումնասիրութեան համար:

Վերջին համագումարը բացւելով յունւարի 4-ին տեւց մի շաբաթ և փակւեց յունւարի 11-ին:

#### ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆ

<sup>1)</sup> Համեմատեցէք այդ մասին «Մուրճ»-ում այժմ տպւող բժ. Թ. Զաքարեանի լուծածը՝ «Բժշկականութիւնը և հոգեբանութիւնը»:

Ման. Խմբ.

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐԻ լուս ընծայելը մենք ուշացրինք Տորա համար որ զետեղենք «Մի ընկերութեան սկիզբն ու վախճանը» խորագրով չօղւածը, որը սկզբում չէր մտնում սոցն համարի ծրագրի մէջ. իսկ աչդ չօղւածի հրատարակութիւնը բարոյական պարտաւորութիւն էր մեզ համար աչն գալթակղեցուցիչ նամակներից չետոյ, որ մի ժամանակ «Մուրճ»-ի հրատարակիչ անունը կրող պ. Փ. Վարդազարեանցը տպեց «Մշակ» լրագրի փետրւարի 15-ի և 26-ի համարներում (№№ 18 և 23): Այդ նամակներում մեր նախկին նոտարական ընկերը, առիթ բռնելով «Մուրճ»-ի անցեալ № 1-ում տպած մեր առաջնորդող չօղւածի աչն մի քանի տողերը, ուր մեր նոտարական պալմանի լուծւելու մասին լիշատակութիւն է արւած և ուր մենք չաչտնում էինք թէ «Մուրճ»-ը ալ ևս ուրիշ ապահովութիւն չունի քան ինչ մեզ կը տալ բաժանորդագրութիւնը, առիթ բռնելով աչդ տողերը, ասում ենք, նա իւր առաջին նամակում պնդեց թէ մեզնից պալմանը քանդելու համաձայնութիւն ստանալու համար՝ իբր թէ նա մեզ «լիուլի բաւականութիւն (ուզում է ասել բաւարարութիւն) է տւել նաև 1894 թւականի համար»: Գորանով պարզ ականարկւում էր աչն թէ մեր պալմանի քանդելը աչն ձև է եղած, որով իբր թէ «Մուրճ»-ը 1894 թւականի դեֆիցիտից ապահովւած է մեր նախկին նոտարական ընկերով երաշխաւորութեամբ կամ կանխիկ տւած գումարով: Որովհետև ալդպիսի բան չէր եղած, մենք «Մշակի» № 19-ում բաւականացանք զգուշացնելով հասարակութիւնը ալդպիսի եզրակացութիւնից, ուշք անգամ չդարձնելով պ. Վարդազարեանցի նամակում առաջ բերած ուրիշ՝ դորանից ոչ պակաս վիրաւորական տողերի վրայ: Բայց նախկին նոտարական ընկերս դորանով էլ չբաւականացաւ. նա տպեց մի երկրորդ նամակ, ուր, չկարոնալով հերքել մեր ասածը «Մուրճ»-ի անապահովութեան մասին, սկսեց շօշափել մեր բաժանման ակտի ալ կէ-

տերը, որոնք վերաբերութիւն չունէին մեզ հետաքրքրող խնդրին: Բայց այդ երկու նամակներում արդէն մեզ վերաբերող խառն ի խուռը աչնքան ակնարկներ կապին արւած և իրողութիւններն էլ աչնպիսի լուսով էին դուրս բերւած, որ այլ ևս մենք մեր լռութիւնը պէտք է մի կողմ թողնէինք՝ խօսելու համար մի թշնամի մարդու հետ, որը մամուլի մէջ ուզում է խաղեր խաղալ մեր ամազրի հետ: Մի երկրորդ նամակով «Մշակի» խմբագրութեանը, որ տպւեց այդ լրագրի № 25 ում, մենք չապնեցինք վարդազարեանցի բանակուի խաղաչին բնաւորութիւնը, խոստանալով այդ մասին մանրամասն խօսել «Մուրճ»-ում, ուր ընթերցողները կը գտնեն նաև պատասխան պ. Վարդազարեանցի կողմից աչնքան վստահ կերպով շօշափած հարցերին:

«ՄՈՒՐՃ» ՆՈՒՐՆԵՐԻ (Տես սկիզբը № 1): Աստրախանից պ. Յովհաննէս Ախտաչեանցը, շնորհաւորելով «Մուրճ»-ի հնգամեայ տարեշրջանի լրանալը, իւր բաժանորդագրութիւնից դուրս ուղարկել է մեզ 50 ռուբլի, «Մուրճ»-ի 5 օրինակը ուղարկելու համար կամ իւր առաջարկած տեղերը և կամ ըստ մեր բարեհալեցողութեան: Համաձայն իւր առաջարկութեան մենք ուղարկեցինք՝ Աստրախան՝ հալոց օրիորդական դպրոցին, Պարիզ՝ հալոց մատենադարանին, Փրնեսէ՝ Հալոց ուսանողական գրադարանին, իսկ մեր ընտրութեամբ՝ Երևան — Նոր-Բաղազէղեան հետևակ գնդին պ. Ա. Յովսէփեանցի հասցէով և Հին-Նախիջևան — տեղական հալ ուսումնարանին (քանի որ նախաբերողի մատնանիշ արած չորրորդ և հինգերորդը արդէն ստանում են իրանց հաշւով):

Նուիրաց եղբ. Յովհ. և Աբր. Բուճիսթեաններ, բացի մի օրինակ Ջաքաթալի ուսումնարանի համար, որ փշատակել ենք անցեալ № 1-ում, ներում են նաև մի օրինակ Գողթանի Յղնա գիւղի ուսումնարանին:

Շուշուց պ. Վահան Մելիք-Բաբախանեանց ներում է մի օրինակ «Մուրճ» Շուշու հալ օրիորդաց Մարիամեան դպրոցին:

Շուշուց մեր աշխատակից պ. Գէորգ Վարաջեան մի օրինակ «Մուրճ» թողնում է մեր կարգադրութեանը ներքոյ. մենք աչն ուղարկում ենք Ջահրի գիւղի ուսումնարանին (Հին-Նախիջևանի գաւառ):

Պր. Ա. Տ.-Զ., Բալախանից, ուղարկելով մեզ 5 ռուբլի, խնդրում է մեզ չատկացնել այդ գումարը ի հաշիւ «Մուրճ»-ի

աչն մի օրինակի, որ խմբագրութիւնը կ'ուզենալ ձրի ուղարկել որ և է հիմնարկութեան: Մենք ալ օրինակը չատկացրինք թիֆլիսի աշարուժարանին (Глазная лечебница, Больш. Водовозн. ул., д. Товарищ. апт. товарами), որից խնդրած էինք: ԳԵՈՐԳ Եպիսկ. ՍՈՒՐԷՆԵԱՆՅ հաստատւած է վրաստանի և խմբութիւնի հայոց թեմի առաջնորդ:

ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ, վեհափառ կաթողիկոսի հրամանով Սեդրակեան սրբազան Արիստակէս եպիսկոպոսի ձեռքով ձեռնադրել են վարդապետ ցալժմ արեղալ Արսէն Ղլտճեան, Բագրատ Թաւաքալեան և Գէորգ Ռշտունի:

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ փետրւարի 10-ին քաղաքային խորհրդարանի դահլիճում, մասնակցութեամբ մօտ 50 հոգու: Հաստատուեցին կենտրոնի և 17 ճիւղերի նախահաշիւները (2 ճիւղ՝ Արդահանի և Արտւինի դեռ չէին հասցրել իրանց նախահաշիւները): Կենտրոնի (Թիֆլիս) մուտքը ըստ նախահաշիւ սպասուում է 12,668 ու. 75 կ., եւք՝ 12,343 ու. 20 կոպ., որի մէջ 3370 ու. չատկացրած է նոր բացւելիք գրադարան-ընթերցարանին և 3000 ու. ուսուցչական ցէնդ ձեռք բերելու գործին: Կենտրոնի և 17 ճիւղերի մուտքը միասին սպասուում է 34,432 ու. 66 կ., ծախս՝ 35,107 ու. 11 կ.: Նկատելու է որ Վաղարշապատի ճիւղը իւր ծախքի մէջ չատկացրել է մի գումար շերամապահական կալարան հիմնելու և պահպանելու համար:

Ապա ժողովը զբաղւեց աչն առաջարկով որ գրաւոր կերպով արել էին խորհրդի 15 անդամներ՝ Ներսէսի նահանգում և Կարսի շրջանում հացի անբերրիութիւնից հացի կարօտութեան մէջ ընկածներին օգնելու համար: Խորհրդի առաջարկով վճռւեց որ Խորհուրդը ընդունի նւէրներ և տեղ հասցնի: Այդ նպատակով խորհուրդը արդէն ստացել էր 711 ու. և, բացի ալդ՝ 50 պուլ ցորեն:

Գորանից լետոյ կատարւեցին ընտրութիւններ՝ իրանց ժամանակը լրացրած պաշտօնատար անձերի: Գաղտնի քւէարկութեամբ ընտրւեցին նախագահ ընդհանուր ժողովներ թժչկ. Բագրատ Նաւասարդեանց (33 սպիտակ և 10 սև), քարտուղար ընդհանուր ժողովներ խաչ. Մալումեան (34 սպ. 9 սև), անդամներ խորհրդի՝ Ալէքսանդր Մանթաշեան (44 սպիտակ և ոչ մի սև, վերընտրւած), Ալէքսանդր Մելիք-Ազարեան (39 սպ. և 4 սև, վերընտրւած), թժչկ. Վահան Աթրունի, ինժեներ Մկրտ. Կարապետեան և Ստ. Սուլխանեան (աւելի պակաս ձաջներով,

վերջինս 30 ձախով), փոխանդամութեան համար ընտրեց միայն պ. Տիգրան Նազարեան: Յալտնի է որ ամեն տարի խորհրդից ղուրս է զալիս անդամներն թւի կէսը միայն: Մնացողներն են՝ պ. պ. Ալ. Անանեան, Պ. Մելիք-Ղարաբոզեան, Յովհ. Սպենդեղեան և Ներսէս Աթաբեկեան:

<sup>12</sup> այդ ալդ, նոյն ժողովում կազմեց Գրադարանի համար չանձնաժողով հինգ հոգուց բաղկացած. ընտրեցին իշխ. Սոփիա Արղութեան, պ. պ. Ստ. Մալխասեանց, Աամ. Բալաղեան, Շիրվանզադէ, Յակոբ Քոչարեան:

**ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ՅԷՆՁ** ձեռք բերելու գործի վերաբերեալ, խմբագրութիւնս ստացել է Բ ա ջ ա լ Ս ա Ր Ղ ա ս ի Ր ա կ ա ն Ը ն կ ե Ր ու թ ե ա ն խորհրդից հետեւեալ գրութիւնը «Մուրճ»-ում տպագրելու խնդիրքով:

«Բաբաջ Մարդասիրական Ընկերութեան ընդհանուր ժողովը ներկայ 1894 թ. համար նշանակել է 1000 ռուբլի նպաստ ալն անձանց, որոնք կը կամենան մի տարւալ ընթացքում վերջնական քննութիւն տալ պետական ուսումնարաններից մէկն ու մէկում՝ ուսուցչութեան իրաւունք ձեռք բերելու համար: Յանկացողները թող զիմեն խորհրդին՝ չալտնելով իրանց կամքը թէ երբ և որտեղ կը կամենան պատրաստել ու քննութիւն տալ: Խնդրատունների մէջ խորհուրդը զերադասելու է նրանց, որոնք աւարտած են թեմական դպրանոց կամ Գևորգեան ձեմարանը:

Նախագահ խորհրդի՝ Գ. Թումանյանց

Ատենադպիր՝ Ա. Գալուստեան:

«ՄՈԱՄԻԷ» վրաց ամսագիրը, որպէս հաստատ հաղորդում են, ունի ներկալումս 1000 բաժանորդ, ալնպէս որ նորա խմբագրութիւնը իրան ստիպւած է տեսել իւր թերթի առաջին համարը երկրորդ տպագրութեամբ լոյս ընծայել: Անկեղծ սրտով շնորհաւորում ենք վրաց ամսագրի ալդ չաջողութեան համար. իսկ հաջորդ թող մխիթարեն շարունակելով իրանց խելքը գտվել:

**ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ:** «Մուրճ» 1893 թ. 10 լուրերի մէջ հաղորդել էինք թէ Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ» ամսաթերթը ձեռնարկել է հրատարակելու հալ լրագրութեան հարկւրամակի առիթով մի լուսանկար պատկեր: Յիշեալ թերթի խմբագրութիւնը ալժմ ուղարկել է մեղ ալդ պատկերի բաժանորդագրութեան հրաւերը: Նկարը ներկալացնելու է լուսատիպ (ֆոտոտիպ) մի պատկեր, որի մեծութիւնն է 50×35 սանտիմէտր, տալած 70×45 սանտիմէտր քարտոնի վրալ ալ և ալ

քնագրով: Պատկերը պիտի ներկայացնէ՝ մէջ՝ տեղը հաշ լրագրութեան հիմնադրի՝ Տէր Յարութիւն քահանայ Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը 1894 թ-ին հաշերէն լեղով հրատարակող բոլոր լրագիրները (օրաթերթ թէ ամսագիր) իրանց խմբագրապետների պատկերներով:

«Հանդէս Ամսօրեան» բացել է բաժանորդագրութիւն ալ պատկերի համար: մէկ օրինակի բաժանորդագրին է 1 ռուբլի կամ 2 ֆրանկ 50 սանտիմ:

Բաժանորդագրութեան ժամանակամիջոցի վերջին ծալքը որոշած է մալխի 1-ը: Պատկերը լոյս պիտի տեսնի սեպտեմբերի 1 ին:

Խնդրանքով «Հանդէս Ամսօրեակի» խմբագրութեան՝ «Մ ու Ր Ճ ի» խմբագրութիւնը ընդունում է բաժանորդագրութիւն ալ պատկերի համար: Բաժանորդը՝ ուղարկելով մեզ մի (1) ռուբլի և իւր հասցէն կտանալ մեզնից ընկալագիր կամ նորա ազգ ու ազգանունը կը հրատարակի ալստեղ ի միամտութիւն:

**ՄԱՍՈՒԼ:** Բաքում սկսեց ներկայ լուսարի սկզբից հրատարակել մի նոր լրագիր „Бакинскія Губернскія Вѣдомости“, Լրագիրը ունի պաշտօնական և ոչ պաշտօնական բաժիններ: Առ ալժամ հրատարակում է շաբաթը մի անգամ:

Բաքում սոչն լուսարից պիտի սկսէր հրատարակել նաև մի ալ լրագիր՝ „Бакинскія Объявленія“ (Բաքւի Յայտարարութիւններ), որի մէջ զետեղելու են Հիւսիսային զործակալութեան հեռագիրները, տեղեկատու բաժին և յայտարարութիւններ: Թերթը պատկանում է Բաքւի տպարանատէր պ. Շախբազովին:

Նկատելու է որ Բաքւի պէս մարդաշատ և վաճառաշահ քաղաքում հրատարակում էր միայն մի լրագիր, ուսաց «Կասպի» օրագիրը: Հաշերէն թերթ չի հրատարակում:

**ՆԻԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ:** Հեղկաստանի Կալկաթա քաղաքի աւագ քահ. տէր-Յովհաննէս Խաչիկեան (տես մահացուցակ) կտակով թողել է 30.000 անգլիական լիրա (մօտ 300.000 ռուբլի) ս. Էջմիած. նին, Նրուսաղէմին և ազգային ալ հաստատութիւններին:

Կարսի նոր հանգուցեալ բժիշկ Շահրիար Մելիք-Փարսաղանեանցի աչրին նւիրել է Հալոց Բարեգ. Ընկերութեանը 600 ռուբլի, զորա տոկոսներով հալոց դպրոցներից մէկում մի աշակերտի նպաստելու համար:

Աչրի Սոֆիա Ա. Գէօգչեան, վախճանած 18 փետրւարի,

Բաքուում, կտակով թողել է 1) 4000 ռ. Էջմիածնի ճեմարանին (սոսկոսներով որդեգիրներ պահելու), 2) 2000 ռ. Նրեանի թեմում մի ծխական եկեղեցի կառուցանելու, 3) 500 ռ. Աստրախան քաղաքի Աղաբաբեան զպրոցին, 4) 200 ռ. Աստրախանում երկու աղքատ օրիորդների մարդու տալու, 5) 500 ռ. Աստրախանի աղքատանոցին, 6) իւր տունը (Բաքուում) 8000 ռուբլի արժողութեամբ՝ Բաքւի ս. Լուսաւորիչ եկեղեցուն։

**ՓԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՅ ԱՍՏՐԱԽԱՆԻ թեմում** Աստրախանի թեմը չունի թեմական զպրանոց։ Ալմա հարց է ծագել այդ մասին, և դործը իրականանալու վրայ է։ Տարեկան ծախքը առ. ալժմ որոշւած է մինչ 12,000 ռուբլի։ Սակաչն վճուած չէ ալն թէ որ քաղաքում նա պիտի հիմնուի։ Աստրախանում թէ Մոզդոկում, որը թեմի համեմատապէս աւելի հաշաշատ կենտրոնն է։ Մենք ես կարծում ենք որ Մոզդոկը աւելի չարմար տեղ է թեմական զպրանոցի համար քան Աստրախանը։

**ՅՕԳՈՒՏ** Նրեանի և Կարսի ճահանգների կարօտեալներին խմբագրութեանս մէջ տաացւել է պ. պ. Յովն, և Աբր. Բունիաթեաններին 10 ռուբլի, որ և չանձնեցինք Հալոց Բարեգործ. Ընկեր. կենտրոնին։

**ՎԵՒՈՆ ՄԱՆԻԼԵԱՆՅ** իբր դերասան, փետրւարի 25-ին վաղարչապատում սիրողների խումբը Ներկայացրել է Շիլլէրի «Աւազակները», որին մասնակցել է մեր աշխատակից բանաստեղծ Պ. Լեոն Մանուէլեանց, որ ընդանուր գրականութեան ուսուցիչ է ձեմարանում։ Պր. Մանուէլեանը կատարել է Ֆրանց Մօօրի դերը, որպէս վիպում են նաև ալ լրագիրների թղթակիցները՝ արտակարգ չաջողութեամբ։ Մեզ գրում են որ Զատիկին մտադրութիւն կալ «Աւազակները» Ներկայացնել Նրեանում, հարկաւ պ. Մանուէլեանցի մասնակցութեամբ։ Բնական է ընդհանուրի հետաքրքրութիւնը պ. Մանուէլեանցին տեսնել Թիֆլիսի բեմի վրայ։

**ԱՐՁԱՆ ԱԲՈՎԵԱՆԻՆ**, Մեզ գիմում են հարցմունքով, թէ արդեօք ինչ եղաւ այն գումարը, մօտ երկուհազար ռուբլի, որ հաւաքեց «Նոր-Դար» լրագիրը Խաչատուր Աբովեանին արձան կանգնեցնելու և ճորա գրւածները տպագրելու նպատակով։ Մեր պատասխանը այս է՝ քանի որ ստորագրողներ կալին, այդ լրագիրը տպում էր նոցա անունները և ստացած գումարները, երբ ստորագրութիւնը զադարեց—այդ թերթը չալտարարեց թէ ժողոված փողով բանկի տոմսեր է գնել։ Այդքանն է մեր գիտ. ցածը։

† ՏԵՐ-ՅՈՎ. ՀԱՆՆԵՍ ԽԱԶԻԿԵԱՆ, Կալկաթայի աւագ քահանայն վախճան-  
ւեց 90 տարեկան հասակում: Հանգուցեալը, իւր անհանգիստ  
բնուորութեան պատճառով, Հնդկաստանի հալերի մէջ մեծ  
չուզմունքների և երկպառակութիւնների պատճառ էր դարձել  
և Պարսկաստանի ու Հնդկաստանի վաղեմի թեմական առաջ-  
նորդ Գրիգորիս եպիսկոպոսի ձեռքով երկու անգամ բանադր-  
ւեց, երկրորդ անգամը ազատելով միայն շնորհիւ միջնորդու-  
թեան Ներսէս պատրիարքի, Խրիմեան Հալիկի և Մակար  
կաթողիկոսի:

Հանգուցեալի գրածներից չիշելու են Նոր-Ջուղայի առաջ-  
նորդների պատմութիւնը Շահ-Աբասի ժամանակից սկսած մին-  
չև Գրիգորիս եպիսկոպոսը և Թաղէոս առաջնորդի պատմու-  
թիւնը:

† ԿՈՇՈՒՏ վախճանեց մարտի 9 ին (հին տոմար) Խտալիայի Տուրին քա-  
ղաքում, 90 տարեկան հասակում, Լուդւիգ Կոշուտ նորագոյն  
Ունգարիայի ստեղծողներից գլխաւորն է, թէև նորա գլխաւոր  
գործունէութիւնը ընկնում է 40-ական թականներին: Նա ազ-  
գային հերոս էր: 1841-44 թականներին խմբագրում էր Pestii  
Hirlap ունգարերէն թերթը, ուր ջերմագին պաշտպանում էր  
ունգարացիների ազգային իրաւունքները: 1841-ին աւստրիա-  
կան ռէպրեստազի համար պատգամաւոր ընտրւեց, ուր նա հանդի-  
սացաւ պերճախօս պաշտպանը ազգային իրաւունքների և գիւ-  
ղական շահերի: 1848-ին նա սկսեց պահանջել որ Աւստրիայից  
Ունգարիան անկախ մինիստրութիւն ունենալ, ալդ միտքը  
իրագործւեց, և նա մտաւ ալդ մինիստրութեան մէջ իբր Ֆի-  
նանսների մինիստր: Բայց ունգարական ալդ ինքնավարու-  
թիւնը միայն առերևույթ էր, որովհետև Աւստրիան հիմնւելով  
կալսերութեան սլաւոնական տարրերի վրայ, աշխատում էր  
ի չիք դարձնել ունգարացիների քաղաքական ձգտումները: Ալդ  
ժամանակ Ունգարիայում չեղափոխութիւն կատարւեց, և Կո-  
շուտը ընտրւեց դիքտատոր, որը չաջողութեամբ կուեց Աւստ-  
րիայի դէմ մինչև որ իւր շրջապատում չսկսեցին տարածալ-  
նութիւններ: Ալդ բոպէից ի վեր նա սկսեց պարտութիւններ  
կրել և փախաւ արտասահման: Բայց ալդ ամենը զուր չանցան  
Ունգարիայի համար. երբ 1867 թւին Պրուսիան պատերազ-  
մեց Աւստրիայի դէմ, վերջինս չաղթւելով՝ ստիպւած տեսաւ  
իրան հաշտւել Ունգարիայի ներքին քաղաքական անկախու-  
թեան մտքի հետ և տեց Ունգարիային մինչ ալթմ գործող սահմա-  
նադրութիւնը: Բայց Կոշուտին ալդ բաւական չթւեց, նա մնաց

անհաշտ Աւստրիայի հետ, պահանջելով կատարեալ անկախութիւն Ունգարիայի համար և մինչ իւր մահը մնաց աքտորւածի վիճակում, ապրելով Խաւրիայի Տուրին քաղաքում: Բայց այնքան է մեծ ունգարական ազգի մէջ Կոշուտի անունը, որ կառավարութիւնը եթէ չի էլ կարող պաշտօնապէս մասնակցել թաղման հանդէսին, սակայն չի էլ կարող արգելք լինել թաղման փառաւորութեանը:

ԷՄԻԼ ԶԱՈՒԷՐ: Ներկայումս Թիֆլիսումն է նշանաւոր դաշնակահար Էմիլ Զաուէր, որը տւեց չորս ներկայացում: Զաուէրի անունը մինչ երկու տարի Ռուսաստանում գրեթէ անյայտ էր և աչքտեղ նա սկսեց լայտնի դառնալ երբ 1892 թւականին նա Պետերբուրգում հրապարակ եկաւ:

Է. Զաուէրը ծնւած է 8 հոկտ 1862 թւականին Գերմանիայի Համբուրգ քաղաքում: հետեապէս նա ալժմ 31 տարեկան է: 1876-ին Անտոն Ռուբինշտէյնը ուշադրութիւն դարձնելով 14 տարեկան տղայի խաղի վրայ՝ լանձնարարեց իւր եղբայր Նիկոլայ Ռուբինշտէյնին ընդունել նորան Մոսկւայի կոնսերւատորիայում և նա մնաց Մոսկւայում մինչ 1881 թւականը: Առաջին կոնցերտը նա տւեց իւր հալրենի Համբուրգ քաղաքում, ապա տւեց կոնցերտներ Գերմանիայի մի քանի ալլ քաղաքներում, լետոյ Լոնդոնում, 1883-ին կոնցերտային պտուտներ աւրաւ Իսպանիայում և Իտալիայում: 1884-ին եղաւ Վէլմարում ուր նրանով խիստ հետաքրքրեց ալժմ հանդուցեալ հռչակաւոր Ֆրանց Լիստը, որի մի քանի օգտակար ցոյցմունքները նա իւրացրեց: 1885-ին Զաուէր խաղաց Բերլինի «Նրաժշտական ակադեմիայի» դալիճում, որից և սկսեց նորա հռչակը Նւրոպաւում:

Զաուէրի խաղը իւր վրայ իսկոյն ուշադրութիւն է դարձնում իւր կատարելութիւնով: Դաշնակահարը չգիտէ շատ բաղմատեսակ տուչէներով արտադրել ձայնալին բազմաթիւ գոյներ, որոնցով նորա խաղը ստանում է առանձին իմն հետաքրքրական բնաւորութիւն: Շնորհիւ ամենակատարեալ տիւրնիկայի, որը ոչ մի դժարութիւն չի ճանաչում, խաղի կատարումը զարմանալի փալուն է. սակայն վիրտուօզի ամենաուժեղ կողմը կազմում է ոչ թէ խորը զգացմունքը, ալլ արտակարգ վարպետութիւնը, որի շնորհիւ լսողը մեծ հետաքրքրութեամբ հետեւում է արտապատուժեան ամեն մի տակտին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ՝ լետաճրեցինք գալ անգամին:

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 1-ում:

Ղաղբէզի՝ «Ձորի նահապետ Գոչա» վէպում, էջ 17, տող 4 տպւած է հողի, ուղիղն է ձիւնի. էջ 41, տող 17 տպւած է ուղիղ, պէտք է լինի ուղեղ. էջ 42, տող 5 ներքևից տպւած է ջողում, ուղիղն է չաջողում:

Ղարաբաղի թեմական դպրանոցի մասին լօղւածում մի տեղ տպւած է 4892—93, ուղիղն է՝ 1892—93. մի անգամ, էջ 144, 4-դ տող ներքևից տպւած է 1882—93, ուղիղն է՝ 1892—93 թ.:

#### ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԳԵՐ

- 1) ԹԱՏՐՈՆ, գրական և թատերական հանդէս, № 1, հրատարակիչ Աղէք. սանդր Թարխանեան, Թիֆլիս, տպար. Մ. Մարտիրոսեանցի և Ընկ., 1893 թ., գինն է 2 ռուբլի:
- 2) ՓԻՐԲՈՒԴԱՂԵԱՆՅ, էմ.—«Մի քանի խորհրդածութիւններ (ոտանաւորներ): Բաքու, տպ. «Արօր», 1894 թ., գինն է 20 կոպ.:
- 3) ԳՈՒՉԱՐԵԱՆՅ, Գրիգոր.—«Մեղապարտ փարիսեցիներ» (դրամատիքական անցքեր հինգ պատկերով): Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1894 թ., գինն է 20 կոպէկ:
- 4) ՆՈՅՆԸ.—«Մխիթարանք և Հանգիստ, չափաբերական գրածքներ: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1894 թ., գինն է 30 կոպ.:
- 5) ՏԷՐ-ՄԵԼՔԻՍԵԿԵԱՆ, Սարիբէկ.—«Տիրացու Մարկոս», վէպիկ Շիրակի կենսաքից: Ալեքսանդրապոլ, տպ. Աբր. Մալխասեանցի, 1893 թ., գինն է 25 կոպէկ:

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is faint and mostly illegible due to fading and the texture of the paper. Some words are difficult to decipher but appear to be arranged in several paragraphs.

# „Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար դիմել՝

ԽՐԱԳՐԱՏՈՒՆԸ } Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.  
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր դորձակալութիւններին՝

ԲԱՔՈՒ. — Տպարան «Արօր»:

» պ. Նիկ. Աբրահամեան:

ԷՋՄԻԱՅԻՆ. — Արսէն արեղայ Ղլաճեան:

ԲԱԹՈՒՄ. — պ. Սարգիս Մակարեանց (գրատ. եղբ. Ծովհաննէրի):

ՈՌՍՏՈՎ և ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. — Եղբ. Պ. և Դ. Ունանեաններ:

ՇՈՒՇԻ. — պ. Գէորգ Ղարաջեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — պ. Քրիստ. Բաշինջաղեան, Гостинный дворъ.

ՄԱՐՍԷՅԼ. — պ. Սիմէօն Միրզայեանց: Rue St. Jacques № 86:

ԽՐԱԳՐԱՏՈՒՆԸ դրանուում է Թիֆլիս, Վեդիամիլեան փողոց, տուն № 8